


ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2012 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ERROR! BOOKMARK NOT DEFINED.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ	47
ՀՀ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ.....	64
Հարկային եկամուտներ, պետական տուրքեր և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ.....	66
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	67
Պետական տուրք.....	80
Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ.....	87
Պաշտոնական դրամաշնորհներ	87
Այլ եկամուտներ	89
ՀՀ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ.....	92
Տնտեսագիտական դասակարգում.....	92
Ընթացիկ ծախսեր	93
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	95
Գործառական դասակարգում.....	96
Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ	96
Պաշտպանություն	112
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	114
Տնտեսական հարաբերություններ	120
Շրջակա միջավայրի պաշտպանություն	155
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	163
Առողջապահություն.....	169
Հանգիստ, մշակույթ և կրոն.....	186
Կրթություն	201
Սոցիալական պաշտպանություն	217
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	234
ՀՀ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ	235
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	239
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (գործառական դասակարգմամբ).....	240
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (տնտեսագիտական դասակարգմամբ).....	245
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	249
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	254
ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ.....	1239
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ.....	1324

**2012 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Արդյունաբերության ոլորտ

Արդյունաբերական քաղաքականության համակարգված իրականացումն ապահովելու նպատակով փետրվարին ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է ՀՀ վարչապետին կից Արդյունաբերական խորհուրդ (ԱԽ): Ձևավորվել են ճշգրիտ ճարտարագիտության, կոնյակագործություն և դեղագործություն ու բիոտեխնոլոգիաների, թեթև արդյունաբերության, ոսկեգործության, ժամագործության և ադամանդագործության ոլորտային խորհուրդները:

ԱԽ նիստում հավանության են արժանացել «Դեղագործության և բիոտեխնոլոգիաների ոլորտային ռազմավարության իրականացումն ապահովող 2012-2015թթ. գործողությունների ծրագիրը», «Կոնյակագործության ոլորտային ռազմավարության իրականացումն ապահովող 2012-2015թթ. գործողությունների ծրագիրը», «Գինեգործության 2012-2020թթ. ոլորտային ռազմավարությունը» և «Գինեգործության ոլորտային ռազմավարության իրականացումն ապահովող 2012-2015թթ. գործողությունների ծրագիրը», «Ճշգրիտ ճարտարագիտության ոլորտային ռազմավարության իրականացումն ապահովող 2012-2015թթ. գործողությունների ծրագիրը», «Ոսկեգործության, ժամագործության և ադամանդագործության ոլորտային ռազմավարությունները և 2012-2015թթ. ոլորտային ռազմավարությունների իրականացումն ապահովող գործողությունների ծրագիրը»: Քննարկվում է «Թեթև արդյունաբերության 2013-2020թթ. ոլորտային ռազմավարության» նախագծի նախնական տարբերակը:

ՀՀ կառավարության և կոնյակագործության, դեղագործության ու բիոտեխնոլոգիաների, ճշգրիտ ճարտարագիտության, գինեգործության ոլորտների ներկայացուցիչների միջև ստորագրվել են հուշագրեր ոլորտային ռազմավարությունների և գործողությունների ծրագրերի իրականացման վերաբերյալ:

Ոլորտային խորհրդի հաստատմանն են ներկայացվել 2012-2015թթ. դեղագործության և բիոտեխնոլոգիաների գործողությունների ծրագրի գնահատման և մոնիթորինգի ցուցանիշները:

ՀՀ կառավարությունն ընդունել է Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամը Արդյունաբերական հիմնադրամ վերանվանելու մասին որոշումը, համաձայն որի Հիմնադրամը հանդիսանալու է ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության ծրագրի կատարման գլխավոր օպերատոր:

«Պետական աջակցություն ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման 2013 թվականի ծրագրի» համար հատկացվել է 300 մլն դրամ:

300 մլն դրամը գերազանցող ներդրումային ծրագրի շրջանակներում ԱԱՀ-ի հետաձգում. ՀՀ կառավարության կողմից հավանության են արժանացել 8 ընկերությունների՝ 17.5 մլրդ ՀՀ դրամ ներդրումների ընդհանուր ծավալով ներդրումային ծրագրեր, որոնց շրջանակներում նախատեսվում է ստեղծել մոտ 340 նոր աշխատատեղ:

«Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի ժամկետների երկարաձգում. ՀՀ կառավարության կողմից «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների ժամկետների երկարաձգման թույլտվություն են ստացել թվով 6 ընկերությունների 7 ծրագրեր: Ընդհանուր առմամբ հետաձգվել են ավելի քան 1.4 մլրդ ՀՀ դրամ մաքսային արժեքով ապրանքների մաքսային վճարներ և ԱԱՀ վճարումներ:

ՀՀ և ՌԴ կառավարությունների քննարկումների արդյունքում հուլիսի 30-ին (ուժի մեջ է սեպտեմբերի 3-ից) ՌԴ կառավարության կողմից համապատասխան փոփոխությամբ Վերին Լարսի մաքսային անցակետը ներառվել է ՌԴ ակցիզային ապրանքատեսակների ներմուծման կետերի ցանկում:

Գործարար միջավայրի բարեփոխումներ

Նախարարության համակարգմամբ գործարար միջավայրի բարելավման բարեփոխումների արդյունքում ՀԲ ՄՖԿ «Գործարարությամբ զբաղվելը 2013» զեկույցի տվյալներով Հայաստանը վարկանիշը բարելավել է 18 կետով՝ զբաղեցնելով 32-րդ տեղը 185 երկրների մեջ: Բարեփոխումները ներառել են.

Բիզնես սկսելու գործընթացի պարզեցում և բարելավում: Կազմակերպությունների պետական գրանցումը և անհատ ձեռնարկատերերի հաշվառումը հուլիսից կատարվում է անվճար: Գրանցման ժամանակ Ռեգիստրը ՀՎՀՀ-ի և ֆիրմային անվան հետ տրամադրում է նաև սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համարը: 60 օրենքներում և ՀՀ կառավարության 84 որոշումներում վերացվել է տնտեսավարողների ներկայացրած փաստաթղթերի՝ կնքված լինելու պահանջը:

Հարկային ոլորտի բարելավում: ՀՀ կառավարության կողմից ուժը կորցրած է ճանաչվել հասույթի և առաքման գրքերի վարման պահանջը սահմանող կարգը: ՀՀ կառավարության որոշմամբ ՏՏ ոլորտի ընկերությունների համար շահութահարկի բազան կնվազեցվի ԳՀՓԿ ծախսերի չափով: Երևանի քաղաքապետարանում ներդրվել է գույքի և հողի հարկերի վճարման

առցանց համակարգ: ՀՀ կառավարության կողմից ուժը կորցրած է ճանաչվել հասույթի և առաքման գրքերի վարման պահանջը սահմանող կարգը: Կրճատվել է գրքերի վարման կարգի պահանջների կատարման նկատմամբ իրականացվող հսկողությունը:

Մաքսային ոլորտի բարելավում: Վերացվել է մի շարք փաստաթղթերի ներկայացման պահանջը կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի՝ ՀՀ մաքսատներում որպես արտաքին տնտեսական գործունեության մասնակից գրանցվելու ժամանակ:

Շինարարական թույլտվությունների ստացման պարզեցում: Երևանի քաղաքապետարանի կայքի միջոցով հնարավոր է ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային եղանակով: Ըստ օբյեկտի ռիսկայնության աստիճանի սահմանվել են նաև ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման ժամկետները: ՀՀ կառավարությունը հավանություն է տվել համայնքներում քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման մեխանիզմների կանոնակարգման հայեցակարգին և մինչև 2015թ. համակարգը ամբողջությամբ ներդնելու միջոցառումների ժամանակացույցին:

Էլեկտրականության միացման գործընթացների և ժամկետների կրճատում և պարզեցում: Էլեկտրականության միացման գործընթացները 6-ից հասցվել են 3-ի: Սպառման համակարգը 0.4 ԿՎ Էլեկտրական ցանցերին միանալու համար դիմելուց մինչև մատակարարման պայմանագիր կնքելու ժամկետը 270 օրից կրճատվել է 135-ի: Կրճատվել են նաև էլեկտրականության միացման վճարները:

Սեփականության գրանցման պարզեցում: Նախկինում չափազրված գույքի նկատմամբ իրավունքների գրանցումը կատարվում է առանց չափազրման աշխատանքներ կատարելու և դրա դիմաց վճար գանձելու: Հունվարի 1-ից անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կամ տեղեկատվության տրամադրման համար դիմումները կարող են ներկայացվել ՀՀ ԿԱԱԳԿՊԿ ցանկացած սպասարկման գրասենյակ՝ անկախ անշարժ գույքի գտնվելու վայրից: ՀՀ կառավարությունը սահմանել է նոտարական վավերացում չպահանջող պայմանագրերի օրինակելի ձևերը: Ստեղծվել է անշարժ և շարժական գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման դիմումները և դիմումներին կից փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով առցանց ներկայացնելու հնարավորություն: Ներդրվել է պետական և տեղական տուրքերի, պետական կամ ՏԻՄ կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը կամ վարչական տուգանքները վճարելու էլեկտրոնային համակարգ:

Վարկերի ստացման գործընթացի պարզեցում: ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ տարածքում գործող վարկային բյուրոներին տրամադրվում են տվյալներ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության և «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության տեղեկատվական

համակարգերից, սոցիալական ապահովության քարտերի տեղեկատվական բազայից և պետական կենսաթոշակային սոցիալական ապահովագրության համակարգում ընդգրկված անձանց տվյալների անհատական հաշվառման բազայից, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական համակարգից:

Ներդրողների պաշտպանվածություն: Այսուհետ գործում են շահագրգռվածության առկայությամբ գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ լինելու վերաբերյալ բացահայտման, շահագրգռվածության առկայությամբ ընկերության տարեկան հաշվետվության մեջ ցանկացած գործարքի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման, գործարքում շահագրգիռ ճանաչված անձի կողմից օրենքի խախտմամբ ընկերությանը հասցված վնասի վերադարձի, ընկերությանը վերապահված լիազորությունների վերազանցման արդյունքում ստացված շահույթի փոխհատուցման պահանջները:

Կազմակերպությունների լուծարման և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու գործընթացի պարզեցում: ՀՀ ԱԺ-ում են գտնվում «Սնանկության մասին» և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնցով սահմանվում են պարտապանի գույքի օտարման կապակցությամբ կատարվող գործողությունների առավել կարճ ժամկետներ, պարտապանի անվամբ բացված սնանկության հատուկ հաշվում եղած դրամական միջոցների՝ բանկի կողմից օգտագործման և դրա դիմաց տոկոսներ վճարելու վերաբերյալ դրույթներ:

Փոքր և միջին ձեռնարկատիրություն

ՓՄՁ սուբյեկտներին աջակցության 2012թ. ծրագրի շրջանակում ՓՄՁ սուբյեկտներին տեխնիկական և ֆինանսական աջակցության ուղղություններով բավարարվել է 8432 աջակցության հայտ: Վարկային երաշխավորություններ են տրամադրվել 27 ՓՄՁ սուբյեկտի 148.0 մլն դրամի չափով՝ ապահովելով 252.5 մլն դրամի վարկային փաթեթ, 209 սկսնակ գործարարի ձեռներեցության զարգացմանը ցուցաբերվել է աջակցություն, որից 92-ին՝ ֆինանսական: Ստացված վարկի ընդհանուր գումարը կազմել է 96.6 մլն դրամ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությունը՝ 98.1 մլն դրամ: «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից 33 իրավաբանական անձանց և 4 անհատ ձեռնարկատերերի տրամադրվել է 2.937 մլրդ ՀՀ դրամի վարկ:

ՀՀ հարկային և աշխատանքային օրենսդրություններում փոփոխություններին իրազեկման նպատակով Հաշվապահական կենտրոնի հետ համատեղ ՀՀ մարզերում կազմակերպված 20 անվճար սեմինարներին մասնակցել են 504 ՓՄՁ սուբյեկտների ներկայացուցիչներ:

Համագործակցության նոր հուշագրեր են ստորագրվել ԱՄՆ ՄԶԳ «Ձեռնարկությունների զարգացում և շուկայի մրցունակություն» USAID/EDMC ծրագրի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) և Հեյֆեր (Heifer) կազմակերպության հայաստանյան գրասենյակի հետ:

Միջազգային տնտեսական համագործակցություն

Միջազգային տնտեսական համագործակցության շրջանակներում 2012 թվականին աշխատանքներ են իրականացվել 90 երկկողմ և 20 բազմակողմ համաձայնագրերի կնքման, փորձաքննության և վավերացման ուղղությամբ:

Շարունակվել են աշխատանքները ՀՀ և ՌԴ մինչև 2020թ. երկարատև տնտեսական համագործակցության ծրագրի մշակման ուղղությամբ: Հայ-ռուսական աշխատանքային խմբի նիստերում քննարկումների և ՀՀ շահագրգիռ պետական մարմինների հետ համաձայնեցման արդյունքում ծրագրի փոխհամաձայնեցված տարբերակը հաստատվել է 2012թ. հոկտեմբերի 12-ին երևանում՝ ՌԴ և ՀՀ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 14-րդ նիստի շրջանակներում:

Եվրոպական միության հետ համագործակցություն

ՀՀ-ԵՄ ԽՀԱԱԳ ստեղծման բանակցությունների մեկնարկի նպատակով հունվարին Եվրոպական հանձնաժողովի քննարկմանը համապարփակ Զեկույցի ներկայացմանը հաջորդեց փետրվարի 17-ին ԵՀ կողմից բանակցությունների մեկնարկի վերաբերյալ դրական որոշումը: Մայիսի 3-ին տեղի ունեցավ բանակցությունների մեկնարկային զրո փուլը, որի ընթացքում քննարկվեցին բանակցային գործընթացին առնչվող «Ընդհանուր փոխհամաձայնություն» և «Բանակցությունների ընդհանուր մոտեցումներ» փաստաթղթերը: Ձևավորվեցին 14 ուղղությունների բանակցային խմբերը: Կայացել է բանակցությունների ևս 3 փուլ, որոնց արդյունքում համաձայնեցվել են բոլոր ուղղությունների «Հիմնախնդիրների փաստաթղթերը», բանակցվել ապագա համաձայնագրի 10 ուղղություններով տեքստերի նախագծերը, այդ թվում՝ արդեն համաձայնեցվել են «Մրցակցություն» և «Առևտրի պաշտպանական միջոցներ ուղղություններով» տեքստերը, բանակցվել են մյուս 8 ուղղություններով, նոր ևս 4 տեքստերի նախագծերը և մաքսատուրքի դրույքաչափերի ազատականացման առաջարկները:

ՀՀ և ԵՄ միջև կնքվել է ֆինանսավորման երկու համաձայնագիր 43.1 մլն եվրո ընդհանուր արժեքով:

Ներդրումային քաղաքականություն

Ամբողջությամբ ձևավորվել է ազատ տնտեսական գոտիների գործունեությունը կարգավորող իրավական դաշտը: «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքներում ստեղծվել է ազատ տնտեսական գոտի, որի կազմակերպիչ է ընտրվել «ՍԻՏՐՈՆԻԿՍ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն: Հավանություն է տրվել ԱՏԳ-ում որպես շահագործող գործունեություն ծավալելու համար «R&D Arts» կազմակերպության գործարար ծրագրին:

Արտահանում իրականացնող կազմակերպություններին աջակցության նոր գործիքների մշակման և ներդրման նպատակով ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Հայաստանում արտահանման ֆինանսավորման ապահովագրական կազմակերպության ստեղծման միջոցառումների ցանկը», ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է «Հայաստանում արտահանման ֆինանսավորման ապահովագրական կազմակերպության» հիմնադրման աշխատանքների համակարգման խորհուրդ:

GIZ-ի հետ համատեղ մեկնարկել է Հայաստանի ներդրումների խրախուսման և ներգրավման քաղաքականության վերանայման ծրագիրը: Մշակվել է Օտարերկրյա պետության հետ ներդրումների փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրի (BIT) նոր մոդել: ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է ՀՀ կառավարության և օտարերկրյա կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրի օրինակելի ձև: ԱՄՆ ՄԶԳ EDMC-ի հետ համատեղ ստեղծվել և հրապարակվել է «Հայաստան. ներդրումային ուղեցույց 2013» ձեռնարկը՝ անգլերեն և ռուսերեն լեզուներով: KPMG-ի հետ համատեղ ստեղծվել է «Ձեր բիզնեսը Հայաստանում» ձեռնարկը:

Առևտուր և արդյունավետ շուկաներ

ՀՀ ԱԺ է ներկայացվել օրենսդրական փաթեթ՝ նպատակ ունենալով սահմանել խոշոր առևտրի օբյեկտների տեղակայման քաղաքաշինական չափորոշիչները, կանխել տնտեսական մրցակցության անհավասար պայմանների դրսևորումները, ապահովել փոքր և միջին առևտրային օբյեկտների շահերի պաշտպանությունը: Ընդունվել է օղի ներմուծողների լիցենզավորման կարգը: ՀՀ կառավարության հավանությանն արժանացած հայեցակարգով և դրանից բխող միջոցառումների ծրագրով նախատեսվում է ներդնել ԵՄ ստանդարտներին համապատասխան ոսկերչական ապրանքների արտադրության նկատմամբ պահանջներ: ՀՀ կառավարության կողմից սահմանվել են վերամշակման նպատակով բնական ալմաստներ Հայաստան ներմուծման և Հայաստանից արտահանման ընթացակարգերը:

Իրականացվել է «Ազատ առևտրի գոտու մասին» ԱՊՀ անդամ երկրների պայմանագիրը ուժի մեջ մտնելու հետ կապված ներպետական ընթացակարգերի ապահովման գործընթացը: Սեպտեմբերի 17-ին պայմանագիրը վավերացվել է ՀՀ ԱԺ կողմից և հոկտեմբերի 17-ին մտել ուժի մեջ:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ (SS) և ինովացիոն քաղաքականություն

Մեկնարկել է Գյումրու տեխնոպարկի հիմնական շենքի շինարարությունը: ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Դ-Լինկ» ընկերության 8.5 մլն ԱՄՆ-ի դոլար արժեքով ներդրումային ծրագիրը, որի համաձայն նախատեսվում է Գյումրիում ստեղծել «Դ-Լինկ» ընկերության հետազոտությունների և թեստավորման կենտրոն: Վանաձորում տեխնոլոգիական կենտրոն ստեղծելու նպատակով ընտրվել է կենտրոնի տեղակայման տարածքը, բանակցություններ են վարվել ՀԲ հետ՝ կենտրոնի վերանորոգումն իրականացնելու ուղղությամբ:

Մեկնարկել է «Համակարգիչ բոլորի համար» ծրագրի հիմնական փուլը, որում ներգրավված են ավելի մեծ թվով վաճառակետեր, մասնակից բանկեր և արտադրողներ (HP, DELL և ASUS Technology PTE Ltd): Հունիսի 15-16-ը կայացած 5-րդ ամենամյա «Դիջիթալ Բիզնես ֆորումի» ընթացքում տեխնոլոգիական նորագույն լուծումներ ու ինովացիոն մոտեցումներ ներկայացրեցին 38 տեղական և 21 արտասահմանյան կազմակերպություններ: Հոկտեմբերի 5-7-ը Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի նորաբաց «Երևան Էքսպո» համալիրում տեղի ունեցած «Դիջիթալ 2012» ցուցահանդեսին մասնակցեցին տեղական և օտարերկրյա 120 կազմակերպություններ:

Դեկտեմբերին ԱՄՆ-ի Սիլիկոնյան հոտվում, Սթենֆորդի համալսարանում տեղի ունեցավ «ԱրմԹեք» Հայաստանի բարձր տեխնոլոգիաների հինգերորդ գլոբալ գործարար համաժողովը, որի շրջանակում ՀՀ կառավարության և «Ինթել» ընկերության միջև կնքվեց Հայաստանում գիտահետազոտական կենտրոն հիմնելու մասին փոխըմբռնման հուշագիրը, իսկ «Կորպորատիվ Ամերիկա» ընկերության և ՀՀ կառավարության միջև ստորագրվեց Հայաստանում չիպերի գործարան հիմնելու մասին հուշագիրը: Տեղի ունեցավ Հայաստանի տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ներկայացուցչական գրասենյակի բացումը ԱՄՆ Սիլիկոնային հովտում:

Դեկտեմբերին ստորագրվեց Հայաստանում առաջին վենչուրային հիմնադրամի ստեղծման մասին փոխըմբռնման հուշագիրը:

Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի հիմնման ծրագրի շրջանակում ՀՀ վարչապետի, ՀՀ էկոնոմիկայի և ՀՀ առողջապահության նախարարների մասնակցությամբ Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի և ամերիկյան «Գլոբալ Մեդիքլ Սոլյուշնս

ԷԼԹԻԴԻ» ընկերության միջև ստորագրվել է միջուկային բժշկության բնագավառում համագործակցության համաձայնագիր:

Սեպտեմբերին մեկնարկել են Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոնի շենքի շինարարական աշխատանքները:

Զբոսաշրջություն

2012թ. հունվար-սեպտեմբերին հանրապետություն է ժամանել 603 074 (աճը՝ 9.4%) և հանրապետությունից մեկնել է 608 175 զբոսաշրջիկ (աճը՝ 11.4%): Շահագործման է հանձնվել 6 հյուրանոց, որից 4-ը՝ Երևանում, 2-ը՝ Ծաղկաձորում: 2013 թվականին նախատեսվում է շահագործման հանձնել ևս 6-ը:

Հոկտեմբերի 18-19 Երևանում կայացավ «Համամարդկային արժեքները և մշակութային բազմազանությունը 21-րդ դարում. Զբոսաշրջության ներդրումը» խորագրով միջազգային համաժողովը՝ ՄԱԿ ԶՀԿ գլխավոր քարտուղարի մասնակցությամբ (շուրջ 150 մասնակից): Համաժողովի արդյունքում զբոսաշրջության ոլորտի մասնավոր հատվածի 5 ներկայացուցիչներ ստորագրեցին «Զբոսաշրջության էթիկայի համաշխարհային արժեքների նկատմամբ պարտավորությունների ստանձնում» փաստաթուղթը: Ընդունվեց Երևանյան հռչակագիր՝ ուղղված համամարդկային արժեքների, միջմշակութային երկխոսության մշակութային բազմազանության ճանաչմանն ու կարևորմանը: Նույն օրերին Երևանում կայացավ զբոսաշրջության ոլորտում ԱՊՀ անդամ պետությունների հերթական խորհրդի նիստը ԱՊՀ անդամ-պետությունների միջազգային զբոսաշրջային համագործակցության ռազմավարության նախագծի, ոլորտում պետական և մասնավոր հատվածի գործընկերության զարգացման, տրանսպորտի ոլորտում համագործակցության և այլ հարցերի շուրջ:

ՀՀ վարչապետ Տ.Սարգսյանի և ՄԱԿ ԶՀԿ գլխավոր քարտուղար Թալեբ Ռիֆաիի հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության շրջանակներում բանակցություններ են վարվում Իսպանիայի զբոսաշրջության պետական լիազոր մարմնի հետ՝ իսպանական առաջատար հյուրանոցային ցանցերի հետ կապեր հաստատելու և համագործակցություն սկսելու ուղղությամբ:

Չինաստանի և Հնդկաստանի քաղաքացիների համար վերացվել է մուտքի վիզա ստանալու համար հրավեր ներկայացնելու պահանջը: Չինական կողմի հետ մեկնարկել է «Երաշխավորված զբոսաշրջային երկիր» կարգավիճակի (ADS) ձեռքբերման գործընթացը:

ՀՀ ԱԺ կողմից 1-ին ընթերցմամբ ընդունված օրենսդրական փոփոխության համաձայն կներդրվի 5 աստղանի որակավորման կարգը գերազանցող «5 աստղանի Դելյուքս» որակավորման կարգ և դրանով կտարբերակվեն առավել շքեղ հյուրանոցները, ինչպես նաև կհստակեցվեն

որակավորման կարգի նշանների օգտագործման և հյուրանոցային տնտեսության օբյեկտների ներկայացման նկատմամբ պահանջները:

Գյուղատնտեսություն

Ելնելով ոլորտի առանձնահատկություններից և երկրի պարենային անվտանգության խնդիրներից՝ 2012 թվականին շարունակվել է գյուղատնտեսությանը պետական աջակցության քաղաքականությունը՝ ուղղված ագրարային ոլորտում իրավական հիմքի կատարելագործմանը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովմանը, ենթակառուցվածքների ու անտառային տնտեսության զարգացմանը:

Վերջին տարիներին ծրագրավորված աջակցություն է ցուցաբերվել տնտեսավարող սուբյեկտներին բարձրորակ սերմերի, տոհմային և մթերատու բարձր հատկանիշներ ունեցող կենդանիների, հանքային պարարտանյութերի, դիզելային վառելանյութի մատակարարման, վառելիքի մատչելիության բարձրացման և այլ ուղղություններով:

2012 թվականին գյուղատնտեսության ոլորտում բյուջետային ծրագրերն ուղղվել են հետևյալ կոնկրետ նպատակների իրականացմանը.

- Հացահատիկային տնտեսության և հացահատիկային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացում ու ինքնաբավության մակարդակի բարձրացում,
- Հողերի բերրիության պահպանում և բարձրացում,
- Բույսերի վնասակար օրգանիզմների բազմացման, զարգացման ու տարածման հետազոտությունների և պայքարի աշխատանքների կազմակերպման միջոցով դրանց տարածման շրջանակների նվազեցում և հետագա կանխարգելում,
- Գյուղատնտեսությունում տրամադրվող վարկերի մատչելիության բարձրացում (տոկոսադրույքի սուբսիդավորում),
- Գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների (հանքային պարարտանյութ, դիզելային վառելանյութ) մատչելիության բարձրացում,
- Կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պահպանություն և գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացում՝ կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելիչ պատվաստումների իրականացում, տոհմասելեկցիոն աշխատանքների կազմակերպում, բարձր մթերատու ցեղերի երինջների ներկրում,
- Պարենային ապահովության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացում,

- Անտառային տնտեսության զարգացում, անտառպահպանության արդյունավետության բարձրացում՝ անտառվերականգնման աշխատանքների ծավալների մեծացում, անտառշինական նախագծերի կազմում, անտառային տարածքներում բույսերի պաշտպանության կենտրոնացված միջոցառումների իրականացում,
- Գյուղատնտեսությունում կայունացման և զարգացման նախադրյալների ստեղծում:

Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն

2012 թվականին ոլորտում մեկնարկած բարեփոխումների ուղղությամբ աշխատանքները շարունակվեցին ու խորացան: Կենսաթոշակային ոլորտում ձեռնարկումները թևակոխեցին նոր փուլ, ներդրվեց կենսաթոշակային գործող համակարգի տեղեկատվական նոր շտեմարանը, ձևավորվեցին բազմաստիճան կենսաթոշակային համակարգին անցման ենթակառուցվածքները, հիմնականում ավարտին հասցվեցին ինտեգրված սոցիալական ծառայությունների փորձնական ծրագրի նախապատրաստական աշխատանքները: Զբաղվածության պետական նոր քաղաքականության իրականացման նպատակով մշակվեց և ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ զբաղվածության ռազմավարությունը: Ռազմավարական նոր մոտեցումներ առաջարկվեցին հաշմանդամների հիմնախնդիրների վերաիմաստավորման և լուծման ուղղությամբ: Լուրջ քայլեր կատարվեցին բժշկասոցիալական փորձաքննության գործընթացի կարգավորման ուղղությամբ:

Աշխատանք և զբաղվածություն

2012 թվականը նշանավորվել է զբաղվածության ոլորտում արմատական բարեփոխումների մեկնարկով: Մասնավորապես, ՀՀ կառավարության հավանությանն են արժանացել Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018թթ. ռազմավարությունը և ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը:

Մշակվել և շրջանառության մեջ է դրվել վերոնշյալ ռազմավարությունից բխող՝ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի նախագծի հայեցակարգը, որով առաջարկվում են զբաղվածության քաղաքականության մշակման և իրականացման մոտեցումներն ու մեխանիզմներն արտացոլող՝ նոր օրենքի հիմնադրույթները:

Ոլորտում աշխատանքները կազմակերպվել և իրականացվել են ՀՀ կառավարության կողմից հաստատված զբաղվածության կարգավորման 2012թ. պետական ծրագրի համաձայն:

Ընդունվել է «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով առավել հստակեցվել են լրացուցիչ վարձատրության սահմանման դեպքերը, ապահովվել

քաղաքացիական ծառայողների վարձատրության բնականոն աճի շարունակությունը՝ հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնելու դեպքում:

12 օրենքներում և ՀՀ կառավարության մի շարք որոշումներում տարեվերջին կատարված փոփոխություններով ապահովվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջը՝ աշխատողների աշխատավարձը բարձրացնել այն չափով, որ 2013թ. հունվարի 1-ից եկամտային հարկի կիրառմամբ աշխատողների զուտ աշխատավարձի նվազեցում թույլ չտրվի: Նույն միջոցառման շրջանակում 2012թ. նոյեմբերի 12-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով առաջարկվող լրացումը նպատակ է հետապնդում կանխել 2013թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը եկամտային հարկի նոր մեխանիզմի կիրառմամբ պայմանավորված՝ աշխատողների համար ՀՀ աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդվածով հաշվարկվող միջին ամսական աշխատավարձի (հարկումից հետո) հնարավոր նվազեցումները:

Շարունակվել են սոցիալական գործընկերության խորացման ու զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները: 2009թ. ապրիլի 27-ին ՀՀ կառավարության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության միջև կնքված Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետի լրացմամբ պայմանավորված՝ կողմերի 2012թ. հունիսի 30-ի համաձայնագրով Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2015թ. հունիսի 30-ը:

Կենսաթոշակային ապահովություն

2012 թվականին ևս կենսաթոշակային ապահովության ոլորտում հիմնական առաջնահերթությունը եղել է կենսաթոշակային բարեփոխումների իրականացումը:

Ըստ այդմ, ի կատարումն կենսաթոշակային բարեփոխումների ծրագրի.

- մշակվել և հաստատվել են բազմաստիճան կենսաթոշակային համակարգի գործունեությունը, այդ թվում սկսած 2013թ. հունվարի 1-ից՝ եկամտային հարկի ներդրումը ապահովող ենթաօրենսդրական ակտերը,
- մշակվել, փորձարկվել և ներդրվել է եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի ծրագրային ապահովության՝ եկամտային հարկի անձնավորված հաշվարկը ներկայացնելը և եկամտային հարկի անձնավորված հաշվառում իրականացնելն ապահովող մասը:

Միաժամանակ, շարունակական բնույթ են կրել կենսաթոշակային հաշիվների վարումն ապահովող համակարգի մշակման աշխատանքները՝ համաձայն 2011թ. ապրիլի 14-ին Հայաստանի

Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, eCSD Expert AS-ի և «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի միջև կնքված պայմանագրի:

Շարունակվել է առանձին կատեգորիայի անձանց սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացման քաղաքականությունը՝ ընդլայնելով դրամական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը, և ներքին ռեսուրսների հաշվին ավելացվել են դրամական օգնության չափերը:

Մասնավորապես՝

- 2012թ. սեպտեմբեր ամսից դրամական օգնության իրավունք է սահմանվում նաև մահացած զինծառայողների և սպայական կազմի զոհված զինծառայողի ընտանիքի՝ աշխատանքային կամ սոցիալական կենսաթոշակ ստացող անդամների համար (նախկինում նշանակվող 2-րդ կենսաթոշակի փոխարեն),
- 2013թ. հունվարի 1-ից, ի լրումն շարքային (պայմանագրային) կազմի զոհված զինծառայողների՝ դրամական օգնության իրավունք կտրվի նաև հրամանատարական (սպայական) կազմի զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին:

2012թ. իրականացված աշխատանքները հիմնականում միտված են եղել նաև պետական կենսաթոշակային ապահովության «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական շտեմարանի ներդրմանը, ինչպես նաև պետական կենսաթոշակային ապահովության ոլորտում կիրառվող էլեկտրոնային կառավարման գործիքակազմի ընդլայնմանը (կատարելագործմանը), որոշումների կայացման ընթացակարգերի, պետական այլ մարմիններից տեղեկատվության ստացման և կիրառման գործընթացի ավտոմատացումը:

2012թ. հուլիս ամսից սկսած, ամբողջ հանրապետությունում սկսվել է «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի հիմնական բաղադրիչների շահագործումը: «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի հիմնական բաղադրիչների շահագործումն իրականացվում է գործող տեղեկատվական համակարգին զուգահեռ՝ ապահովելով գործող և ներդրվող տեղեկատվական համակարգերում առկա տեղեկատվության նույնականությունը:

Փորձարկվել են նաև պետական կառավարման այլ մարմիններից տվյալներն ինքնաշխատ եղանակով ստանալու և «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի շրջանակներում կիրառելու ընթացակարգերը:

Աշխատանքներ են տարվել նաև կենսաթոշակների գործերը սկանավորելու և «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգ ներառելու (կենսաթոշակի էլեկտրոնային գործեր

կազմելու) ուղղությամբ: Սկանավորվել են շուրջ 19000 կենսաթոշակի գործ, և առաջիկայում դրանք կներառվեն «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգ:

Սոցիալական աջակցություն

2012թ. պետական նպաստների բնագավառում կատարված փոփոխությունները նպատակ են ունեցել մեծացնել ծրագրերի հասցեականությունը՝ պահպանելով սոցիալական աջակցության տրամադրման սկզբունքները:

ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի N1859-Ն որոշմամբ, 2012թ. հունվարից կրկնակի մեղմացվել է եկամտի ազդեցությունն ընտանիքի անապահովության միավորի ձևավորման վրա:

Շարունակվել են պետական նպաստների, այդ թվում՝ ընտանեկան նպաստի համակարգում առցանց եղանակով ստացվող տվյալների շրջանակի ընդլայնմանն ուղղված աշխատանքները: Նշվածն արտացոլվել է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված և ընտանեկան նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների, ինչպես նաև նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների թվում երեխա ունեցող ընտանիքների թվի հարաբերակցություններում:

Եթե 2011թ. դեկտեմբերին ընտանեկան նպաստ էին ստանում շուրջ 84 հազար նպաստառու, ապա 2012թ. դեկտեմբերին այն կազմել է 101 հազար:

2012թ. ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված 125 հազար ընտանիքներից ընտանեկան նպաստ ստացել են ամսական միջինում 96309-ը՝ ընդհանուր հաշվառված ընտանիքների շուրջ 77,04%-ը, իսկ հրատապ օգնություն, միջինում 9094 ընտանիք կամ ընդհանուր հաշվառվածների 7.2%-ը, նպաստի միջին չափը կազմել է 29350 դրամ: Ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքներին միանվագ դրամական օգնություն է տրվել երեխայի ծննդյան կապակցությամբ՝ 4610 ընտանիքի, երեխայի առաջին դասարան ընդունվելու կապակցությամբ՝ 9366 ընտանիքի, ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 124 ընտանիքի:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստ է տրվել 43449, այդ թվում՝ ընտանիքում ծնված երրորդ և հաջորդ 6418 երեխաների համար, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ՝ 11299 ընտանիքի, զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի և Մարտական խաչ շքանշանով պարգևատրված ընտանիքի նպաստ՝ 80 ընտանիքի:

2012 թվականին շարունակվել է նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993թ. հունիսի 10-ը դրամական ավանդ ներդրած անձանց փոխհատուցման վճարումները: 55 ՍԾՏՄ-ների կողմից հաշվառված շուրջ 62 հազար անձանցից վերջին յոթ տարիների ընթացքում փոխհատուցում են ստացել մինչև 55423 հերթական համարում ներառված անձը:

2012թ. հուլիսի 26-ին ՀՀ կառավարության N952-Ն որոշմամբ հաստատվել են Հայաստանի Հանրապետությունում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգ ներդնելու ծրագիրը և ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման փորձնական ծրագիրը: Փորձնական ծրագիրն իրականացվում է ՀՀ Արարատի մարզում՝ 2012թ. սեպտեմբերի 1-ից և շարունակվելու է մինչև 2013թ. մայիսի 31-ը:

Հաշմանդամների և տարեցների հիմնահարցեր

Հաշմանդամության բնագավառում իրականացրած քաղաքականությունն ու պետական նպատակային ծրագրերն ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար պայմաններ և հնարավորություններ ապահովելուն և նրանց՝ հասարակություն ներառելուն:

Գործող օրենսդրությունը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելու, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և սոցիալական ներառման ապահովման նպատակով լրամշակվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

ՀՀ կառավարության 2012թ. սեպտեմբերի 27-ի թիվ 39 արձագրային որոշմամբ հավանության է արժանացել «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2013 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը»:

2012թ. հուլիսի 19-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Եվրոպական արտադրության լսողական սարքերի ձեռքբերման համար պետական հավաստագրերի տրամադրման, դրանց գնային արժեքի որոշման կարգը և պետական հավաստագրի ձևը հաստատելու մասին» թիվ 948-Ն որոշումը, ինչը լսողության խնդիրներ ունեցող անձանց ավելի լայն հնարավորություն կտա ընտրելու իրենց լսողությանը համապատասխան լսողական սարք, լսողական սարքերի ձեռքբերման գործընթացը կդառնա առավել բաց ու մրցակցային:

Բժշկասոցիալական փորձաքննության համակարգում իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել են մի շարք խախտումներ և չարաշահումներ: Արդյունքում ձեռնարկվել են օպերատիվ և համակարգային միջոցառումներ: Աշխատանքից ազատվել են ԲՍՓ գործակալության պետը, ինչպես նաև բժշկասոցիալական փորձաքննական 8 հանձնաժողովների նախագահներ: Իրականացվել են ԲՍՓ հանձնաժողովների սպասարկման տարածքների փոփոխություններ:

ՀՀ կառավարությունը 2012թ. դեկտեմբերի 6-ին ընդունել է որոշումներ, որոնք հնարավորություն կտան ավելի վերահսկելի դարձնել ԲՍՓ գործակալության, դրա կառուցվածքային

ստորաբաժանումների և տարածքային մարմինների աշխատանքը, հստակեցնել հաշմանդամության սահմանման և փորձաքննության ժամանակ օգտագործվող չափանիշների կիրարկման գործընթացը: Մասնավորապես՝ նախատեսվում է գործակալությունում ստեղծել իրավական ապահովման, տեղեկատվական-վերլուծական, ինչպես նաև փորձաքննության բաժիններ: Բացի դա առաջին անգամ փորձաքննվող անձանց բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ հանձնաժողովի նիստին կմասնակցեն ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված մասնագետներ: Նախարարության կայքում կտեղադրվեն ԲՍՓ հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննությունների ժամանակացույցը և հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ցանկը: Փոխություններ են նախատեսվել նաև բժշկասոցիալական փորձաքննության որոշումը բողոքարկելու կարգում՝ ձևավորվում է բողոքարկման եռաստիճան համակարգ, ինչը կբարձրացնի համակարգի նկատմամբ վստահությունը:

Մշակվել և ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 20-ի արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության առաջին զեկույցը (հաշվետու ժամանակաշրջան 2010-2012թթ.):

Շարունակվել են տարեցների սոցիալական պաշտպանության բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները:

ՀՀ կառավարության 2012թ. օգոստոսի 2-ի թիվ 31 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Բնակչության ծերացման հետևանքներից բխող հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությունը և ռազմավարության իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագիրը», որի դրույթների իրականացումն ապահովվելու նպատակով ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով:

2012թ. 4-րդ եռամսյակում համաֆինանսավորվել է հայ-դանիական «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ ժամանակավոր կացարանում անօթևան մարդկանց շուրջօրյա խնամքի տրամադրման ծրագիրը, որի շրջանակներում ապաստան և սնունդ է տրամադրվում շուրջ 40 անօթևան մարդու:

2012թ. 4-րդ եռամսյակում բնակեցվեցին Մարալիկի սոցիալական բնակարանային համալիրի 3 շենքերը: Սոցիալական բնակարաններով ապահովվեց 59 ընտանիք: Ծրագիրը շարունակական է, ուստի սոցիալական բնակարանների համալիրի տեխնիկական սպասարկման նպատակով, ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 2-ի N 1009-Ն որոշմամբ ստեղծվեց «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

Բռնադատվածի կարգավիճակ ունեցող 10 քաղաքացի բնակարանային պայմանների բարելավման նպատակով ստացել է արտոնյալ պայմաններով երկարաժամկետ վարկ:

Հայրենական մեծ պատերազմի 97 վետերանի տրամադրվել է «Արզնի» առողջարանի անվճար ուղեգիր:

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցեր

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում շարունակվում է երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի հզորացմանը, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանությանը, գենդերային քաղաքականության ներդերմանը, բռնության և թրաֆիքինգի երևույթի կանխարգելմանն ուղղված քաղաքականության իրականացումը:

Մանկատներում իրականացվել է առանց ծնողական խնամքի մնացած 724 երեխաների խնամք, որից 409-ը՝ մասնագիտացված մանկատներում, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների 735 երեխաների խնամք՝ երեխաների խնամքի ու պաշտպանության գիշերօթիկ 8 հաստատություններում:

Իրականացվել է երեխաների ցերեկային հոգաժության 2 կենտրոններում դիսկի խմբի շուրջ 200 երեխաներին և նրանց ընտանիքներին ծառայությունների մատուցում: 50 երեխայի ցերեկային խնամքի ծառայություններ են տրամադրվել նաև «Հատիկ» հաստատությունում:

2012 թվականին հաստատություններից 30 երեխա վերադարձել է կենսաբանական ընտանիք, 20 երեխայի մուտք հաստատություն կանխարգելվել է:

«Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրի շրջանակներում «Հայ օգնության միություն» հասարակական կազմակերպության հետ համատեղ 2012 թվականին աջակցություն է ցուցաբերվել 40 շահառուի (շրջանավարտների ուսումնասիրություն և անհատական ծրագրերի կազմում, սոցիալական պատրոնաժ, մասնագիտական կողմնորոշում, ուսուցում, վերապատրաստում, հիմնական կարիքները բավարարող եկամտի ապահովում՝ դրամական օգնություն, կրթաթոշակի հատկացում, միանվագ դրամական օգնություն, բժշկական օգնության տրամադրում, բժշկական խորհրդատվություն, իրավաբանական աջակցության տրամադրում):

Իրականացվել է «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության Տավուշի մարզի 4 ցերեկային կենտրոններին աջակցության ծրագիրը, որի շրջանակներում աջակցություն է ստացել շուրջ 250 շահառու:

Իրականացվել է «Խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրում» ծրագիրը, ըստ որի ներկայումս մանկատան 22 երեխա խնամվում է 21 ընտանիքում:

ԱՄՔՈՐ հասարակական կազմակերպության հետ 2011 թվականին կնքված պայմանագրի համաձայն իրականացվել է «Թրաֆիկինգի զոհերին պետական աջակցություն» ծրագիրը, որի շրջանակներում շուրջ 32 շահառուների տրամադրվել է առաջնային օգնություն, կացարան, վերականգնողական ծառայություններ, բժշկական, սոցիալական, հոգեբանական օգնություն և իրավաբանական խորհրդատվություն:

Կենտրոնացված հաշվառման են վերցվել որդեգրման ենթակա 126 երեխա, որդեգրողի 346 թեկնածու, որդեգրվել է 68 երեխա, ինչպես նաև կենտրոնացված հաշվառման է վերցվել առանց ծնողական խնամքի մնացած 201 երեխա:

Ժողովրդագրության հիմնահարցեր

2012 թվականին կատարված աշխատանքները հիմնականում բխել են ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 27-ին հաստատված՝ ՀՀ-ում ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2012 թվականի պետական ծրագրից:

Հանրապետությունում բազմազավակ ընտանիքների կարգավիճակի և սոցիալական երաշխիքների ամրագրման նպատակով մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետությունում բազմազավակ ընտանիքների աջակցության պետական ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Իրականացվել է «Հանրապետության երիտասարդների միգրացիոն տրամադրվածություններն ու դրանց ազդեցությունները երիտասարդների ամուսնական և վերարտադրողական վարքագծի վրա» հետազոտությունը, որում որպես թիրախ ընտրվել են երիտասարդների երկու խումբ՝ ուսանողներ/սովորողներ և մասնագիտական կրթություն ստացած 18-35 տարեկան երիտասարդներ: Հետազոտությամբ ձեռք բերված արդյունքները կկիրարկվեն ժողովրդագրական քաղաքականության շրջանակներում նոր փաստաթղթերի և իրավական ակտերի նախագծերի մշակման ժամանակ:

Տարածքային կառավարում

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են ՀՀ կառավարության 02.02.2012թ. թիվ 135-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հայեցակարգի միջոցառումների ծրագրից բխող մի շարք գործառույթներ՝

- Մշակվել են տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման մոտեցումների և աղբյուրների վերաբերյալ առաջարկություններ.

- ՀՀ տարածքային կառավարման նախարարության և Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագրի համատեղ համագործակցության արդյունքում վերանայվել և թարմացվել է «Համայնքների տիպաբանության զարգացում» ծրագրի տեղեկատվական բազան.

- Վերլուծվել է աղքատության մոդիֆիկացված համաթվի հիման վրա գնահատված համայնքային աղքատության կրճատման վրա 2011-2012թթ. բոլոր աղբյուրներով կատարված կապիտալ ներդրումների ազդեցությունը: 2011-2012թթ. բոլոր աղբյուրներով իրականացված կապիտալ ներդրումների ազդեցության գնահատման արդյունքում պարզվել է, որ թվով 35 քաղաքային համայնքներում կրճատվել է աղքատության մակարդակը:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ մարզերի մի շարք հրատապ խնդիրների լուծման նպատակով ՀՀ պետական բյուջեով նախատեսված կառավարության պահուստային ֆոնդի հաշվին իրականացվել են շուրջ 17.4 մլրդ դրամի շինարարական աշխատանքներ: Դրանք հիմնականում եղել են կրթական, նախադպրոցական, մշակութային, առողջապահական հաստատությունների, համայնքային կենտրոնների, ճանապարհաշինության, ջրամատակարարման, գազիֆիկացման, ոռոգման ցանցերի, բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգմանն ու վերակառուցմանն ուղղված ծրագրեր:

Իրականացվել են ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի N 1233-Ն որոշման N 3 հավելվածով նախատեսված ժամկետում (01.01.2013թ.) ՀՀ քաղաքային համայնքներում ներքին աուդիտի համակարգի ներդրման աշխատանքներ, որոնց արդյունքում թվով 41 քաղաքային համայնքներում ստեղծվել են ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի N 165-Ն հրամանով ներքին աուդիտի ստորաբաժանումներին ներկայացվող հիմնական պահանջներին համապատասխանող բաժիններ:

Առողջապահություն

Առողջապահության ոլորտում ՀՀ կառավարության առաջնահերթ ռազմավարական նպատակներն են՝ բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը, բնակչության առողջության առաջնային պահպանումը, մոր և մանկան առողջության պահպանումը, բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության տրամադրումը, սոցիալական և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների բուժօգնության ապահովումը, դեղագործական գործունեության կազմակերպումը, բնակչությանը անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերով ապահովումը:

Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովում

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը պետական կարևորագույն խնդիրներից է և երաշխավորվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

2012 թվականի ընթացքում շարունակվել է Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման գործընթացը կանոնակարգող օրենսդրական փաստաթղթերի մշակումը և դրանց գործադրումը՝ պայմանավորելով նպատակային քաղաքականությունը: Ոլորտը կանոնակարգող մի շարք գործընթացներ են իրականացվել Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների՝ երկրում ներդրման շրջանակներում: 2012 թվականին չեն արձանագրվել այնպիսի վարակիչ հիվանդություններ, ինչպիսիք են դիֆթերիան, սուր պոլիոմիելիտը, կարմրախտը, նորածնային փայտացումը, մալարիան, կատաղությունը, խոլերան, լեպտոսպիրոզը, ռիկետցիոզները (այդ թվում՝ բծավոր տիֆ, Բրիլլի հիվանդություն) և այլն, արձանագրվում են կապույտ հազի և խոզուկի եզակի դեպքեր: Հեպատիտ Բ-ով հիվանդացությունը նվազել է 1.15 անգամ: Հայաստանն՝ ի թիվս եվրոպական այլ երկրների, ՄԱԿ-ի Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից դեռևս 2002թ.-ից հավաստագրվել է և շարունակում է մնալ որպես պոլիոմիելիտից ազատ գոտի:

Հանրապետությունում գործում է գրիպի համաճարակաբանական նոր, գործուն համակարգ, որը հնարավորություն է ընձեռում հանրապետությունում ժամանակին և լիարժեք կազմակերպել և իրականացնել կանխարգելիչ ու հակահամաճարակային համալիր միջոցառումներ՝ ուղղված գրիպի և սուր շնչառական վարակների տեղայնացմանը: 2012 թվականին գրիպի սեզոնի ընթացքում նշված հիվանդությունների աճ չի գրանցվել:

Տեսչական ստուգումների անաչառության և օբյեկտիվության բարձրացման և անհարկի, չհիմնավորված ստուգումների բացառումն ապահովելու համար ՀՀ ԱՆ պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունում ներդրվել է ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգը: ՀՀ Կառավարության 2012 թվականի ապրիլի 4-ի թիվ 522-Ն որոշմամբ հաստատվել է ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը:

Բնակչության առողջության առաջնային պահպանում

Որպես առաջնահերթություն շարունակվել է առողջության առաջնային պահպանման ոլորտի զարգացումը՝ որպես առողջապահության համակարգի բարեփոխումների հիմք և բնակչությանը

ցուցաբերվող բժշկական օգնության մատչելիությունն ապահովող հիմնական օղակ: Առաջնային օղակում իրականացվող բուժօգնության և մատուցվող ծառայությունների որակի բարելավման նպատակով շարունակել են իրենց գործունեությունը ՀՀ մարզերում և Երևանում ստեղծված որակի վերահսկման խորհուրդներն ու որակի համակարգողները: ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի ապրիլի 23-ի N879-Ա հրամանով հաստատվել են առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցողների՝ ըստ կատարողականի ֆինանսավորման նպատակով գործունեությունը գնահատող թվով 30 ցուցանիշներ՝ նախորդ 10 ցուցանիշի փոխարեն:

ՀՀ առողջապահության նախարարի 31.01.2012թ. N143-Ա հրամանով հաստատվել են «ԱԱՊ բժիշկների կողմից կրծքագեղձի քաղցկեղի վաղ հայտնաբերման», «Գլաուկոմայի վաղ հայտնաբերման» և «ԱԱՊ բժշկի կողմից կանխարգելիչ այցի կազմակերպման» ուղեցույցները: Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպություններ բնակչության հաճախումների թիվը մեկ բնակչի հաշվով 2012 թվականին կազմել է մոտ 3.8 հաճախում: ՀՀ առողջապահության նախարարի 21.05.2012թ. N°1154-Ա, 06.09.2012թ. N°2048-Ա, 25.12.2012թ. N°3040-Ա հրամաններով հաստատվել են «Ըստ առանձին տեղակայումների (հանրապետության բնակչության շրջանում առավել տարածված) չարորակ նորագոյացությունների վաղ հայտնաբերման և բուժման ուղեցույցները», «Միջուկային բժշկության կիրառմամբ պայմանավորված հետազոտման, ախտորոշման ու բուժման գործնական բաղադրիչների ներառմամբ ուռուցքաբանության ոլորտի չափորոշիչները», «Թոքի քաղցկեղի քիմիաթերապևտիկ բուժման սխեմաները»: 2012 թվականին ներդրվել է ժառանգական անամնեզում (ծնողներ, քույր, եղբայր) գլաուկոմա, 2-րդ տիպի շաքարային դիաբետ, զարկերակային գերճնշում, սրտամկանի ինֆարկտ, ուղեղի կաթված ունեցող 18 և ավելի բարձր տարիքի անձանց, ինչպես նաև ժառանգական անամնեզում (քույր, մայր, տատիկ՝ մայրական գծով) կրծքագեղձի քաղցկեղ ունեցող 18 և ավելի բարձր տարիքի աղջիկների/կանանց էլեկտրոնային ռեգիստրների վարումը՝ առողջության առաջնային պահպանման հաստատություններում:

Շտապօգնության ծառայությունների կողմից մատուցվող բժշկական օգնության որակի բարելավման նպատակով Երևանում և Շիրակի մարզում գործարկվել է թվային ռադիոկապ, որը հնարավորություն է ընձեռում օպերատիվ կերպով կապ հաստատել դիսպետչերական կենտրոնների, շտապօգնության մեքենաների, շտապօգնության բժիշկների, ինչպես նաև հիվանդանոցների անհետաձգելի օգնության բաժանմունքների միջև:

Մոր և մանկան առողջության պահպանում

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից գերակա խնդիրների շարքում առավել կարևորվել են մայրերին և երեխաներին ուղղված ծրագրային ուղղությունները: Արդյունքում ծննդոգնության և երեխաների հիվանդանոցային օգնության ծրագրերի ֆինանսավորման աճ է արձանագրվել շուրջ 3.5 անգամ (2006 թվականին՝ ծննդոգնության ծրագրով՝ 1.99 մլրդ դրամ և երեխաների ծրագրով՝ 1.77 մլրդ դրամ, 2012 թվականին՝ համապատասխանաբար 6.4 մլրդ դրամ և 6.7 մլրդ դրամ):

Բյուջետային հատկացումների այս աննախադեպ աճը հնարավորություն տվեց ինչպես շարունակաբար իրականացնել 2008 թվականի հուլիսի 1-ից ներդրված ծննդոգնության պետական հավաստագրի ծրագիրը, այնպես էլ, որպես դրա տրամաբանական շարունակություն, 2011 թվականի հունվարի 1-ից համակարգում ներդնել երեխայի առողջության պետական հավաստագրի ծրագիրը:

Ծննդոգնության և երեխայի առողջության պետական հավաստագրերի ծրագրերի իրականացման արդյունքում արձանագրվել են հետևյալ դրական արդյունքները: Հղիների նախածննդյան հսկողության և վաղ հաշվառման ցուցանիշն աճել է շուրջ 35%-ով, հաստատություններում ոչ պաշտոնական վճարումները կրճատվել են 4 անգամ: Շնորհիվ վաղ հաշվառման բարելավվել են հղիների նախածննդյան սկրինինգի ցուցանիշները, մասնավորապես՝ ՄԻԱՎ տեստավորման ցուցանիշը գերազանցել է 95%-ը: Բարելավվել են նորածինների պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշները՝ կազմելով 99.3% տուբերկուլյոզի դեմ և 97,8%՝ հեպատիտ Բ-ի դեմ: Շուրջ 20%-ով աճել է երեխաների դիմելիությունը հիվանդանոց, կրճատվել է 0-7 տարեկան երեխաների հիվանդանոցային մահաբերությունը՝ 1.6%-ից մինչև 1.08%:

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության տրամադրում, սոցիալական և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների բուժօգնության ապահովում

Սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների վաղ հայտնաբերումը, հիվանդների բուժօգնության կազմակերպումը և շարունակական հսկողությունը, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի և հիգիենայի վերաբերյալ գիտելիքների քարոզչությունը սկզբունքային նշանակություն ունի բնակչության առողջության պահպանման հարցում, նպատակն է՝ բնակչության աղքատ խավերի սոցիալապես անապահով առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության և սպասարկման մատչելիության բարձրացումը և առավելագույն ապահովումը: Կարևոր է նաև սոցիալական առումով հատուկ նշանակություն ունեցող և անապահով բնակչության համար մեծ դիսկ ներկայացնող այնպիսի հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետությունը, կանխարգելումը և հետագա տարածումը,

ինչպիսիք են հոգեկան, նարկոլոգիական, ինֆեկցիոն, սեռական ճանապարհով փոխանցվող, արյունաբանական (այդ թվում՝ օնկոհեմոտոլոգիական) հիվանդությունները, ախտորոշված չարորակ նորագոյացությունները, վերակենդանացման և անհետաձգելի միջոցառումներ պահանջող հիվանդությունները և վիճակները, մալարիան, տուբերկուլոզը, ՄԻԱՎ-ը և այլն:

Դեղագործական գործունեության կազմակերպում, դեղերով և տեխնոլոգիաներով ապահովում

2012 թվականին կարևորվել է կենտրոնացված կարգով ձեռքբերվող դեղերի անվանացանկի համալրումը նորագույն բուժման սխեմաների համար անհրաժեշտ դեղերով, պարբերաբար իրականացվել են դեղագործական շուկայում դեղերի գների ուսումնասիրություններ, որը հնարավորություն է տվել բժշկական հաստատությունների կողմից բնակչությանն անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերով ապահովելիս վերահսկել դրանց գները:

Հաշվի առնելով դեղերի ոլորտում տարվող քաղաքականությունը և ակնկալվող բարեփոխումները՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից շրջանառության մեջ է դրվել «Դեղերի մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը, որով կկարգավորվեն Հայաստանի Հանրապետությունում դեղերի, ինչպես նաև կենսակտիվ հավելումների շրջանառության հետ կապված հարաբերությունները, սահմանվել են «կեղծ դեղ», «պիտանիության ժամկետ» հասկացությունները և դրանց իրացումը, ոչնչացման և վերահսկման մեխանիզմները:

Մշակվել է «Բնակչության սահմանված սոցիալական խմբերին անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրման գործընթացի պարզեցման և բարելավման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Դեղերի մատչելիության ապահովմանը կնպաստի նաև ՀՀ-ում դեղերի գների պետական կարգավորումը, որն առաջարկվում է «Դեղերի մասին» նոր օրենքի նախագծում:

Կրթություն և գիտություն

Կրթության բնագավառում ՀՀ կառավարության 2012 թվականի գերակա խնդիրներն են եղել համայնքներում նախադպրոցական կրթության ինստիտուցիոնալ հիմքերի ներդրումը, հանրակրթության համակարգում նոր գործառույթների և ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրումը, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգում նոր բովանդակային հենքի ներդրումը և կադրերի մասնագիտական զարգացումը, բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում Բոլոնիայի գործընթացի հիմնական ուղղությունների իրականացումը:

Հանրակրթության որակի ապահովման տեսանկյունից կարևորվում է երեխաների վաղ ընդգրկումը կրթական ծրագրերում: Նախադպրոցական կրթության համակարգի զարգացման ապահովումը պայմանավորված է նախադպրոցական կրթության ոլորտի բարելավման հիմնախնդիրների իրականացմամբ, նախադպրոցական և տարրական կրթության շարունակականության ապահովմամբ, որը բխում է նաև Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագրից:

ՀՀ տարբեր տարածքներում նախադպրոցական կրթական ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով՝ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում, իրականացվել են նախադպրոցական կրթության կազմակերպման այլընտրանքային մոդելներ: Ծրագրի նպատակն է՝ վարկային միջոցներից տրամադրվող ներդրումային, ինչպես նաև համայնքների ընթացիկ ծախսերի ներդրումների միջոցով համապատասխան պայմանների ապահովումը, նախադպրոցական կրթության մեջ 5-6 տարեկանների ընդգրկվածության մեծացումը, մանկավարժների աշխատատեղերի ընդլայնումը:

ՀՀ մարզերի նախադպրոցական հաստատություններ չունեցող և թերկոմպլեկտավորված մանկապարտեզներ ունեցող 69 համայնքներում իրականացվել են նախադպրոցական ծառայությունների կազմակերպման ծրագրեր, մասնավորապես՝ ՀՀ Կոտայքի մարզի՝ 13, ՀՀ Լոռու մարզի՝ 15, ՀՀ Տավուշի մարզի՝ 10 և ՀՀ Շիրակի մարզի 31 համայնքների հաստատություններում: Արդյունքում ավագ տարիքային խմբի երեխաների ընդգրկվածությունն ավելացել է 1600-ով:

Հանրակրթության ոլորտի գերակա խնդրի լուծմանն ուղղված քայլերը բխում են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի դրույթներից: 2012 թվականին հանրակրթության ոլորտում իրականացված բարեփոխումներն ուղղված են եղել կրթության դասագրքերի և ուսումնառժամանակ գրականության՝ այդ թվում էլեկտրոնային ուսումնական նյութերի, բովանդակային որակի ապահովման և ներդրման աշխատանքներին, ինչպես նաև հանրակրթության ոլորտի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանն ու կարողությունների հզորացմանը:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների միջև կրթական ծառայությունների մատուցման որակի և արդյունավետության բարձրացմանն ուղղված մրցակցության ձևավորման տեսանկյունից կարևորվել են դպրոցի ներքին և արտաքին գնահատման գործիքակազմի և վարկանիշավորման համակարգի մշակման ու ներդրման խնդիրները:

Հանրակրթության ոլորտում կրթության որակի բարելավման ուղղությամբ իրականացվել է ուսուցիչների վերապատրաստման ծրագիր՝ ուսուցման ժամանակակից մեթոդների և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ:

Իրականացվել են նաև ՀՀ մարզերի հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների ատեստավորման աշխատանքները, որի արդյունքում հանրապետությունում ատեստավորման հանձնաժողովները 6742 ուսուցչի համար կայացրել են «Համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին» որոշումը:

Հանրակրթության որակի բարելավման տեսանկյունից կարևորվում են տեղեկատվական տեխնոլոգիաների և էլեկտրոնային ուսումնական նյութերի ներդրման, դպրոցների համար որակյալ ինտերնետի հասանելիության խնդիրները: Իրականացվել է «Հայկական կրթական միջավայր» պորտալի (www.armedu.am) շահագործումը՝ պարբերաբար թարմացվել է կրթական տեղեկատվությունը, հարստացվել են ուսումնամեթոդական պաշարները, տեղադրվել են նոր կրթական փաստաթղթերը, դասագրքերի նախագծերը: Շահագործվել է «Հեռավար ուսուցում» համակարգը (<http://learning.armedu.am/>), կազմակերպվել են ավագ դպրոցի 10-րդ դասարանի խորացված հոսքի ութ ուսումնական առարկաների («Հայոց լեզու», «Ռուսերեն», «Անգլերեն», «Հանրահաշիվ», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Հայոց պատմություն») հեռավար դասընթացները:

2012 թվականին ավարտվել են Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցին նոր դպրոցների միացման աշխատանքները՝ 1401 ուսումնական հաստատություններ ընդգրկված են մեկ միասնական ցանցում:

Իրականացվել են էլեկտրոնային կրթական պաշարների շտեմարանի ստեղծման և փորձնական շահագործման աշխատանքները: «Պաշարների շտեմարան» կայքը պատրաստվել է Վիվասել ԷմՏեՀս հովանավորությամբ և գործարկվում է <http://lib.armedu.am> հասցեում: Ենթակայքում տեղադրվել է ավելի քան 840 էլեկտրոնային պաշար, այդ թվում՝ հիմնական դպրոցի 63 դասագիրք, 32 ուսումնական ձեռնարկ և 625 ուսումնամեթոդական նյութ:

Նորարարական տեխնոլոգիաների ներդրման նպատակով տարբեր հանրակրթական ուսումնական հաստատություններում հիմնվել են 5 ներթուրքային դասարաններ:

2012 թվականին իրականացվել են նաև հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանում «Շախմատ» առարկայի ներդրման նպատակով համապատասխան դասագրքի, ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկների մշակման աշխատանքները:

Կրթության բնագավառի զարգացումներում առաջնային տեղ է տրվել մասնագիտական կրթության ոլորտին: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլում էական նշանակություն ունեն մասնագիտական կրթության ապահովումն ու մատչելիությունը, որը հանրապետության տնտեսական աճի, աղքատության ու անհավասարության մեղմման կարևորագույն գործոններից մեկն է:

Բարձրագույն կրթության բարեփոխումները հիմնականում ուղղված են Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրականացմանը: Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները նույնպես միտված են եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը:

Մշակվել են նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների 17 պետական կրթական չափորոշիչներ, համապատասխան ուսումնական պլաններ և մոդուլային ծրագրեր՝ սոցիալական գործընկերների պարտադիր ներգրավմամբ: Մշակված չափորոշիչները ստացել են դրական փորձագիտական եզրակացություն ստեղծված ոլորտային հանձնաժողովների կողմից և 2012-2013 ուսումնական տարվանից ներդրվել են ուսումնական հաստատություններում:

Միաժամանակ, վերանայվել են 12 մասնագիտությունների և որակավորումների համար նախկինում մշակված և ներդրված չափորոշիչները, որոնք համապատասխանեցվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակված զբաղմունքների նկարագրերին:

2012 թվականին մշակվել և ՀՀ կառավարության կողմից հավանություն է տրվել «Մասնագիտական կրթության և ուսուցման 2012-2016 թվականների բարեփոխումների ծրագրին և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցին»: Ծրագրով սահմանվել են մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտի զարգացման գերակայություններն ու ծրագրային ուղղությունները:

ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի ներդրման գործարկումն ապահովելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել են «Կրթության որակավորումների շնորհման կարգը» և «Նախկինում շնորհված որակավորումների համապատասխանեցման կարգը», ինչպես նաև հաստատվել է «Օտարերկրյա պետությունների որակավորումների ճանաչման կարգը», որոնց համաձայն կրթության որակավորումների ազգային համակարգը պետք է դառնա Հայաստանում կրթության և ուսուցման համընդհանուր համակարգի բաղկացուցիչ մաս, իսկ շնորհված որակավորումների որակը պետք է ապահովված լինի պետական չափորոշիչներով, որոնք անցել են եվրոպական վերլուծության քննությունը, և պետք է նպաստի աշխատուժի շարժունակությանը՝ տեղական և միջազգային մակարդակում:

Մշակվել են ուսանողների ֆինանսական վիճակի գնահատման չափանիշները և ուսանողների ֆինանսական աջակցության ծրագիրը: ՀՀ կրթության և գիտության նախարարի և ՀՀ էկոնոմիկայի նախարարի համատեղ հրամանով հաստատված ուսման վարձերի ձևավորման մեթոդաբանությունն ուղարկվել է բուհերին՝ դրա հիման վրա ուսման վարձերը փորձնական

հաշվարկելու նպատակով: Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ներդրման նպատակով «Սիներջի» ընկերության հետ կնքվել է պայմանագիր, որի համաձայն մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ներդրման աշխատանքները կավարտվեն 2013 թվականի մայիսին:

Հաստատվել է «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգը՝ մեթոդաբանություն, ցուցանիշներ, հաշվարկի մեխանիզմ», որի փորձարկումը նախատեսվում է 2013 թվականից:

Մասնագիտական կրթության որակի ապահովման տեսանկյունից կարևորվում է ժամանակակից լաբորատորիաների ցանցի ստեղծումը: Այդ նպատակով Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի մասնաշենքից հատկացվել է 1800մ2 տարածք, որի շինարարական աշխատանքների ավարտը նախատեսվում է 2013 թվականի ապրիլին:

Իրականացվել են աշխատանքներ ՀՀ-ում գործող բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը կրթության դասակարգման միջազգային ստանդարտներին համապատասխանեցման ուղղությամբ: Այս դասակարգումը թույլ կտա ապահովել ազգային ցուցանիշների համադրելիությունն՝ ըստ «EUROSTAT»-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի դասակարգման: Կրթության միջազգային ստանդարտների դասակարգումն ուղղված կլինի կրթական ծրագրերի և նրանց շնորհվող որակավորումների կանոնակարգմանը:

Սպորտի և երիտասարդության հարցեր

Սպորտի և երիտասարդության ոլորտում կառավարության վարած պետական քաղաքականության իրականացումը ենթադրում է մի շարք հիմնական խնդիրների լուծում, որոնք ներկայումս գտնվում են նախարարության ուշադրության կենտրոնում՝ զանգվածային ֆիզկուլտուրային-առողջարարական՝ համայնքային, տարածաշրջանային, մարզային և հանրապետական միջոցառումների, փառատոների անցկացում, հաշմանդամների տարբեր խմբերի շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքների հետագա բարելավում, հաշմանդամ մարզիկների, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին հանրապետության մարզիկների մասնակցությանն աջակցություն, ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և առողջ ապրելակերպի արմատավորման քարոզմանն ուղղված համալիր միջոցառումների և ծրագրերի իրականացում, ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակման գործընթացի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում բարեփոխումներ կատարելու, Եվրախորհրդի ծրագրերին, սպորտի եվրոպական խարտիայի պահանջներից բխող հիմնահարցերին, խնդիրներին ծանոթացնելու նպատակով հանրապետական, մարզային, համայնքային սեմինար-

խորհրդակցությունների անցկացում, բնակչության, մասնավորապես՝ ուսումնական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության անընդհատությանը, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության դաստիարակությանը նպաստող միջոցառումների անցկացում:

2012 թվականին իրականացվել է 50 մլն ՀՀ դրամ արժողությամբ գույքային ծրագիր:

Կառավարության քաղաքականության առաջնահերթ խնդիրը և ուղղությունն են համարվում մարզական հերթափոխի պատրաստման համակարգի պահպանումն ու զարգացումը, մատուցվող ծառայությունների բարելավումը, դրանց որակի և արդյունավետության բարձրացումը, ինչն իր հերթին կնպաստի երեխաների և պատանիների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացման զարգացմանը:

2012 թվականին իրականացվել է մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման ծրագիր՝ 6,956.2 հազ. ՀՀ դրամ արժեքով:

Բարձրագույն սպորտի մեծ նվաճումների բնագավառում 2012 թվականին կառավարության իրականացրած քաղաքականությունն ուղղված է՝

- սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության ապահովմանը,
- սպորտի զարգացման նպատակային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը,
- մարզիչ-մանկավարժների վերապատրաստման աշխատանքների կազմակերպմանը,
- օլիմպիական շարժման զարգացմանը, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի և մարզական ֆեդերացիաների գործունեության աջակցմանը,
- մարզաձևերի զարգացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ամրապնդմանն ու զարգացմանը,
- միջազգային, այդ թվում՝ սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը,
- մարզաձևերի հավաքական թիմերի գիտամեթոդական աշխատանքների ապահովմանը,
- միջպետական մարզական հարաբերությունների զարգացմանը:

Մասսայական և մանկապատանեկան սպորտի բնագավառում նախարարության իրականացրած քաղաքականությունն ուղղված է՝

- տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների մարզական ոլորտի աշխատանքների ակտիվացմանը,
- մարզական ակտիվի ներուժի օգտագործմանը, մարզական միջոցառումներում գյուղական երիտասարդության ներգրավմանը,
- հասարակության լիարժեք անդամներ հաշմանդամ-մարզիկների համար սպորտով զբաղվելու համապատասխան պայմանների ստեղծմանը:

Երիտասարդական ոլորտում կառավարության կողմից տարվող պետական քաղաքականությունը ենթադրում է զարգացնել մարզերում իրականացվող երիտասարդական պետական քաղաքականությունը, բարձրացնել հասարակական, քաղաքական զարգացումներին նրանց մասնակցության աստիճանը, նպաստել երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական դաշտի զարգացմանը, երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացմանը, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպմանը, ուսումնասիրել առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և բարելավել երիտասարդների կենսապայմանները, հայտնաբերել և խրախուսել տաղանդավոր երիտասարդներին, նպաստել երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը, ակտիվացնել, զարգացնել համագործակցությունը միջազգային երիտասարդական կառույցների հետ, ստեղծել պայմաններ երիտասարդությանը անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու համար, ստեղծել պայմաններ նրանց լիակատար ինքնադրսևորման համար:

Էներգետիկա և բնական պաշարներ

Հայկական ԱԷԿ-ի N 2 Էներգաբլոկի «ստրեսս-տեստի» անցկացում: Ճապոնական Ֆուկուշիմա ԱԷԿ-ում տեղի ունեցած վթարից հետո Հայաստանի Հանրապետությունն իր համաձայնությունը հայտնեց Հայկական ԱԷԿ-ում անցկացնել «ստրեսս-տեստ»՝ Արևմտյան Եվրոպայի միջուկային անվտանգության կարգավորող մարմինների կողմից առաջարկվող ծրագրով: Այդ նպատակով 2012 թվականի մայիսին հայտարարված մրցույթում հաղթող ճանաչվեց Բելգիական «Տրակտեբել» ընկերությունը: Ընկերության ներկայացուցիչները հաստատված ժամանակացույցի համաձայն 2012 թվականին այցելեցին Հայկական ԱԷԿ և վերջինիս մասնագետների հետ քննարկեցին «ստրեսս-տեստի» աշխատանքներում ԵՄ-ի կողմից ցուցաբերվող տեխնիկական աջակցության հետ կապված հարցերը:

Բելգիական ընկերության օգնությամբ վեց ուղղություններով սկսվեցին Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 Էներգաբլոկի «ստրեսս-տեստի» անցկացման աշխատանքները, որոնք կավարտվեն 2013 թվականին:

Միջուկային էներգաբլոկների նախագծման բնագավառում ՀՀ-ում միջազգային նորմատիվ փաստաթղթերի ներդաշնակեցման աշխատանքների մեկնարկ: Նոր միջուկային էներգաբլոկի նախագծման աշխատանքները սկսելու նպատակով մշակվել է միջուկային էներգաբլոկների կառուցման համար անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթերի ցանկը: Ցանկը քննարկվել է ՀՀ քաղաքաշինության և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների հետ, որի արդյունքում ճշտվել է

միջուկային էներգաբլոկների նախագծման և կառուցման աշխատանքների համար անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթերի և ստանդարտների գործունեության կարգավիճակը ՀՀ-ում, և պատրաստվել է ՀՀ-ում չգործող առաջնահերթ նորմատիվ փաստաթղթերի և ստանդարտների ցանկը:

Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման մեկնարկ:
Ավարտվել են Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի նախագծային աշխատանքները: 14.09.2012թ. «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի կողմից էլեկտրահաղորդման գծի նախագծի վերաբերյալ տրվել է բնապահպանական փորձաքննական դրական եզրակացություն, պայմանով, որ ամբողջովին փոխհատուցվի օդային գծի կառուցման ժամանակ անտառային տնտեսությանը պատճառված վնասը: Օբյեկտի շինարարության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա մեղմացնելու նպատակով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն պետք է անտառապատում իրականացնի այդ նպատակով հատկացված տարածքներում:

«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի կողմից տրվել է 400/220 կՎ «Նորավան» ենթակայանի նախագծի վերաբերյալ տեխնիկական դրական փորձաքննական եզրակացություն:

12.08.2012թ. կատարվել է ծրագրի մեկնարկը: Ծրագիրը նախատեսվում է ավարտել 18 ամսում:

«Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության» ծրագիր: 2011թ. հունիսի 1-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև կնքվել է «Էլեկտրամատակարարման հուսալիություն» վարկային համաձայնագիր՝ 39 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով, որը ուժի մեջ է մտել 2011թ. նոյեմբերի 28-ին:

Ծրագրի շրջանակներում 2012թ. անցկացված գլխավոր կապալառուի ընտրության միջազգային մրցույթի արդյունքում ծրագրի գլխավոր կապալառու է ընտրվել հնդկական Kalpataru Power Transmission LTD ընկերությունը: Գլխավոր կապալառուի պայմանագրով նախատեսվում է մոտ 25.0 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ աշխատանքների իրականացում՝ 36 ամսվա ընթացքում:

Մեկնարկեց Մեղրի ՀԷԿ-ի շինարարությունը: ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև Արաքս սահմանային գետի վրա հիդրոէլեկտրակայաններ կառուցելու և շահագործելու նպատակով միջկառավարական երկու համաձայնագրերը ստորագրվել են դեռևս 2007թ. և 2008թ., որոնք վավերացվել են երկու երկրների խորհրդարանների կողմից: 2012 թ. նոյեմբերի 8-ին տեղի ունեցավ Մեղրի ՀԷԿ-ի շինարարության հիմնարկերը՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ: Միջոցառմանը մասնակցելու համար Սյունիք էր ժամանել նաև ԻԻՀ

ներկայացուցչական պատվիրակությունը՝ էներգետիկայի նախարար, հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Մաջիդ Նամջուի գլխավորությամբ:

Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի վթարային փոխմատակարարումների իրականացման «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի էլեկտրաէներգետիկական համակարգերի զուգահեռ աշխատանքի մասին» և «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև վթարային իրավիճակների ժամանակ էլեկտրաէներգիայի մատակարարման մասին» համաձայնագրերի ստորագրում: 2012 թվականի օգոստոսին ստորագրվեցին Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի վթարային փոխմատակարարումների իրականացման «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի էլեկտրաէներգետիկական համակարգերի զուգահեռ աշխատանքի մասին» և «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև վթարային իրավիճակների ժամանակ էլեկտրաէներգիայի մատակարարման մասին» համաձայնագրերը: ԱՄՆ USAID կազմակերպության օժանդակությամբ կողմերի միջև սկսվեցին քննարկումները Հայաստանի և Վրաստանի տարածքներով էլեկտրաէներգիայի տարանցիկ մատակարարումներ իրականացնելու խնդրի շուրջ բազիսային չափորոշիչների համաձայնեցման վերաբերյալ:

էներգետիկ միջազգային գործակալության ստանդարտներին համապատասխան ազգային էներգետիկ հաշվեկշռի մշակման համար անհրաժեշտ տվյալների հավաքման և հաշվետվությունների ներկայացման համակարգերի, կանոնների և ընթացակարգերի սահմանում: ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության նախաձեռնությամբ Միացյալ Նահանգների Միջազգային Զարգացման Գործակալության (USAID) տեխնիկական աջակցության ներքո Տետրա Տեկ (Tetra Tech) խորհրդատվական ընկերության կողմից պատրաստվեց Հայաստանի ազգային էներգետիկ հաշվեկշռի մշակման ճանապարհային քարտեզի նախագիծը և Հայաստանի 2010թ. էներգետիկ հաշվեկշիռը՝ ըստ էներգետիկ միջազգային գործակալության և Եվրամիության վիճակագրական ծառայության ստանդարտների պահանջների: Հայաստանի ազգային էներգետիկ տարեկան հաշվեկշիռների մշակումը պետք է իրականացվի պարբերաբար՝ տարեկան կտրվածքով, սկսած 2013 թվականից:

«Ընդերքի մասին» ՀՀ Օրենսգրքից բխող նոր իրավական ակտերի, գործող իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների նախագծերի մշակում (առնվազն 50 իրավական ակտ): Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի կիրարկումն ապահովելու նպատակով մշակվել են ՀՀ կառավարության 48 որոշումների նախագծեր, որոնցից 29-ը ընդունվել է ՀՀ կառավարության կողմից: ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից ընդունվել է 5 նորմատիվ գերատեսչական ակտ:

Հանքարդյունաբերության նպատակով նախկինում տրված հողերի կատեգորիաների համապատասխանեցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 21-ի թիվ N 558-Ն որոշման համահունչ ընդերքի ոլորտում հողօգտագործման գործընթացի կարգավորման նպատակով իրազեկվել են տնտեսվարող սուբյեկտները: Ընդերքի ոլորտում հողօգտագործման գործընթացը շարունակվում է:

Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի վթարային փոխմատակարարումների իրականացման «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի էլեկտրաէներգետիկական համակարգերի զուգահեռ աշխատանքի մասին» և «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև վթարային իրավիճակների ժամանակ էլեկտրաէներգիայի մատակարարման մասին» համաձայնագրերի ստորագրում: 2012 թվականի օգոստոսին ստորագրվեցին Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի վթարային փոխմատակարարումների իրականացման «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի էլեկտրաէներգետիկական համակարգերի զուգահեռ աշխատանքի մասին» և «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև վթարային իրավիճակների ժամանակ էլեկտրաէներգիայի մատակարարման մասին» համաձայնագրերը:

Ջրային տնտեսություն

2012 թվականի ընթացքում ջրային տնտեսության ոլորտում ՀՀ կառավարության գործունեության հիմքում ընկած էին ՀՀ ջրային օրենսգրքի, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության մասին օրենքների հիմնադրույթները, ինչպես նաև ՀՀ կառավարության ջրային ոլորտի բարեփոխումներին նվիրված որոշումները (այդ թվում՝ Կայուն զարգացման և պետական միջնաժամկետ ծրագրերը), գերակա խնդիրներն ու միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային ուղղվածությունները:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքները՝ համակարգում կառուցվածքային փոփոխությունների, ջրամատակարարման տևողության ավելացման ու ջրի որակի բարելավման, մասնավոր կառավարման պայմանագրերի վերահսկման, մատակարարված ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգում կորուստների նվազեցման և ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, ջրաչափական սարքերի տեղադրման և փոխարինման, բյուջետային, վարկային և դրամաշնորհային միջոցների արդյունավետ օգտագործման և նոր վարկային ու դրամաշնորհային միջոցների ներգրավման, Մարմարիկի ջրամբարի և Գավառ, Մարտունի, Վարդենիս քաղաքներում կոյուղու մաքրման կայանների կառուցման ու շահագործման հանձնման, ինչպես նաև այլ ուղղություններով:

Ջրային տնտեսության ոլորտում 2012 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները.

1. Կնքված պայմանագրերի (կառավարման պայմանագրեր՝ ֆրանսիական Սաուր կազմակերպության, ինչպես նաև գերմանական «Էմ Վի Վի Դեկոն Ջի Էմ բի Էջ» (MVV decon GmbH), «Էմ Վի Վի Էներջի Էջ Ջի» (MVV Energe AG) և հայկական «Էյ-ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ների կոնսորցիումի հետ) շրջանակներում ապահովվել է «Հայջրմուկոյուղի», «Լոռի-ջրմուկոյուղի», «Շիրակ-ջրմուկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների արդյունավետ տնտեսական բնականոն գործունեությունը: ՀՀ կառավարության 14.07.2011թ. N 972-Ա որոշմամբ Ֆրանսիական Սաուր կազմակերպության հետ կնքվել է «Հայջրմուկոյուղի» ՓԲԸ-ի գործադիր մարմնի լիազորությունները մասնավոր կառավարչին հանձնելու կառավարման պայմանագրի գործողության ժամկետը մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը երկարաձգելու պայմանագիր: ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 19-ի N912-Ա որոշման համաձայն ստորագրվել է «Լոռի-ջրմուկոյուղի», «Շիրակ-ջրմուկոյուղի», «Նոր Ակունք» ՓԲԸ-ներում մասնավոր կառավարչի՝ «Էմ Վի Վի Դեկոն», «Ջի Էմ բի Էջ Էմ Վի Վի Էներջի Էջ Ջի» և «Էյ-ի-Ջի-Սերվիս» ընկերությունների կոնսորցիումի կառավարման պայմանագիր լրացում N2-ը, որով կառավարման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը: Նշված ընկերությունների մասով ապահովվել է նաև Համաշխարհային բանկի, Ասիական Զարգացման բանկի, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի, KfW բանկի վարկային և դրամաշնորհային ներդրումային ծրագրերի համապատասխան չափաբաժիններով իրականացումը:

2. Եվրոպական վերականգնման և զարգացման բանկի ֆինանսավորմամբ Գավառ, Մարտունի, Վարդենիս, Սևան քաղաքներում կոյուղացանցերի վերանորոգման ծրագրի շինարարական մրցույթների արդյունքում տնտեսված միջոցների հաշվին կառուցվել են 20.8 կմ կոյուղագծեր: Ծրագրով իրականացվել և ավարտվել են Գավառ, Վարդենիս և Մարտունի քաղաքներում կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման աշխատանքները:

3. Աբու Դաբի հիմնադրամի և ՀՀ կառավարության համաֆինանսավորման շրջանակներում կատարվել են Արփա-Սևան թունելի անհապաղ վերականգնողական աշխատանքներ, որոնց արդյունքում հնարավորություն է ստեղծվել լուծել թունելի առավել վտանգավոր հատվածների անվտանգ շահագործման հարցը:

4. Ոռգում ջրառ իրականացնող «Սևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ» և «Դեբետ-Աղստև-ջրառ» ՓԲԸ-ների, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 44 ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունքներով ապահովվել է կայուն ջրամատակարարում, և ընկերություններն ունեցել են ֆինանսական կայուն վիճակ:

5. Համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ իրագործվում են հաստատված ծրագրերը՝ տալով զգալի դրական տեղաշարժեր:

Միայն հավաքագրումների գծով 2012 թվականի համակարգի գանձումը կազմել է շուրջ 20.36 մլրդ դրամ՝ 2011 թվականի 19.53 մլրդ դրամի փոխարեն, կամ ավել է գանձվել շուրջ 830 մլն դրամ: Խմելու ջրի մասով գանձվել է շուրջ 16.29 մլրդ դրամ՝ 2011 թվականի 15.77 մլրդ դրամի դիմաց, կամ ավել է գանձվել շուրջ 520 մլն դրամ, իսկ ոռոգման ոլորտում գանձվել է 4.07 մլրդ դրամ՝ 2011 թվականի 3.76 մլրդ դրամի դիմաց, կամ ավել է գանձվել շուրջ 310 մլն դրամ: Խմելու ջրի ոլորտում գանձման տոկոսը 2012 թվականին կազմել է 97.8%, իսկ ոռոգման ջրի ոլորտում՝ 78.9%:

Էլեկտրաէներգիայի ծախսի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ համակարգում իրականացված ներդրումային և կազմակերպչական միջոցառումների արդյունքում, հաշվի առնելով նաև 2012 թվականի սակավաջրության գործոնը, հնարավորություն է ստեղծվել համակարգում պահպանել 2011 թվականի ծախսի մակարդակը՝ անցած տարիների համեմատությամբ ավելի քիչ էլեկտրաէներգիա ծախսելով, ապահովելով էներգախնայողություն: Ընդ որում, 2012 թվականին 2000 թվականի համեմատությամբ շուրջ 2.68 անգամ պակասել է էլեկտրաէներգիայի ծախսը:

6. 2012 թվականի ընթացքում ջրային տնտեսության համակարգի կազմակերպություններից ՀՀ պետական բյուջե են փոխանցվել շուրջ 7.14 մլրդ դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ, որը 2011 թվականի համեմատությամբ ավել է 1.56 մլրդ դրամի չափով: Եթե խմելու ջրի ոլորտի բոլոր կազմակերպությունները նախկինում սուբսիդավորվում էին, ապա ներկայումս միայն «Երևան Զուր» ՓԲԸ-ի մասով նշենք, որ այն ոչ միայն չի սուբսիդավորվում, այլև ՀՀ պետական բյուջե է վճարել շուրջ 2.47 մլրդ դրամի հարկեր, տուրքեր և վճարներ:

7. 2012 թվականի ընթացքում «Երևան Զուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների սպասարկման տարածքներում տեղի են ունեցել ջրամատակարարման տևողության ավելացումներ՝ ապահովելով ՀՀ կառավարության գերակա խնդիրներով դրված պահանջը:

8. 2012 թվականին Սևանա լճից օրենքով սահմանված կարգով բաց է թողնվել լրացուցիչ 147.6 մլն մ³ ջուր, որը հիմնականում պայմանավորված էր սակավաջրությամբ, ոռոգման սեզոնի շուտ սկսմամբ և դոտացիոն հիմնական ջրամբարների չլցվածությամբ: Սևանա լիճ է տեղափոխվել 78.1 մլն մ³ ջրաքանակ, որն 2011 թվականի համեմատ ավել է 25 մլն մ³-ով:

9. Կատարվել են ջրամատակարար կազմակերպությունների միջև գույքային հարաբերությունների և պարտավորությունների ճշգրտումներ, ինչպես նաև իրականացվել են կանոնադրությամբ վերապահված այլ լիազորություններ: Շարունակվել է բարելավվել հաշվառման համակարգը: Միաժամանակ համակարգի խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների

սպասարկման տարածքում բաժանորդների մոտ տեղադրված են 638500 հատ ջրաչափական սարքեր, որը 2011 թվականի համեմատությամբ ավել է 13.7 հազարով: Ջրաչափությունը կազմում է 87.1%:

10. 2012 թվականի ընթացքում կառուցվել, վերականգնվել և վերանորոգվել են շուրջ 503.8 կմ խողովակաշարեր, ջրանցքներ և ջրատարներ, այդ թվում՝ խմելու ջրագծեր՝ 398.1 կմ, կոյուղու կոլեկտորներ՝ 20.8 կմ, ոռոգման ջրանցքներ և ջրատարներ՝ 84.9 կմ:

11. Շահագործվել է Մարմարիկի ջրամբարը, ստեղծվել է հնարավորություն ջրամբարում կուտակել 23 մլն խմ լրացուցիչ ջրաքանակ: Դրանից բացի, վերականգնված ջրամբարը թույլ է տալիս կարգավորել Մարմարիկ գետի հոսքերը՝ գարնանային վարարումների ընթացքում:

Կապսի անավարտ ջրամբարի կառուցման համար հատկացվել է 18.5 մլն Եվրո, որի նախագծային կազմակերպության ընտրության գործընթացը սկսվել է: Եղվարդի անավարտ ջրամբարի շինարարության, ինչպես նաև Վեդու ջրամբարի կառուցման նպատակով դոնոր կազմակերպությունների հետ իրականացվում են համապատասխան բանակցություններ:

12. Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի կողմից ֆինանսավորվող «Սևանա լճի բնապահպանական ծրագրի» շրջանակներում՝

ա) ավարտվել են Վարդենիս, Մարտունի և Գավառ քաղաքներում կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման աշխատանքները,

բ) կառուցվել են 20.8 կմ կոյուղագծեր՝ Գավառ, Մարտունի, Վարդենիս, Սևան և Զերմուկ քաղաքներում,

գ) կառուցվել են պոմպակայաններ՝ Սևան և Գավառ քաղաքներում:

«Կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում Գավառ, Վարդենիս և Մարտունի քաղաքներում» ծրագրի շրջանակներում իրականացվել են շինարարական աշխատանքներ, կատարվել են վարչական շենքերի, հոսքաչափի հորերի և ներքին խողովակների կառուցման աշխատանքներ: Ավարտվել են նաև «Հյուբեր կոմպակտ» սարքավորումների տեղադրման աշխատանքները ԿՄԿ-ներում:

Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի և Եվրոպական ներդրումային բանկի «Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի» շրջանակներում նախատեսվում է իրականացնել ջրահեռացման բարելավման աշխատանքներ, այդ թվում՝ Զերմուկ և Դիլիջան քաղաքներում կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում:

13. KfW բանկի հետ համաձայնեցված կարգով սկսվել է ջրամատակարար կազմակերպությունների սպասարկման դաշտից դուրս գտնվող բնակավայրերում

ջրամատակարարման կառավարման բարելավմանն ուղղված ուսումնասիրությունների իրականացման համար համապատասխան խորհրդատուի ընտրության մրցութային գործընթացը:

14. Բանակցություններ են տարվում կեղտաջրերի կառավարման, ենթակառուցվածքների կայունությանն աջակցման և չհաշվառվող ջրի նվազեցման ռազմավարությունների մշակման ուղղություններով:

Ջրային տնտեսության ոլորտում վերը նշված աշխատանքների իրականացման արդյունքում խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ինչպես նաև ջրահեռացման ոլորտներում 2012 թվականի ընթացքում ապահովվել է համակարգերի հուսալի և անվտանգ շահագործումը, բարելավվել է խմելու և ոռոգման ջրամատակարարումը, իրականացվել է համակարգի անվտանգ շահագործումը, կրճատվել են կորուստները, ապահովվել է էներգախնայողությունը, բարելավվել է ծառայությունների մատուցման որակը, ապահովվել է ջրամատակարարման շարունակականության ավելացումը և այլն:

Տրանսպորտ և կապ

Վանաձոր-Ֆիզուլետովո երկաթգծի շինարարության նախապատրաստական աշխատանքների իրականացման ուղղությամբ նախագծի իրագործելիության ուսումնասիրության նպատակով կատարվել են ուսումնասիրություններ և տարբերակված հաշվարկներ 2020-2025թթ. բեռնափոխադրումների ծավալների, գնացքների շարժի վերաբերյալ: Տնտեսական իրագործելիությունն իրականացրած ընկերությունը նախագիծը համարել է տնտեսապես անարդյունավետ, որի պատճառով նախագծի ֆինանսավորման հարցը լուծում չի գտել, սակայն հաշվի առնելով նախագծի ռազմավարական նշանակությունը՝ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին առաջարկվել է մշակել ծրագրի իրագործելիության ուսումնասիրման շնորհանդեսի նախագիծ, որը կներկայացվի հնարավոր ներդրողներին:

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 1 (Երևան-Աշտարակ և Երևան-Արարատ) շինարարական աշխատանքների մեկնարկը տրվել է 2012թ. սեպտեմբերի 13-ին, և մինչև տարեվերջ իրականացվել են հանույթի, գոյություն ունեցող երթևեկության նշանների և արգելափակոցների հեռացման, ծածկի քանդման աշխատանքներ, որոնց համար կապալառուի կողմից դեռևս չեն ներկայացվել միջանկյալ վճարման վկայագրեր: Կատարված շինարարական աշխատանքների համար վճարված ընդհանուր գումարը կազմում է 144 156.76 ԱՄՆ դոլար: Օտարվել և համապատասխան փոխհատուցումներ են տրամադրվել Կաթնաղբյուր, Եղնիկ, Դավթաշեն, Վերին Սասնաշեն և Ներքին Սասնաշեն համայնքների ազդեցության ենթակա հողերը, օտարման

գործընթացը շարունակվում է: Տրանշ 3-ի (Թալին-Գյումրի) ֆինանսավորման հարցը գտնվում է վարկատուների հետ բանակցային գործընթացում:

«Հայավտոկայարան» ՓԲԸ-ն կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու կամ վարձակալության հանձնելու նպատակով մշակվել և առաջարկություն է ներկայացվել ընկերության բարելավման, ավտոկայարանային համակարգի արդիականացման, կառավարման ծառայությունների ձեռք բերման, գործառության գործընթացի նախնական նկարագրի վերաբերյալ:

«Հայաստանի հեռուստատեսային ցանց» ՓԲԸ-ի բաժնետոմսերով հավաստված իրավունքի վարձակալության տրամադրման գործընթացի իրականացման նպատակով որոշվել է, որ բաժնետոմսերի հավանական կառավարիչը վերոհիշյալ իրավունքի ձեռք բերման դիմաց պետք է իրականացնի ՀՀ վերգետնյա թվային հեռուստահեռարձակման համակարգի ներդրման ծրագիր: Այդ նպատակով կազմակերպվել է գնման ընթացակարգ, և ընտրվել են 8 նախատրակավորված մասնակիցներ, սակայն վերջիններս հրաժարվել են գնման գործընթացին հետագա մասնակցությունից: Ներկայիս բանակցային փուլում Digital Service կազմակերպությունը պատրաստակամություն է հայտնել ներդրումներ կատարել որոշակի նախապայմաններով, որոնք քննարկման փուլում են:

Բյուջետային 15 ծրագրերով նախատեսված աշխատանքները հաշվետու ժամանակաշրջանում հիմնականում իրականացվել են ամբողջ ծավալով, բացառությամբ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի», որի իրականացումը մեկնարկել է 2012 թվականի սեպտեմբերի 13-ին, և դեռևս կատարողականներ չեն ընդունվել:

Սեփական արբանյակի թողարկման և այն ՀՀ-ին հատկացված գեոստացիոնար ուղեծրում տեղակայելու նպատակով 2012 թվականին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության համակարգում ստեղծվել է «Արմկոսմոս» փակ բաժնետիրական ընկերությունը:

Իրականացվել են համապատասխան միջոցառումներ ՀՀ-ում ավտոբուսների արտադրության կազմակերպման ուղղությամբ:

Կանոնավոր փոխադրումներ իրականացնող երթուղիների սպասարկման գործընթացի կազմակերպման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 55.7 մլն դրամ:

Ըստ նախնական տվյալների «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ 2012 թվականի ներդրումային ծրագրով նախատեսված 12205.65 մլն դրամի դիմաց փաստացի կատարվել են 12249.2 մլն դրամի ներդրումային ծախսեր, ինչը կազմում է 100.4%, այդ թվում՝ ենթակառուցվածքում՝ 11790.7 մլն դրամ, շարժակազմում՝ 458.5 մլն դրամ:

2012 թվականին երկաթուղային բեռնափոխադրումների ծավալն աճել է շուրջ 5.8%-ով և կազմել 3460.2 հազար տոննա, այդ թվում՝ արտահանվող բեռների ծավալն աճել է 9.4%-ով, ներհանրապետական փոխադրումներինը՝ 8.8%-ով, իսկ ներկրվող բեռների ծավալը՝ 1.4%-ով: Նույն ժամանակահատվածում բեռնաշրջանառության ծավալն աճել է 6.3 %-ով՝ կազմելով 867.3 մլն տ/կմ:

2012 թվականին հաստատվել է համակարգչային վիրուսային վտանգի դեմ արդյունավետ պայքարի միջոցառումների ծրագիրը, ինչպես նաև «Մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից առաջադրված կապի և տեղեկատվական հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի ցուցանիշների հավաքագրման և վարչական վիճակագրական ռեգիստրի վարման կարգը»:

2012 թվականին իրականացվել են հեռահաղորդիչ ցանցի արդիականացման և վերազինման աշխատանքներ Սյունիքի մարզի Խնածախ և Վայոց ձորի մարզի Վարդահովիտ, Գողթանիկ և Հերմոն բնակավայրերում:

Հսկողություն է իրականացվել «Հայփոստ» ՓԲԸ-ն հավատարմագրային կառավարման հանձնելու պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման նկատմամբ, ապահովվել է փոստային կապի բնագավառի զարգացման քաղաքականությունը:

2012 թվականի դեկտեմբերի 19-ին ՄԱԿ-ի ԳԱ լիազույժար նիստում Հայաստանը կոնսենսուսով ընտրվել է ՄԱԿ-ի Բաց տիեզերքի խաղաղ օգտագործման կոմիտեի լիիրավ անդամ:

2013 թվականի հունվարի 18-ին տեղի ունեցավ «Հայաստանի հարավային երկաթուղի» և «Հարավային արագընթաց ճանապարհ» նախագծերի մեկնարկման շնորհանդեսը, որտեղ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, ԱՄԷ –ում հիմնադրված «Ռոսիա ՖՋԷ» ներդրումային կազմակերպության և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից ստորագրվեց եռակողմ հուշագիր ծրագրի իրականացման գործում համագործակցելու վերաբերյալ: Ծրագրի իրականացումը կապահանջի մոտ 3.0 մլրդ ԱՄՆ դոլլար:

2012 թվականի մայիսի 4-ին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի և «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի միջև կնքվել է «Դեպի «Զվարթնոց» միջազգային օդանավակայան երկաթուղային գծի կառուցման մտադրության մասին» փոխըմբռնման հուշագիրը:

Պեդական եկամուտների քաղաքականություն

Գործարար միջավայրի բարելավման, շրջանառության փոքր ծավալներ ունեցող տնտեսավարող սուբյեկտների համար պարզեցված հարկային համակարգի ձևավորման, ինչպես նաև հարկային մարմնի կողմից իրականացվող վարչարարության արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել և ընդունվել են «Շրջանառության հարկի մասին» ու «Հարկային

և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքները, ինչպես նաև հարկային օրենսդրության և հարկային հարաբերություններ կարգավորող այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ նախատեսող 19 այլ օրենքներ:

Արտոնագրային վճարների համակարգի կատարելագործման, արտոնագրային վճար վճարող բոլոր սուբյեկտների համար (կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ) արտոնագրային վճարների կատարման (արտոնագրերի ստացման) միասնական պարբերականություն սահմանելու և արտոնագրային վճարների համակարգի կիրառության շրջանակի ընդլայնման նպատակով մշակվել և ընդունվել է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը:

Ապրանքների ներմուծման դեպքում մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով որոշելու համակարգի կատարելագործման, ինչպես նաև մաքսային օրենսդրության պահանջները խախտելու համար տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ տուգանքների կիրառության առավել արդարացի համակարգի ներդրման նպատակով մշակվել և ընդունվել է «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը:

Հարկման արդարության սկզբունքի ապահովման նպատակով զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց, փրկարարական ծառայության ծառայողների ծառայության հետ կապված դրամական եկամուտները եկամտային հարկի դաշտում ներառելու նպատակով մշակվել և ընդունվել են «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը և թվով հինգ այլ օրենքներ:

2011 թվականի տարեվերջին ՀՀ հարկային օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների կիրարկումն ապահովելու նպատակով մշակվել և ընդունվել են «Օֆշորային գոտիների ցանկը սահմանելու մասին», «Միջազգային զարգացման այն կազմակերպությունների ցանկը սահմանելու մասին, որոնցից ստացված փոխառությունների դիմաց վճարման ենթակա տոկոսների մասով շահութահարկով հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցման առավելագույն թույլատրելի նորմա չի կիրառվում», «Երևան քաղաքի բաշխումն ըստ տարածքային գոտիների սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումները և փոփոխություններ ու լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության երկու գործող որոշումներում:

2013 թվականի հունվարի 1-ից «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով մշակվել և ընդունվել են «Մինչև «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը վարձու աշխատողներին հարկումից հետո վճարման ենթակա աշխատավարձի հիման վրա աշխատավարձի մեծության որոշման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության

որոշումը և համապատասխան փոփոխություններ ու լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության մի շարք որոշումներում:

Կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում մշակվել և ընդունվել են «Հարկային մարմնի կողմից մասնակիցների ռեեստր վարողին տրամադրվող այլ տեղեկատվության ցանկը սահմանելու մասին» և «Հարկային մարմնի կողմից պարտադիր կուտակային վճարների և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը մասնակիցների ռեեստր վարողին փոխանցելու հետ կապված սխալները շտկելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումները:

Օդային և ավտոմոբիլային տրանսպորտով ՀՀ մաքսային սահմանը հատող ֆիզիկական անձանց կողմից ապրանքների հայտարարագրման պահանջների հստակեցման նպատակով մշակվել և ընդունվել են «ՀՀ միջազգային օդանավակայաններով մեկնող և ժամանող ֆիզիկական անձանց կողմից ուղեկցվող բեռների մաքսային հսկողության իրականացման ժամանակ երկուդային համակարգի կիրառման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Ավտոմոբիլային տրանսպորտով ՀՀ մաքսային սահմանով մեկնող և ժամանող ֆիզիկական անձանց կողմից ուղեկցվող բեռների մաքսային հսկողության իրականացման ժամանակ երկուդային համակարգի կիրառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումները:

«Ընդերքի մասին» ՀՀ նոր օրենսգրքի կիրարկումն ապահովելու նպատակով մշակվել և ընդունվել է «Բնապահպանական և բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակներ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումը:

2012 թվականին ուժի մեջ են մտել «Հայաստանի Հանրապետության և Իսպանիայի Թագավորության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության միջև եկամուտների և կապիտալի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիաները:

2012 թվականին նախաստորագրվել են «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ուգրեկստանի Հանրապետության կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության և Մալթայի կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» և «ՀՀ կառավարության և Սեյշելների

Հանրապետության կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագրերը:

2012 թվականի դեկտեմբերին կայացել է «ՀՀ կառավարության և Սլովակիայի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագրի նախագծի շուրջ բանակցությունների առաջին փուլը:

Պեդական ներքին ֆինանսական հսկողության ոլորտ

Ներքին աուդիտի ոլորտ

2012 թվականին ներքին աուդիտի ոլորտում շարունակվել են «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի մշակման և համակարգի ներդրման աշխատանքները:

2012 թվականի փետրվարի 17-ին ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 143-Ն հրամանով հաստատվել են ներքին աուդիտի ձեռնարկների և կանոնակարգի մշակման ուղեցույցները, որոնք սահմանում են հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտի իրականացման բոլոր ընթացակարգերը, ինչպես նաև միջազգային ստանդարտներին համապատասխան հաշվետվության օրինակելի ձևերը:

ՀՀ կառավարության 11.08.2011թ. թիվ 1233-Ն որոշման 3-րդ հավելվածով հաստատված «Ներքին աուդիտի համակարգի ներդրման ժամանակացույց»-ի համաձայն ներքին աուդիտի ներդրումն իրականացվել է փուլային եղանակով՝ սկսած 01.04.2012թ-ից: Այդ նպատակով 2012 թվականի փետրվարի 23-ին ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 165-Ն հրամանով հաստատվել են «Ներքին աուդիտի ստորաբաժանմանը և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվող հիմնական պահանջները», որոնցով սահմանվել են ստորաբաժանման ստեղծմանը, հաստիքների նվազագույն քանակին, մասնագիտական փորձին և ներքին աուդիտի կոմիտեին ներակայացվող պահանջները:

Ներքին աուդիտի համակարգը ներդրված է արդեն 52 պետական կառավարման մարմիններում և Երևանի քաղաքապետարանում:

2012 թվականի ընթացքում «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջն ապահովելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպվել են «Հանրային հատվածի ներքին աուդիտ» թեմայով վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են պետական կառավարման մարմինների և Երևանի քաղաքապետարանի ներքին աուդիտի ստորաբաժանումների թվով 160 աշխատակիցներ, որոնցից ներքին աուդիտորի որակավորում են ստացել 155-ը: Իսկ քաղաքային համայնքներից նշված դասընթացներին

մասնակցել են ներքին աուդիտի ստորաբաժանումների թվով 50 աշխատակիցներ, որոնցից ներքին աուդիտորի որակավորում են ստացել 40-ը:

Կազմակերպվել են նաև «Ներքին աուդիտի տեղեկատվական կառավարման միասնական համակարգի ուսուցում» թեմայով մեկօրյա դասընթացներ, որին մասնակցել են ներքին աուդիտի ստորաբաժանումների թվով 80 աշխատակիցներ:

2012 թվականին մշակվել և հաստատվել են նաև «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի միջավայրի սահմանման և գործառույթների նկարագրման կարգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 30.11.2012թ. թիվ 1050-Ն հրամանը և «Ներքին աուդիտի կանոնակարգի օրինակելի ձևը և դրա կազմման առանձնահատկությունները հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 12.12.2012թ. թիվ 1096-Ն հրամանը:

Մշակվել և օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության հաստատմանը «Կազմակերպությունների ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման նպատակով կազմակերպության գործունեության հետ չառնչվող անձանց կողմից կազմակերպության ներքին աուդիտի համակարգի գնահատումների իրականացման, ինչպես նաև արտաքին աուդիտի մարմինների հետ ներքին աուդիտի համագործակցության կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նշված նախագծի ընդունմամբ հնարավոր կլինի ապահովել հանրային հատվածի կազմակերպություններում արտաքին մարմինների հետ ներքին աուդիտի համագործակցությունը, ինչպես նաև ներքին աուդիտի համակարգի արդյունավետության գնահատումը:

Պեղական գնումների ոլորտ

1. 2012 թվականի հունվարի 1-ից գործարկվել է Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային գնումների համակարգը, որի արդյունքում ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից բաց ընթացակարգով իրականացվող գնումների գործընթացները կազմակերպվում են էլեկտրոնային ձևով՝ www.armeps.am կայքի միջոցով: Մասնավորապես՝ 2012 թվականին ՀՀ պետական մարմինների կողմից էլեկտրոնային ձևով կազմակերպվել են շուրջ 51 գնման գործընթացներ: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվել է նաև էլ. գնումների համակարգի գործարկման մշտադիտարկում և պատվիրատուներին ու գնումների մասնակիցներին տրամադրվել է անհրաժեշտ մեթոդական օժանդակություն: Ներկայումս աշխատանքներ են տարվում ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքով

նախատեսված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներն էլեկտրոնային ձևով՝ www.armeps.am կայքի միջոցով իրականացնելու ուղղությամբ:

2. Կարգավորվել և համապատասխան լուծումներ են տրվել ՀՀ նախագահի մոտ կայացած խորհրդակցության ժամանակ գնումների գործընթացների իրականացման վերաբերյալ բարձրացված հարցերին ու խնդիրներին: Մասնավորապես.

- մշակվել և www.gnumner.am կայքի «Օրենսդրություն» բաժնում տեղադրվել են գնումների գործընթացներում կիրառվող փաստաթղթերի օրինակելի ձևերը, որոնք ներկայումս օգտագործվում են պատվիրատուների կողմից:

- ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.12թ. թիվ 1169-Ն հրամանով հաստատվել է «Գնումների վերաբերյալ տվյալների վերլուծության և էլեկտրոնային տեղեկատվի վարման կարգը (ներառյալ հաշվետվության ձևը)», որով նախատեսվում է պատվիրատուների կողմից նախագծով հաստատվող ձևաչափով գնման գործընթացների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում գնումների աջակցման կենտրոնին: Վերջինս այդ տեղեկատվության հիման վրա իրականացնում է վերլուծություններ ըստ գնումների արժեքային և(կամ) քանակական բնութագրիչների և դրանց տարբեր համակցությամբ.

- պետական պատվիրատուների կողմից գանձապետական համակարգում գնումների վերաբերյալ տեղեկատվության ամբողջական գրանցումն ապահովելու նպատակով <CLIENT-TRESUARY> - <LSFinance> (ԳԳՕ) համակարգերում մշակվել և 2012 թվականի դեկտեմբերի 1-ից ներդրվել է նոր ծրագրային փաթեթ, որով պետական պատվիրատուները պետության համար պարտավորություններ առաջացնող գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը՝ հաշվետվությունը, համակարգ մուտքագրում են ինքնուրույն: Այդ տեղեկատվության հետ մեկտեղ համակարգ է մուտքագրվում նաև գնման պայմանագիրը: Առաջին անգամ ստեղծվել է գնման պայմանագրերի ավտոմատ հաշվառման էլեկտրոնային շտեմարան: Նշված համակարգը հնարավորություն է տալիս նաև բացառել պետական կառավարման մարմինների կողմից թե՛ ձևական և թե՛ բովանդակային առումներով տարբերվող տեղեկատվության ներկայացումը ՀՀ ֆինանսների նախարարություն.

- գնումների էլեկտրոնային տեղեկատվում հրապարակված շրջանակային համաձայնագրերով կատարվող գնումների վերաբերյալ տեղեկատվության հիման վրա իրականացվել են վերլուծություններ և կազմվել ու հրապարակվել են ամսական հաշվետվություններ, որտեղ կարելի է տեսնել ըստ մարմինների և ըստ գնման առարկաների մասնակիցների ներկայացրած առավելագույն, նվազագույն գները, հաղթող մասնակցի գների կշռված և թվաքանական միջինը, ստանդարտ շեղումը, մասնակիցների անվանումը.

- ամփոփվել և www.gnumner.am կայքի «Հաշվետվություններ» բաժնի «2011 թվականի տարեկան հաշվետվություններ» ենթաբաժնում հրապարակվել է 2011 թվականին կազմակերպված պետական գնումների տարեկան հաշվետվությունը.

- ՀՀ կառավարության 20.09.12թ. թիվ 1269-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 10.02.11թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգում, որով կարգավորվել են նշված ոլորտում բացահայտված բազմաթիվ խնդիրներ.

- ՀՀ կառավարության 30.08.2012թ. թիվ 1104-Ն որոշման հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունը մեկ անձից կատարվող գնումների վերաբերյալ տեղեկատվությունը, այդ թվում՝ կնքված պայմանագրերը հրապարակում է ՀՀ կառավարության www.e-gov.am (էլեկտրոնային կառավարում) կայքում.

- մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել նաև ՀՀ գնումների գործընթացի կազմակերպման կարգում փոփոխությունների իրականացման նախագիծը, որով սահմանվում է, որ Գնումների աջակցման կենտրոնն իրականացնում է գնումների բողոքարկման խորհրդի ընդունված որոշումների հաշվառումը, իսկ գնումների բողոքարկման խորհրդի կողմից ընդունված որոշումների չկատարման վերաբերյալ տեղեկատվություն ունենալու դեպքում կձեռնարկի համապատասխան միջոցներ: Կարգի նախագծով սահմանվում է նաև, որ բողոքարկման խորհրդին բողոք ներկայացրած անձի կողմից բողոքի քննության ընթացքում բողոքը հետ վերցնելու դեպքում, Գնումների աջակցման կենտրոնը շարունակում է ուսումնասիրել և ներկայացնել եզրակացություն բողոքի քննման համար նախատեսված ժամկետներում: Նշված կարգի նախագծով սահմանվում է նաև գնումների վերաբերյալ ստացված ահազանգերի հիման վրա գնումների բողոքարկման խորհրդին բողոք ներկայացնելու կարգը.

- ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.12թ. թիվ 1169-Ն հրամանով հաստատվել է «Պատվիրատուների հաստատված գնման առարկաների բնութագրերի և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների ընտրանքային գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի նախագիծը, որով սահմանվում է Գնումների աջակցման կենտրոնի կողմից պատվիրատուների հայտարարությունների և հրավերների ընտրանքային ուսումնասիրության կարգը:

3. ՀՀ Ազգային ժողովի կողմից 2010 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունված և 2011 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած ԵՄ-ի սահմանված չափանիշներին համապատասխանող «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքի համաձայն՝ ստեղծվել է բողոքարկման խորհուրդ, որի կազմում ընդգրկվել են ոչ միայն ՀՀ պետական մարմինների, այլ նաև համայնքների, ՀՀ կենտրոնական

բանկի և մասնավոր հատվածը ներկայացնող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Բողոքարկման խորհրդի անդամների ցուցակը հրապարակված է լիազոր մարմնի (ՀՀ ֆինանսների նախարարության) www.gnumner.am կայքում:

Գնումների բողոքարկման խորհրդի կողմից 05.03.12թ. հաստատվել է «Գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգը»:

ԵՄ ՍԻԳՄԱ ծրագրի փորձագետների կողմից 2012 թվականի փետրվար, մայիս, նոյեմբեր ամիսներին ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամների համար կազմակերպվել են սեմինար-քննարկումներ:

4. Գերմանական զարգացման համագործակցության (GIZ) հետ սկսվել է նոր ծրագիր, որի արդյունքում նախատեսվում է կանոնակարգել պետական գնումների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվող տեղեկատվական հոսքերը, ինչպես նաև իրականացնել աշխատանքներ այդ տեղեկատվական հոսքերի ստանդարտացման և էլեկտրոնային շտեմարանի ձևավորման ուղղությամբ:

5. Գնումների համակարգողների որակավորման գնահատման նպատակով 2012 թվականի ընթացքում կազմակերպվել են ՀՀ պետական կառավարման մարմինների, դրանց համակարգում գործող պատվիրատու հանդիսացող կազմակերպությունների (ԾԻԳ-երի, ՊՈԱԿ-ների, ՓԲԸ-ների և այլն) և ՀՀ քաղաքային համայնքների գնումների համակարգողների գնումների մասին ՀՀ օրենսդրության իմացության գնահատման քննությունները: Արդյունքում նշված քննությունները հաջողությամբ հանձնել են ՀՀ պետական կառավարման մարմինների և դրանց համակարգում գործող պետական հիմնարկների թվով 191, ՀՀ պետական կառավարման մարմինների համակարգում գործող ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ների թվով 268, և ՀՀ քաղաքային համայնքների թվով 42 գնումների համակարգողներ, որոնք ընդգրկվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող գնումների որակավորված մասնագետների ցուցակում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ**

2012 թվականի փաստացի տվյալների ամփոփումը ցույց տվեց, որ տնտեսության վերականգնումը տնտեսական ակտիվության աճի լավատեսական սպասումների ներքո տարվա ընթացքում շարունակվել է՝ հանգեցնելով մակրոտնտեսական իրավիճակի զգալի բարելավման: Այս զարգացումները հիմնականում պայմանավորված էին թե՛ համաշխարհային տնտեսության վերականգնմամբ և թե՛ ՀՀ կառավարության կողմից իրականացվող ակտիվ տնտեսական քաղաքականությամբ:

Վերոնշյալ զարգացումների պայմաններում 2012 թվականին գրանցվել է 7.2% տնտեսական աճ, որին նպաստել են տնտեսության բոլոր ճյուղերը: Շարունակվել է նաև արտաքին առևտրաշրջանառության աճը՝ հիմնականում արտահանման աճի բարձր տեմպերի պահպանման պայմաններում: 2012 թվականի 12-ամսյա գնաճը (դեկտեմբերը դեկտեմբերի համեմատ) կազմել է 3.2%՝ պահպանվելով տատանումների թույլատրելի միջակայքի ստորին սահմանից ցածր մակարդակում: Արձանագրվել է նաև պետական բյուջեի եկամուտների անվանական 7.4% աճ, իսկ ծախսերի գծով անվանական աճը կազմել է 2%: Այսպիսով, 2012 թվականի արդյունքներով հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա եղել է զսպող:

Համախառն պահանջարկ¹: 2012 թվականին վերջնական սպառումն իրական արտահայտությամբ աճել է 7.8%-ով: Վերջնական սպառման աճը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա նկատմամբ բնակչության տնօրինվող եկամուտների աճով: Վերջնական սպառման կառուցվածքում պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները 2012 թվականին կազմել են համապատասխանաբար 12.8% և 87.2%, ընդ որում վերջնական սպառման իրական աճը պայմանավորված է հիմնականում մասնավոր սպառման 10% աճով, իսկ պետական սպառումը նախորդ տարվա համեմատ նվազել է 5.2%-ով:

Կապիտալ ներդրումներն իրական արտահայտությամբ կրճատվել են 7.7%-ով. կրճատվել են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ներդրումները: Մասնավոր ներդրումների կրճատումը հիմնականում պայմանավորված է տնտեսության մեջ շինարարության դերի նվազմամբ:

2012 թվականին արտահանման իրական ծավալները դրամային արտահայտությամբ աճել են 10.1%-ով՝ պայմանավորված համաշխարհային տնտեսությունում պահանջարկի աստիճանական վերականգնմամբ, արտահանվող ապրանքների մրցունակության

¹ Այս հատվածում բերված ցուցանիշները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են:

բարձրացմամբ, ինչպես նաև արտահանման խրախուսմանն ուղղված՝ կառավարության կողմից ձեռնարկված գործողությունների արդյունավետությամբ:


Ապրանքների և ծառայությունների ներմուծումն իրական արտահայտությամբ նվազել է 3.5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է եղել ներմուծվող ապրանքների բարձր գներով:

2012 թվականին համախառն պահանջարկի աճին հիմնականում նպաստել է ներքին պահանջարկը:

Համախառն առաջարկ: 2012 թվականին համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) ընթացիկ գներով կազմել է 3981.5 մլրդ դրամ, ընդ որում իրական ՀՆԱ-ն աճել է 7.2%-ով, դեֆլյատորի 1.6% անկման պայմաններում: Ընդ որում, տնտեսության չորս հիմնական ճյուղերում գրանցվել են աճի ցուցանիշներ:

2012 թվականի տնտեսական աճին ամենամեծ նպաստումն է ունեցել ծառայությունների ոլորտը (3.2 տոկոսային կետ): Նշված ժամանակահատվածում գյուղատնտեսությունը և արդյունաբերությունն աճել են համապատասխանաբար 9.3 և 5.7 տոկոսով (նպաստումը ՀՆԱ-ի աճին՝ 1.9 և 1 տոկոսային կետ): Շինարարությունը նույնպես դիտարկվող ժամանակահատվածում համեստ՝ 0.5% աճի ցուցանիշ է արձանագրել՝ 0.1 տոկոսային կետ նպաստում ունենալով աճին: Գծապատկեր 1-ում ներկայացված են տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված իրական աճի նպաստման չափերը:

Գծապատկեր 1. 2011 և 2012 թվականների ՀՆԱ-ի իրական աճին տնտեսության ճյուղերի նպաստման չափերը, տոկոսային կետ



Աղյուսակ 1. 2005-2012թթ. ՀՆԱ-ի և տնտեսության ճյուղերի իրական աճերը նախորդ տարվա նկատմամբ

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
<i>Արդյունաբերություն</i>	5.6	-2.5	2.8	2.1	-6.9	9.2	16.0	5.7
<i>Գյուղատնտեսություն</i>	11.2	0.5	10.4	3.3	6.0	-16.0	13.6	9.3
<i>Շինարարություն</i>	27.9	37.7	18.2	11.3	-41.6	3.3	-12.5	0.5
<i>Ծառայություններ</i>	15.0	16.0	12.5	4.8	-3.3	4.1	4.0	8.0
<i>Զույգ անուղղակի հարկեր</i>	12.4	14.9	35.9	17.1	-22.5	13.4	4.3	10.4
<i>Համախառն ներքին արդյունք</i>	13.9	13.2	13.7	6.9	-14.1	2.2	4.7	7.2

Արդյունաբերություն²: 2012 թվականին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի իրական ծավալի 8.8% աճ նախորդ տարվա նկատմամբ: Հանքագործական արդյունաբերության, մշակող արդյունաբերության, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում և ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում ենթաճյուղերի թողարկումներն իրական արտահայտությամբ աճել են համապատասխանաբար 14.7%, 5.9%, 11.4% և 34.6%-ով: Արդյունաբերության ճյուղում աճն ուղեկցվել է աշխատանքի արտադրողականության (11.1%), ինչպես նաև արտահանման աճով (հիմնականում՝ ԱՊՀ երկրներ):

Մշակող արդյունաբերության աճին հիմնականում նպաստել են հիմնային մետաղների արտադրության (9.1%), խմիչքների արտադրության (14.3%) և ծխախոտի արտադրության (57.1%) աճերը:

Էլեկտրաէներգիայի արտադրության աճին հիմնականում նպաստել է ՋԷԿ-երի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի 42.3% աճը, որը պայմանավորված է տնտեսության մյուս ճյուղերում աճի ցուցանիշներով և արտահանման³ ծավալների աճով:

Գյուղատնտեսություն: 2012 թվականին նախորդ տարվա նկատմամբ արձանագրվել է գյուղատնտեսության (ներառյալ ձկնորսությունը) արտադրանքի իրական ծավալի 9.8% աճ: Ընդ որում, գյուղատնտեսության աճը հիմնականում պայմանավորվել է բուսաբուծության արտադրանքի 14% աճով: Բուսաբուծության ճյուղի աճին հիմնականում նպաստել են պտղի և հատապտղի 38.6% ու կարտոֆիլի 16.1% աճերը: Բուսաբուծության աճին նպաստել են ինչպես բնակլիմայական բարենպաստ պայմանները, այնպես էլ կառավարության կողմից

² Այստեղ և հետագա շարադրանքում ներկայացված են ճյուղերի համախառն թողարկումների իրական ծավալների ինդեքսները:

³ Իրանի Իսլամական Հանրապետություն


իրականացված մի շարք ծրագրեր: Մասնավորապես՝ 2011 թվականին կառավարությունը ձեռնարկեց վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման, գյուղատնտեսական մթերքների իրացման շղթայի ապահովման, ցորենի և գարու սերմնաբուծության և սերմնարտադրության, օրգանական գյուղատնտեսության զարգացման, տեղական կենսապարարտանյութերի զարգացման, գյուղատնտեսական տեխնիկայի վերազինման ծրագրեր:

Անասնաբուծությունում գրանցվել է իրական ծավալի աննշան 3.2% աճ, որը պայմանավորված է մսի արտադրության 1.9%, կաթի արտադրության 2.8% և ձվի արտադրության 3.9% աճերով: Ձկնորսության և ձկնաբուծության ենթաճյուղում արձանագրվել է 31.2% աճ:

Շինարարություն: Ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված շինարարության ծավալը 2012 թվականին կազմել են 469.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ իրական արտահայտությամբ աճելով 0.2%-ով: Իրականացված կապիտալ շինարարության (ըստ ֆինանսավորման աղբյուրների) կառուցվածքում ամենամեծ կշիռն ունեցել են կազմակերպությունների միջոցները՝ կազմելով 49.2%, որոնց հաշվին իրականացված շինարարության ծավալները իրական արտահայտությամբ նախորդ տարվա համեմատ նվազել են 1.7%-ով: Կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված շինմոնտաժային աշխատանքների մասնաբաժինը կազմել է ընդհանուր շինմոնտաժային աշխատանքների 45.3 տոկոսը, իսկ ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 6.7%-ով: Պետական բյուջեի միջոցներով իրականացված շինարարությունը կազմել է 15.7%՝ աճելով 0.2%-ով: Նախորդ տարվա համեմատ միջազգային վարկերի միջոցների հաշվին իրականացված շինարարության կշիռը կազմել է 8.1%, իսկ ծավալների իրական աճը կազմել է 16.0%: Ճգնաժամից հետո առաջին անգամ բնակչության կողմից ֆինանսավորվող շինարարության իրական աճ է արձանագրվել՝ 26.7%:

Արդյունքում կարող ենք արձանագրել, որ շինարարության ծավալների աճը հիմնականում պայմանավորված է բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալների աճով:


Գծապատկեր 2. 2011 և 2012 թվականներին շինարարության կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի



Ըստ տնտեսության ճյուղերի՝ շինարարությունը հիմնականում ուղղված է եղել անշարժ գույքի հետ կապված գործունեության, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման և տրանսպորտի ոլորտներին: Կացության և հանրային սննդի կազմակերպման, անշարժ գույքի հետ կապված գործունեության և էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ոլորտների մասնաբաժինները փոփոխվել են՝ աճելով համապատասխանաբար 3.8, 2.8 և 1.5 տոկոսային կետով, իսկ տեղեկատվություն և կապ, ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում, մշակող արդյունաբերություն և տրանսպորտ ոլորտների մասնաբաժինները նվազել են համապատասխանաբար 3.4, 0.4, 0.1 և 0.1 տոկոսային կետով: (տե՛ս Գծապատկեր 2):

Ծառայություններ և առևտուր: 2012 թվականին մատուցված ծառայությունների ծավալն իրական արտահայտությամբ նախորդ տարվա նկատմամբ աճել է 10.8%-ով, որին հիմնականում նպաստել է ֆինանսական և ապահովագրական գործունեության ծառայությունների 20.7% աճը: Ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել ֆինանսական և ապահովագրական գործունեության (23.5%), տեղեկատվության և կապի (21.3%), ինչպես նաև տրանսպորտի (19.8%) ծառայությունները: Աճել են մշակույթի, զվարճությունների, հանգստի, ֆինանսական և ապահովագրական գործունեության, կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտների մասնաբաժինները ծառայությունների մեջ:

Գծապատկեր 3. Ծառայությունների կառուցվածքը 2011 և 2012 թվականներին



2012 թվականին առևտրի շրջանառությունն ընթացիկ գներով կազմել է 2194.0 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ, համադրելի գներով, աճել է 3.6%-ով, որին հիմնականում նպաստել է մեծածախ առևտրի 5.4% աճը:

Տրանսպորտ և կապ: 2012 թվականին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2011 թվականի համեմատ աճել է 4%-ով, ինչին նպաստել են մայրուղային խողովակաշարային և երկաթուղային տրանսպորտի տեսակների համապատասխանաբար 19.5 և 5.8 տոկոս աճերը: Ավտոմոբիլային տրանսպորտի տեսակով բեռնափոխադրումները նվազել են 1.9%-ով, որը պայմանավորված է ներհանրապետական ավտոմոբիլային բեռնափոխադրումների ծավալի 1.4% նվազմամբ (տեսակարար կշիռն ընդհանուր ավտոմոբիլային բեռնափոխադրումների մեջ կազմում է 78.5%): Օդային տրանսպորտի տեսակով բեռնափոխադրումների ծավալն աճել է 23.0%-ով:

Կապի ծառայությունների հասույթը 2012 թվականին կազմել է 176.2 մլրդ. դրամ, որը 2011 թվականի համադրելի գներով աճել է 2.6%-ով:

Գներ և սակագներ: 2012 թվականի տարեվերջին 12-ամսյա գնաճը կազմել է 3.2%, ինչը հիմնականում պայմանավորված է եղել պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 3.1% (նպաստումը գնաճին՝ 1.7 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գների 5.7% (նպաստումը գնաճին՝ 0.9 տոկոսային կետ) և ծառայությունների սակագների 2.1% (նպաստումը գնաճին՝ 0.6 տոկոսային կետ) աճով: Ցածր գնաճային միջավայրը պայմանավորվել է գերազանցապես պարենային ապրանքների գների անկմամբ, որի կառուցվածքում զգալի նվազում է դիտվել գյուղատնտեսական ապրանքների (մասնավորապես՝ «Բանջարեղեն և կարտոֆիլ» և «Միրգ» ապրանքախմբերի) գներում: Սակայն որոշ պարենային

ապրանքների գներում նկատվել է նաև աճի միտում, մասնավորապես, ներքին գների վրա ազդեցություն է ունեցել ցորենի միջազգային գների աճը՝ հանգեցնելով «Հացամթերք» ապրանքախմբի գների աճին (նպաստումը 12-ամսյա գնաճին կազմել է 1.2 տոկոսային կետ, տե՛ս Աղյուսակ 2-ում):

Գնաճի նպատակային թիրախի կենտրոնական արժեքից շեղումը եղել է դեպի ներքև: Շեղման թույլատրելի միջակայքում ձևավորմանը նպաստել է նաև հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացված և հաշվեկշռված իրականացումը:

Աղյուսակ 2. 2012 թվականի գնաճին ամենամեծ նպաստումն ունեցող ապրանքատեսակները

		Ժամանակահատվածի վերջի		Տարեկան միջին		Կշիռն ընդհանուրի մեջ
		գնաճ %	նպաստումը գնաճին	գնաճ %	նպաստումը գնաճին	
1	Հացամթերք	11.5	1.2	3.9	0.4	10.63
2	Մսամթերք	3.3	0.3	7	0.7	10.19
3	Ծխախոտ	4.7	0.2	5.3	0.2	6.26
4	Հրուշակեղեն	4.6	0.1	10.8	0.2	1.07
5	Սուրճ, թեյ, կակաո	4.4	0.2	11.4	0.4	3.54
6	Բենզին	11.4	0.1	10.7	0.1	1.2
7	Բուժսպասարկման ծառայություններ	9.5	0.4	9	0.3	3.7
	ԸՆԴԱՄԵՆԸ ՆՊԱՏՏՈՒՄԸ	-	2.5	-	2.3	35.47

2012 թվականին միջին գնաճը կազմել է 2.6%, որը հիմնականում պայմանավորված է եղել պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 2.3% (նպաստումը գնաճին՝ 1.2 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գների 4.6% (նպաստումը գնաճին՝ 0.7 տոկոսային կետ) և ծառայությունների սակագների 2.1% (նպաստումը գնաճին՝ 0.6 տոկոսային կետ) աճով:

Աշխատանքի շուկա: 2012 թվականին պաշտոնապես գրանցված գործազուրկների մակարդակն⁴ ըստ նախնական տվյալների հանրապետությունում նախորդ տարվա նկատմամբ նվազել է 1.1 տոկոսային կետով և կազմել 17.3%: 2012 թվականին զբաղվածների թվաքանակը

⁴ 2012 թվականի փետրվարից սկսած ՀՀ ԱԿԾ-ն դադարեցրել է ցուցանիշի հաշվարկն ըստ վարչական վիճակագրական գրանցումների և հիմնվում է աշխատուժի հետազոտության արդյունքների վրա, որն իրականացվում է տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության շրջանակում:


նախորդ տարվա համեմատ, տնտեսության աշխուժացման պայմաններում, կրճատվել է շուրջ 0.2%-ով՝ կազմելով 1172.8 հազ. մարդ, ինչը արտադրողականության բարձրացման հետևանք է:

2012 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ նախնական տվյալների 2011 թվականին գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 5.1%-ով: 2012 թվականին ոչ պետական հատվածի աշխատավարձի աճը (5.4%) գերազանցել է պետական հատվածում աշխատավարձի աճին (4.3%):

Հաշվետու ժամանակահատվածում տնտեսության պետական և ոչ պետական հատվածներում միջին ամսական անվանական աշխատավարձը համապատասխանաբար կազմել է 97502 դրամ և 148909 դրամ, իսկ միջին աշխատավարձը⁵ 121342 դրամ:

Արտաքին հատված: Շարունակում են արտահայտվել ՀՀ կառավարության արտահանման խթանման ուղղությամբ քաղաքականության դրական արդյունքները՝ նպաստելով 2012 թվականի ընթացքում տնտեսության արտաքին հատվածի բարելավմանը: Արտաքին պահանջարկի աճի հետ մեկտեղ տարեսկզբից ավելացել են նաև Հայաստան ներհոսող տրանսֆերտները և գործոնային եկամուտները՝ նպաստելով ընթացիկ հաշվի պակասուրդի դանդաղ կրճատմանը մինչև ՀՆԱ-ի 10.7 տոկոսը:

Գծապատկեր 4. Ընթացիկ հաշվի տարրերի դինամիկան (մլն ԱՄՆ դոլար)



⁵ Միջին տարեկան ցուցանիշը ենթակա է փոփոխության (ճշգրտման), ինչը պայմանավորված է նրանով, որ ցուցանիշում դեռևս չեն ներառվում առևտրային փոքր և գերփոքր կազմակերպությունների համապատասխան տվյալները:

2012 թվականին ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը (տե՛ս Գծապատկեր 4) կազմել է 2073.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 4.3 մլն ԱՄՆ դոլարով կամ 0.2%-ով և կազմելով ՀՆԱ-ի 20.9 տոկոսը՝ նախորդ տարվա 20.5%-ի դիմաց:

ՀՆԱ-ի նկատմամբ ապրանքների և ծառայությունների արտահանման կշիռը (միջին հակումը) 2012 թվականին կազմել է 25.1% (2011 թվականին՝ 23.7%): Ապրանքների և ծառայությունների ներմուծումը 2012 թվականին կազմել է ՀՆԱ-ի 49.4 տոկոսը՝ նախորդ տարվա 47.3%-ի դիմաց:

Արտաքին առևտուր: Արտաքին ապրանքաշրջանառությունը 2012 թվականի արդյունքներով կազմել է 5694.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 3.9%-ով: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման ծավալների աճ. արտահանումն աճել է 7%-ով՝ կազմելով 1428.1 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 2.9%-ով և կազմել է 4266.8 մլն ԱՄՆ դոլար:


Ներմուծում: Ներմուծման աճը հիմնականում պայմանավորված էր ընթացիկ տարում ինչպես բնակչության տնօրինվող եկամուտների աճով, այնպես էլ տնտեսության վերականգնմամբ: Ներմուծման աճ է արձանագրվել մեծ կշիռ ունեցող գրեթե բոլոր ապրանքների գծով, բացառությամբ «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի, որոնք նվազել են յուրաքանչյուրը 5.1%-ով՝ համապատասխանաբար 0.4 և 0.5 տոկոսային կետով հակազդելով ներմուծման աճին: Հատկանշական է, որ ներդրումային բնույթի ապրանքների տեսակարար կշիռն ընդհանուր ներմուծման մեջ կազմել է 17.9%՝ 0.7 տոկոսային կետով գերազանցելով 2011 թվականի համապատասխան ցուցանիշը (17.2%): Ընդ որում, այդ խումբը կազմող «Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ», «Տարբեր արդյունաբերական ապրանքներ» և «Սարքեր և ապարատներ» ապրանքախմբերի աճը 1.2 տոկոսային կետով նպաստել է ներմուծման աճին: Ներմուծման ընդհանուր 2.9% աճի ամենաբարձր՝ 2.3 տոկոսային կետը պայմանավորվել է 21.5% կշիռ ունեցող «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի 11.5% աճով:

Արտահանում: 2012 թվականին ամրապնդվեցին արտահանման խթանման ուղղությամբ ՀՀ կառավարության քաղաքականության և համաշխարհային տնտեսության վերականգնման հաշվին արտահանման աշխուժացման և ծավալների վերականգնման ձեռքբերումները: Տարվա արդյունքներով տեղի է ունեցել ներմուծման համեմատ ՀՀ արտահանման առաջանցիկ աճ: 2012 թվականի արտահանման 7% աճի ամենաբարձր՝ 5.4 տոկոսային կետը պայմանավորվել է «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման 38.8% աճով: Արտահանման աճի 1.9 տոկոսային կետը պայմանավորվել է «Վերգետնյա, օդային և ջրային

տրանսպորտի միջոցներ», 0.9 տոկոսային կետը՝ «Բուսական ծագման արտադրանք» և 0.8 տոկոսային կետը՝ «Մանածագործական իրեր» ապրանքախմբերի ծավալների աճով, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 82.6, 49.7 և 127.8 տոկոս: «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերի նախորդ տարվա նկատմամբ 11.9, 6.2 և 0.7 տոկոսով նվազումը համապատասխանաբար 1.8, 1.7 և 0.2 տոկոսային կետերով հակազդել են արտահանման աճին:

Նորմալացված առևտրային հաշվեկշիռ⁶: Տնտեսական անվտանգությունը բնութագրող ցուցանիշներից է նորմալացված առևտրային հաշվեկշռի գործակիցը, որը ճգնաժամային տարիներին ցուցաբերել է վատթարացման (տե՛ս Գծապատկերը) միտում՝ 2009 թվականին կազմելով -0.65. վատթարացման խորացումը հիմնականում պայմանավորված էր դոլարային արտահայտությամբ արտահանման անկմամբ: 2010 թվականից, արտահանման դոլարային արտահայտությամբ առաջանցիկ աճով պայմանավորված, նորմալացված առևտրային հաշվեկշռի ցուցանիշը կազմել է համապատասխանաբար -0.57, -0.51 և -0.5՝ ցուցաբերելով շարունակական բարելավում նախորդ տարվա համեմատ:


Գծապատկեր 5. Նորմալացված առևտրային հաշվեկշռի գործակիցը



⁶ Նշված ցուցանիշը հաշվարկվում է որպես առևտրային հաշվեկշռի և ապրանքաշրջանառության հարաբերակցություն և ցույց է տալիս, թե միավոր արտաքին ապրանքաշրջանառության մեջ որքան զուտ արտահանված ապրանք կա:

Ներմուծման ծածկման գործակից: 2012 թվականին ներմուծման ծածկման գործակիցը նախորդ տարվա համեմատ աճել է 0.7 տոկոսային կետով. արտահանման հաշվին ֆինանսավորվել է ներմուծման 50.9%-ը (տես Գծապատկեր 6):

Գծապատկեր 6. Ներմուծման ծածկման գործակիցը⁷, տոկոսներով




Ներդյուլային առևտուր: Վերջին տարիների ՀՀ ներդյուլային առևտրի⁸ մակարդակի վերլուծությունը վկայում է «Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Պատրաստի սննդի արտադրանք» և «Արվեստի ստեղծագործություններ» ապրանքախմբերի գծով համեմատաբար կայուն երկկողմանի արտաքին առևտրի պահպանման մասին:

Գծապատկերում դրական և բացասական նշանները տրամադրում են լրացուցիչ տեղեկատվություն և պայմանավորված են համապատասխան ապրանքախմբերի արտաքին առևտրային հաշվեկշռի դրական կամ բացասական մնացորդով: «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» (լրիվ երկկողմանի առևտուր) ապրանքախմբի դրական առևտրային մնացորդը վկայում է մեր երկրի կողմից արտաքին աշխարհի պահանջարկը բավարարելու մասին:

⁷ Ներմուծման ծածկման գործակիցը հաշվարկված է որպես ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման հարաբերակցություն (ՖՕԲ գներով):

⁸ Ներդյուլային առևտուրը տեղի է ունենում, երբ երկիրը և՛ ներմուծում, և՛ արտահանում է առանձին ճյուղում արտադրվող ապրանքատեսակները: Ներդյուլային առևտրի գործակիցն իրենից ներկայացնում է արտահանման և ներմուծման բացարձակ արժեքով փոքրի հարաբերակցությունը մեծին: «0» նշանակում է լրիվ միակողմանի, իսկ «1»՝ լրիվ երկկողմանի առևտուր:

Գծապատկեր 7. 2012 թվականի ՀՀ ներքուղային առևտուրը




Մնացած ապրանքախմբերով տեղի է ունեցել մեծ մասամբ միակողմանի առևտուր՝ ներքին պահանջարկը բավարարելու ուղղությամբ (բացասական առևտրային մնացորդ):

Արտաքին առևտուրն ըստ գործընկեր երկրների: 2012 թվականին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 29.4%-ը բաժին է ընկել ԱՊՀ և 29.6%-ը՝ ԵՄ երկրներին: 2011 թվականին նշված երկրների տեսակարար կշիռները կազմել են 27 և 32.4%: ԱՊՀ երկրների հետ ՀՀ առևտրաշրջանառությունը 2012 թվականին նախորդ տարվա համեմատ աճել է 13.2%-ով, իսկ ԵՄ երկրների արտաքին առևտրաշրջանառությունը ցուցաբերել է հակառակ միտումը՝ նվազելով 5.1%-ով: ՀՀ խոշոր առևտրային գործընկեր-երկրների շրջանակում ընդգրկված են Չինաստանը (առևտրաշրջանառության 7.6%-ը), Գերմանիան (7.3%), Իրանը (5.6%), ԱՄՆ-ն (4.1%), Բուլղարիան (3.8%), Թուրքիան (3.8%), ինչպես նաև ԱՊՀ երկրներից Ռուսաստանը (23.5%) և Ուկրաինան (4%): Վերջիններիս բաժին է ընկել ՀՀ և ԱՊՀ երկրների միջև հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարված ապրանքաշրջանառության շուրջ 94%-ը: Հանրապետության թվով 38 հիմնական գործընկեր երկրները մեծամասամբ (մոտ 80%-ը) հանդիսանում են ԱՀԿ անդամ պետություններ:

Փոխարժեք: Նախորդ տարվա ընթացքում ձևավորված ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկման միտումները 2012 թվականին շարունակվել են: 2012 թվականի տարեվերջին՝ դեկտեմբեր ամսին փոխարժեքը կազմել է 405.54 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց, որը նախորդ տարվա դեկտեմբերին ձևավորված միջին փոխարժեքի (383.2) նկատմամբ արժեզրկվել է 5.5%-ով: Իսկ տարվա միջին փոխարժեքը կազմել է 401.76 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց (2011թ.-ին՝ 372.5): Նախորդ տարվա միջինի նկատմամբ գրանցվել է ԱՄՆ

դրլարի համեմատ դրամի անվանական 7.3% արժեզրկում՝ 2011 թվականի համապատասխան ցուցանիշի 0.3% արժևորման դիմաց: Ըստ էության, փոխարժեքի նման վարքագիծը հետևանք է իր հավասարակշիռ մակարդակից շեղումներով՝ պայմանավորված մեր և համաշխարհային տնտեսությունների միտումներով:

Գծապատկեր 8. 2012 թվականի դրամ/ԱՄՆ դրլար միջին (կուտակային) փոխարժեքի փոփոխության դինամիկան (նախորդ տարվա համեմատ, %)




2012 թվականին եվրոյի և ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը դրսևորել է համեմատաբար կայուն միտումներ և, ի տարբերություն դրլարի, նախորդ տարվա համեմատ եվրոյի նկատմամբ արժևորվել է 0.4%-ով, իսկ ռուբլու նկատմամբ՝ արժեզրկվել 1.9%-ով:

ՀՀ ազգային արժույթը ոչ միայն դրլարի, այլև արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր մի քանի արժույթներից բաղկացած «զամբյուղի» նկատմամբ (անվանական արդյունավետ փոխարժեք⁹) 2012 թվականին նախորդ տարվա նկատմամբ արժեզրկվել է 3%-ով, ինչը նշանակում է, որ ՀՀ դրամն արժեզրկվել է (դրամի դիրքերը թուլացել են) հիմնական արժույթների միավորված արժեքի համեմատ, ընդ որում, վերոնշյալ «զամբյուղում» ընդգրկված մնացած երկրների արժույթները միջինում դրլարի նկատմամբ նույնպես արժեզրկվել են (մոտ 4.3%-ով): Իսկ Հայաստանի և հիմնական գործընկեր երկրների գներով ճշգրտված զամբյուղների հարաբերական արժեքը՝ իրական արդյունավետ փոխարժեքը 2011 թվականի

⁹ Արդյունավետ փոխարժեքը ցույց է տալիս ազգային արժույթի փոխարժեքի միջինացված շարժընթացը ոչ թե մեկ, այլ մի քանի, հանրապետության համար ավելի կարևոր արժույթներից բաղկացած «զամբյուղի» նկատմամբ: Ընդ որում, հաշվարկներում զամբյուղը կազմող արժույթները նախ բերվում են դրլարային արտահայտության, որից հետո ճշգրտվում են ԱՄՆ դրլար/ՀՀ դրամ փոխարժեքով, այսինքն՝ հաշվարկվում է դրամի կրոս կուրսը՝ յուրաքանչյուր տարադրամի 1 միավորի դիմաց (դրամի անուղղակի գնանշում):

0.9% արժևորման դիմաց 2012 թվականի ընթացքում արժեզրկվել է 4.4%-ով¹⁰ (տես Գծապատկեր 9):

Գծապատկեր 9. Իրական արդյունավետ փոխարժեքի¹¹ ամսական միջին շարժընթացը 2011 և 2012 թվականներին



Ֆինանսական շուկա: 2012 թվականի վերջում փողի բազան կազմել է 683.8 մլրդ դրամ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով 1.9%-ով: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվները նվազել են 9.1%-ով, իսկ զուտ ներքին ակտիվներն աճել են 25.8%-ով:

Նույն ժամանակահատվածում փողի բազայում ԿԲ-ից դուրս կանխիկն աճել է 10.4%-ով, արդյունքում տարեսկզբի նկատմամբ կանխիկի տեսակարար կշիռը փողի բազայում աճել է 9.2 տոկոսային կետով՝ կազմելով շուրջ 64.4%: Պարտադիր պահուստները դրամով և արտարժույթով նվազել են համապատասխանաբար 5.3 և 16.1 տոկոսով:

2012 թվականի տարեվերջին փողի զանգվածը կազմել է 1346.4 մլրդ դրամ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով 19.5%-ով: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվները նվազել են 139 անգամ, իսկ զուտ ներքին ակտիվներն աճել են 35.7%-ով:

Նույն ժամանակահատվածում փողի զանգվածում բանկային համակարգից դուրս կանխիկն աճել է 9.9%-ով, իսկ դրամային և արտարժույթային ավանդները՝

¹⁰ Հաշվարկներում օգտագործվել են ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքի 2012թ. մարտի 22-ի դրությամբ տվյալները:

¹¹ Իրական արդյունավետ փոխարժեքի ինդեքսն անվանական արդյունավետ փոխարժեքն է ճշտված գներով և հանդիսանում է այն հիմնական ցուցանիշը, որը բնութագրում է հիմնական արժույթների միավորված շարժընթացն ու շարժման ուղղությունը և կարող է հիմք հանդիսանալ վերջիններիս զարգացման տեղեկացների կողմնորոշիչ հետևություններ անելու համար: Բացի դրանից այն հիմնական ցուցանիշն է, որը բնութագրում է երկրի մրցունակությունը միջազգային շուկայում: Իրական արդյունավետ փոխարժեքը ցույց է տալիս մեր և գործընկեր երկրների միջև հարաբերական գների վարքագիծը՝ բերված մեկ արժույթի:

համապատասխանաբար 14.2 և 30.1 տոկոսով: Այս պայմաններում տարվա ընթացքում նկատվել է դոլարայնացման մակարդակի աճ՝ նախորդ տարվա 60.1%-ի դիմաց դոլարային ավանդների կշիռն ընդհանուր ավանդների մեջ կազմել է 63.2%:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2012 թվականի վերջին նախորդ տարվա համեմատ ավելացել են 25%-ով¹² և ՀՆԱ-ի մեջ կազմել շուրջ 30.4%, ինչը 4.8 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքները 2012 թվականին միջին հաշվով կազմել են 9.53%՝ 2011 թվականի 9.25%-ի համեմատ:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրված վարկերը 2012 թվականի վերջի դրությամբ նախորդ տարվա համեմատ ավելացել են շուրջ 335 մլրդ դրամով կամ 26.3%-ով¹³ և ՀՆԱ-ի մեջ կազմել շուրջ 40.3%, ինչը 6.7 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից (վարկերի 64 տոկոսը կազմում են արտարժույթով վարկերը): Առևտրային բանկերի՝ դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները 2012 թվականին միջին հաշվով կազմել են 17.22%՝ 2011 թվականի 17.76%-ի համեմատ:

Հատուկ ուշադրության է արժանի նաև այն, որ առևտրային բանկերի՝ մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների և վարկերի տոկոսադրույքների միջև սարեղը 2012 թվականին 2011 թվականի նկատմամբ նվազել է 0.8 տոկոսային կետով՝ կազմելով 7.69 տոկոսային կետ:

Չնայած տարվա ընթացքում ձևավորված ցածր գնաճային միջավայրին՝ ՀՀ ԿԲ-ի խորհուրդը վերաֆինանսավորման տոկոսադրույքը թողել է անփոփոխ (սահմանելով 8.0%)՝ պայմանավորված 2012 թվականի մայիս-հունիս ամիսներին դրամի արժեզրկմամբ (ինչն արդեն իսկ դրամավարկային պայմանների թուլացում էր), ինչպես նաև տարվա 2-րդ և 3-րդ եռամսյակներից հետո գնաճի վրա գյուղմթերքների գների անկման ընդգծված սեզոնայնության ազդեցության թուլացմամբ:

2012 թվականի ընթացքում ՀՀ պետական (շուկայական) պարտատոմսերի շուկայում նկատվել է ինչպես տեղաբաշխման ժամկետայնության, այնպես էլ տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2011 թվականի ընթացքում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին եկամտաբերությունը կազմել է 12.3%, ապա 2012 թվականին այն կազմել է 12.9%, իսկ

¹² ըստ ԿԲ-ի տվյալների՝ 18.5%:

¹³ ըստ ԿԲ-ի տվյալների նախորդ տարվա համեմատ ավելացել են շուրջ 337 մլրդ դրամով կամ 26.6%-ով:

պարտատոմսերի տեղաբաշխման ժամկետայնությունը 2012 թվականին կազմել է 1722 օր՝ նախորդ տարվա 1696-ի դիմաց:

2012 թվականի ընթացքում տեղաբաշխված պետական արժեթղթերի ծավալը կազմել է 122.3 մլրդ դրամ: 2012 թվականի վերջին պետական (շուկայական) պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը գերազանցել է թողարկման ցուցանիշը 1.46 անգամ, իսկ տեղաբաշխում/թողարկում հարաբերակցության միջին մեծությունը կազմել է 0.93:

Հարկաբյուջետային հատված: Բյուջետային քաղաքականության մոտեցումը եղել է բազմակողմ և միաժամանակ հավասարակշռված: Ընդ որում, մի կողմից նպատակ է դրվել չհակազդել տնտեսական վերականգնմանը, մյուս կողմից, մակրոտնտեսական կայունության նպատակադրմամբ պայմանավորված, ապահովել արդյունավետ պարտքի կառավարում և պակասուրդի աստիճանական կրճատում:


Այնուամենայնիվ, 2012 թվականին հարկաբյուջետային քաղաքականության բնույթը եղել է զսպող: Ընդ որում, տարվա արդյունքներով պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 23.8%-ը՝ նախորդ տարվա 23.3%-ի դիմաց, իսկ հարկային եկամուտները՝ ներառյալ պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները, կազմել են ՀՆԱ-ի 22.1%-ը՝ նախորդ տարվա 20.6%-ի դիմաց: Նախորդ տարվա նկատմամբ պետական բյուջեի եկամուտների անվանական աճը կազմել է 7.4%, իսկ հարկային եկամուտներին՝ ներառյալ պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները, 13%:

ՀՀ պետական բյուջեի ծախսերի մասով 2012 թվականի արդյունքներով ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը դրսևորել է նվազման միտումներ նախորդ տարվա նկատմամբ՝ 0.85 տոկոսային կետի չափով և կազմել 25.3%: Ընթացիկ ծախսերի գծով գրանցվել է անվանական աճ 7.8%-ի չափով, ընթացիկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 22%՝ նախորդ տարվա 21.5%-ի դիմաց: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2012 թվականին կազմել են ՀՆԱ-ի 3.3%-ը՝ նախորդ տարվա 4.7%-ի փոխարեն:

ՀՀ պետական բյուջեի պակասուրդը 2012 թվականին կազմել է ՀՆԱ-ի 1.5%-ը՝ նախորդ տարվա 2.8%-ի դիմաց, ինչը հնարավորություն է տվել զերծ մնալ արտաքին պետական պարտքի մակարդակի կտրուկ բարձրացումից և այն պահել ՀՆԱ-ի մեջ 37.9% մակարդակում: Ընդհանուր պետական պարտքը 2012 թվականի արդյունքներով կազմել է ՀՆԱ-ի 44.3%-ը՝ նախորդ տարվա 42.2%-ի դիմաց:

Հարկաբյուջետային ազդակը: 2012 թվականի արդյունքներով գրանցվել է 2.7% զսպող հարկաբյուջետային ազդակ, ընդ որում եկամուտների գծով գրանցվել է 1.5%, իսկ ծախսերի գծով՝ 1.2% զսպող ազդակ:


Գծապատկեր 10. Հարկաբյուջետային ազդակը 2009 թվականից եռամսյակներով



ՀՀ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեով, ելնելով 4.2% տնտեսական աճի կանխատեսումից, ծրագրվել էր ստանալ ավելի քան 911.6 մլրդ դրամ եկամուտներ, որից 895.3 մլրդ դրամը՝ սեփական եկամուտների, 16.3 մլրդ դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների տեսքով: «ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները ներառյալ, ինչպես նաև հաշվի առնելով կառավարության լիազորությունների շրջանակներում կատարված մյուս փոփոխությունները՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների ծրագիրն ավելացվել է 33.3 մլրդ դրամով (3.6%-ով) և կազմել 944.9 մլրդ դրամ, որից 922.2 մլրդ դրամը՝ սեփական եկամուտների, 22.7 մլրդ դրամը՝ պաշտոնական դրամաշնորհների գծով: 2012 թվականի փաստացի եկամուտները կազմել են շուրջ 946.2 մլրդ դրամ, որոնք նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել են 65.3 մլրդ դրամով կամ 7.4%-ով, իսկ ծրագրային ցուցանիշը կատարվել է 100.14%-ով: Հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների տարեկան ծրագիրը կատարվել է 100.04%-ով, այլ եկամուտները գերազանցել են ճշտված ծրագրային ցուցանիշը 11.3%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհների կատարողականը կազմել է 82.2%, կամ կանխատեսվածից պակաս է ստացվել 4 մլրդ դրամ: Նշենք, որ պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները կազմել են շուրջ 25.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 95%-ը: Առանց արտաբյուջետային միջոցների՝ պետական բյուջեի եկամուտները կազմել են 920.5 մլրդ դրամ՝ ապահովելով 100.3% կատարողական: Հարկային եկամուտների (ներառյալ՝ պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները) կատարողականը առանց արտաբյուջետային միջոցների կազմել է 100%, այլ եկամուտները ճշտված ծրագրային ցուցանիշը գերազանցել են 28.3%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհների կատարողականը կազմել է 82.9%:


Գծապատկեր 11. ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի եկամուտները



Հաշվետու տարում ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերակցությունը կազմել է 23.8%, որը 0.5 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը և 2.2 տոկոսային կետով՝ կանխատեսված ցուցանիշը¹⁴:

2011 թվականի համեմատ պետական բյուջեի եկամուտների 7.4%-ով աճը գերազանցապես պայմանավորված է հարկային եկամուտների 14.9%-ով կամ 93.9 մլրդ դրամ աճով: Հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատ աճ է արձանագրվել նաև մյուս եկամտատեսակների գծով, մասնավորապես՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներն ավելացել են 4.5%-ով (5.6 մլրդ դրամով), այլ եկամուտները՝ 11.6%-ով (5.1 մլրդ դրամով), պետական տուրքերը՝ 6.5%-ով (1.5 մլրդ դրամով): Միևնույն ժամանակ պաշտոնական դրամաշնորհները նվազել են 68.6%-ով (40.7 մլրդ դրամով):


Գծապատկեր 12. ՀՀ պետական բյուջեի եկամուտների կատարողականը 2011-2012թթ.



¹⁴ ՀՀ 2012 թվականի բյուջետային ուղերձում բյուջեի եկամուտներ/ՀՆԱ կանխատեսված ցուցանիշը կազմել է 21.6%:

Պաշտոնական դրամաշնորհների և պարտադիր սոցիալական ապահովության վճարների համամեծատաքար բարձր աճի արդյունքում 2011 թվականի համեմատ 2012 թվականի պետական բյուջեի եկամուտներում 4.6 տոկոսային կետով ավելացել է հարկային եկամուտների (ներառյալ՝ պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները), 0.2 տոկոսային կետով՝ այլ եկամուտների տեսակարար կշիռը, իսկ պաշտոնական դրամաշնորհների գծով նույն ցուցանիշը նվազել է 4.8 տոկոսային կետով:


Գծապատկեր 13. ՀՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը



Հարկային եկամուտներ, պետական տուրքեր և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի եկամուտների 92.8%-ն ապահովվել է հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ հաշվին, որոնք կազմել են շուրջ 878.4 մլրդ դրամ և 100.04%-ով կատարել կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված տարեկան ծրագիրը: Նշված գումարից շուրջ 725.5 մլրդ դրամը կազմել են հարկային եկամուտները, 23.8 մլրդ դրամը՝ պետական տուրքերը և 129.1 մլրդ դրամը՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարները: Դիտարկելով հարկային եկամուտների (ներառյալ պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները) ամսական շարժը՝ կարելի է արձանագրել, որ 2012 թվականին հարկային եկամուտներն ունեցել են հիմնականում կայուն վարքագիծ, տարվա բոլոր ամիսներին արձանագրվել է մուտքերի աճ նախորդ տարվա համապատասխան ամիսների համեմատ: Բացի այդ, հարկ է նշել, որ տարվա ընթացքում ամբողջությամբ ապահովվել է եռամսյակային ծրագրերի կատարումը:

Գծապատկեր 14. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները, պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները՝ ըստ ամիսների, 2012-2011թթ.




2011 թվականի համեմատ հարկային եկամուտները, պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 13%-ով կամ 101 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի, շահութահարկի, բնապահպանական ու բնօգտագործման վճարների, եկամտահարկի և ակցիզային հարկի գծով ստացված մուտքերի աճով:

2012 թվականին ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների և պետական տուրքերի հարաբերակցության ցուցանիշը կազմել է 18.8%՝ 1.4 տոկոսային կետով գերազանցելով կանխատեսված և 1.5 տոկոսային կետով՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները: Հարկային սահունության գործակիցը 2012 թվականին կազմել է 2.7 (ՀՆԱ-ի աճի յուրաքանչյուր տոկոսային կետին է ընկել հարկերի 2.7 տոկոսային կետով աճ)՝ 2011 թվականի 1.1-ի դիմաց:

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր

2012 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 749.3 մլրդ դրամ հարկային եկամուտներ և պետական տուրքեր՝ 100.04%-ով ապահովվելով ծրագրված և 14.6%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշները:

Գծապատկեր 15. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքը, 2011-2012թթ.



2012 թվականին հարկային եկամուտների և պետական տուրքերի 49.3%-ն ապահովվել է *ավելացված արժեքի հարկի հաշվին*, որը կազմել է շուրջ 369.7 մլրդ դրամ: Նշված գումարից 231.4 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 138.3 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջե մուտքագրված ԱԱՀ-ն աճել է 12.5%-ով կամ 41.2 մլրդ դրամով: Հարկ է նշել, որ ԱԱՀ-ի մուտքերի աճն ապահովվել է և՛ ներմուծման, և՛ ներքին շրջանառության աճի հաշվին: Մասնավորապես, ապրանքների ներմուծումից ստացված ավելացված արժեքի հարկը 11.6%-ով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը, իսկ ներքին շրջանառության գծով մուտքերի աճը կազմել է 14.1%: ԱԱՀ-ի աճի պատճառներ են հանդիսացել ներմուծման ծավալների 2.9% աճը, գնաճը և տնտեսավարող սուբյեկտների կողմից իրացման ծավալների աճը: ԱԱՀ-ի աճի վրա ազդեցություն են ունեցել նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները: Մասնավորապես՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-334-Ն օրենքով (ուժի մեջ է 2012 թվականի հունվարի 1-ից)՝

1. Ամբողջությամբ վերախմբագրվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-րդ հոդվածը, ինչի արդյունքում վերանայվել է նույն հոդվածով սահմանված այն ապրանքատեսակների ցանկը, որոնց ներմուծման համար նույն հոդվածով սահմանված է սահմանին ավելացված արժեքի հարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնություն:

Բացի այդ, սահմանվել է, որ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված ապրանքատեսակների մասով ներմուծման ժամանակ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը կարող է չհետաձգվել մաքսային մարմիններին ներկայացվող՝ հարկ վճարողի գրավոր

հայտարարությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոհիշյալ ընթացակարգը միջև 2012 թվականի հունվարի 1-ը գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1 հոդվածով նախատեսված չէր՝ վերոհիշյալ ընթացակարգի սահմանումն այլ հավասար պայմաններում պետական բյուջեի եկամուտների վրա ազդեցություն կունենա այն ժամանակ, երբ հարկ վճարողները կամավոր հրաժարվեն ավելացված արժեքի հարկի գումարի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունից և սահմանված կարգով ու ժամկետում վճարեն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1 հոդվածի 1-ին մասով սահմանված ապրանքատեսակների ներմուծման ժամանակ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարները:

Միաժամանակ, «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՀ վերոհիշյալ օրենքի համաձայն, «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1 հոդվածի նոր խմբագրությամբ սահմանված դրույթները տարածվում են 2012 թվականի հունվարի 1-ից հետո ապրանքների ներմուծման գործարքների նկատմամբ, ինչը նշանակում է, որ դրանց ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա առավել նկատելի կլինի երկարաժամկետ հատվածում:

2. Վերանայվել են անմիջապես ներմուծող և (կամ) անմիջական արտադրող համարվող հարկ վճարողների՝ ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառության որոշման մոտեցումները: Մասնավորապես «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածում լրացված նոր՝ 12-րդ մասի համաձայն, անմիջական ներմուծող կամ անմիջական արտադրող հանդիսացող ավելացված արժեքի հարկ վճարողի՝ հաշվետու ժամանակաշրջանում իրականացրած՝ ավելացված արժեքի հարկի 20 տոկոս (ներառյալ՝ հաշվարկային 16.67 տոկոս) դրույքաչափով հարկվող՝ հարկային հաշիվներով չհիմնավորված գործարքների նույն հոդվածով սահմանված կարգով որոշվող հարկվող շրջանառությունն ավելացվում է 20%-ով, եթե նրանց կողմից ներմուծված կամ ՀՀ-ում արտադրված ապրանքների (բացառությամբ բենզինի և դիզելային վառելիքի) օտարման այն գործարքների հարկվող շրջանառությունը, որոնց մասով հարկային հաշիվներ և (կամ) նոր լրացված 12-րդ կետին համապատասխան՝ ուղեկցող փաստաթուղթ դուրս չի գրվել, կազմում է հաշվետու ժամանակաշրջանում իրականացրած հարկվող գործարքների հարկվող շրջանառության 10 և ավելի տոկոսը, և հարկ վճարողի իրականացրած բոլոր գործարքների ընդհանուր հարկվող շրջանառությունը գերազանցում է՝

ա) հաշվետու ամսվա արդյունքներով 100 մլն դրամը, եթե հարկ վճարողի համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում ամիսը,

բ) հաշվետու եռամսյակի արդյունքներով գերազանցում է 300 մլն դրամը, եթե հարկ վճարողի համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում եռամսյակը:

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-89-Ն օրենքով (ուժի մեջ է 2012 թվականի ապրիլի 19-ից)՝ ավելացված արժեքի հարկից ազատվել են 2012 թվականի հունվարի 1-ից հանրակրթության ոլորտում իրականացվող՝ կրթության և գիտության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի կողմից ճանաչված, երաշխավորված և Հայաստանի Հանրապետության կառավարության չափորոշիչներին համապատասխանող կրթական բնույթի առարկայական մրցույթները, մրցաշարերը, օլիմպիադաները՝ իրենց մասնակցության վճարի մասով:

2011 թվականի դեկտեմբերի 6-ի «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող, մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-330-Ն) մի շարք ապրանքների ներմուծման ժամանակ 2012 թվականի հունվարի 1-ից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից հաշվարկվում և գանձվում է:

2012 թվականին ավելացված արժեքի հարկի մեջ հաշվառված՝ ՀՀ ներմուծվող և ՀՀ-ում արտադրվող ծխախոտի հաստատագրված վճարների մասնաբաժինը կազմել է համապատասխանաբար 3.1 մլրդ դրամ և 2 մլրդ դրամ՝ համապատասխանաբար 8.9 և 59.8 տոկոսով գերազանցելով նախորդ տարվա մուտքերը:

«Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-127-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից) ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ԱՏԳ ԱԱ 24022090011, 24022010011, 24029000013 ծածկագրերին դասվող ֆիլտրով սիգարետների համար սահմանվել են հաստատագրված վճարի՝ ըստ տարիների աճող չափեր: Մասնավորապես, վերոհիշյալ օրենքի համաձայն, 2012 թվականի համար վերոհիշյալ ծածկագրերին դասվող, ներմուծվող ֆիլտրով սիգարետների համար հաստատագրված վճարի չափը սահմանվել է 1000 հատի համար 7500 դրամ, իսկ Հայաստանի Հանրապետությունում արտադրված սիգարետների համար՝ 1000 հատի համար 6250 դրամ (2011 թվականի համար ներմուծվող Հայաստանի Հանրապետությունում արտադրված ֆիլտրով սիգարետների համար հաստատագրված վճարի չափը սահմանված էր համապատասխանաբար 7000 և 5500 դրամ):

2012 թվականին *ակցիզային հարկից* պետական բյուջեի մուտքերը կազմել են 49.3 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծված ենթակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 33.3 մլրդ դրամ, որից 15.7 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծման հարկումից:

Հանրապետությունում արտադրվող ենթակազմային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են 16.1 մլրդ դրամ, որից 8.1 մլրդ դրամը ստացվել է ներքին արտադրության ծխախոտի իրացումից: 2011 թվականի համեմատ ակցիզային հարկի մուտքերն աճել են 25.2%-ով կամ 9.9 մլրդ դրամով: Ընդ որում, ՀՀ ներմուծվող ենթակազմային ապրանքների գծով ակցիզային հարկն աճել է 18.3%-ով, ՀՀ-ում արտադրվող ապրանքների գծով՝ 42.3%-ով: Աճի հիմնական աղբյուր է հանդիսացել ակցիզային հարկով հարկվող ապրանքների ներմուծման ծավալների աճը, մասնավորապես, ԱՏԳ ԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող սպիրտային խմիչքների ծավալները: Ակցիզային հարկի աճի վրա էական ազդեցություն են ունեցել 06.12.2011թ. «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները (ուժի մեջ է մտել 01.01.2012թ.), որով վերանայվել են որոշ ապրանքների մասով ակցիզային հարկի դրույքաչափերը: Մասնավորապես՝

1) ԱՏԳ ԱԱ 2203 ապրանքային ծածկագրին դասվող գարեջրի համար ակցիզային հարկի դրույքաչափը սահմանվել է տեղական արտադրության դեպքում՝ բացթողման գնի (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի), իսկ ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի 30 տոկոսի, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 105 դրամի չափով:

Հիշյալ ապրանքատեսակի համար նախկինում սահմանված էին ակցիզային հարկի հետևյալ դրույքաչափերը՝ ներքին արտադրանքի 1 լիտրի համար 70 դրամ, իսկ ապրանքների ներմուծման դեպքում՝ 1 լիտրի համար 105 դրամ:

2) ԱՏԳ ԱԱ 2204 ապրանքային ծածկագրին դասվող խաղողի գինիների համար ակցիզային հարկի դրույքաչափը սահմանվել է տեղական արտադրության դեպքում՝ բացթողման գնի (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի), իսկ ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի 10 տոկոսի, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 100 դրամի չափով:

Հիշյալ ապրանքատեսակի համար նախկինում սահմանված էին ակցիզային հարկի հետևյալ դրույքաչափերը՝ ներքին արտադրանքի դեպքում՝ բացթողման գնի (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի) 10 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 100 դրամ, իսկ ապրանքների ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի 10 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 150 դրամ),

3) ԱՏԳ ԱԱ 2205 ապրանքային ծածկագրին դասվող վերմուտի, բուսական և արոմատիկ էքստրակտներ պարունակող խաղողի այլ գինիների համար ակցիզային հարկի դրույքաչափը սահմանվել է տեղական արտադրության դեպքում՝ բացթողման գնի (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի), իսկ ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի 50 տոկոսի, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 750 դրամի չափով:

Հիշյալ ապրանքատեսակի համար նախկինում սահմանված էին ակցիզային հարկի հետևյալ դրույքաչափերը՝ ներքին արտադրանքի դեպքում՝ 1 լիտրի համար 500 դրամ, իսկ ապրանքների ներմուծման դեպքում՝ 1 լիտրի համար 600 դրամ,

4) ԱՏԳ ԱԱ 2206 ապրանքային ծածկագրին դասվող խմորման ենթարկված այլ ըմպելիքների (խնձորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեղրաըմպելիք), բացառությամբ պտղային և հատապտղային գինեկության, համար ակցիզային հարկի դրույքաչափը սահմանվել է տեղական արտադրության դեպքում բացթողնման գնի (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի), իսկ ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի 25 տոկոսի, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 270 դրամի չափով,

Հիշյալ ապրանքատեսակի համար նախկինում սահմանված էին ակցիզային հարկի հետևյալ դրույքաչափերը՝ ներքին արտադրանքի դեպքում՝ 1 լիտրի համար 180 դրամ, իսկ ապրանքների ներմուծման դեպքում՝ 1 լիտրի համար 200 դրամ,

5) ԱՏԳ ԱԱ 2207 ապրանքային ծածկագրին դասվող էթիլային սպիրտի համար ակցիզային հարկի դրույքաչափը սահմանվել է տեղական արտադրության դեպքում բացթողնման գնի (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի), իսկ ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի 50 տոկոսի, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 900 դրամի չափով:

Հիշյալ ապրանքատեսակի համար նախկինում սահմանված էին ակցիզային հարկի հետևյալ դրույքաչափերը՝ ներքին արտադրանքի դեպքում՝ 1 լիտրի համար (100 տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով) 600 դրամ, իսկ ապրանքների ներմուծման դեպքում՝ 1 լիտրի համար (100 տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով) 700 դրամ,

6) ԱՏԳ ԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող սպիրտային խմիչքների համար ակցիզային հարկի դրույքաչափը սահմանվել է տեղական արտադրության դեպքում՝ բացթողնման գնի (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի), իսկ ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի 50 տոկոսի, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 500 դրամի չափով:

Հիշյալ ապրանքատեսակի համար նախկինում սահմանված էին ակցիզային հարկի հետևյալ դրույքաչափերը՝ ներքին արտադրանքի դեպքում՝ բացթողնման գնի (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի) 30 տոկոսը, բայց ոչ պակաս քան 1 լիտրի համար 380 դրամ, իսկ ապրանքների ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի 30 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 600 դրամ:

Բացի այդ, ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող օղիների համար նախկինում սահմանված էին ակցիզային հարկի հետևյալ դրույքաչափերը՝ տեղական արտադրության դեպքում՝ բացթողնման գնի (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի), իսկ ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի 30 տոկոս, բայց ոչ պակաս քան մեկ լիտրի համար 500 դրամ:

Հիշյալ օրենքով ընդլայնվել է ակցիզային հարկով հարկվող ապրանքների շրջանակը: Մասնավորապես՝ ակցիզային հարկով հարկվող ապրանքների շարքին են դասվել հետևյալ ապրանքատեսակները՝

1) ԱՏԳ ԱԱ 2710 19 810 ապրանքային ծածկագրին դասվող շարժիչային յուղերը, որոնց համար ակցիզային հարկի դրույքաչափ է սահմանվել տեղական արտադրության դեպքում բացթողնման գնի (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի), իսկ ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի 10 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 1 կիլոգրամի համար 400 դրամ,

2) ԱՏԳ ԱԱ 8703 (բացառությամբ՝ ԱՏԳ ԱԱ870310, 870321101, 870321901, 870322101, 870322901, 870323199, 870323909, 870324101, 870324901, 870331101, 870331901, 870332191, 870332901, 870333191, 870333901, 87039010 և 8703 90 901-ի) ապրանքային ծածկագրին դասվող 25.0 մլն դրամ և ավելի մաքսային արժեք ունեցող կամ մինչև 2 տարին ներառյալ թողարկման տարեթիվ և 4500 սմ³ և ավելի շարժիչի աշխատանքային ծավալ ունեցող թեթև մարդատար ավտոմեքենաները, որոնց համար ակցիզային հարկի դրույքաչափ է սահմանվել՝ ներմուծման դեպքում մաքսային արժեքի 20 տոկոսը:

Նշված օրենսդրական փոփոխության արդյունքում հատկապես աճել է ՀՀ-ում արտադրվող գարեջրից և ԱՏԳԱԱ 2208 արտադրված սպիրտային խմիչքներից ակցիզային հարկը: ՀՀ-ում արտադրվող ապրանքներից ակցիզային հարկի աճը պայմանավորված է նաև ՀՀ-ում արտադրվող օդու ծավալների ավելացմամբ: Աճել է նաև ՀՀ-ում արտադրված և ներմուծված ծխախոտի մասով ակցիզային հարկի գումարը, որը պայմանավորված է ներմուծված և արտադրված ծխախոտի արտադրանքի ծավալների աճով, ինչպես նաև 07.10.2010թ. ՀՕ-127-Ն օրենսդրական փոփոխությամբ 2012 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր դրույքաչափերով. նշված ապրանքների 1000 հատի ներմուծման համար դրույքաչափը 7000-ից դարձել է 7500, իսկ արտադրման դեպքում՝ 5500-ից 6250 դրամ:

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտների և պետական տուրքերի 15.8%-ն ապահովվել է *շահութահարկի* հաշվին՝ կազմելով շուրջ 118.7 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 21.3%-ով կամ 20.8 մլրդ դրամով: Շահութահարկի աճը հիմնականում պայմանավորված է ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունների կողմից 2012 թվականին վճարված շահութահարկի կանխավճարների աճով, որի հաշվարկման համար հիմք էին հանդիսացել 2011 թվականի փաստացի շահութահարկի գումարները: Շահութահարկի աճը պայմանավորված է նաև նվազագույն շահութահարկի վճարումների աճով: «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-317-Ն օրենքով (ուժի մեջ է

մտել 2012 թվականի հունվարի 1-ից) վերանայվել է շահութահարկի կանխավճարի եռամսյակային վճարումների դրույքաչափը՝ նախկինում գործող՝ նախորդ տարվա փաստացի շահութահարկի և (կամ) շահութահարկի հաշվարկային մեծության գումարի մեկ վեցերորդի փոխարեն սահմանելով նախորդ տարվա փաստացի շահութահարկի և (կամ) շահութահարկի հաշվարկային մեծության 18.75 տոկոսը:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 91.7 մլրդ դրամ *եկամտահարկ*՝ ապահովելով հարկային եկամուտների 12.2%-ը: 2011 թվականի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 12.9%-ով կամ շուրջ 10.5 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտներից վճարված եկամտահարկի աճով, իսկ վերջինս՝ աշխատավարձի և աշխատողների թվաքանակի աճով: Աճը պայմանավորված է նաև «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-299-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարի 1-ից), որի համաձայն հարկային գործակալի կողմից հաշվարկվող եկամտահարկի դրույքաչափի երկաստիճան համակարգը փոխարինվել է դրույքաչափերի եռաստիճան համակարգով: Մասնավորապես, ամսական 2 մլն դրամը գերազանցող հարկվող եկամուտների համար սահմանվել է եկամտահարկի 25 տոկոս դրույքաչափ: Վերանայվել է նաև եկամտահարկի կանխավճարի եռամսյակային վճարումների դրույքաչափը՝ նախկինում գործող նախորդ տարվա փաստացի եկամտահարկի և (կամ) եկամտահարկի հաշվարկային մեծության գումարի մեկ վեցերորդի փոխարեն սահմանելով նախորդ տարվա փաստացի եկամտահարկի և (կամ) եկամտահարկի հաշվարկային մեծության 18.75 տոկոսը:

Հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջե մուտքագրված *մաքսատուրքը* կազմել է ավելի քան 43 մլրդ դրամ՝ ապահովելով հարկերի և տուրքերի 5.7%-ը: Հիմնականում ներմուծման ծավալների ավելացման հետևանքով նախորդ տարվա համեմատ մաքսատուրքի գծով բյուջետային մուտքերն աճել են 18.6%-ով կամ շուրջ 6.8 մլրդ դրամով: Աճը պայմանավորված է ներմուծման ծավալների 2.9 տոկոս աճով, ինչպես նաև ՀՀ մաքսային օրենսգրքում կատարված փոփոխությամբ (ուժի մեջ է մտել 01.01.2012թ.): 2011 թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (ՀՕ-354-Ն) մի շարք ապրանքների համար մաքսատուրքի դրույքաչափը բարձրացվել է 0-ից 10 տոկոս: Մասնավորապես, սահմանվել են մաքսատուրքով հարկվող մի շարք ԱՏԳԱԱ-ներ՝ 230910 (Շների կամ կատուների համար կեր՝ բաժնեծրարված մանրածախ վաճառքի համար), 430400000 (Արհեստական մորթի և դրանից արտադրանք), 7003 (Ապակի ձուլածո և գլանված՝ թերթավոր կամ պրոֆիլավորված, որն ունի կամ չունի կլանող, արտացոլող կամ չարտացոլող շերտ՝ մեկ այլ եղանակով չմշակված), 7008 (Բազմաշերտ մեկուսիչ ապակե

արտադրանք), 8409 (Մասեր, նախատեսված բացառապես կամ գլխավորապես 8407 և 8408 ապրանքային դիրքերին դասվող շարժիչների համար), 8413 (Հեղուկային պոմպեր՝ ծախսաչափիչներով կամ առանց դրանց, հեղուկային վերհաններ), 842123000 (Սարքեր ներքին այրման շարժիչներում յուղի կամ վառելանյութի ֆիլտրման համար), 842131000 (Օդային ֆիլտրեր՝ ներքին այրման շարժիչների համար), 842211000 (Սպասք լվացող մեքենաներ՝ կենցաղային), 842219000 (Սպասք լվացող մեքենաներ՝ այլ), 844331 (Մեքենաներ, որոնք կատարում են երկու կամ ավելի գործողություն, ինչպիսիք են տպագրումը, պատճենահանումը կամ ֆաքսիմիլային հաղորդումը, հաշվիչ մեքենային կամ ցանցին միանալու հնարավորություն ունեցող), 844332 (Այլ տպիչ, պատճենահանող և ֆաքսիմիլային սարքեր՝ միավորված կամ չմիավորված, հաշվիչ մեքենային կամ ցանցին միանալու հնարավորություն ունեցող), 844339 (Տպիչ, պատճենահանող և ֆաքսիմիլային սարքեր՝ միավորված կամ չմիավորված), 845121 (Չոր մաքրման մեքենաներ՝ մինչև 10 կգ տարողությամբ), 845129000 (Չոր մաքրման մեքենաներ՝ այլ), 8467 (Ձեռքի օդաճնշական գործիքներ, հիդրավլիկ կամ ներկառուցված էլեկտրական կամ ոչ էլեկտրական շարժիչով), 8481 (Այլ ամրաններ), 8903 (Զբոսանավեր և այլ լողացող միջոցներ՝ հանգստի և սպորտի համար, թիավարման նավակներ և կանոե), 9004 (Ակնոցներ, պաշտպանիչ ակնոցներ և համանման օպտիկական սարքավորումներ, շտկիչ, պաշտպանիչ և այլն), 950300 (Եռանիվ հեծանիվներ, ինքնագնացներ, ոտնակով ավտոմեքենաներ և համանման անիվավոր խաղալիքներ, տիկնիկների սայլակներ, տիկնիկներ, այլ խաղալիքներ, փոքրացված մասշտաբներով մոդելներ և համանման ժամանցային մոդելներ՝ գործող կամ չգործող, ամեն տեսակի գլուխկոտրուկներ), 9504 (Ապրանքներ զվարճանքների համար, սեղանի կամ սենյակային խաղեր, ներառյալ՝ սեղանները «Պինբոլ» խաղալու համար, բիլիարդ, խաղի հատուկ սեղաններ խաղատների համար և ավտոմատացված սարքավորումներ կեգելբանի համար):

2012 թվականին պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 14.9 մլրդ դրամ *հաստատագրված վճարներ* (առանց ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարների)՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 2%-ը: Մուտքերի 91.9%-ը (13.7 մլրդ դրամ) ստացվել է սպասարկման ոլորտից, 7.1%-ը (1.1 մլրդ դրամ)՝ հանրային սննդի ոլորտից և 1%-ը (150.8 մլն դրամ)՝ առևտրական գործունեությունից: Հաշվետու տարում հաստատագրված վճարները նախորդ տարվա համեմատ նվազել են 28.4%-ով կամ 5.9 մլրդ դրամով: Անկումը պայմանավորված է նախկինում հաստատագրված վճար վճարող հարկատուների նախորդ տարիներին վճարված հաստատագրված վճարի մուտքերից այլ հարկատեսակներին հաշվանցումով, ինչպես նաև «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով: «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-148-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարի 1-ից) բաղնիքների և ցնցու-

ղարանների կազմակերպում, բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառք, արդյունագործական ձկնորսություն, համակարգչային խաղերի կազմակերպում գործունեության տեսակները հարկման հաստատագրված վճարների համակարգից տեղափոխվել են հարկման ընդհանուր համակարգ: «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-313-Ն օրենքով 2012 թվականի ապրիլի 1-ից հաստատագրված վճարով հարկվող գործունեության մի քանի տեսակներ, մասնավորապես՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը, վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեությունը, ավտոտեխսպասարկման կայանների գործունեությունը, ավտոկանգառների գործունեությունը, տեղափոխվեցին արտոնագրային վճարների հարկման դաշտ: Նույն օրենքով 2012 թվականի հունվարի 1-ից հաստատագրված վճարով հարկվող գործունեության մի շարք տեսակների համար վերանայվել են հաստատագրված վճարի դրույքաչափերը: Մասնավորապես՝

1) խաղատների գործունեության կազմակերպման համար հաստատագրված վճարի հաշվարկման նպատակով տվյալ գործունեության համար հիմք ընդունվող ելակետային տվյալի 4.000.000-ապատիկի չափը փոխարինվել է 5.000.000-ապատիկի չափով,

2) լոտոտրոն, բինգո և մեխանիկական վիճականության համար ծրագրավորված այլ սարքերի համար հաստատագրված վճարի հաշվարկման նպատակով հիմք ընդունվող ելակետային տվյալի 15.000-ապատիկի չափը փոխարինվել է 18.750-ապատիկի չափով,

3) խաղային սարքավորումների հաստատագրված վճարի հաշվարկման նպատակով հիմք ընդունվող համապատասխան ելակետային տվյալի 125.000-ապատիկի չափը փոխարինվել է 156.250-ապատիկի չափով,

4) ինտերնետ կամ նմանօրինակ ցանկացած գլոբալ համակարգի և ցանկացած համակարգված ցանցային կապուղիների միջով ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի հաշվարկման նպատակով հիմք ընդունվող ելակետային տվյալի 1.000.000-ապատիկի չափը փոխարինվել է 1.250.000-ապատիկի չափով,

5) անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի հաշվարկման համար համապատասխան ելակետային տվյալի 75.000-ապատիկի չափը փոխարինվել է 93.750-ապատիկի չափով:

2012 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 26.1 մլրդ դրամ *բնօգտագործման և բնապահպանական վճարներ*՝ կազմելով հարկերի և տուրքերի 3.5%-ը: Նշված գումարից 7.9 մլրդ դրամը կազմել են բնապահպանական վճարները, 18.2 մլրդ դրամը՝ բնօգտագործման վճարները: Նախորդ տարվա համեմատ նշված եկամուտներն աճել են 2.1 անգամ կամ 13.9 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ

օրենքում, ինչպես նաև զուգահեռաբար «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքում 2012 թվականի հունվարից ուժի մեջ մտած փոփոխություններով, որոնց համաձայն հանքարդյունահանողների կողմից նախկինում պետական բյուջե վճարվող բոնուսի, կոնցեսիոն վճարի, ինչպես նաև մետաղական օգտակար հանածոների արդյունահանման համար վճարվող բնօգտագործման վճարների և ռոյալթիների փոխարեն սահմանվել են ռոյալթիներ՝ որպես բնօգտագործման վճարներ: Նշված մուտքերը կազմել են 15.7 մլրդ դրամ՝ կանխատեսված 15 մլրդ դրամի դիմաց:

2012 թվականին ջրօգտագործման վճարը կազմել է շուրջ 229.6 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 30.7%-ով կամ 53.9 մլն դրամով, որի հիմնական պատճառ է հանդիսացել ջրերի արդյունահանման ծավալների աճը:

Պինդ օգտակար հանածոների, բացառությամբ մետաղական օգտակար հանածոների մարված պաշարների, ստորերկրյա քաղցրահամ ու հանքային ջրերի և աղի արդյունահանված պաշարների համար բնօգտագործման վճարի մուտքը կազմել է շուրջ 2.2 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 54.5%-ով կամ 2.6 մլրդ դրամով՝ պայմանավորված «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում կատարված վերոհիշյալ փոփոխությամբ, ըստ որի մետաղական օգտակար հանածոների մասով բնօգտագործման վճարն առանձնացվել է պինդ օգտակար հանածոների համար սահմանված բնօգտագործման վճարից:

Ամրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական վճարի մուտքերը կազմել են 167 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 67.3%-ով կամ 343.1 մլն դրամով, որի հիմնական պատճառ է հանդիսացել ամրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման ծավալների նվազումը:

Ավտոմեքենաներից, գյուղմեքենաներից և լողամիջոցներից վնասակար նյութեր արտանետելու համար բնապահպանական վճարի մուտքերը կազմել են 763.4 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 3.8%-ով կամ 30.5 մլն դրամով: Նվազման պատճառ կարող է հանդիսանալ հին ավտոմեքենաների փոխարինումը նորերով:

Ջրային ավազան վնասակար նյութերի և միացությունների արտանետման դիմաց բնապահպանական վճարի մուտքերը կազմել են 221.7 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 18.3%-ով կամ 49.6 մլն դրամով: Նվազման պատճառ կարող է հանդիսանալ «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունը (06.10.2011թ. ՀՕ-262-Ն, ուժի մեջ է մտել 19.11.2011թ.), ըստ որի փոփոխվել է ձկնաբուծության նպատակով ջրօգտագործող և ջրային ռեսուրսներ վնասակար նյութերի և միացությունների արտանետումներ իրականացնող բնապահպանական վճարների հաշվարկման կարգը:

Շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների սահմանված կարգով տեղադրման համար բնապահպանական վճարը կազմել է 63.4 մլն դրամ՝ նախորդ տարվա

համեմատ նվազելով 48.3%-ով կամ 59.3 մլն դրամով, որի հիմնական պատճառը, ենթադրվում է, շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների տեղադրման (պահման) ծավալների նվազումն է:

ՀՀ-ում արտադրվող-իրացվող ապրանքների շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների դիմաց բնապահպանական վճարի մուտքերը կազմել են 49.6 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 13.1%-ով կամ 7.5 մլն դրամով, որը, ենթադրվում է, պայմանավորված է «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ ՀՀ-ում արտադրվող ապրանքների իրացման շրջանառության նվազմամբ:

Շրջակա միջավայրին վնաս պատճառող ՀՀ ներմուծվող ապրանքների համար վճարված բնապահպանական վճարը կազմել է շուրջ 2.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 18%-ով կամ 360 մլն դրամով, որի հիմնական պատճառ է հանդիսացել «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված ապրանքների ներմուծման ծավալների աճը:

Մաքսային մարմինների կողմից գանձվող ավտոտրանսպորտային միջոցների օդային ավազան վնասակար նյութերի արտանետման դիմաց վճարված բնապահպանական վճարը կազմել է շուրջ 4.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 24.9%-ով կամ 853 մլն դրամով, որը պայմանավորված է այլ պետություններում հաշվառված ՀՀ մուտք գործող ավտոտրանսպորտային միջոցների քանակի աճով:

Կենսապաշարների օգտագործման վճարները կազմել են 166.2 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 50.7%-ով կամ 55.9 մլն դրամով:

Հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել 12.2 մլրդ դրամի *այլ հարկեր*՝ կազմելով հարկերի և տուրքերի 1.6%-ը: Մասնավորապես՝ 5.7 մլրդ դրամ են կազմել արտոնագրային վճարները, 3.2 մլրդ դրամ՝ ճանապարհային վճարները, 330.1 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, 467.4 մլն դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 387.4 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 176.8 մլն դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) վճարները և 1.7 մլրդ դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա համեմատ այլ հարկային եկամուտները նվազել են 21.2%-ով կամ 3.3 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված վերոհիշյալ օրենսդրական փոփոխություններով, որոնց արդյունքում հանքարդյունահանողների կողմից նախկինում վճարվող և այլ հարկային եկամուտներում հաշվառվող բոնուսի, կոնցեսիոն վճարի և ռոյալթիների փոխարեն սահմանված ռոյալթիները հաշվառվում են որպես բնօգտագործման վճարներ: Այլ հարկային եկամուտները

նվազումը պայմանավորված է նաև «Ներքին շուկայի պաշտպանության մասին» ՀՀ օրենքում 2011 թվականի դեկտեմբերի 8-ից ուժի մեջ մտած փոփոխությամբ, ըստ որի ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ տարածք ներմուծվող ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օղիների սակագնային քվոտայավորումը: Զգալի՝ 50.1%-ով անկում է արձանագրվել նաև հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքների գծով:

2011 թվականի դեկտեմբերի 7-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունված՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-308-Ն օրենքով (ուժի մեջ է մտնել 2012 թվականի հունվարի 1-ից) ամբողջությամբ վերախմբագրվել է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածը, ինչի արդյունքում՝

1) սահմանված կարգով պետական գրանցում չունեցող (չհաշվառված) կամ հարկային մարմիններում չհաշվառված անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու (ապօրինի գործունեություն) դեպքերի համար սահմանվել են տուգանքի նվազագույն չափեր՝ մեկ տարվա ընթացքում չհաշվառված կամ ապօրինի գործունեության հայտնաբերման 1-ին դեպքի համար երկու հարյուր հազար դրամի, իսկ 2-րդ դեպքի համար՝ հինգ հարյուր հազար դրամի չափով,

2) սահմանվել է, որ լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու դեպքերում կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից գանձվում է տուգանք՝ լիցենզիայի կամ թույլտվության տրման համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի տասնապատիկի չափով, բայց ոչ պակաս հինգ հարյուր հազար դրամից: Միաժամանակ նախատեսվել է, որ հիշյալ խախտումն արձանագրելուց հետո մեկ տարվա ընթացքում խախտումը (անկախ լիցենզավորման կամ թույլտվության ենթակա գործունեության տեսակից) կրկնվելու դեպքում կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից գանձվում է տուգանք՝ լիցենզավորման կամ թույլտվության ենթակա գործունեության իրականացման լիցենզիայի տրման համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի քսանապատիկի չափով, բայց ոչ պակաս մեկ միլիոն դրամից,

3) սահմանվել է, որ սույն կետի 1-ին (եթե իրականացվող ապօրինի կամ չհաշվառված գործունեությունն օրենքով ենթակա է լիցենզավորման) և 2-րդ ենթակետերով ներկայացված իրավախախտումների համար, բացի սահմանված տուգանքներից, գանձվում է նաև լիցենզավորման համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում:

4) Ամբողջությամբ վերախմբագրվել է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածը, ինչի արդյունքում վերանայվել են այդ հոդվածով նախատեսված տուգանքների կիրառության մոտեցումները:

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-314-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2012 թվականի ապրիլի 1-ից) հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը, հյուրանոցային տնտեսության օբյեկտների գործունեությունը, թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրումը, վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեությունը, ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեությունը և բիլիարդ խաղի կազմակերպման գործունեությունը հարկման հաստատագրված վճարների համակարգից տեղափոխվել են արտոնագրային վճարների համակարգ:

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-166-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2012 թվականի հուլիսի 1-ից) կատարվել են մի շարք փոփոխություններ: Մասնավորապես՝

1) վերանայվել են հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության, հյուրանոցային տնտեսության օբյեկտների գործունեության, թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման, վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեության, ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեության և բիլիարդ խաղի կազմակերպման գործունեության արտոնագրային վճարների դրույքաչափերը և արտոնագրային վճարների վճարման պարբերականությունը,

2) գործունեության որոշ տեսակներ՝ կոշիկի և կաշվե գալանտերեայի պարագաների արտադրության կազմակերպման գործունեությունը, ինչպես նաև հեռուստացույցների, լվացքի մեքենաների, օդորակիչների և այլ կենցաղային տեխնիկայի նորոգման ծառայությունների մատուցման գործունեությունները հարկման ընդհանուր համակարգից տեղափոխվել են արտոնագրային վճարների համակարգ:

Պետական փուրք

2012 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 23.8 մլրդ դրամ *պետական փուրքեր*՝ ապահովելով պետական բյուջեի եկամուտների 2.5%-ը: Պետական տուրքի փաստացի մուտքերը 12.4%-ով կամ 2.6 մլրդ դրամով գերազանցել են ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագիրը: Վերջինս հիմնականում պայմանավորված է օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների, լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու, պետական գրանցման և ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի

ծառայությունների կամ գործողությունների համար գանձված տուրքերի համեմատաբար բարձր կատարողականով՝ կազմելով համապատասխանաբար 111.2, 122.5, 110.6 և 112.5 տոկոս:

Նախորդ տարվա համեմատ պետական տուրքի մուտքերն աճել են 6.5%-ով կամ 1.5 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների, պետական գրանցման և ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող տուրքերի աճով:

2012 թվականին դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական բյուջե է վճարվել շուրջ 1.5 մլրդ դրամ (որից 565 մլն դրամը կազմում են պետական կառավարման մարմինների կողմից վճարված և պետական բյուջեից փոխհատուցված գումարները)՝ 18.2%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերը նվազել են 19.3%-ով կամ 354.2 մլն դրամով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիության փոփոխման համար վճարվող տուրքերը կազմել են 23.4 մլն դրամ՝ ապահովելով 96.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերը նվազել են 6.4%-ով կամ 1.6 մլն դրամով:

Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների դիմաց պետական բյուջե է վճարվել շուրջ 2.1 մլրդ դրամ՝ ապահովելով 101.5% կատարողական: 2011 թվականի համեմատ նշված տուրքերն աճել են 7.5%-ով կամ 143.6 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է մատուցված հյուպատոսական ծառայությունների քանակի աճով:

Պետական տուրքերի 16.2%-ը բյուջե է վճարվել պետական գրանցումների դիմաց՝ կազմելով շուրջ 3.9 մլրդ դրամ, որը 10.6%-ով գերազանցում է նախատեսված ցուցանիշը և 18.1%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է ավտոմեքենայի պետական համարանիշ տալու, կորցրած պետական համարանիշը վերականգնելու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենայի գրանցման, պետական համարանիշ տալու, ինչպես նաև կորցրած պետական համարանիշը վերականգնելու, լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու և ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) և կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու համար գանձված տուրքերի ծրագրի գերազանցմամբ: Մասնավորապես՝ ավտոմեքենայի պետական համարանիշ տալու, կորցրած պետական համարանիշը վերականգնելու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենայի

գրանցման, պետական համարանիշ տալու, ինչպես նաև կորցրած պետական համարանիշը վերականգնելու համար տուրքի գծով պետական բյուջե է մուտքագրվել 1.3 մլրդ դրամ՝ 40.5%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը և 38.7%-ով նախորդ տարվա փաստացի մուտքերը՝ պայմանավորված ավտոպետհամարանիշների իրացման շրջանառության աճով: Աճել է նաև ՀՀ-ում կնքված գործարքների (առուվաճառքի պայմանագրեր և այլն) հիման վրա հաշվառված տրանսպորտային միջոցների համարանիշների թիվը: Բացի կնքված գործարքների թվի աճից, որոշակի ազդեցություն է ունեցել նաև մեծ պահանջարկ ունեցող՝ համարանիշներում գործածվող 2 նիշը տարվա ընթացքում կառավարության համապատասխան որոշմամբ սահմանվելու հանգամանքը: Ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) և կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու համար տուրքի գծով գանձվել է շուրջ 660.7 մլն դրամ՝ 38.8%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը և 40.3%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ տեխնիկական միջոցներով (արագաչափեր, տեսանկարահանող սարքեր) երթևեկության կանոնների խախտումների արձանագրություններն ուղարկվում են տրանսպորտային միջոցների սեփականատերերին և օրենսդրությամբ սահմանված կարգով նրանք են կրում նշանակված տուգանքները վճարելու պարտավորությունը: Նշված կարգը մեծապես խթանեց ավտոտրանսպորտային միջոցները փաստացի օգտագործողների անունով գրանցելու, վերաձևակերպելու և ըստ այդմ նոր տեխանձնագրեր (գրանցման վկայագրեր) տրամադրելու գործընթացը: Բացի այդ 2012 թվականին հիմնականում ավարտվեց հին նմուշի վարորդական վկայականների փոխանակման գործընթացը, որն իր հերթին հանգեցրեց նախատեսվածից անհամեմատ ավելի վարորդական վկայականների տրամադրմանը: Պետական գրանցման համար գանձված տուրքերի աճը պայմանավորված է նաև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ (19.03.2012թ. ՀՕ-131-Ն օրենք), որի համաձայն պետական ռեգիստրում գրանցման ենթակա առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունների ու լրացումների և նմանատիպ այլ գործողությունների համար պետական տուրքի դրույքաչափը բազային տուրքի վեցապատիկից դարձել է տասնապատիկ: Լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու համար գանձվել է շուրջ 771 մլն դրամ պետական տուրք՝ 4.7%-ով զիջելով նախատեսված ցուցանիշը և 5%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տրամադրելու դիմաց 2012 թվականին պետական բյուջե է վճարվել 1.3 մլն դրամ, որը 37.9%-ով գերազանցում է նախատեսվածը և 10.2%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Աճը պայմանավորված է մշակութային արժեքների արտահանման համար տրամադրված վկայագրերի և

դրանց կրկնօրինակների թվի ավելացմամբ. հաշվետու տարում այն կազմել է 263՝ 2011 թվականի 237-ի դիմաց:

Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված գործողությունների համար հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե է վճարվել 295 մլն դրամ պետական տուրք՝ 5.1%-ով զիջելով կանխատեսված և 7.8%-ով՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները, ինչը պայմանավորված է հայտատուների թվի նվազմամբ:

Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար 2012 թվականին գանձվել է շուրջ 2.9 մլրդ դրամ, որը 12.5%-ով գերազանցում է կանխատեսված ցուցանիշը և 10.9%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը, որը հիմնականում պայմանավորված է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ (30.11.2011թ. ՀՕ-302-Ն օրենք), որով սահմանվեցին պետական տուրքի նոր տեսակներ՝ էլեկտրոնային անձնագիր տալու և նույնականացման քարտի տրամադրման համար: ՀՀ քաղաքացու կենսաչափական տվյալներ պարունակող էլեկտրոնային անձնագիր տալու համար սահմանվել են բազային տուրքի 25-ապատիկի չափով, իսկ նույնականացման քարտի տրամադրման համար՝ բազային տուրքի 3-ապատիկի չափով պետական տուրքեր (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարից): Բացի այդ, Շենգենյան համաձայնագրի պետությունների կողմից արդեն իսկ սահմանափակվել է 10 տարուց ավելի ժամկետ ունեցող անձնագրերով մուտքի վիզաների տրամադրումը, որը և հանգեցրել է տրամադրվող անձնագրերի թվի նկատելի աճին: Մուտքերի աճ պայմանավորված է նաև փոխանակման ենթակա, այդ թվում նաև՝ վավերականության երկարաձգմամբ հանդերձ օրենքով սահմանված ժամկետը լրացած և պարտադիր փոխանակման ենթակա անձնագրերի թվի աճով:

Հաշվետու տարում պետական բյուջե մուտքագրված պետական տուրքերի 18.6%-ը ստացվել է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար: Նշված աղբյուրից պետական բյուջե է մուտքագրվել 4.4 մլրդ դրամ՝ 22.5%-ով գերազանցելով կանխատեսված և 2.3%-ով՝ նախորդ տարվա մուտքերը: Աճը հիմնականում պայմանավորված է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող օդու ներմուծման համար՝ տարեկան բազային տուրքի 15000-ապատիկի չափով պետական տուրքի սահմանմամբ, ինչպես նաև իրավաբանական անձանց պարզ ընթացակարգով տրվող և վիճակախաղերի, շահումով խաղերի բնագավառում լիցենզիաներ տալու համար գանձված մուտքերի աճով: Մասնավորապես՝ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ՝ (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի

2208 ծածկագրին դասվող օղու ներմուծման համար գանձվել է 195 մլն դրամ, որի գծով մուտքեր չեն նախատեսվել: Վիճակախաղերի, շահումներով խաղերի բնագավառից գանձվել է 1.2 մլրդ դրամ պետական տուրք՝ 62.1%-ով գերազանցելով կանխատեսված և 13.4%-ով՝ նախորդ տարվա ցուցանիշը: Տուրքերի նշված աճը պայմանավորված է հետևյալով: Շահումով խաղերի և խաղատների ծրագրավորման ժամանակ կանխատեսումը կատարվել էր՝ հաշվի առնելով ՀՀ-ում 2013 թվականին շահումով խաղերի և խաղատների կազմակերպման տարածքային սահմանափակումները, ինչով և պայմանավորված ակնկալվում էր շահումով խաղերի և խաղատների կազմակերպման գործունեություն իրականացնողների քանակի նվազում: Սակայն պայմանավորված այն փաստով, որ տարածքային սահմանափակումներն ուժի մեջ չմտան, մի շարք տնտեսավարող սուբյեկտներ, որոնք մինչ այդ լիցենզիա ստանալու հայտ չէին ներկայացնում, դիմեցին ՀՀ ֆինանսների նախարարությանը և, վճարելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուրքերը, ստացան շահումով խաղի կամ խաղատան կազմակերպման լիցենզիա: Պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաների դիմաց 2012 թվականին ստացվել է շուրջ 895 մլն դրամ՝ 20.2%-ով գերազանցելով կանխատեսված և 20.3%-ով՝ նախորդ տարվա մուտքերը:

2012 թվականին օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձվել են շուրջ 8.8 մլրդ դրամ պետական տուրքեր՝ ապահովելով 111.2% կատարողական: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է վարորդական իրավունքի վկայական և կորցրած վկայականի կրկնօրինակը տալու համար գանձված մուտքերի բարձր մակարդակով: Դրանք կանխատեսված 1.1 մլրդ դրամի և նախորդ տարվա 1.9 մլրդ դրամի դիմաց կազմել են շուրջ 1.7 մլրդ դրամ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2012 թվականին հիմնականում ավարտվեց հին նմուշի վարորդական վկայականների փոխանակման գործընթացը, որն իր հերթին հանգեցրեց նախատեսվածից անհամեմատ ավելի վարորդական վկայականների տրամադրմանը: Նախորդ տարվա համեմատ օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձված տուրքերն աճել են 9%-ով կամ շուրջ 724 մլն դրամով, որը մեծ մասամբ պայմանավորված է նշված խմբում մեծ տեսակարար կշիռ ունեցող՝ օդային տրանսպորտով ֆիզիկական անձանց ելքի համար բյուջե մուտքագրված տուրքերի ավելացմամբ: Հաշվետու տարում նշված մուտքերը կազմել են 6.4 մլրդ դրամ՝ 4.4%-ով գերազանցելով կանխատեսված և 14.7%-ով գերազանցելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշը, որը պայմանավորված է նախորդ տարվա համեմատ 2011 թվականին փոխադրված ուղևորների թվաքանակի աճով: Պետական մենաշնորհային բնույթի ծառայությունների (գործողությունների) մատուցումը հաստատող փաստաթղթի (վկայականի) տրամադրման համար յուրաքանչյուր քննությունն ընդունելու համար 2012 թվականին գանձվել է 305.7 մլն դրամ պետական տուրք՝ 29.2%-ով գերազանցելով կանխատեսված և 42.4%-ով՝ նախորդ

տարվա ցուցանիշը: Նշված տուրքերի աճը պայմանավորված է հիմնականում վարորդական իրավունքի վկայական ստանալու քննությունների համար գանձվող տուրքերի աճով:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարվել են նաև մի շարք այլ փոփոխություններ, որոնք որոշակի ազդեցություն են գործել պետական բյուջեի մուտքերի վրա: Մասնավորապես՝

1. Անշարժ գույքի գնահատողի որակավորման վկայական տալու համար սահմանվել է բազային տուրքի 20-ապատիկի չափով պետական տուրք (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարի 19-ից): Զուգահեռաբար, 2012 թվականի հունվարի 19-ից ուժը կորցրած է ճանաչվել անշարժ գույքի գնահատման համար տարեկան բազային տուրքի 150-ապատիկի չափով պետական տուրքը:

2. Տրանսպորտային միջոցների և դրանց կցորդների պարտադիր տեխնիկական զննության անցկացման գործունեության իրականացման համար՝ օգտագործվող յուրաքանչյուր հոսքագծի հաշվով տարեկան բազային տուրքի 5000-ապատիկի չափով պետական տուրքի փոխարեն սահմանվել է տարեկան բազային տուրքի 1000-ապատիկի չափով պետական տուրք (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարից):

3. Անտառանյութի արտահանման սերտիֆիկատ տալու համար՝ յուրաքանչյուր ավտոմոբիլի կամ կոնտեյնների համար բազային տուրքի տասնապատիկի չափով, յուրաքանչյուր վագոնի համար բազային տուրքի 20-ապատիկի չափով պետական տուրքերի փոխարեն սահմանվել են համապատասխանաբար բազային տուրքի 30-ապատիկի չափով և բազային տուրքի 60-ապատիկի չափով պետական տուրքեր (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարից):

4. Միաժամանակ թվային տախտկարաֆի տրամադրման համար սահմանվել են՝ վարորդի քարտը տալու համար բազային տուրքի 50-ապատիկի չափով, կազմակերպության քարտը տալու համար՝ բազային տուրքի 70-ապատիկի չափով և արհեստանոցի քարտը տալու համար՝ բազային տուրքի 70-ապատիկի չափով պետական տուրքեր (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարից):

5. Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ կամ չվնասագերծված տարաներ փոխադրելու թույլտվություն տալու համար սահմանվել է բազային տուրքի 10-ապատիկի չափով պետական տուրք (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարից):

6. ՀՀ բեռնափոխադրողներին տրանսպորտի նախարարների եվրոպական կոնֆերանսի անդամ պետությունների միջև անսահմանափակ քանակով երթեր կատարելու իրավունք տալու համար սահմանվել են 6 շաբաթ ժամկետով երթերի համար բազային տուրքի 5-ապատիկի չափով, 1 տարի ժամկետով երթերի համար՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով, ՀՀ բեռնափոխադրողներին ավտոմոբիլային փոխադրումների մասին միջազգային համաձայնագրերով

սահմանված մեկանգամյա փոխադրման իրավունք տալու համար բազային տուրքի 20-ապատիկի չափով պետական տուրքեր (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարից):

7. ԱՏԳ ԱԱ 26 ապրանքային ծածկագրերին դասվող հանքաքարերի արտահանման սերտիֆիկատ տալու համար սահմանվել է յուրաքանչյուր անգամ արտահանվող հանքաքարի տվյալ ծավալում մետաղի պարունակության և դրա միջազգային շուկայական միջին գնի հիման վրա հաշվարկված արժեքի 3 տոկոսի չափով պետական տուրք (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարից):

8. Արտոնություն է սահմանվել նաև որոշակի հայցերով արդարացվածների համար (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2011 թվականի նոյեմբերից):

9. Գունագեղ քարերի յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար սահմանվել է տարեկան բազային տուրքի 10000-ապատիկի չափով (նախկին 1000-ապատիկի փոխարեն), մետաղագործական, քիմիական, թեթև և արդյունաբերության այլ ճյուղերի հումքի յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան բազային տուրքի 10000-ապատիկի չափով (նախկին 1000-ապատիկի փոխարեն, փոփոխությունն ուժի մեջ է մտել 2011 թվականի դեկտեմբերի 31-ից):

10. Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնելու համար սահմանվել են բազային տուրքի 500-ապատիկի չափով, իսկ մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնելու համար լիցենզիան վերաձևակերպելու կամ կրկնօրինակը տալու համար՝ սահմանված դրույքաչափի 10 տոկոսի չափով պետական տուրքեր (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2012 թվականի մարտից):

11. Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար (բացառությամբ բժշկական բարձրագույն կրթական ծրագրերի) նախկինում սահմանված է եղել բազային տուրքի 300-ապատիկի չափով պետական տուրք, ինչի փոխարեն բակալավրի կրթական ծրագրի իրականացման համար (բացառությամբ բժշկական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի), ինչպես նաև մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման համար (բացառությամբ բժշկական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի) սահմանվել են տարեկան բազային տուրքի 300-ապատիկի չափով պետական տուրքեր (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2012 թվականի հուլիսից, ՀՕ-350-Ն օրենքով): Վերոնշյալ փոփոխություններով ակնկալվում է պետական բյուջեի եկամուտների աճ:

12. Վերոնշյալ օրենքի 14-րդ բաժնում յուրաքանչյուր վայրում շահումներով խաղերի կազմակերպման համար՝ տարեկան բազային տուրքի 5000-ապատիկի չափով պետական տուրքի և յուրաքանչյուր վայրում խաղատան կազմակերպման համար՝ տարեկան բազային տուրքի

25000-ապատիկի չափով պետական տուրքի համար սահմանված 2012 թվականի ընթացքում վճարման ենթակա հերթական տարեկան պետական տուրքի գումարի մեծությունը՝ մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար իրականացվող գործունեության մասով, որոշվում է վերոնշյալ օրենքի 14-րդ բաժնում սահմանված շահումներով խաղերի և խաղատան կազմակերպման համար սահմանված տարեկան պետական տուրքի գումարի մեկ տասներկուերորդի և 2012 թվականի ընթացքում հերթական պետական տուրքի վճարման ամսվանից մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում ներառված, այդ թվում՝ ոչ ամբողջական, ամիսների թվի արտադրյալով (լրացումն ուժի մեջ է մտել 2012 թվականի օգոստոսից, ՀՕ-169-Ն):

Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ

2012 թվականին պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են շուրջ 129.1 մլրդ դրամ: Ստացված գումարից 107.3 մլրդ դրամը վճարվել է գործատուների կողմից, 18 մլրդ դրամը՝ աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից, 3.7 մլրդ դրամը՝ անհատ ձեռնարկատերերի կողմից: 2011 թվականի համեմատ նշված մուտքերի աճը կազմել է 4.5% կամ ավելի քան 5.6 մլրդ դրամ՝ պայմանավորված աշխատավարձի և աշխատողների թվաքանակի աճով:

Պաշտոնական դրամաշնորհներ

2012 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են շուրջ 18.7 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 82.2%-ը, այսինքն՝ կանխատեսվածից պակաս է ստացվել ավելի քան 4 մլրդ դրամ: Շեղումը մեծ մասամբ առաջացել է նպատակային ծրագրերի կատարման աստիճանով պայմանավորված՝ դրամաշնորհային միջոցները չստանալու կամ նախատեսվածից պակաս ստանալու հանգամանքով, որոնց շրջանակներում ստացվել է կանխատեսված գումարի 77.4%-ը՝ 6.4 մլրդ դրամ: Միաժամանակ նշենք, որ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ստացվել են ծրագրված միջոցներից 104.8%-ով (շուրջ 1.1 մլրդ դրամով) ավել միջոցներ:

Հաշվետու ժամանակահատվածում նպատակային դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում 2.1 մլրդ դրամը (նախատեսվածի 199.1%-ը) ստացվել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, 1.6 մլրդ դրամ (նախատեսվածի 73.6%-ը)՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի, շուրջ 1.5 մլրդ դրամ (նախատեսվածի 64.4%-ը)՝ Եվրոպական միության, 703.6 մլն դրամ (նախատեսվածի 38.3%-ը)՝ Համաշխարհային բանկի, 186.9 մլն դրամը

(նախատեսվածի 100%-ը)՝ Ավստրիայի զարգացման գործակալության, 122.1 մլն դրամը (նախատեսվածի 61.1%-ը)՝ ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր», 96.5 մլն դրամը (նախատեսվածի 22.7%-ը)՝ Դանիական Թագավորության, 91.5 մլն դրամ (նախատեսվածի 99.8%-ը)՝ Գյուլատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի, 16.9 մլն դրամ (նախատեսվածի 67.6%-ը)՝ ՄԱԶԾ-ի և 7.4 մլն դրամ (նախատեսվածի 35.1%-ը)՝ ԱՄՆ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կենտրոնի աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում:

2012 թվականին 10.5 մլրդ դրամ է ստացվել ոչ նպատակային ծրագրերի շրջանակներում՝ կազմելով ծրագրի 86.7%-ը: Մասնավորապես՝ շուրջ 4.2 մլրդ դրամ է ստացվել ՀՀ-ԵՄ գործողությունների 2011-2013 թվականների ծրագրով նախատեսված (Բազմաոլորտային աջակցության ծրագիր) միջոցառումների, 2.1 մլրդ դրամ Հայ-գերմանական ֆինանսական համագործակցության «Հայաստանի գյուլատնտեսության ոլորտի աջակցության» ծրագրի և 615.9 մլն դրամ՝ տոհմային երինջների ձեռք բերման ծրագրերի շրջանակներում, որոնք հատկացվել են նախատեսված ծավալով: Շուրջ 3.6 մլրդ դրամ (նախատեսվածի 69%-ի չափով) է հատկացվել Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների 2007-2010 թվականների ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման համար, որից 1.9 մլրդ դրամը՝ մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխման շարունակության և զբաղվածության հայեցակարգի մշակման ծրագրի շրջանակներում՝ կազմելով նախատեսվածի 90%-ը, 1.7 մլրդ դրամը՝ Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին աջակցության դատաիրավական ծրագրի շրջանակներում, որը տարեկան ծրագրով նախատեսված չէ: ԵՀԲ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա ասոցիացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին ՀՀ կառավարությանը նախատեսված 3.1 մլրդ դրամ աջակցությունը չի ստացվել: 1.8 մլրդ դրամ է տրամադրվել ՀՀ պետական մարմինների արտաբյուջետային ծրագրերի շրջանակներում: Նշված միջոցները ստացվել են ծրագրի 76.6%-ի չափով: Դրանց հիմնական մասը՝ շուրջ 1.5 մլրդ դրամը, հատկացվել է առողջապահական համակարգին:

Նախորդ տարվա համեմատ պաշտոնական դրամաշնորհներից պետական բյուջեի մուտքերը նվազել են 68.6%-ով կամ 40.7 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է «Հազարամյակի մարտահրավեր» ծրագրի գծով հատկացումների և ոչ նպատակային դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ստացված միջոցների նվազմամբ (համապատասխանաբար 27.1 և 15.4 մլրդ դրամով):

Այլ եկամուտներ

2012 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 49.1 մլրդ դրամ այլ եկամուտներ, որը կազմում է բյուջեի եկամուտների 5.2%-ը՝ նախորդ տարվա 5%-ի դիմաց: Այլ եկամուտները 11.3%-ով կամ 5 մլրդ դրամով գերազանցել են կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագրով սահմանված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների և ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարների բարձր ցուցանիշով, որոնք համապատասխանաբար 494.2 և 31.5 տոկոսով գերազանցել են ծրագիրը:

Հաշվետու տարում 297.8 մլն դրամ է մուտքագրվել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից՝ 69.2%-ով գերազանցելով կանխատեսված և 44.8%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը:

Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության դիմաց 2012 թվականին ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 829.2 մլն դրամ՝ 9.3%-ով գերազանցելով ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ նշված եկամուտները նվազել են 13.9%-ով կամ 134 մլն դրամով: Մասնավորապես՝ 786.7 մլն դրամ է մուտքագրվել գույքի (բացառությամբ հողի) վարձակալության վարձավճարներից, 16.8 մլն դրամ՝ պետական պահուստի հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարներից, 25.7 մլն դրամ՝ պետական անտառների և անտառային հողերի օգտագործման վճարներից: Նախորդ տարվա համեմատ պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության վարձավճարները նվազել են 13.9%-ով՝ հիմնականում ձեռնարկությունների և գույքի (բացառությամբ հողի) վարձակալության վարձավճարների նվազման արդյունքում: Պետական անտառների և անտառային հողերի օգտագործման վճարները նախորդ տարվա համեմատ նվազել են 29.5%-ով: Պետական պահուստի հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարները նախորդ տարվա համեմատ նվազել են 62.6%-ով:

Հաշվետու տարում բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվել են 5.3 մլրդ դրամ տոկոսավճարներ՝ շուրջ 5 անգամ կամ 494.2%-ով գերազանցելով ծրագրված ցուցանիշը, սակայն միևնույն ժամանակ 5.4%-ով զիջելով նախորդ տարվա մուտքերը: Ծրագրվածից ավել եկամուտների ստացումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի կատարման ընթացքում ծախսերը պակաս են կազմել ՀՀ կառավարության կողմից հաստատված եռամսյակային համամասնություններով նախատեսված ծրագրերից: Բացի այդ, գանձապետական միասնական հաշվի կառավարումից սպասվող եկամուտների կանխատեսման ժամանակ ենթադրվել

է, որ 2012 թվականի տարեսկզբի կայունացման դեպոզիտային հաշվի մնացորդը կձևավորվի 2011 թվականի պետական բյուջեի ցուցանիշների ամբողջությամբ կատարման արդյունքում, մինչդեռ 2011 թվականի փաստացի կատարման արդյունքում պետական բյուջեի կայունացման դեպոզիտային հաշիվը գերազանցել է կանխատեսված նախնական մակարդակը: 2011 թվականի համեմատ 2012 թվականին ՀՀ պետական բյուջե մուտքագրված տոկոսավճարների 299.4 մլն դրամով նվազումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ 2011 թվականի տարեսկզբին գանձապետական միասնական հաշվի միջոցները (ներառյալ ժամկետային ավանդները ԿԲ-ում) կազմել են 101.2 մլրդ դրամ, իսկ 2012 թվականի տարեսկզբին՝ 63.7 մլրդ դրամ: Ժամկետային ավանդների միջին տոկոսադրույքը հաշվետու տարում կազմել է 9.8 տոկոս՝ նախորդ տարվա 9.0 տոկոսի դիմաց:

Իրավաբանական անձանց բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվել են 943 մլն դրամի շահաբաժիններ՝ 8.6%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը և 4.1%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը:

Պետության տված վարկերի օգտագործման դիմաց 2012 թվականին ստացվել են ավելի քան 6.8 մլրդ դրամ տոկոսավճարներ, որից շուրջ 6.7 մլրդ դրամը (ծրագրի 131.4%-ը) ստացվել է ռեզիդենտներին, իսկ 184.1 մլն դրամը (ծրագրի 100%-ը)՝ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց: Նախորդ տարվա համեմատ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարներն աճել են 12.6%-ով կամ 743.6 մլն դրամով, իսկ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարները նվազել են 16.1%-ով կամ 35.4 մլն դրամով:

Տիրազուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ ՀՀ համայնքների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական միջոցներից, ինչպես նաև հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի օտարումից մուտքերը կազմել են 889 մլն դրամ՝ 8.4%-ով գերազանցելով ծրագրային և 13.3%-ով՝ նախորդ տարվա ցուցանիշները: Նման աճը հիմնականում պայմանավորված է ՀՀ արտաքին գործերի նախարարության արտաբյուջետային միջոցների աճով:

Իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերը կազմել են 8.5 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 93%-ը և 40.1%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Վերջինս հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության կողմից գանձված մուտքերի զգալի աճով:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 25.5 մլրդ դրամ՝ 97.5%-ով

ապահովելով ծրագրի կատարումը: Նշված մուտքերից 15 մլրդ դրամը կազմել են պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները, որոնք կատարվել են 95%-ով, 5.5 մլրդ դրամը՝ ռադիոհաճախականության վճարը, որը 6.2%-ով գերազանցել է ծրագիրը, 3.6 մլրդ դրամը՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարը, որի ծրագիրը կատարվել է 87.8%-ով:

Հայկական երկաթուղու համակարգի վերաբերյալ կոնցեսիոն պայմանագրով նախատեսված տարեկան վճարը կազմել է 328.8 մլն դրամ, որը 50.2%-ով գերազանցել է ծրագիրը և 17.5%-ով՝ նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի հասույթի ավելացմամբ: 93.9 մլն դրամ է ստացվել ՀՀ էներգետիկայի բնագավառում էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման և արտահանման գործունեության լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում ֆինանսական երաշխիքներից մուտքերի գծով, որոնք 15.5%-ով գերազանցել են ծրագիրը՝ պայմանավորված էներգետիկայի բնագավառում կարգավորող անձանց կողմից լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերի կանխատեսված քանակի գերազանցմամբ: Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտները 11.2%-ով գերազանցել են նախորդ տարվա մուտքերը:

ՀՀ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

Տնտեսագիտական դասակարգում

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր 1,044.2 մլրդ դրամ ծախսերի կատարում: Տարվա ընթացքում, հաշվի առնելով «ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով, պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները, ինչպես նաև պետական բյուջեում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքով ՀՀ կառավարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում կատարված փոփոխությունները ներառյալ՝ ՀՀ պետական բյուջեի ծախսերի ծրագիրը կազմում է շուրջ 1,077.2 մլրդ դրամ՝ ավելանալով 33 մլրդ դրամով (3.2%-ով): Վերջինիս դիմաց փաստացի ծախսերը կազմել են 1,006.1 մլրդ դրամ՝ ապահովելով պետական բյուջեի ծախսային ծրագրերի շրջանակներում պետական մարմինների կողմից սահմանված կարգով ստանձնած պարտավորությունների ամբողջական և ծրագրի 93.4% կատարողական: Վերջինս պայմանավորված է որոշ ծրագրերով նախատեսված միջոցների տնտեսմամբ, ինչպես նաև առանձին ծրագրերի շրջանակներում գնումների հետ կապված վճարումների հետաձգմամբ: Շեղումը մասամբ պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով (60.6%), առանց որոնց ծախսերի կատարողականը կազմում է 97.1%: Պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշվին 2012 թվականին կատարվել են 23.7 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրի 83.2%-ը:

2012 թվականին նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ի անվանական մեծության 5.4% աճի պայմաններում ՀՀ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 2%-ով կամ 19.6 մլրդ դրամով, ինչը հանգեցրել է ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի հարաբերակցության նվազմանը. այն կազմել է 25.3%՝ կանխատեսված 24.8%-ի¹⁵ և 2011 թվականի 26.1%-ի դիմաց:

Տնտեսագիտական դասակարգում

ՀՀ 2012 պետական բյուջեի փաստացի ծախսերի շեղումը ծրագրից կազմել է 6.6% կամ 71 մլրդ դրամ, որից 46.1 մլրդ դրամը բաժին է ընկել ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին, 24.9 մլրդ դրամը՝ ընթացիկ ծախսերին: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի ծախսերն աճել են 2%-ով (19.6 մլրդ դրամով)՝ պայմանավորված ընթացիկ

¹⁵ ՀՀ 2012 թվականի բյուջետային ուղերձում կանխատեսված ցուցանիշ:

ծախսերի աճով: Արդյունքում 2011 թվականի համեմատ բյուջետային ծախսերի կազմում 4.7 տոկոսային կետով նվազել է ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների տեսակարար կշիռը և համապատասխանաբար՝ ավելացել ընթացիկ ծախսերի կշիռը: ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի ծախսերն ունեցել են հետևյալ կառուցվածքը՝ դրանց 87%-ն ուղղվել է ընթացիկ ծախսերին և 13%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին:

Ընթացիկ ծախսեր

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը տրամադրվել է 875.6 մլրդ դրամ, որը կազմում է տարեկան ծրագրի 97.2%-ը՝ հիմնականում պայմանավորված այլ ծախսերի, նպաստների, ծառայությունների ու ապրանքների ձեռքբերման և պետական պարտքի սպասարկման ծախսերի ծրագրից շեղումներով:

Հաշվետու տարում ընթացիկ ծախսերի 9.8%-ը՝ ավելի քան 86.2 մլրդ դրամ, տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը: Նշված ծախսերի գծով օգտագործվել է տարեկան նախատեսված միջոցների 97.1%-ը: Նախորդ տարվա համեմատ աշխատանքի վարձատրության ծախսերն ավելացել են 1.8%-ով:

2012 թվականին ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 204.7 մլրդ դրամ կամ բյուջեի ընթացիկ ծախսերի 23.4%-ը: Նշված ծախսերի տարեկան ծրագիրը կատարվել է 98.3%-ով: Նախորդ տարվա համեմատ ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերն ավելացել են 19.4%-ով՝ հիմնականում պայմանավորված նյութերի ձեռքբերման ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում պետական պարտքի սպասարկման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 40.7 մլրդ դրամ կամ ծրագրված միջոցների 92.9%-ը: Շեղումը պայմանավորված է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսերի տնտեսմամբ: Ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերը կազմել են 23.2 մլրդ դրամ կամ կանխատեսված ցուցանիշի 94.1%-ը: Վերջինս պայմանավորված է ներքին պետական պարտքի միջին կշռված եկամտաբերությունից ավելի բարձր եկամտաբերությամբ հետգնումների իրականացմամբ՝ նախատեսված 24 մլրդ դրամի դիմաց 25.8 մլրդ դրամ ծավալով հետգնումների իրականացմամբ, ինչպես նաև 2011թ. չորրորդ եռամսյակում 3.0 մլրդ դրամ ծավալով 7 և 10 տարի մարման ժամկետայնություն ունեցող պարտատոմսերի հետգնմամբ, որոնք 321.33 մլն դրամով պետք է սպասարկվեին 2012թ. փետրվար և օգոստոս ամիսներին: Արտաքին պարտքի սպասարկմանը հաշվետու տարում ուղղվել է 17.4 մլրդ դրամ կամ կանխատեսվածի 91.3%-ը: Վերջինս պայմանավորված է 6-ամսյա ԱՄՆ դոլարի Libor-ի, 6-ամսյա Euribor-ի և SDR-ի

տոկոսադրույքների կանխատեսումային և 2012 թվականի ընթացքում փաստացի ձևավորված դրույքաչափերի տարբերությամբ, ինչպես նաև 2012 թվականի ընթացքում արտաքին աղբյուրներից նպատակային փոխառու միջոցների ներգրավման ծրագրի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն ավելացել են 14.5%-ով կամ 5.1 մլրդ դրամով: Մասնավորապես՝ 12.2%-ով (2.5 մլրդ դրամով) աճ է արձանագրվել ներքին պարտքի, 17.5%-ով (2.6 մլրդ դրամով)՝ արտաքին պարտքի սպասարկման ծախսերում: Ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճը պայմանավորված է ներքին պարտքի ծավալի աճով, վերջինիս կառուցվածքում միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի բարձր տեսակարար կշռով, ինչպես նաև ֆինանսական շուկայում տոկոսադրույքների բարձրացմամբ: Արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճը պայմանավորված է ՀՀ կառավարության արտաքին պարտքի ծավալի աճով, պարտքի կառուցվածքում առևտրային վարկերի տեսակարար կշռի աճով, ինչպես նաև ԱՄՆ դոլարի, եվրոյի և ճապոնական իենի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի անկմամբ:

2012 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 21.1 մլրդ դրամի սուբսիդիաներ, որից 17.5 մլրդ դրամը հատկացվել է պետական կազմակերպություններին, 3.6 մլրդ դրամը՝ ոչ պետական կազմակերպություններին: Հատկացված սուբսիդիաներից 7.3 մլրդ դրամը տրամադրվել է հանգստի, մշակույթի և կրոնի, 4.9 մլրդ դրամը՝ սոցիալական պաշտպանության բնագավառներին: Սուբսիդիաների ծրագիրը կատարվել է 98.9%-ով: 2011 թվականի համեմատ պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաների գումարն աճել է 6.8%-ով, ընդ որում, 91.7-ով ավելացել են ոչ պետական հատվածին կատարված հատկացումները:

2012 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները կազմել են շուրջ 112.8 մլրդ դրամ ապահովելով 98.3% կատարողական: Մասնավորապես՝ 111.1 մլրդ դրամ է տրամադրվել պետական հատվածի այլ մակարդակներին, 1.6 մլրդ դրամ՝ միջազգային կազմակերպություններին: Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաները հատկացվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով 32.4 մլրդ դրամ, որը պահպանվել է նախորդ տարվա մակարդակին: 8.9 մլրդ դրամի սուբվենցիաներ են տրամադրվել համայնքների բյուջեներին՝ 98.7%-ով կատարելով ծրագիրը: 2011 թվականի համեմատ պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհներն աճել են 13.5%-ով:

Հաշվետու տարում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 33%-ը կամ 288.5 մլրդ դրամը կազմել են սոցիալական նպաստները և կենսաթոշակները, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 98%-ով: Նշված հատկացումներից 79.3 մլրդ դրամն ուղղվել է նպաստների, 197.2 մլրդ դրամը՝ կենսաթոշակների, 12 մլրդ դրամը՝ պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման ծախսերի ֆինանսավորմանը, որոնք

կատարվել են համապատասխանաբար 94.5, 99.5 և 96 տոկոսով: Նախորդ տարվա համեմատ սոցիալական նպաստների և կենսաթոշակների ծախսերն աճել են 12.5%-ով կամ 32.1 մլրդ դրամով: Մասնավորապես՝ 13.6%-ով ավելացել են նպաստները, 5.7%-ով՝ կենսաթոշակները:

2012 թվականի պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 13.9%-ը կամ 121.6 մլրդ դրամը կազմել են այլ ծախսերը, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 94.2%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 16.2%-ով:

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ

2012 թվականին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 130.5 մլրդ դրամ կամ ընդհանուր ծախսերի 13%-ը և տարեկան ծրագրի 73.9%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում արձանագրվել է շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման, շինարարության և այլ մեքենաների ու սարքավորումների գծով ծախսերում: 2011 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշը նվազել է 25.1%-ով, ընդ որում, նույնքան նվազել են ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը և 23.9%-ով՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը:

2012 թվականին ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 133.2 մլրդ դրամ, որից 104 մլրդ դրամը՝ նախատեսվածի 71.8%-ը, օգտագործվել է շենքերի և շինությունների ձեռքբերման, շինարարության և կապիտալ վերանորոգման, 23.8 մլրդ դրամը՝ նախատեսվածի 86.9%-ը, մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման, 2.8 մլրդ դրամը՝ նախատեսվածի 76.7%-ը, այլ հիմնական միջոցների ձեռքբերման նպատակով: 2011 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը նվազել են 44.5 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված շենքերի և շինությունների գծով կատարված ծախսերի նվազմամբ: Միևնույն ժամանակ մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման ծախսերն աճել են 48.3%-ով կամ 7.8 մլրդ դրամով:

Հաշվետու տարվա ընթացքում 2.7 մլրդ դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ կանխատեսված 1.8 մլրդ դրամի և նախորդ տարվա 3.5 մլրդ դրամի դիմաց: Նշված գումարից 2.1 մլրդ դրամը ստացվել է հողի, 595.1 մլն դրամը՝ այլ ակտիվների օտարումից:

Գործառական դասակարգում

Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեից 160.5 մլրդ դրամ է տրամադրվել ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերին՝ ապահովելով ծրագրի 94.6% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է պետական պարտքի սպասարկման, պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների հաշվին նախատեսված ծախսերի և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագրի կատարողականով: 2012 թվականի համեմատ ոլորտի ծախսերն աճել են 4.1%-ով: Աճի հիմնական մասը բաժին է ընկնում պետական պարտքի սպասարկման, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների և ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, ինչպես նաև ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների դասում ներառված պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերին:

«Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 14.3 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 98.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.9%-ով՝ հիմնականում պայմանավորված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման և կարողությունների զարգացման ծախսերի աճով:

2012 թվականին ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի և պատգամավորների պահպանման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 99.9%-ով՝ կազմելով 2.7 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ Ազգային ժողովի պահպանման ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Հաշվետու տարում ՀՀ վերահսկիչ պալատի պահպանմանը հատկացվել է 859.3 մլն դրամ կազմելով ծրագրի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 9.7%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը տրամադրվել է 6.9 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 98.9%-ը: Հատկացված միջոցներով իրականացվել է ՀՀ նախագահի և կառավարության աշխատակազմերի, ինչպես նաև մարզպետարանների պահպանումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 10.3%-ով՝ հիմնականում պայմանավորված՝ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման, աշխատանքի վարձատրության և արտասահմանյան գործուղումների գծով ծախսերի աճով:

ՀՀ նախարարությունների պահպանման ծախսերը՝ նախարարների աշխատակազմերի մասով, 2012 թվականին կազմել են 1 մլրդ դրամ, իսկ նախարարությունների աշխատակազմերի մասով՝ 854.7 մլն դրամ, և ապահովել համապատասխանաբար 95.5% և 97.1% կատարողական: Նշված ծրագրերում առկա են տնտեսումներ, իսկ նախորդ տարվա համեմատ դրանք էական փոփոխության չեն ենթարկվել:

Վարչական օբյեկտների հիմնանորոգմանը տրամադրվել է 659.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.6%-ը: Հատկացված միջոցներով կատարվել են ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության աշխատակազմերի, ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ ֆինանսների նախարարության շենքերի վերանորոգման, ինչպես նաև Կոնդի առանձնատների տնտեսությունում և Սևանի թերակղզու պետական ամառանոցում բարեկարգման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ վարչական օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կրճատվել են 49%-ով:

Հաշվետու տարվա ընթացքում 584.9 մլն դրամի սուբվենցիա է հատկացվել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի պահպանմանը՝ ապահովելով ծրագրի 100%-ը և 1.2%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի աճով:

ՀՀ վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդի գծով նախատեսված 17.2 մլն դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է՝ 9.6%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը տրամադրվել է 252.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.3%-ը: Հատկացված միջոցներով ՀՀ նախագահի և կառավարության աշխատակազմերի համար ձեռք են բերվել մեքենաներ, վարչական սարքավորումներ, մասնավորապես՝ համակարգչային տեխնիկա, տնտեսական գույք և այլն: 2011 թվականին նշված ուղղությամբ ծախսեր չեն կատարվել:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում (նախարարությունների աշխատակազմերի մասով) ՀՀ արդարադատության նախարարությանը տրամադրվել է 16.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 81.4%-ը: Տնտեսումը պայմանավորված է այն հանգամանքով, որ վարչական սարքավորումները ձեռք են բերվել անվանացանկում նախատեսվածից ցածր գներով, իսկ «ոչ նյութական հիմնական միջոցներ» հոդվածով նախատեսված 2 մլն դրամը, որը նախատեսվել էր արտասահմանյան գրականության ձեռքբերման համար, չի օգտագործվել: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 16.8%-ով:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են ՀՀ կառավարության գործունեության գնահատականների, կյանքի որակի և համայնքային կարիքների գնահատման

հետազոտությունների ծախսերը, որոնք կազմել են 103.7 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակին հատկացվել է 7.7 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 67.4%-ը: Հիմնարկին հատկացված ֆինանսական միջոցների օգտագործումը սկսվել է 2012 թվականի ապրիլի 15-ից, նոր գործունեության վայր տեղափոխվելուց հետո: Դրանով է պայմանավորված գրասենյակի պահպանման ֆինանսական միջոցների ոչ ամբողջական օգտագործումը:

«Ավստրիայի զարգացման գործակալություն» ընկերության աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում կարգավորիչ գիլյոտին» դրամաշնորհային ծրագիրը իրականացվել է նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով 102.6 մլն դրամ: ՀՀ Նախագահի 2011 թվականի սեպտեմբերի 17-ի ՆՀ-246-Ն հրամանագրով ստեղծվել է ՀՀ տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի բարեփոխումների խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) և նախանշվել են բարեփոխումների գործընթացում ընդգրկվող 17 ոլորտները: Ի կատարումն ՀՀ Նախագահի վերոնշյալ հրամանագրի՝ կազմավորվել է ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ պետական հիմնարկը, որի գործունեության հիմնական նպատակը ՀՀ տնտեսական ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերանայման արդյունքում դրանց կրճատման, ինչպես նաև հստակեցմանը և պարզեցմանն ուղղված աշխատանքների և ծրագրերի իրականացման ապահովումն է:

Ուսումնասիրվել են հանրային ծառայությունների (էլեկտրոնային հաղորդակցություն, էներգետիկա, գազ, ջուր), տրանսպորտի և առողջապահության ոլորտները կարգավորող իրավական ակտերը և համապատասխան բիզնես գործընթացները, և Խորհրդի քննարկմանն է ներկայացվել առաջարկվող փոփոխությունների իրավական ակտերի փաթեթը: Փաթեթների ընդունմամբ ուժը կորցրած կճանաչվեն և կբարելավվեն բազմաթիվ իրավական ակտեր և կկրճատվեն բիզնես գործընթացներ՝ դյուրացնելով ընթացակարգերը, պարզեցնելով ու բարձրացնելով նաև քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակը:

Հանրային ծառայությունների ոլորտի փաթեթը Խորհրդում քննարկվելուց հետո արժանացել է նաև ՀՀ կառավարության հավանությանը, տրանսպորտի ոլորտի փաթեթը քննարկվել է Խորհրդում և կներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը:

2012 թվականի ընթացքում սկսվել է նաև կրթության, հողային հարաբերությունների, ձեռնարկատիրական և ֆինանսական, ինչպես նաև հարկային և մաքսային ոլորտները կարգավորող իրավական ակտերի և համապատասխան բիզնես գործընթացների ուսումնասիրումը, և առաջարկվող փոփոխությունների իրավական ակտերի փաթեթները կձևավորվեն և Խորհրդի քննարկմանը կներկայացվեն 2013 թվականի առաջին կիսամյակի ընթացքում:

Արտաբյուջետային միջոցների հաշվին գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման նպատակով իրականացվել են 134 մլն դրամի ծախսեր՝ կազմելով 96.7% և 3.5 անգամ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ՀՀ արդարադատության նախարարության անունով տվյալ արտաբյուջետային հաշիվը բացվել է և իրավաբանական անձանց պետական գրանցման, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման և ապոստիլ դնելու վճարովի ծառայությունների ցանկը և վճարների չափերը հաստատվել են ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 2-ի թիվ 860-Ն որոշմամբ:

Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների դասի ծրագրերին հաշվետու տարում տրամադրվել է 41.8 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 93.3%-ը: Շեղումը, որը կազմել է 3 մլրդ դրամ, հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների պակաս օգտագործմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերը նվազել են 7.5%-ով կամ 3.4 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի, հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման և պարգևավճարների տրամադրման, ինչպես նաև ակցիզային դրոշմանիշների ձեռքբերման ծախսերի կրճատմամբ:

Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների դասում ընդգրկված գործադիր իշխանության մարմինների պահպանման ծրագրին տրամադրվել է 10.9 մլրդ դրամ, որն իրականացվել է 99.9%-ով: Միջոցներն ուղղվել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12.6%-ով կամ 1.2 մլրդ դրամով՝ պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը (նախարարությունների աշխատակազմերի մասով) տրամադրվել է 1.4 մլրդ դրամ, որի կատարողականը կազմել է 92.3%: Միջոցներն ուղղվել են ՀՀ ֆինանսների նախարարության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.7%-ով:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են ակցիզային դրոշմանիշների ձեռքբերման և ավելացված արժեքի հարկի վերադարձի ծախսերը, որոնք կազմել են համապատասխանաբար 846 մլն դրամ և 22.6 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ առաջին ծրագրի գծով ծախսերը նվազել են 38.6%-ով, իսկ երկրորդի գծով՝ 1%-ով:

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների խրախուսման նպատակային ֆոնդը կազմել է 508.3 մլն դրամ կամ նախատեսվածի 99.3%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 14.5%-ով:

ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի հրապարակայնության ապահովման նպատակով 2012 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 49.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.3%-ը: Տնտեսումը պայմանավորված է եղել «ՀՀ պետական պարտքի տարեկան հաշվետվության» տպագրման նպատակով կազմակերպված մրցույթի արդյունքում ձևավորված նախահաշվից ցածր գնային առաջարկով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 50.6%-ով: 2008 թվականից հետո ձեռք բերվող ծառայությունների՝ հեռուստատեսությամբ և ռադիոյով հայտարարությունների ու հաղորդումների պատրաստման և եթեր հեռարձակման միավորի գներն անընդհատ աճել են (յուրաքանչյուր տարի կազմակերպվում են նոր մրցույթներ, որոնց արդյունքում էլ ձևավորվում են նոր գներ), սակայն այդ տարիների ընթացքում ծրագրի ֆինանսավորումը մնացել է անփոփոխ, ինչի հետևանքով էլ ձեռք բերվող ծառայությունների քանակը տարեցտարի էապես նվազել է, բացառությամբ 2011 թվականի, երբ ծրագրի գումարն ավելացվել էր 50 մլն դրամով, ինչի արդյունքում 2012 թվականին նշված ծախսերը 2011 թվականի նկատմամբ կրկնակի պակաս են եղել:

Հաշվետու տարում ՀՀ գանձապետական համակարգի վճարահաշվարկային սպասարկումն ապահովելու նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 148.3 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 76.2%-ը: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը (նախարարությունների աշխատակազմերի մասով) տրամադրվել է 11.8 մլն դրամ, որի կատարողականը կազմել է 76.7%: Միջոցները տրամադրվել են ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման և պարզևավճարների տրամադրման նպատակով օգտագործվել է 963.7 մլն դրամ կամ նախատեսվածի 90.6%-ը: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են 41.8%-ով, ինչը պայմանավորված է նրանով, որ վիճակահանության կարգում կատարվել են փոփոխություններ, միաժամանակ վիճակահանության արդյունքում շահած կտրոնների քանակը որոշվում է վիճակահանությամբ և շահումները պատահականության արդյունք են:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերը կազմել են 4.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 61.5%-ը: Նախորդ տարվա համեմատ ծախսերը նվազել են 40.6%-ով: Շեղումը պայմանավորված է հարկային մարմնի և տարածքային ստորաբաժանումների վերակազմավորումների, ինչպես նաև

եղանակների անբարենպաստ պայմանների հետևանքով շինարարական աշխատանքների ժամանակավոր դադարեցմամբ, ինչի պատճառով ձեռք չեն բերվել նաև կահավորման համար անհրաժեշտ գույքն ու սարքավորումները:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնից ձեռք բերվող հարկային հաշիվների ձևերի տպագրությանը տրամադրվել է 42.4 մլն դրամ, որի կատարողականը կազմել է 66.8%: Շեղումը պայմանավորված է նրանով, որ հարկ վճարողների մի մասը հարկային հաշիվներ դուրս է գրում էլեկտրոնային տարբերակով: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 70.6%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հարկային հաշիվների ձևերի տպագրումը կատարվում է «պաշտպանված» թղթի վրա, որի արդյունքում հարկային հաշվի մեկ էջի ձեռքբերման գինը բարձրացել է:

Պարտքի գրանցման և կառավարման DMFAS 6.0 համակարգի տեխնիկական սպասարկման վճարը կազմել է 5.7 մլն դրամ (90.5%):

Հաշվետու տարում 10.6 մլրդ դրամ է տրամադրվել *արտաքին հարաբերությունների* դասի ծրագրերին, որը կազմել է նախատեսված հատկացումների 99.5%-ը: Արտաքին հարաբերությունների ծախսերը 2011 թվականի համեմատ ավելացել են 5.9%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերի աճով:

Արտաքին հարաբերությունների ծախսերից 6.6 մլրդ դրամ պետական բյուջեի հաշվին և 700.7 մլն դրամ՝ արտաբյուջետային միջոցների հաշվին ուղղվել է ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 100%-ը:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են նաև դեսպանությունների շենքերի գնման ծախսերը, որոնք կազմել են 33.7 մլն դրամ: Գումարն ուղղվել է Բրյուսելում ՀՀ դեսպանության շենքի գնման նպատակով վերցված վարկի գծով 2012 թվականի չափաբաժնի մարմանը: Նշված ծախսերը 2011 թվականի համեմատ աճել են 3.8%-ով:

Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարների գծով ծախսերը կազմել են 1.4 մլրդ դրամ (99.3%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների և արտասահմանյան պաշտոնական գործուղումների նպատակով հաշվետու տարում օգտագործվել է համապատասխանաբար 309.3 մլն դրամ և 482 մլն դրամ, որոնք կատարվել են 98.5%-ով և 98.2%-ով:

ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալության պահպանմանը հատկացվել է 150.3 մլն դրամ (99.4%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էապես չեն փոփոխվել:

Գործադիր իշխանության, պետական կառավարման մարմինների պահպանման ծրագրի շրջանակներում ՀՀ արտաքին գործերի նախարարությանը տրամադրվել է 869.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.9% կատարողական և պահպանվելով նախորդ տարվա մակարդակին:

Հայաստանի Հանրապետությանը սուվերեն վարկանիշ շնորհելու կապակցությամբ կազմակերպությունների մատուցած ծառայությունների դիմաց վճարման ծախսերը կազմել են 40.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 58.6% կատարողական: Տնտեսումն առաջացել է 2012 թվականին «Մուդիս Ինվեսթորս Սերվիս» միջազգային վարկանշային գործակալության կողմից գրավոր պահանջ չներկայացնելու արդյունքում: Ծրագիրը նախատեսված է ՀՀ տնտեսական, քաղաքական և ֆինանսական ցուցանիշների գնահատման, գնահատականների հիման վրա վարկանիշի շնորհման նպատակով վարկանիշ շնորհող հեղինակավոր միջազգային ընկերությունների հետ արդյունավետ համագործակցության իրագործման համար: Ծրագրի նպատակն է միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ներքին և արտաքին աղբյուրներից պետական բյուջեի պակասուրդի կայուն, հուսալի և ոչ ռիսկային ֆինանսավորման համար բարենպաստ պայմանների և միջավայրի ապահովումը:

Հաշվետու տարում 399.8 մլն դրամ է տրամադրվել *աշխատակազմի (կադրերի) գծով ընդհանուր բնույթի ծառայությունների* դասի ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրի 99.1%-ը: 2011 թվականի համեմատ տվյալ դասի ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

Տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 190.6 մլն դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 99.1% կատարողական: Միջոցներն ուղղվել են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

Քաղաքացիական ծառայության կադրերի ռեգերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության հետ կապված ծախսերը կազմել են 62 մլն դրամ կամ նախատեսվածի 99.4%-ը և 2.5%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորման նպատակով հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջեից տրամադրվել է 147.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.1%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 1.7%-ով:

«Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ» դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են 1.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.2%-ը: Շեղումը հիմնականում

պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 28.9%-ով՝ պայմանավորված մարդահամարի գծով ծախսերի կրճատմամբ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 619.4 մլն դրամ կամ ծրագրի 98.2%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ծախսերը կազմել են 286.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 96.4%-ը: Շեղումը տնտեսման արդյունք է: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 7.4%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բնականոն աճով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների հատկացումները կազմել են 74.7 մլն դրամ կամ նախատեսվածի 93.4%-ը: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 3.2%-ով: Շեղման պատճառ է հանդիսացել մրցույթների արդյունքում ձևավորված՝ նախատեսվածից ավելի ցածր գներով ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը: Ծրագրի շրջանակներում մշակվել և թարմացվել է Հայաստանում գործող ՏՀՏ (Տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաներ) ոլորտի ձեռնարկությունների ուղեցույցը, ոլորտի հետազոտության մեթոդոլոգիան: Մշակվել է վերջնական հաշվետվությունը, որը ներառում է տեղեկատվական և հեռահաղորդակցության ոլորտի զարգացումները, գործարար միջավայրի ներկա իրավիճակը, իրավական դաշտը, կրթության ոլորտը և այլն: 2012 թվականի հոկտեմբերի 5-7-ը տեղի է ունեցել միջազգային տեխնոլոգիական «Դիջիթալ 2012» ցուցահանդեսը, նոյեմբերի 27-28-ին գիտության և տեխնոլոգիաների ձեռներեցության ծրագրի (STEP) շրջանակում տեղի է ունեցել Վենչուրային համաժողով: STEP ծրագրի շրջանակում իրականացվել են «Գաղափարից դեպի շուկա» դրամաշնորհային մրցույթի նախապատրաստման աշխատանքները, ներառյալ մրցութային փաթեթի մշակումը: Ներկայացված 21 ծրագրերից ընտրվել են հինգ հաղթողներ: Կազմակերպվել են հինգ «ՏՀՏ լիդերներն առանց փողկապների» խորագրով հանդիպում-քննարկումներ: Կազմակերպվել է «Smart Country-թվային լուծումներ ինովացիոն տնտեսության համար» խորագիրը կրող 5-րդ ամենամյա Դիջիթալ Բիզնես ֆորումը: 2012 թվականի դեկտեմբերի 10-11-ին ԱՄՆ-ում՝ Ստենդֆորդի համալսարանում, անցկացվել է ԱրմԹեք-2012 Հայաստանի բարձր տեխնոլոգիաների 5-րդ ամենամյա համաժողովը: Համաժողովի շրջանակում ՀՀ կառավարության և «Ինթել» ընկերության միջև կնքվել է Հայաստանում գիտահետազոտական կենտրոն հիմնելու մասին փոխըմբռնման հուշագիր, իսկ «Կորպորասիոն Ամերիկա» ընկերության և ՀՀ կառավարության միջև ստորագրվել է Հայաստանում չիպերի գործարան հիմնելու մասին հուշագիր: ԱՄՆ Սիլիկոնային հովտում բացվել է Հայաստանի տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ներկայացուցչական գրասենյակը: Ստորագրվել է Հայաստանում առաջին վենչուրային հիմնադրամի ստեղծման մասին փոխըմբռնման

հուշագիրը: Հայ-հնդկական SCS ուսումնական կենտրոնում ուսանողների, մասնագետների և դասախոսների համար իրականացվել են 63 կարճաժամկետ և երկարաժամկետ դասընթացներ, կազմակերպվել են 19 սեմինարներ: Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի կարողությունների զարգացման բաղադրիչի շրջանակում իրականացվել են մի շարք դասընթացներ և այլ միջոցառումներ՝ ներգրավելով առավել քան 600 ուսանող: Մշակվել է Հայաստանում Cisco լուծումների լաբարատորիայի հիմնման ծրագիրը և ուղարկվել Cisco ընկերություն՝ համաձայնեցման: Մշակման փուլում է գտնվում նաև Ինթել կազմակերպության հետ համատեղ բովանդակության մշակման ծրագիրը:

«2011 թվականի մարդահամարի նախապատրաստման աշխատանքների կազմակերպում» ծրագրի ծախսերը կազմել են 70.9 մլն դրամ կամ նախատեսվածի 98.4%-ը:

«Միջազգային համադրումներ» ծրագրի ծախսերը կազմել են 3.2 մլն դրամ կամ նախատեսվածի 97.2%-ը:

«Մարդահամար-2011» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսերը կազմել են 68.7 մլն դրամ կամ նախատեսվածի 94.8%-ը:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դասին հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 716.9 մլն դրամ, որից 322.9 մլն դրամը՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների, 4.2 մլն դրամը՝ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանմանը, որոնց կատարողականը կազմել է համապատասխանաբար 98.2% և 99.8%:

«ՀՀ պետական գնումների գործակալություն» և «Սպասարկում» ՊՈԱԿ-ներին պետական աջակցությունը տրամադրվել է նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով համապատասխանաբար 146.1 մլն դրամ և 243.7 մլն դրամ: 2011 թվականի համեմատ ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դասի ծախսերն աճել են 1.2%-ով:

2012 թվականին «*Ընդհանուր բնույթի հեղափոխական աշխատանք*» դասին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 7.7 մլրդ դրամ, որը կազմել է նախատեսված ցուցանիշի 99.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.3%-ով՝ հիմնականում պայմանավորված «Ա. Ալիսանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում և գիտական ներուժի արդիականացում», ինչպես նաև Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանության ծրագրերի ծախսերի աճով:

Գիտաաշխատողներին գիտական աստիճանների համար 2012 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 401.5 մլն դրամ հավելավճարներ՝ ապահովելով 95.6% կատարողական և

8.8%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված հավելավճար ստացող գիտնականների թվի աճով:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակներում 125.7 մլն դրամ է հատկացվել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեին: Իրականացվել է կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված երկամյա ծրագրերի մրցույթ՝ մասնավոր հատվածի կամ այլ աղբյուրների հետ համաֆինանսավորման սկզբունքով, որն էապես բարձրացնում է գիտական արդյունքների քանակն ու որակը: Մրցույթով հաղթող ճանաչված 17 թեմաներից ֆինանսավորվել են 15-ը: Ծրագրի շրջանակներում 10.8 մլն դրամ հատկացվել է ՀՀ սփյուռքի նախարարությանը, որի հաշվին իրականացվել է սփյուռքին վերաբերող 9 թեմաների գիտական հետազոտությունների պատվեր:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծախսերը կազմել են 5.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.6%-ով՝ հիմնականում պայմանավորված «Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» ՊՈԱԿ-ի պահպանման ծախսերը տվյալ ծրագրից առանձնացնելու հանգամանքով:

«Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն» և «Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում և գիտական ներուժի արդիականացում» ծրագրերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով համապատասխանաբար 588.9 մլն դրամ և 665.6 մլն դրամ:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հեղազոտական և նախագծային աշխատանքների դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են 992.2 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 9.5%-ով՝ պայմանավորված գիտական ու գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների ծախսերի աճով: Խմբի ծախսերի զգալի մասը՝ 862.4 մլն դրամ, տրամադրվել է նշված ծրագրին, որն օգտագործվել է նախատեսված չափով: 2011 թվականից սկսած պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը վերածվել է դրամաշնորհայինի, և նախատեսվել է ֆինանսավորել 170 գիտական թեմա՝ կատարման ժամկետը սահմանելով մինչև 2 տարի: Թեմաների ընտրությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ անկախ գիտական փորձաքննության հիման վրա:

Տվյալ դասում ընդգրկված՝ գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններին հատկացումներն իրականացվել են ամբողջությամբ, որոնք կազմել են 129.8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էականորեն չեն փոփոխվել:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների (այլ դասերին չպատկանող) դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են 9.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 77.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի պահպանման ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների դասի ծախսերն աճել են 57.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների և ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անցկացմամբ, ինչպես նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության և Պետական հատվածի բարեփոխումների երկրորդ ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում 579.7 մլն դրամ է տրամադրվել այս դասում ընգրկված պետական կառավարման մարմինների՝ ՀՀ հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պահպանմանը, որը կազմել է ծրագրի 98.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.5%-ով: Տվյալ դասում ընգրկված՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների և ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին տրամադրվել է համապատասխանաբար 1.2 մլրդ դրամ և 891.7 մլն դրամ, որոնք կատարվել են 95.4%-ով և 71.6%-ով: Վերջինիս կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ նոր ընտրական օրենսգրքի ընդունման հետ կապված՝ չկայացան Երևան քաղաքի և որոշ մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են հետևյալ 5 ծրագրերը, որոնք նախորդ տարվա համեմատ գրեթե չեն փոփոխվել:

- Փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերմանը տրամադրվել է 282.3 մլն դրամ:
- Աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքներին տրամադրվել է 21.1 մլն դրամ:
- Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների և գնահատման աշխատանքների իրականացման ծախսերը կազմել են 35 մլն դրամ:
- Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությանը տրամադրվել է 437.5 մլն դրամ:
- Փորձագիտական ծառայություններին արտաբյուջետային միջոցների հաշվին տրամադրվել է 2.7 մլն դրամ:

Տվյալ դասում ընդգրկված պետական կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը տրամադրվել է 13 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.9%-ը:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի պահպանման ծախսերը կազմել են 2.9 մլրդ դրամ կամ ծրագրի 83.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8.6%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձի ծախսի ավելացմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող պետական հատվածի բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 101.1%-ը, ընդ որում վարկի միջոցներից օգտագործվել է 923.4 մլն դրամ, կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 126.3 մլն դրամ: Ծրագրի նպատակն է կատարելագործել հանրային հատվածի կառավարման իրականացումը և ծառայությունների մատուցումը՝ քաղաքականության մշակման ոլորտում գերատեսչական հզորությունների ուժեղացման, մարդկային կապիտալի արդյունավետությունն առավելագույնի հասցնելու և ներքին աշխատանքային հոսքերի և արտաքին հաղորդակցության համար տեղեկատվական համակարգերի ստեղծման միջոցով: Մշակված գնումների ժամանակացուցի և այլ փաստաթղթերի հիման վրա 2012 թվականին իրականացվել են գնումների բնականոն ընթացքի համար անհրաժեշտ աշխատանքներ: Վարկային միջոցներից ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսվածից ավել օգտագործումը պայմանավորված է 2013 թվականին մատակարարվելիք ապրանքների դիմաց կատարված կանխավճարով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երևան քաղաքի պինդ աղբի կառավարման նպատակով պետական մասնավոր համագործակցության կառույցի համար գործարքի խորհրդատվական աջակցության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 106.9 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 82.6 մլն դրամ (77.2%), ընդ որում դրամաշնորհի միջոցներից՝ 68.4 մլն դրամ, կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 14.2 մլն դրամ: Ծրագրի նպատակն է աջակցություն ցուցաբերել Երևան քաղաքի երկու գոտիների աղբահավաքման և սանիտարական մաքրման համար կոնցեսիայի գործարքների, ինչպես նաև Երևան քաղաքի Նուբարաշենի աղբանոցի նախագծման-ֆինանսավորման-կառուցման-շահագործման (ՆՖԿՇ) գործարքի նախապատրաստման և իրականացման գործին: Ծրագրի շրջանակներում 2012 թվականին իրականացվել են Երևան քաղաքի աղբի կառավարման համակարգի բարելավման վերաբերյալ առաջարկությունների վերանայման և բարելավման աշխատանքներ: Աշխատանքներն իրականացման ընթացքում են: Ծրագրի ցածր կատարման պատճառն այն է, որ 2012 թվականին պայմանագրերով նախատեսված ավարտական

աշխատանքները չեն ամփոփվել, իսկ ծրագրի փակման ժամկետից հետո (31.12.2012թ.) կատարված աշխատանքները ծրագրի շրջանակներում չեն ֆինանսավորվում՝ համաձայն դրամաշնորհային պայմանագրի:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող օտարերկրյա ներդրումների և արտահանման աջակցության երկրորդ դրամաշնորհային ծրագրի իրականացման համար ծախսվել է 95 մլն դրամ կամ նախատեսվածի 134.3%-ը: Ծախսերից 88.3 մլն դրամը կատարվել է դրամաշնորհային միջոցների, 6.7 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծախսերի շեղումը ծրագրից պայմանավորված է այն հանգամանքով, որ 2011 թվականին իրականացված աշխատանքների մի մասի դիմաց վճարումներն իրականացվել են 2012 թվականի հունվար ամսին: Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանին ներդրումների և արտահանման խթանման գործում, ինչպես նաև բարելավել բիզնես և ներդրումային միջավայրը, որի շնորհիվ օժանդակություն կցուցաբերվի նաև տնտեսական և սոցիալական անցումային գործընթացին: 2012 թվականին իրականացվել են ծրագրով նախատեսված հետևյալ աշխատանքները.

- ենթակառուցվածքների և հմտությունների զարգացում,
- ներդրողների և արտահանողների սպասարկման ինստիտուցիոնալ ամրապնդում,
- ներդրումների և արտահանման խթանում,
- ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում:

Ծրագիրը 2012 թվականին ավարտվել է:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ազգային ժողովի քաղաքականության ձևավորման և հանրության հետ երկխոսության կարողությունների հզորացման դրամաշնորհային ծրագրի իրականացման համար ծախսվել է 7.8 մլն դրամ կամ նախատեսվածի 5.5%-ը: Ծախսերը կատարվել են դրամաշնորհային միջոցների հաշվին: Ծրագրից շեղման հիմնական պատճառն այն է, որ 2012 թվականին գնումների պլանը վերանայվել է, և աշխատանքների հիմնական մասը տեղափոխվել է 2013 թվական:

2012 թվականին իրականացվել են ծրագրով նախատեսված հետևյալ ուղղություններով աշխատանքներ.

- Ազգային ժողովում քաղաքականության ձևավորման կարողությունների ստեղծում,
- Ազգային ժողովի գրադարանի արդիականացում,
- Արդյունավետ հաղորդակցություն ընտրողների, հանրության և լրատվամիջոցների հետ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող հանրային հատվածի ներքին աուդիտի իրականացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է 242.1 մլն դրամ (105.1%): Ծախսերից 193.2 մլն դրամը կատարվել է դրամաշնորհային միջոցների, 48.9 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրից շեղման պատճառներից հիմնականն

այն է, որ վերահայտարարված մրցույթով 2011 թվականի վճարումների մի մասը կատարվել է 2012 թվականին: Ծրագրի նպատակն է հանրային հատվածում ներքին աուդիտի ինստիտուցիոնալ համակարգի ամրապնդումն ու կարողությունների ստեղծումը: 2012 թվականին իրականացվել են ծրագրով նախատեսված աշխատանքներ հետևյալ ուղղություններով.

- ներքին աուդիտի նոր մեթոդաբանության լայնամասշտաբ փորձարկում,
- ներքին աուդիտի համար տեղեկատվության կառավարման միասնական համակարգի մշակում և իրականացում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոչ առևտրային կազմակերպությունների ֆիդուցիար վերահսկողության փորձնական դրամաշնորհային ծրագրի իրականացման համար ծախսվել է 1.3 մլն դրամ կամ նախատեսվածի 75.5%-ը: ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով միջոցները նախատեսվել են ծրագրի ավարտից հետո ֆինանսական աուդիտի անցկացման համար: Այս կապակցությամբ 29.12.2011թ. «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հետ կնքվել է դրամաշնորհային ծրագրի աուդիտի անցկացման պայմանագիր: Աուդիտի հաշվետվություններով դրական են գնահատվել ծրագրով հատկացված միջոցների նպատակային օգտագործումը և ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման արդյունքները: Ծրագրի կատարողականը պայմանավորված է նրանով, որ աուդիտի անցկացման պայմանագիրը կնքվել է նախատեսվածից ցածր արժեքով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ կառավարության արդյունքների մոնիթորինգի բարելավման կարողությունների ստեղծման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 17.1 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 15.7 մլն դրամ (91.9%)՝ ամբողջությամբ դրամաշնորհային միջոցների հաշվին: Ծրագրի նպատակը կառավարությունում ինստիտուցիոնալ գիտելիքի և կարողությունների ստեղծումն է մոնիթորինգի և գնահատման ազգային համակարգի հիմունքների ձևավորման միջոցով պետական կառավարման համակարգի աշխատանքային ընթացակարգերի բարեփոխման համար: 2012 թվականին իրականացվել են պետական կառավարման համակարգում աշխատանքային գործընթացների կառավարման և արդյունքների գնահատման բնագավառում փորձի փոխանակման այցելությունը և ծրագրի աուդիտը: Ծրագիրն ավարտվել է, և բոլոր նախատեսված աշխատանքներն իրականացվել են:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 947.4 մլն դրամ կամ նախատեսվածի 41.7%-ը, որից վարկի միջոցներից՝ 773.8 մլն դրամ, կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 173.7 մլն դրամ: Ծրագրի նպատակն է օժանդակել էլեկտրոնային հասարակության և ինովացիոն ծրագրի նախապատրաստմանը, որի նպատակներն են տնային տնտեսությունների, բիզնեսի և պետական կազմակերպությունների համար հիմնացանցի,

համակարգիչների և էլեկտրոնային ծառայությունների մատչելիությունը և հասանելիությունը, գիտելիքահեն և տեխնոլոգիահեն հատվածի ծավալները և տվյալ հատվածում զբաղվածության աճը, ինչպես նաև հասանելիությունը շուկաներին, ֆինանսներին, հմտություններին:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- էլեկտրոնային հասարակության ենթակառուցվածքների զարգացում,
- ձեռնարկությունների ինովացիոն ենթակառուցվածքների խթանում,
- ծրագրի կառավարում և իրականացում:

2012 թվականին մշակված գնումների ժամանակացույցի և այլ փաստաթղթերի հիման վրա իրականացվել են գնումների բնականոն ընթացքի համար անհրաժեշտ աշխատանքներ: Ծրագրի կատարողականը հիմնականում պայմանավորված է նրանով, որ 2012 թվականին Հավաստագրման կենտրոնի ստեղծման համար ծրագրային ապահովման և սարքավորումների ձեռքբերման թեստավորման արդյունքում ի հայտ են եկել որոշակի շեղումներ, որոնց ուղղման վրա ներկայումս աշխատում է մատակարարը: «Համակարգիչ բոլորի համար» ծրագրի իրականացման ուշացման պատճառներից են համակարգիչների ուշացած մատակարարումը, ինչպես նաև բանկերի և վերջիններիս մասնաճյուղերի անպատրաստ վիճակը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների 2-րդ ռազմավարության իրականացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված էր 174.5 մլն դրամ: Ծրագրի նպատակն է նախապատրաստել դաշտ հանրային հատվածի հաշվեգրման հիմունքներով հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների ընդունման համար: 2012 թվականին իրականացվել են աշխատանքներ ծրագրով նախատեսված հետևյալ ուղղություններով.

- Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների և ձեռնարկի լիարժեք իրականացում պիլոտային հիմունքով,
- Հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգի մշակում և իրականացում,
- Ծրագրի աուդիտ:

2012 թվականի ընթացքում միջոցներ չեն օգտագործվել այն պատճառով, որ գնումների պլանով նախատեսված հիմնական պայմանագիրը կնքվել է ուշացումով, և կատարված աշխատանքների դիմաց վճարումները պետք է կատարվեն 2013 թվականին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի կառավարության ֆիսկալ կառավարման և կարողությունների բարելավման համար դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 165.3 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 31.3 մլն դրամ (18.9%), ընդ որում դրամաշնորհային միջոցներից օգտագործվել է 24.4 մլն դրամ, կառավարության

համաֆինանսավորման հաշվին՝ 6.9 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում աջակցություն է տրամադրվել ՀՀ ֆինանսների նախարարությանը մակրո-ֆիսկալ կանխատեսման և վերլուծության, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին՝ արդյունավետ կառավարման համար կարողությունների ստեղծման ուղղությամբ: Ծրագրից շեղման պատճառներից հիմնականն այն է, որ 2012 թվականին գնումների պլանը վերանայվել է, և աշխատանքների հիմնական մասը տեղափոխվել է 2013 թվական:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող վիճակագրական հզորությունների կառուցման դրամաշնորհային ծրագրի գծով օգտագործվել է 1.1 մլն դրամ կամ նախատեսվածի 27.4%-ը: 2012 թվականին իրականացվել է ծրագրի աուդիտը:

ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 182.9 մլն դրամ կամ նախատեսվածի 91.6%-ը: 2012 թվականին շարունակվել է ծրագրի Զրից դեպի շուկա բաղադրիչի իրականացումը: Քանի որ բաղադրիչի շրջանակներում վարկային միջոցների (8.5 մլն ԱՄՆ դոլար) տեղաբաշխումն ավարտվել էր 2010 թվականի սեպտեմբերին, 2012 թվականին վարկերի տրամադրումը իրականացվում էր գոյացող շրջանառու միջոցների հաշվին:

Երրորդ կարգի ջրանցքների շինարարական աշխատանքների թերությունների վերացման գործընթացը վերահսկվել և կառավարվել է Ակադեմիկոս Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի ինստիտուտի, WYG International (Մեծ Բրիտանիա) և ԶԵՆ (Հայաստան) ընկերությունների կոնսորցիումի կողմից: 2011 թվականի դեկտեմբերից վերջինիս է հանձնարարվել նաև ոռոգման մայր ջրանցքների, ինքնահոս համակարգերի, պոմպակայանների և Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի ենթաբաղադրիչների իրականացումը: Սույն պայմանագրով աշխատանքներն ավարտվել են 2012 թվականի նոյեմբերին:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի կարողությունների զարգացմանը տրամադրվել է 657.2 մլն դրամ կամ նախատեսվածի 99.4%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 69.3%-ով, ինչը պայմանավորված է 2012 թվականին տրանսպորտային սարքավորումների, վարչական սարքավորումների ձեռքբերման և գեոդեզիական ու քարտեզագրական ծախսերի ավելացմամբ:

Ընտրական վարչարարության փորձի ուսումնասիրման, ընտրական վարչարարության բարձրացման, կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերազինման և ընտրական օրենսդրությանը վերաբերող նյութերի հրատարակման աշխատանքներին ՀՀ ԿԸՀ արտաբյուջետային միջոցներից հատկացվել է 16.4 մլն դրամ կամ նախատեսվածի 68.7%-ը:

2012 թվականին *պետական պարտքի* գծով գործառնությունների դասի ծախսերը կատարվել են 92.9%-ով և կազմել 40.7 մլրդ դրամ: Նշված գումարից 23 մլրդ դրամ տրամադրվել է պետական արժեթղթերի (գանձապետական պարտատոմսերի) սպասարկմանը, որի կատարողականը կազմել է 94.2%: Նշված ծախսերի տնտեսումը տվյալ ժամանակահատվածում պայմանավորված է ներքին պետական պարտքի միջին կշռված եկամտաբերությունից ավելի բարձր եկամտաբերությամբ հետգնումների իրականացմամբ (նախատեսված էր իրականացնել 24.0 մլրդ դրամ ծավալով հետգնումներ, որոնց դիմաց սպասարկման ծախսը պետք է կազմեր 600.0 մլն դրամ, փաստացի իրականացված 25.8 մլրդ դրամ ծավալով հետգնումների դիմաց սպասարկման ծախսը կազմել է - 1,131.5 մլն դրամ), ինչպես նաև 2011 թվականի չորրորդ եռամսյակում 3.0 մլրդ դրամ ծավալով 7 և 10 տարի մարման ժամկետայնություն ունեցող պարտատոմսերի հետգնմամբ, որոնք 321.33 մլն դրամով պետք է սպասարկվեին 2012 թվականի փետրվար և օգոստոս ամիսներին:

Օտարերկրյա պետություններից, միջազգային կազմակերպություններից և այլ արտաքին աղբյուրներից ստացված վարկերի սպասարկմանը տրամադրվել է 17.4 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 91.3%-ը: Տնտեսումը պայմանավորված է 6-ամսյա ԱՄՆ դոլարի Libor-ի, 6-ամսյա Euribor-ի և SDR-ի տոկոսադրույքների կանխատեսումային և 2012 թվականի ընթացքում փաստացի ձևավորված դրույքաչափերի տարբերությամբ, ինչպես նաև 2012 թվականի ընթացքում արտաքին աղբյուրներից փոխառու միջոցների ներգրավման ծրագրի թերակատարմամբ: Մուրհակների սպասարկմանը տրամադրվել է 23.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: 249.8 մլն դրամ է տրամադրվել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի նկատմամբ պարտավորությունների սպասարկմանը, որը կազմել է նախատեսվածի 89.5%-ը: Նախորդ տարվա համեմատ պետական պարտքի գծով գործառնությունների ծախսերն աճել են 14.5%-ով:

2012 թվականին ՀՀ պետական բյուջեից *կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտները* ֆինանսավորվել են ողջ ծավալով՝ կազմելով 32.5 մլրդ դրամ: Նշված գումարը տրամադրվել է համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և Ազգային ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ֆինանսավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Պաշտպանություն

2012 թվականին պաշտպանության բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 152.8 մլրդ դրամ՝ 98.8%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ ոլորտի

ծախսերը աճել են 5%-ով՝ հիմնականում պայմանավորված ռազմական կարիքների բավարարման ծախսերի ավելացմամբ:

Հաշվետու տարում *ռազմական պաշտպանության* դասին հատկացվել է 146.6 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 98.8%-ը: Նշված գումարից ավելի քան 146.3 մլրդ դրամն ուղղվել է ռազմական կարիքների բավարարմանը, որը կազմում է ծրագրի 98.8%-ը: ՀՀ ռազմական կցորդների պահպանմանը հատկացվել է 222.5 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 97.8%-ը: 2011 թվականի համեմատ ռազմական պաշտպանության ծախսերն աճել են 4.9%-ով:

Արտաքին ռազմական օգնությանը տրամադրվել է 141.7 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 98.8%-ը: Այս դասում ներառված՝ ՆԱՏՕ-ում Հայաստանի Հանրապետության ռազմական ներկայացուցչության պահպանման ծախսերը կազմել են 51.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի համադրման օղակում ՀՀ կապի սպայի գործունեության ապահովման ծախսերը կազմել են 39.4 մլն դրամ՝ ապահովելով 95.9% կատարողական: Երևանում ՆԱՏՕ-ի հասարակական-տեղեկատվական կենտրոնի շենքի վարձակալության նպատակով բյուջեից հատկացումները կազմել են 9.6 մլն դրամ, իսկ ՆԱՏՕ-ի վերափոխման հրամանատարությունում ՀՀ փոխգործակցության ներկայացուցչի պահպանման հատկացումները՝ 41.4 մլն դրամ, որոնք ամբողջությամբ օգտագործվել են:

Արտաքին ռազմական օգնության ծախսերը 6.8%-ով գերազանցել են 2011 թվականի ցուցանիշը:

Պաշտպանության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքների դասում ներառված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով 97.8% կատարողական և նախորդ տարվա համեմատ ավելանալով 16.9%-ով:

Պաշտպանության (այլ դասերին չպատկանող) ծախսերին տրամադրվել է շուրջ 4.9 մլրդ դրամ կամ ծրագրվածի 97.8%-ը, որից 4.6 մլրդ դրամը (ծրագրվածի 97.8%-ը) կազմել են պաշտպանության բնագավառի այլ ծախսերը, 44.8 մլն դրամ (ծրագրվածի 82.2%-ը)՝ զորակոչիկներին վարորդական իրավունքի վկայականների տրման և քննությունների ընդունման ծախսերը, 77.4 մլն դրամ՝ հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայությունների կազմակերպման համար: Այլ ծախսերի գծով՝ արտաբյուջետային միջոցների հաշվին օգտագործվել է 125.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 60.9%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 6.4%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է պաշտպանության բնագավառի այլ ծախսերի աճով:

Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն

Հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառներին ՀՀ 2012 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 76.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 98.5%-ը: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերն աճել են 5.7%-ով կամ 4.2 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված ոստիկանության ծախսերի աճով:

Բաժնի ծախսերի 69.5%-ը կամ 53.3 մլրդ դրամ կազմել են հասարակական կարգի և անվտանգության խմբի ծախսերը, որոնց ծրագիրը կատարվել է 98.4%-ով: Նշված գումարից 39.8 մլրդ դրամը կազմել են ոստիկանության, 13.5 մլրդ դրամը՝ Ազգային անվտանգության դասի ծախսերը, որոնք կատարվել են համապատասխանաբար 98%-ով և 99.7%-ով:

Նախորդ տարվա համեմատ հասարակական կարգի և անվտանգության խմբի ծախսերն աճել են 10.1%-ով կամ 4.9 մլրդ դրամով: 2011 թվականի համեմատ ոստիկանության դասի ծախսերն աճել են 11.6%-ով, որն էլ հիմնականում պայմանավորված է ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումներից, գրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումների և այլ վճարովի ծառայությունների ծախսերի աճով, որոնք կազմել են 8.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.3%-ը:

ՀՀ անձնագրերի բլանկների տպագրության ծախսերը կազմել են 171.5 մլն դրամ կամ նախատեսվածի 98.8%-ը և 5.3%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Հասարակական կարգի պահպանության ապահովմանը հաշվետու տարում տրամադրվել է 24 մլրդ դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.8%-ով՝ պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Պետավտոհամարանիշների ձեռքբերման համար պետական բյուջեից տրամադրվել է 236.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

2012 թվականին 6.3 մլրդ դրամի ծախսեր են կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության գծով իրականացվող ծառայությունների դիմաց ստացվող արտաբյուջետային միջոցների հաշվին, որոնք կազմել են նախատեսվածի 91.3%-ը և 4.7%-ով (283.5 մլն դրամով) գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

Քաղաքացիներին բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների մատուցման նպատակով տրամադրվել է 8.1 մլն դրամ կամ նախատեսվածի 85.6%-ը, որոնք նախորդ տարվա համեմատ աճել են 29.1%-ով: ՀՀ քաղաքացու անձնագիր տալու կամ փոխանակելու

վճարովի ծառայության մատուցումից ստացվող միջոցներն օգտագործվել են 93.7%-ով՝ կազմելով 464 մլն դրամ և 25.2%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

2012 թվականի ընթացքում Ազգային անվտանգության բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 13.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 99.7%-ը: 2011 թվականի համեմատ Ազգային անվտանգության ծախսերն աճել են 5.9%-ով կամ 751.1 մլն դրամով: Մասնավորապես 11.3 մլրդ դրամ հատկացվել է Ազգային անվտանգության ապահովման ծրագրին, որն օգտագործվել է 100%-ով: 2011 թվականի համեմատ տվյալ ծախսերն աճել են 6.5%-ով: Պետական պահպանության ապահովման ծախսերի կատարողականը կազմել է 99.7% կամ շուրջ 1.8 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ պետական պահպանության ապահովման ծախսերն աճել են 1.6%-ով: ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի պահպանման նպատակով օգտագործվել է 364.1 մլն դրամ (99.7%)՝ 6.8%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: ՀՀ կառավարական կապի անվտանգության ապահովման նպատակով իրականացվել են 32.7 մլն դրամի ծախսեր, որոնք ապահովել են ծրագրի 53.5% կատարողական, իսկ նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 48.9%:

Հայաստանի փրկարար ծառայության համակարգի պահպանման նպատակով հաշվետու տարում ծախսվել է շուրջ 4.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 99%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.9%-ով: Այս դասում ընդգրկված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծրագրի ծախսերը կազմել են 580.7 մլն դրամ՝ ապահովելով 97.4% կատարողական: Միջոցներն ուղղվել են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.3%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով որ 2011 թվականին Հայաստանի փրկարար ծառայության կազմից քաղաքացիական ծառայողների 40 հաստիք տեղափոխվեց ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ: Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանման ծախսերը կատարվել են 99.3%-ով՝ կազմելով 4.1 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.7%-ով, պայմանավորված աշխատավարձերի բնականոն աճով:

Դատարանների դասի ծրագրերին ՀՀ 2012 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 8.2 մլրդ դրամ՝ 97.2%-ով ապահովելով ծրագրի կատարումը: 2011 թվականի համեմատ այս ծախսերը նվազել են 13.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի կրճատմամբ:

Հաշվետու տարվա պետական բյուջեից 5.6 մլրդ դրամ տրամադրվել է ՀՀ դատարանների պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 97.8%-ը և 2.3%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: 375.2 մլն դրամ է տրամադրվել ՀՀ սահմանադրական դատարանի պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 98.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.8%-ով:

Հաշվետու տարում 636.6 մլն դրամ է տրամադրվել Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանմանը, որը կազմել է նախատեսվածի 97.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էապես չեն փոփոխվել:

Դատաիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում 2012 թվականին կատարվել են շուրջ 996 մլն դրամի ծախսեր կամ նախատեսվածի 103.9%-ը, որից վարկային միջոցներից 760.1 մլն դրամ, կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 235.9 մլն դրամ: Ծրագիրը բաղկացած է վեց հիմնական բաղադրիչներից.

- դատական համակարգի կառավարման ու վարչարարության ուժեղացում,
- դատարանների շենքերի վերականգնում,
- դատավորների վերապատրաստման դպրոց,
- դատական ակտերի հարկադիր կատարման բարելավում,
- արբիտրաժի ծառայությունների ուժեղացում,
- իրավական տեղեկատվության մատչելիության ընդարձակում և հանրային իրազեկության բարձրացում:

2012 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Կապան և Սևան քաղաքների ընդհանուր իրավասության դատարանների շենքերի կառուցման աշխատանքները,
- 2012 թվականին ավարտվել և շահագործման է հանձնվել Սևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի շենքը,
- իրականացվել է Սևանի, Վարդենիսի դատարանների և Երևանում գործող դատական ակադեմիայի շենքի կահույքի ձեռքբերում,
- Ապարանի, Սևանի, Եղեգնաձորի, Վարդենիսի և Իջևանի դատարանների շենքերի համար անվտանգության համակարգերի՝ հսկիչ անցակետերի ձեռքբերում և տեղադրում,
- ՀՀ դատական դեպարտամենտի, Եղեգնաձոր, Իջևան, Ապարան, Վարդենիս և Սևան քաղաքների դատարանների համար ՏՏ սարքավորումների՝ սկաներների, տպիչների, համակարգիչներ, սերվերների և դատական նիստերը ծայնագրող սարքերի ձեռքբերում, տեղադրում, միացում և փորձարկում:

ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ դատարանների պահուստային ֆոնդերից օգտագործվել է համապատասխանաբար 7.7 մլն դրամ և 102.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի համապատասխանաբար 99.9%-ը և 86.6%-ը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող դատաիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրում ճապոնական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարվել են 197.5 մլն դրամի (47.1%) ծախսեր, որից 165 մլն դրամ՝ դրամաշնորհային, 32.5 մլն դրամ՝ համաֆինանսավորման միջոցներից: Ծրագրի կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախատեսված աշխատանքների մեծ մասն իրականացվել է հոլանդական դրամաշնորհի հաշվին՝ հաշվի առնելով, որ Ճապոնական դրամաշնորհային համաձայնագիրը ավարտվում է 2013 թվականին, և վերջինս պահանջում է ՀՀ կառավարության համաֆինանսավորում, իսկ Հոլանդական դրամաշնորհի համաձայնագրի ավարտը 2012 թվականին էր, և վերջինս 100%-ով ֆինանսավորվում էր դրամաշնորհային միջոցներից: 2012 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- դատական համակարգի մոնիթորինգի ծառայություններ,
- դատավարական օրենսդրության նախագծերի մշակում,
- նոտարների և նոտարական թարգմանիչների ընտրության համար քննությունների և քննական գործընթացների համար նյութերի մշակում,
- իրավունքների պաշտպանության և իրավաբանական ծառայությունների մատչելիության վերաբերյալ տպագիր շաբաթական հավելվածի պատրաստում,
- հանրային իրազեկման քարոզարշավ քաղաքացիական իրավունքների իրագործման և հանրային ծառայությունների հնարավորությունների օգտագործման վերաբերյալ,
- հեղինակային և տեխնիկական հսկողության աշխատանքներ Սևան և Կապան քաղաքների դատարանների համար:

Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող դատաիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրում հոլանդական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 260.8 մլն դրամ կամ նախատեսվածի 172%-ը: 2012 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- «ԱՌԼԻՍ» համակարգի արդիականացման նպատակով SS սարքավորումների գնում,
- Դատալեքս հանրային տեղեկատվական կրպակների համալիրների տեղադրում համայնքային կետերում և դատարաններում,
- Հարկադիր կատարման ծառայության համար գործերի կառավարման արդիականացում,
- Էլեկտրոնային արխիվի տվյալների բազային ծրագրային ապահովման մշակում,
- Արբիտրաժի ծառայությունների ամրապնդում, տեխնիկական օժանդակության ծրագիր:

2012 թվականին ՀՀ սահմանադրական դատարանի կարողությունների զարգացման ծախսերը կատարվել են 97.8%-ով՝ կազմելով 6.2 մլն դրամ:

Հաշվետու տարում պետական բյուջեից 522.7 մլն դրամ է տրամադրվել *իրավական պաշտպանության* դասի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 96%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15.5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է նշված դասում Հայաստանի Հանրապետությունում 2012-2013 թվականների ընտրությունների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կարողությունների զարգացման ծախսերի աճով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պահպանման ծախսերը 2012 թվականին կազմել են 168.8 մլն դրամ կամ նախատեսվածի 97.1%-ը: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 5.5%-ով:

Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով 180 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 18.1%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հանրային պաշտպանների կողմից նախկինում միայն քրեական գործերով էր ցույց տրվում անվճար իրավաբանական օգնություն, իսկ 2012 թվականից սկսած՝ նաև քաղաքացիական գործերով:

Դատավարություններին ընդգրկված թարգմանիչների, փորձագետների և վկաների վարձատրության փոխհատուցման ծախսերը կազմել են 67.7 մլն դրամ (96.1%)՝ 5.9%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված թարգմանչական աշխատանքների ծավալների կրճատմամբ:

Անվճարունակության գործերով կառավարիչներին իրենց մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են 6.6 մլն դրամ (43.8%)՝ 28.1%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին միջազգային և դոնոր կազմակերպությունների կողմից հատկացվող ֆինանսական աջակցության հաշվին կատարված ծախսերը կազմել են 32.9 մլն դրամ (94.4%): Շեղումը պայմանավորված է ապրանքների և ծառայությունների առավել ցածր գնով ձեռք բերման, աշխատանքային պայմանագրերը որոշ աշխատակիցների հետ առավել ուշ կնքելու, գործուղումներն առավել արդյունավետ կազմակերպելու և տնտեսելու հանգամանքներով: Եվրոպական Հանձնաժողովի աջակցությամբ 2012 թվականին ավարտվել է 2009 թվականի մարտի 1-ից իրականացվող՝ «Մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը մարդու իրավունքների պաշտպանի հաստատության միջոցով՝ որպես Ազգային կանխարգելիչ մեխանիզմ՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը» թեմայով 36 ամիս

ընդհանուր ժամկետով ծրագիրը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը 2012 թվականի հուլիս ամսից 6 ամիս ժամկետով սկսել է 3 նոր ծրագրի իրականացումը.

- ՀՀ-ում Գերմանիայի դեսպանատան հետ «Ազատագրված վայրերում խոշտանգումների և վատ վերաբերմունքի զոհերի համար իրավաբանական օգնության մատչելիության ընդլայնում»,
- ՀՀ-ում Շվեյցարիայի Դեսպանատան հետ «Ընտանեկան բռնության զոհերի վերաբերյալ բարձր իրազեկվածություն և արդարադատության մատչելիություն»,
- Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) փախստականների գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի հետ «Փախստականների կարիքների գնահատում և իրազեկվածության բարձրացում»:

Հայաստանի Հանրապետությունում 2012-2013 թվականների ընտրությունների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կարողությունների զարգացման ծրագրին տրամադրվել է 66.6 մլն դրամ (95.3%), որով նախատեսվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 6 մարզային ներկայացուցչությունների և «թեժ գծի» ծառայության ստեղծումն ու հետագա 19 ամիսների ընթացքում դրանց գործարկումը, որի նպատակն է Հայաստանում 2012 թվականի ՀՀ ԱԺ ընտրությունների և 2013 թվականի ՀՀ նախագահի ընտրությունների ընթացքում քաղաքացիների քաղաքական (ընտրական) իրավունքների պաշտպանության ապահովումը: Ծրագիրը շարունակական է և տևելու է մինչև 2013 թվականի ավարտը:

2012 թվականին 2.8 մլրդ դրամ է տրամադրվել *դատախազության* դասի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի և նախորդ տարվա փաստացի ծախսերի 98.8%-ը: Հատկացված միջոցներից 2.5 մլրդ դրամը (նախատեսվածի 98.9%-ը) տրամադրվել է ՀՀ դատախազության պահպանմանը: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.8%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձի բնականոն աճով: ՀՀ դատախազության պահուստային ֆոնդի հաշվին նախատեսված միջոցներն օգտագործվել են 99.9%-ով՝ կազմելով 56.6 մլն դրամ:

2012 թվականի պետական բյուջեից ՀՀ հատուկ քննչական ծառայության պահպանմանը տրամադրվել է 249.5 մլն դրամ (97.9%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էապես չեն փոփոխվել:

Հաշվետու տարում *քրեակադրորդական համակարգի* պահպանության ծախսերը կազմել են շուրջ 7.3 մլրդ դրամ (99.9%): 2011 թվականի համեմատ դրանք աճել են 3.9%-ով՝ հիմնականում պայմանավորված վարչական սարքավորումների ձեռքբերման և աշխատավարձի ծախսերի աճով:

Տնտեսական հարաբերություններ

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի ծախսերի 7.1%-ը տրամադրվել է *տնտեսական հարաբերությունների* բաժնին՝ կազմելով շուրջ 71.1 մլրդ դրամ և 66.1%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերով: Հատկացված ֆինանսական միջոցներ հիմնական մասն ուղղվել է տրանսպորտի (49.7%) և գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության ու որսորդության (30.8%) բնագավառների ծրագրերի իրականացմանը:

Հաշվետու տարում *ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերությունների* դասի ծախսերը կազմել են ավելի քան 2.4 մլրդ դրամ՝ 96.1%-ով ապահովելով ծրագրի կատարումը և 3.8%-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Դասում ընդգրկված են 12 ծրագրեր, որոնցից վեցի գծով արձանագրվել է 100% կատարողական: Մասնավորապես.

1. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 243.8 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 13.2%-ով կամ 28.5 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի, ծառայությունների և տրանսպորտային նյութերի գծով ծախսերի աճով:

2. Հաշվետու տարում 86.9 մլն դրամ է տրամադրվել արտասահմանում առևտրային ներկայացուցչությունների պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ փոխարժեքի աճով պայմանավորված՝ նշված ծախսերն աճել են 7.9%-ով կամ 6.3 մլն դրամով:

3. Հիդրոոդերևութաբանության ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 533.6 մլն դրամ, որն օգտագործվել է «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից հիդրոոդերևութաբանական դիտարկումների իրականացման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

4. Տնտեսական գործունեության արդյունավետ վարման և աջակցման միջոցառումների իրականացման ծախսերը կազմել են 121 մլն դրամ: Ծրագիրն իրականացնում է «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ն: Ընկերության հիմնական նպատակն է օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավումը և արտահանման խթանումը, ինչպես նաև գործարար միջավայրի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման խոչընդոտների ուսումնասիրությունը և

դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.2%-ով կամ շուրջ 4 մլն դրամով:

5. Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրին հատկացվել է 150 մլն դրամ: ՓՄՁ սուբյեկտներին աջակցության 2012 թվականի ծրագրի իրականացման համար բացի ՀՀ 2012 թվականի պետական բյուջեից հատկացված գումարից միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության շրջանակներում ներգրավվել են լրացուցիչ ֆինանսական միջոցներ: 2012 թվականի ընթացքում ՓՄՁ սուբյեկտներին աջակցության 2012 թվականի ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և տեխնիկական աջակցության ուղղություններով բավարարվել է 8463 աջակցության հայտ. ընդ որում՝ աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 6.8%-ը գործում են Երևան քաղաքում, իսկ 93.2%-ը՝ ՀՀ մարզերում, առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը չեն փոփոխվել:

6. 2012 թվականին «Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի» (ՀԱՄՀ) կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը պետական աջակցության ծախսերը կազմել են 264 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.8%-ով կամ շուրջ 14.5 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման գների աճով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Տաթևի վերածնունդ միջոցառման շրջանակներում ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր Հայ Առաքելական Եկեղեցու, ՀՀ մշակույթի նախարարության և ՀԱՄՀ-ի միջև. իրականացվում է արխիվային նյութերի հավաքումը ՀՀ պահոցներից: Եկեղեցու կողմից մշակվել է վանական համալիրի վերականգնման վերանայված նախագծային առաջադրանքը, ինչի հիման վրա մշակված նախագծային և նախահաշվային փաթեթի աշխատանքների իրականացման համար «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի հետ ստորագրվել է նվիրաբերության պայմանագիր: Մեկնարկել են Տաթևացու դամբարանի և Կոթողի վերականգնման նախագծերի իրականացման աշխատանքները: Իրականացվում են Տաթևի վանական համալիրի ճարտարագիտական ուսումնասիրություններ՝ գեոդեզիական հանույթ և հիմքերի գեոֆիզիկական ուսումնասիրություն: Եկեղեցուն է հանձնվել վերականգնված ձիթհանը՝ այն որպես թանգարան շահագործելու նպատակով, տրամադրվել են նաև ձիթհանի վերաբերյալ հուշանվերներ և մի շարք տպագիր նյութեր անգլերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով: ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի հետ համատեղ մշակվել է Տաթև գյուղական համայնքի երկարաժամկետ զարգացման ծրագիր: Նաև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, ըստ որի նախատեսվում է իրականացնել «Տաթև զբոսաշրջային կենտրոն» ծրագրով նախատեսված բոլոր ութ համայնքների երկարաժամկետ զարգացման ծրագրերի մշակում, որոնց

իրականացման դեպքում ՄԱԶԾ-ի կողմից կկատարվի 20% ֆինանսավորում: Գրասենյակի հետ համատեղ կազմակերպվել է Տաթև համայնքում նախատեսված բազմաֆունկցիոնալ կառույցի շինարարական աշխատանքների գնման գործընթաց, շինարարական աշխատանքները մեկնարկել են: Մշակվել են ծրագրային ներկայացման փաթեթները՝ համայնքային զարգացմանը և ընդհանուր ծրագրին ուղղված մոտեցումներով (անգլերեն և հայերեն լեզուներով), որոնք ներկայացվել են ՀԱՄՀ կողմից կազմակերպված զբոսաշրջային բոլոր ցուցահանդեսներում և ճանաչողական այցերի ընթացքում:

- Առողջապահություն: Միջոցառման շրջանակներում «Այբիէյ Գրուպ» բելգիական ընկերության հետ ձեռք են բերվել նոր պայմանավորվածություններ մատակարարվող սարքավորումների ծավալի և հետվաճառքային սպասարկման վերաբերյալ: «Այբիէյ Գրուպ» բելգիական ընկերության կողմից տրամադրվել են ուռուցքաբանության գերազանցության կենտրոնի կոնցեպտուալ նախագծերը: «Գլոբալ Մեդիքլ Սոլյուշնս ԷլԹԻԴԻ» ընկերության կողմից իրականացվել է ուռուցքաբանության գերազանցության կենտրոնի ճարտարապետական լուծման էսքիզային նախագծերը: Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեից ստացվել են CICLON-18/18 արագացուցիչի օգտագործման և իզոտոպների արտադրության լիցենզիաները: Մշակվել և հաստատվել է «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ի և «Այգեծոր» ՍՊԸ-ի միջև կնքված շինարարական աշխատանքների պայմանագիրը: Համաձայնություն է ձեռք բերվել բելգիական «Այ Բի Էյ Մոլեկուլյար» ընկերության հետ հեղինակային վերահսկողությունը հինգ այցի շրջանակներում անվճար իրականացնելու վերաբերյալ: Մեկնարկել և ըստ ժամանակացույցի ընթանում են ռադիոիզոտոպների արտադրության կենտրոնի շինարարության աշխատանքները: Իրականացվել է «Գլոբալ Մեդիքլ Սոլյուշնս ԷլԷմ» ՓԲԸ-ի գրանցումը ՀՀ տարածքում՝ որպես առանձին իրավաբանական անձ՝ ուռուցքաբանության գերազանցության կենտրոնի գործունեությունը կառավարելու համար: Կենտրոնի զարգացման հայեցակարգը ներկայացվել է Հայկական բժշկական ասոցիացիայի և Առողջապահության միջազգային կազմակերպության համատեղ համաժողովին, հայեցակարգը և համագործակցության հնարավոր ուղիները քննարկվել են Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) մասնագետների հետ, և ձեռք են բերվել համագործակցության պայմանավորվածություններ բժիշկների և տեխնիկական անձնակազմի վերապատրաստման հնարավորությունները արտերկրում իրականացնելու ուղղությամբ և Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն տարածքային ծրագրերում տեխնիկական աջակցություն ստանալու նպատակով: Պայմանավորվածություններ են ձեռք բերվել «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոնի» բժշկական անձնակազմի հատուկ ուսուցման, վերապատրաստման և պարբերական որակավորման բարձրացման վերաբերյալ: Բոստոնի բժշկական կենտրոնի կողմից տրամադրվել են ԱՄՆ Բարձրագույն բժշկական կրթության

հավատարմագրման խորհրդի (ACGME) կողմից հաստատված միջուկային բժշկության մասնագիտացմամբ հետբուհական բժշկական կրթության, մասնավորապես կլինիկական օրդինատորների համար նախատեսված պահանջներն ու պարտականությունները: ՀԱՄՀ կողմից մշակվել և ՀՀ առողջապահության նախարարությանն են ներկայացվել ուռուցքաբանության ոլորտի բուժօգնության ստանդարտներն ու ընթացակարգերը: Սրտաբանության ծրագրի շրջանակներում մշակվել են միջուկային սրտաբանության զարգացման հայեցակարգային հիմնադրույթները: ՀԱՄՀ սրտաբանության խորհրդի անդամների հետ քննարկվում է «Արհեստական սիրտ» ծրագրի իրագործելիության հնարավորությունը: Հայաստանի ամերիկյան համալսարանում (ՀԱՀ) կազմակերպվել է «Արյան գերճնշման (հիպերտոնիայի) վերահսկումը՝ հանրային առողջապահական գերխնդիր Հայաստանում» խորագրով սեմինար, «Ուռուցքաբանության ոլորտի բարեփոխումներ» և «Առողջապահության ոլորտի բարեփոխումներ» խորագրով դասախոսություններ:

- Կրթություն: 2012 թվականին կրթական ծրագրի հայեցակարգի ամփոփման, զարգացման ծրագրի հիմնադրույթների ստեղծման և իրագործելիության ուսումնասիրության համար կատարվել է արտասահմանյան փորձի ուսումնասիրություն: Կրթական ծրագրի զարգացման պլանի մշակման և իրագործման համար արտասահմանյան կազմակերպությունը սեփական աշխատանքային և ֆինանսական ռեսուրսներով այցելեց Հայաստան, ուսումնասիրեց կրթության հիմնախնդիրները, հանդիպեց շահագրգիռ կազմակերպությունների հետ և ներկայացրեց առաջարկ Հայաստանի դպրոցներում հեռահար ուսուցման համակարգի ներդրման վերաբերյալ: Կրթական ծրագրի հայեցակարգը ներկայացվեց Հիմնադրամի խորհրդի քննարկմանը, որի հանձնարարականով այն ներկայացվեց ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ հետագա առաջարկությունների և քննարկումների համար:

- Զանգվածային լրատվամիջոցների և հասարակության հետ կապեր: Այս միջոցառման շրջանակներում իրականացվել են ՀԱՄՀ նոր կայքի համալիր կառուցվածքային աշխատանքները: Նոր կայքի մեկնարկը նախատեսվել է 2013 թվականի փետրվարի սկզբին: Ընդհանուր առմամբ, ապահովվել են ՀԱՄՀ-ի և նրա գործունեության վերաբերյալ ավելի քան 150 հրապարակումներ հայաստանյան առցանց և տպագիր ԶԼՄ-ներում: Իրականացվել են Հայաստանի մասին ճամփորդական տեղեկագրի նորացված տարբերակի տպագրման աշխատանքները ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն, անգլերեն, ռուսերեն, գերմաներեն, պարսկերեն (էլեկտրոնային տարբերակով) և արաբերեն լեզուներով (էլեկտրոնային տարբերակով): Կազմակերպվել է Տաթևի գովազդատեղեկատվական նյութերի անգլերեն և հայերեն լեզուներով տպագրումը: Ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել Հայաստանի 2011-2012 թվականների Ազգային մրցունակության զեկույցի պատրաստման համար: Կազմակերպվել է ՀԱՄՀ-Դեպի Հայք փոխըմբռնման հուշագրի ստորագրության միջոցառումը:

• Ֆոնդահայթաթում, ներդրողների և դոնորների հետ կապեր: Ֆոնդահայթայթման ուղղությամբ 2012թ. հոկտեմբերին մեկնարկած Տաթև համայքնում նախատեսված բազմաֆունկցիոնալ կառույցի շինարարական աշխատանքների համար իրականացվել են ֆոնդահայթայթման աշխատանքներ: Ծրագրի իրականացման համար ապահովվել են ամբողջական ֆինանսավորման խոստումներ: Նաև ամբողջապես ֆոնդահայթայթվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ԱՄՆ ՄԶԳ «Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության» ծրագրի և «Միջազգային համագործակցության գերմանական գործակալություն» կազմակերպության հետ համատեղ ՀԱՄՀ կողմից իրականացվող Հայաստան միջազգային այցելուների (2012 հոկտեմբերի 15-ին մինչև 2013 հոկտեմբերի 15-ը) 12-ամսյա հետազոտության իրականացման համար անհրաժեշտ գումարը: Ամբողջապես ֆոնդահայթայթվել են նաև համապատասխան ֆինանսներ նոր զբոսաշրջային կայքի պատրաստման համար:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրի գծով (նախարարությունների աշխատակազմերի մասով) օգտագործված միջոցները կազմել են շուրջ 607.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.2%-ը: Միջոցներն ուղղվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ 3.5%-ով կամ 20.3 մլն դրամով աճը հիմնականում պայմանավորված է նախարարության աշխատակազմի հաստիքացուցակում կատարված փոփոխություններով և նախարարության կարիքների համար ձեռք բերված ապրանքների և ծառայությունների քանակի ավելացմամբ:

Ստանդարտների մշակման ծառայությունների ծախսերը կազմել են 13.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 98.9%-ը: Նշենք, որ 2011թվականին նշված նպատակով նախատեսված միջոցները չէին օգտագործվել:

Գյումրու տեխնոպարկի գործունեության ֆինանսավորման նպատակով տրամադրվել է շուրջ 160.9 մլն դրամ՝ ապահովելով 98.7% կատարողական: Ծրագրի շրջանակներում ապահովվել է Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամի բնականոն աշխատանքը: Ընտրված կազմակերպությունների («Բաղրամյանշին» ԲԲԸ և «Ախուրյանկոոպշին» ՍՊԸ) կողմից սկսվել և սահմանված գրաֆիկով ընթանում են շինարարության, շենքի ներքին տաք և սառը ջրամատակարարման, ջեռուցման, օդափոխության, կոյուղագծերի անցկացման, էլեկտրական սնուցման աշխատանքները, իրականացվել են կրթական բազմաթիվ ծրագրեր, գործնական և սեմինար պարապմունքներ: ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1405-Ն որոշմամբ Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամը վերանվանվել է Արդյունաբերության զարգացման

հիմնադրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.6%-ով կամ 5.6 մլն դրամով, որը պայմանավորված է որոշ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման գների աճով:

2012 թվականին տեխնիկական կանոնակարգի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողության պետական ծրագրի ծախսերը կազմել են 3 մլն դրամ կամ նախատեսվածի 12.2%-ը՝ պայմանավորված նրանով, որ փորձարկման լաբորատորիաների կողմից իրականացվել են նախատեսվածից ավելի քիչ փորձարկումներ: Նշված ծրագիրը սկսել է գործել 2012 թվականից: Ծրագրի շրջանակներում «Ստանդարտների ազգային ինստիտուտ» և «Ակադեմիկոս Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Շուկայի վերահսկողության պետական տեսչության պատվերով կատարվել են համապատասխանաբար 12 և 20 արտադրանմուշների լաբորատոր փորձարկումներ:

Հաշվետու տարում 664 հազար դրամ ուղղվել է ՀՀ ներմուծված արտադրանքի համապատասխանության պարտադիր հավաստման աշխատանքների ծառայություններին՝ ապահովելով ծրագրի 16.6%-ը, ինչը պայմանավորված է նրանով, որ մարդասիրական օգնության նպատակով ներմուծված արտադրանքի համապատասխանության պարտադիր հավաստման աշխատանքներն իրականացվել են ավելի քիչ քանակով, քան նախատեսվել էր: 2011 թվականին մարդասիրական օգնության նպատակով ներմուծված արտադրանքի համապատասխանության պարտադիր հավաստման աշխատանքների ֆինանսավորումն իրականացվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից՝ կազմելով 644.2 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 3.1%-ով աճը պայմանավորված է մարդասիրական օգնության նպատակով ներմուծված արտադրանքի համապատասխանության պարտադիր հավաստման աշխատանքների ֆինանսավորումն իրականացվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից՝ կազմելով 644.2 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 3.1%-ով աճը պայմանավորված է մարդասիրական օգնության նպատակով ներմուծված արտադրանքի համապատասխանության պարտադիր հավաստման աշխատանքների համար ներկայացված հայտերի քանակով: Մարդասիրական օգնության նպատակով արտադրանք ներմուծած կազմակերպությունների կողմից 2012 թվականի ընթացքում այդ արտադրանքի համապատասխանության պարտադիր հավաստման աշխատանքներն իրականացրել է որպես սերտիֆիկացման մարմին հավատարմագրված «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն:

Հաշվետու տարում ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերությունների դասում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման նպատակով 243.7 մլն դրամ օգտագործվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության արտաբյուջետային միջոցներից՝ ապահովելով ծրագրի 78.9%-ը, ինչը պայմանավորված է որոշ մրցույթներ չկայանալու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոխվել:

2012 թվականի ընթացքում *գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնաբուծության և որսորդության* բնագավառներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 21.9 մլրդ դրամ

կամ ծրագրվածի 84.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության և ոռոգման բնագավառներում արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի կատարողականով:

Հաշվետու տարում *գյուղատնտեսության* դասի ծախսերը կազմել են 9.1 մլրդ դրամ կամ ծրագրվածի 74.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի և ԳԶՄՀ աջակցությամբ իրականացվող «Գյուղական կարողությունների ստեղծում» վարկային ծրագրերի և Դանիական թագավորության աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» դրամաշնորհային ծրագրի կատարողականով, որոնց շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների համապատասխանաբար 59.4%-ը, 28.1%-ը և 3.9%-ը: Նախորդ տարվա համեմատ գյուղատնտեսության դասի ծախսերն աճել են 56.8%-ով՝ հիմնականում պայմանավորված Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի և ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Գյուղական կարողությունների ստեղծում» ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Գյուղատնտեսության ոլորտին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 25 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աջակցությամբ ֆինանսավորվել են 4 վարկային և 3 դրամաշնորհային ծրագրեր:

Հաշվետու տարում գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (ԳԶՄՀ) աջակցությամբ իրականացվող՝ «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 112.6 մլն դրամ, որից 83.4 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 29.2 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի ծախսերը 13.2%-ով գերազանցել են նախատեսված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է շենքերի և շինությունների շինարարության ծախսերի գերազանցման հանգամանքով: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Ծրագրի խնդիրն է աջակցել համեմատական տնտեսական առավելություններ ունեցող առաջնային արտադրողների և առավել բարենպաստ աշխատանքային հնարավորություններ փնտրող գյուղաբնակների հետ սերտ կապ ունեցող գյուղական ձեռնարկությունների աճին, տրամադրել ներդրումային գործիքներ և հարակից ֆինանսական միջոցներ, որոնք կբավարարեն գյուղական բաժնետիրական ֆինանսավորման պահանջարկը, և աջակցել Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական ոլորտի հետագա զարգացմանը, բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը ենթակառուցվածքների վերականգման միջոցով: Ծրագիրն ունի 3 հիմնական բաղադրիչ՝ «Գյուղական ձեռնարկատիրության ֆինանսավորում», «Տնտեսապես հիմնավորված

ենթակառուցվածքների վերականգնում» և «Ծրագրի վերլուծություն և կառավարում»: Առաջին բաղադրիչի խնդիրն է խթանել գյուղական մանրածավալ արտադրողների և ՓՄՁ-ների տնտեսական կայուն ակտիվության աճը՝ համապատասխան նորարարական ֆինանսական ծառայություններ տրամադրելու ճանապարհով: Բաղադրիչի նպատակն է հիմնել գյուղական բաժնետիրական հիմնադրամ, ՓՄՁ-ներին տրամադրել ներդրումային վարկեր և ֆերմերային տնտեսություններին՝ զարգացման վարկեր: «Տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգնում» բաղադրիչի խնդիրն է բարելավել հիմնական շահառու խմբի կենսամակարդակը և ներդրումային միջավայրը շահութաբեր ձեռնարկատիրության զարգացման և կայուն գյուղական տնտեսական աճի համար: Բաղադրիչի ներդրումները նպատակաուղղվել են սոցիալական ենթակառուցվածքների վերականգնման ծրագրերին: 2012 թվականի ընթացքում ներդրումների միջոցով հանրապետության համայնքներում իրականացվել են ոռոգման, գազի ցանցի, ջրամատակարարման, ջրահեռացման և ճանապարհների վերականգնման աշխատանքներ: 2012 թվականի ընթացքում իրականացվել են նաև ձկնային տնտեսության, թռչնաբուծության, մրգերի պահեստավորման, պահածոների, կաթնամթերքի, պանրի և գինու վերամշակման աշխատանքներ:

Նշված վարկային ծրագրին աջակցելու նպատակով ԳԶՄՀ-ի կողմից նախատեսված 40.3 մլն դրամ դրամաշնորհը չի օգտագործվել: Դրամաշնորհի մնացորդը, որը նախատեսված էր հատկացնել տեխնիկական աջակցության կատեգորիային, չի օգտագործվել, դրամաշնորհային համաձայնագրում վերաբաշխում կատարելու անհրաժեշտություն է առաջացել:

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող՝ «Գյուղական կարողությունների ստեղծում» վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 435.2 մլն դրամ, որից 335 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 100.2 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի ծախսերը 71.9%-ով զիջել են նախատեսված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է նախատեսված աշխատանքներն ավելի ուշ սկսելու հանգամանքով: Ծրագրի նպատակն է՝ նվազեցնել աղքատությունը Հայաստանի Հանրապետության գյուղական տարածքներում: Ծրագրի խնդիրն է ստեղծել պտղի և ընկուզեղենի տնտեսապես կայուն արտադրություն, որը կապված կլինի գյուղական մանրածավալ արտադրող ֆերմերների հետ: Ծրագիրն ունի 3 հիմնական բաղադրիչ՝ «Աջակցություն պտղի և ընկուզեղենի արտադրությանը», «Գյուղական ենթակառուցվածքներ» և «Ծրագրի կառավարում»: Ծրագիրը հանդիսանում է ԳԶՄՀ-ի կողմից ֆինանսավորվող վեցերորդ ծրագիրը Հայաստանում և առաջինն է «Հայկական Միրգ» բաժնետիրական ընկերության ստեղծման գործում՝ աջակցելով գյուղական տարածքների աղքատության նվազեցմանը, որը նորարարական է և՛ Հայաստանի, և՛ ԳԶՄՀ-ի համար: «Հայկական Միրգ» ԲԲԸ հիմնադրվեց միայն 2012 թվականի փետրվարին, իսկ ղեկավար աշխատակազմը մասամբ համալրվեց մայիսին, այսինքն՝ մոտ մեկ տարի ավելի ուշ, քան նախատեսված էր ծրագրով:

Մշակվել էր «Հայկական Միրգ» ընկերության գործունեության նոր ծրագիր, որը հնարավորություն կտար նախապատրաստել 41.5 հեկտար հողատարածք 2012 թվականին պտղատու այգիներ հիմնելու համար: Թվում է, թե սցենարը բավականին իրատեսական է, սակայն այն հիմնվել է որոշ ենթադրությունների վրա, որոնց պետք է խստագույնս հետևել: Սցենարից մեկ կամ երկու գործունեության ուղացումը կարող էր հանգեցնել ամբողջ սցենարի ձախողմանը: Առաջարկվեց հետաձգել բոլոր գնումները և շինարարական աշխատանքները և կենտրոնանալ «Հայկական Միրգ» ընկերության ստեղծման, հիմնական աշխատակազմի ընտրության, ընկերության կանոնադրության և պահանջվող պայմանագրային ձևերի մշակման և ՀՄ-ի 5 տարիների Բիզնես ծրագրի մշակման վրա: Մշակվեց և ԳԶՄՀ-ի հետ համաձայնեցվեց մի նոր մոտեցում՝ հիմնված 2012 և 2013 թվականների համար պլանավորված աշխատանքների միավորման վրա: Ծրագրի ընթացքում իրականացվել են հողատարածքի և շենքային տարածքի ընդունման-հանձնման, գրանցման, ինչպես նաև ընկերության աշխատակազմի համալրման աշխատանքներ:

Նշված վարկային ծրագրին աջակցելու նպատակով ԳԶՄՀ-ի կողմից տրամադրված դրամաշնորհից օգտագործվել է շուրջ 66.2 մլն դրամ, որից 52.5 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, 13.6 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի ծախսերի 91.4%-ով կատարումը պայմանավորված է նախատեսված աշխատանքներն ավելի ուշ սկսելու հանգամանքով: Նշենք, որ դրամաշնորհային միջոցներն օգտագործվել են 96.9%-ով, իսկ ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցները՝ 75%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ ՀՀ համաֆինանսավորման գումարները նախատեսված է օգտագործել վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը վճարելու համար, որը կատարվում է «Հայկական Միրգ» ԲԲԸ կողմից: Քանի որ պայմանագիրն ուժի մեջ է մտել ավելի ուշ, քան նախատեսված էր, ՀՀ կառավարության համաֆինանսավորման համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ չեն օգտագործվել:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 2.3 մլրդ դրամ, որից 1.9 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 408.4 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Նշենք, որ ծրագրով համայնքներում աշխատանքներ և գնումներ կատարելու նախապայմաններից մեկն է համայնքների կողմից շինարարության գումարների 5%-ի և արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվների կողմից ձեռքբերվող տեխնիկայի արժեքի 50%-ի համաֆինանսավորման միջոցների տրամադրումը: Ծրագրի ծախսերի 93%-ով կատարումը հիմնականում պայմանավորված է համայնքների կողմից համաֆինանսավորման միջոցների տրամադրման ուղացմամբ և խորհրդատվական ծառայությունների ծախսերի տնտեսումներով: Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող

համայնքներին արոտօգտագործման/անասնապահական առավել մրցունակ և կայուն համակարգերի ստեղծման հարցում: Սա հնարավոր կլինի կաթնատվության և կենդանիների օրական քաշաճի ավելացմանը զուգահեռ անասնապահական մթերքի ծավալների մեծացման և որակի բարձրացման, արոտավայրերի վարձակալությունից համայնքի բյուջետային եկամուտների ավելացման միջոցով համայնքների արոտավայրերի կառավարման արդյունավետության բարձրացման և անասնապահությունից ստացվող զուտ եկամտի ավելացման միջոցով: Ծրագիրն ունի 4 հիմնական բաղադրիչ՝ «Համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ», «Գյուղատնտեսությանն աջակցող ծառայությունների հզորացում», «Մրցակցային դրամաշնորհների ծրագիր» և «Ծրագրի իրականացում, մոնիթորինգ և գնահատում»: Առաջին բաղադրիչի նպատակն է ընտրված անասնապահական ուղվածություն ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ համայնքներում իրականացնել արոտօգտագործման և կերարտադրության վրա հիմնված անասնապահական մթերքի արտադրության արդյունավետ և կայուն համակարգ, որը կկառավարվի համայնքներում ստեղծվող արոտօգտագործողների միավորումների (սպառողական կոոպերատիվների) կողմից: Կընտրվեն բարձր լեռնային այն համայնքները, որտեղ անասնապահությունն ապրուստի հիմնական միջոց է հանդիսանում և որտեղ համայնքները մեծապես շահագրգռված են բարելավելու սեփական արոտավայրերից ստացվող արտադրանքը: Այս նպատակի իրականացումը պահանջում է գյուղամերձ արոտներում կենդանիների գերարածեցման մեծապես աճող տենդենցի կասեցում, համայնքների հեռագնա արոտների օգտագործման հնարավորությունների ստեղծում, վարելահողերի առավել արդյունավետ օգտագործում, կերարտադրության ու կենդանիների կերակրման և տոհմային աշխատանքների բարելավում, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացում: Երկրորդ՝ «Գյուղատնտեսությանն աջակցող ծառայությունների հզորացում» բաղադրիչի նպատակն է բարձրացնել անասնապահական մթերքի արտադրողականությունը և բարելավել արոտավայրերի վիճակն անասնապահությամբ զբաղվող ֆերմերներին մատուցվող խորհրդատվական և կենդանիների առողջությանն ուղղված ծառայությունների բարելավման միջոցով: Այս նպատակին հասնելու համար աջակցություն կտրամադրվի անասնապահության արդյունավետության բարձրացմանն ուղղված գյուղատնտեսական խորհրդատվական ծառայությունների և կենդանիների առողջությանն ուղղված ծառայությունների հզորացմանը: Երրորդ՝ «Մրցակցային դրամաշնորհների ծրագիր» բաղադրիչի նպատակն է իրականացնել գյուղատնտեսության և անասնապահության ոլորտներում արտադրվող գյուղատնտեսական արտադրանքի որակի և որակական հատկությունների բարձրացմանը, գյուղատնտեսական բիզնեսի շուկայավարման կատարելագործմանը (ներառյալ գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը, վերամշակումը, պահեստավորումը և նոր տեխնոլոգիաների ներդրումը), գյուղական բիզնեսի

կառավարման բարելավմանը, կատարելագործմանը և բիզնեսի լավագույն փորձի զարգացմանն ու տարածմանը, գյուղատնտեսական ոլորտում կոոպերացիայի զարգացմանը, շուկայական կապերի ընդլայնմանը և ամրապնդմանը, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքի իրացման խնդիրների լուծմանը, ՀՀ տարածաշրջանների կամ մարզերի կտրվածքով գյուղատնտեսական արտադրանքի նոր տեսակների և նոր տեխնոլոգիաների ներդրմանը, տարածմանը և զարգացմանը նպաստող միջոցառումներ: Չորրորդ բաղադրիչի շրջանակներում ֆինանսավորումն ուղղված է ծրագրի կառավարմանը, անձնակազմի վերապատրաստմանը, տարեկան աուդիտին, գործառնական ծախսերին, ինչպես նաև ծրագրի մոնիթորինգին և գնահատմանը: Ծրագիրը ֆինանսավորվում է ՀԲ-ի Միջազգային զարգացման ընկերակցության կողմից առաջին անգամ, ուժի մեջ է մտել 2011 թվականի հուլիսի 26-ի, տևողությունը 5 տարի է՝ 2011 թվականից մինչև 2016 թվականը: 2012 թվականին առաջին բաղադրիչի շրջանակներում օգտագործված շուրջ 1.8 մլրդ դրամի հաշվին ՀՀ 6 մարզերի 54 համայնքներից 34 համայնքում ավարտվել են արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները, 13 համայնքում դրանք գտնվում են իրականացման փուլում, 1 համայնքում՝ արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքների պայմանագրերի կնքման փուլում, իսկ 5 համայնքում՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման փուլում: Երկրորդ բաղադրիչի շրջանակներում կատարվել են 316.6 մլն դրամի ծախսեր խորհրդատվական համակարգի նյութատեխնիկական բազայի հզորացման, ուսուցողական դասընթացների կազմակերպման, տեղական և ֆերմերներին խորհրդատվության տրամադրման ուղղություններով: Երրորդ բաղադրիչի շրջանակներում կատարվել են 110.2 մլն դրամի ծախսեր, կնքվել են մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված համապատասխան պայմանագրեր: Չորրորդ բաղադրիչի շրջանակներում կատարվել են 105.1 մլն դրամի ծախսեր ծրագրի կառավարման, անձնակազմի վերապատրաստման, տարեկան աուդիտի, գործառնական ծախսերի, ինչպես նաև մոնիթորինգի և գնահատման ուղղություններով:

ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Գյուղական կարողությունների ստեղծում» վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 1.6 մլրդ դրամ, որից շուրջ 1.3 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 349.7 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի ծախսերը 40.6%-ով զիջել են նախատեսված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է նախատեսված աշխատանքները 6 ամիս ուշ սկսվելու հանգամանքով: Ծրագիրը նախատեսում է ներդրումներ կատարել գյուղական ենթակառուցվածքների ոլորտում գյուղական անապահով համայնքների բնակիչների կենսամակարդակը բարելավելու, տնտեսական աճ ապահովելու և տնտեսական ներուժի առավել արդյունավետ կիրառությանն օժանդակելու նպատակով: Ծրագիրն ունի 2 հիմնական բաղադրիչ՝

«Հանրային ենթակառուցվածքային ներդրումներ» և «Գյուղական ճանապարհների բարեկարգման ներդրումներ»: Ծրագրի աշխատանքները սկսվեցին հուլիսին, այսինքն՝ նախատեսվածից 6 ամիս ուշ, մշակվեցին հատուկ չափորոշիչներ 2012 թվականի ենթածրագրերի ընտրության համար, իրականացվեցին պատրաստի նախագծերի մոնիթորինգ և լրացուցիչ փորձաքննություն, կատարվեցին անհրաժեշտ շտկումներ ու փոփոխություններ: Գյուղական ճանապարհների բարեկարգման ենթաբաղադրիչի շրջանակներում նախատեսված էր ներդրումներ կատարել գյուղական ճանապարհները և օժանդակ կառույցները համալրելու ու ամրապնդելու ուղղություններով՝ ապահովելով տրանսպորտային մատչելիությունը: Ըստ այդմ, ներդրումները կկենտրոնանան երեք մարզերում՝ Վայոց ձորի, Տավուշի և Արագածոտնի, որտեղ ագրոկլիմայական պայմանները բարենպաստ են պտուղների և ընկուզեղենի արտադրության համար:

Դանիական թագավորության աջակցությամբ իրականացվող՝ «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներից ծախսվել է 17.8 մլն դրամ՝ ապահովելով 3.9% կատարողական: Դրամաշնորհի փակման օրը սկզբնապես նախատեսվել էր 2012 թվականի հունիսի 30-ը, սակայն համաձայնագրում կատարված փոփոխությամբ այն տեղափոխվել է 2013 թվականի հունիսի 30-ը: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Ծրագրի խնդիրն է նախաներդրումային, ներդրումային և հետներդրումային տեխնիկական օժանդակության տրամադրումը Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի (ՖՐԵԴԱ) միջոցով ֆինանսավորվող ձեռնարկություններին, ՖՐԵԴԱ-ին մասնագիտացված տեխնիկական օժանդակության ցուցաբերումը: 2012 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում մշակվել և ներկայացվել է ԳԶՄՀ հավանության ՀԳՏՏԶՀ հաճախորդ ընկերություններին աջակցության տրամադրումը հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների կազմման, ISO սերտիֆիկացման, ֆինանսական հաշվետվությունների աուդիտի, հարկային խորհրդատվության, միջազգային World Food ցուցահանդեսի մասնակցության, տեղեկատվության տարածման ոլորտներում:

Հայաստանի գյուղատնտեսական ոլորտի աջակցության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին ծախսվել է շուրջ 64.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական:

Հաշվետու տարում գյուղատնտեսության դասում ընդգրկված հետևյալ 10 ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական:

Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների իրականացման նպատակով ծախսվել է 51.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննությունների, սերմերի որակի լաբորատոր

հետազոտությունների և փաստաթղթավորման, բույսերի նոր սորտերի տեղեկագրերի հրատարակման, ինչպես նաև բույսերի նոր սորտերի դաշտային փորձարկումների աշխատանքներ: Ընդհանուր առմամբ հետազոտվել է հացահատիկային, հատիկալնդեղենային, բանջար-բոստանային, կերային, դեկորատիվ, անտառային բույսերի սերմեր և կարտոֆիլի տնկանյութ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման ծախսերը կազմել են 5.7 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 9.6%-ով:

Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծախսերը կազմել են 48.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2012 թվականին իրականացվել են 71773 հեկտար գյուղատնտեսական հողատեսքերի ագրոքիմիական դաշտային հետազոտություններ, հետազոտված տարածքից վերցված 23924 հողանմուշներում կատարվել են 60528 լաբորատոր փորձաքննություններ, որոշվել է ազոտի, ֆոսֆորի և կալիումի պարունակությունը հողի մեջ, կազմվել և համայնքներին են հանձնվել 141 ագրոքիմիական քարտեզներ և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծախսերը կազմել են շուրջ 1 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծախսերն աճել են 12.5%-ով կամ 111.2 մլն դրամով՝ պայմանավորված հիմնականում պատվաստանյութերի ձեռքբերման ծախսերի աճով: Ծրագրի շրջանակներում նախատեսվել է իրականացնել գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված 10 հիվանդությունների նկատմամբ 8951339 հատ պատվաստումներ և հետազոտություններ: Նշված աշխատանքներն իրականացվել են անասնաբույժ մասնագետների կողմից ՀՀ 10 մարզերի 38 տարածաշրջաններում, փաստացի իրականացվել են 9400864 հատ պատվաստումներ և հետազոտություններ:

ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անասնաբուժական ոստիկանական դասակի կողմից կարանտինային սահմանափակումների իրականացման նպատակով տրամադրվել է շուրջ 40.2 մլն դրամ: Նշված ծախսերն ուղղվել են ՀՀ ոստիկանության հասարակական կարգի ապահովման (ՀԿԱ) վարչության կազմում ստեղծված ոստիկանության հատուկ դասակի պահպանությանը, որը համաճարակային բռնկումների ժամանակ գյուղատնտեսական կենդանիների հիվանդություններն օջախներում լոկալիզացնելու, ինչպես նաև դրանց հետագա տարածումները կանխելու նպատակով իրականացնում է կարանտինային սահմանափակումներ: Նշենք, որ տվյալ ծախսերը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

Գյուղատնտեսական խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կատարվել են 293.1 մլն դրամի ծախսեր: Ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայություններ մատուցող Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ-

ների) և Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնների (ԳԱՀ-ների) միջոցով ագրոտեխնիկական կանոններին և նոր տեխնոլոգիաներին համապատասխան գյուղատնտեսության վարման նպատակով գյուղացիական տնտեսություններին մատուցվել են խորհրդատվական ծառայություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նույնպես չեն փոփոխվել:

Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայությունների մատուցման ծախսերը կազմել են 122.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսվել է իրականացնել 225.3 հազար հեկտար տարածքների դաշտային հետազոտություններ, հանրապետությունում բույսերի վնասակար օրգանիզմների տարածման արեալի և վնասվածության շեմերի ճշտում և մասնագիտական աջակցություն, ինչպես նաև համայնքներում հակահամաճարակային միջոցառումների ապահովում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 9.1%-ով կամ 12.2 մլն դրամով:

Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի փորձաքննության միջոցառումների իրականացման համար ծախսվել է շուրջ 218.2 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի, համաճարակային վիճակի վերլուծության, մոնիթորինգի, հանրապետության բարձր լեռնային տարածաշրջաններում կենդանիների վարակիչ հիվանդությունների ներթափանցումից պաշտպանելու, կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքների լաբորատոր փորձաքննության միջոցառումներ: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 14.3%-ով կամ 27.3 մլն դրամով:

Սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների ծախսերը կազմել 10 մլն դրամ՝ 3 անգամ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, ինչը պայմանավորված է հաշվետու տարվա ընթացքում սննդամթերքի արտադրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների մոտ ստուգումների և, հետևաբար, լաբորատոր փորձաքննությունների քանակների անհամեմատ մեծ ծավալներով:

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծախսերը կազմել են 578 մլն դրամ: Նշենք, որ նախորդ տարի տվյալ ծրագրի ֆինանսավորման համար միջոցներ էին հատկացվել ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից, որոնց համեմատ նշված ծախսերն աճել են 2.3 անգամ կամ 328 մլն դրամով՝ պայմանավորված բանկերի կողմից ներկայացված հայտերի քանակով:

Գյուղատնտեսության դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 462.6 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը և ապահովել 95.2% կատարողական: Տվյալ ծրագիրը

նույնպես նախորդ տարի իրականացվել էր ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 27.1%-ով կամ 98.6 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է թափուր հաստիքների համալրմամբ և նոր հաստիքների ավելացմամբ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը կազմել են 299.6 մլն դրամ՝ ապահովելով 95.5% կատարողական՝ պայմանավորված տնտեսումներով: Միջոցները հատկացվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 29.9%-ով կամ 128 մլն դրամով, ինչը պայմանավորված է ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգում սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ստեղծմամբ, որի պահպանման ծախսերն առանձնացվել են նախարարության պահպանման ծախսերից:

Բույսերի պաշտպանության միջոցառումների գծով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 125.1 մլն դրամ կամ նախատեսվածի 83.4%-ը: Շեղումը պայմանավորված է բուսասանիտարական վիճակի վերլուծության արդյունքում նախատեսվածից պակաս միջոցառումների անցկացմամբ: Ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական մշակաբույսերի առավել վնասակար օրգանիզմների դեմ իրականացվել են մի շարք միջոցառումներ: Նշված գումարից 2.7 մլն դրամով ձեռք է բերվել «Կռալ» տեսակի բույսերի պաշտպանության միջատասպան միջոց, որով 2022 հեկտար հողատարածության վրա պայքար է իրականացվել մորեխների դեմ: 23.7 մլն դրամն օգտագործվել է համայնքների միջոցով մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումների ֆինանսավորման համար: Նշված բաղադրիչի շրջանակներում ձեռք բերված ցինկի ֆոսֆիդ մկնասպան միջոցն անհատույց տրամադրվել է հանրապետության մարզերի առավել վարակված տարածքների հողօգտագործողներին, որոնց միջոցով պայքարի աշխատանքներ են տարվել 58259 հեկտար հողատարածության վրա: 98.6 մլն դրամ է տրամադրվել 9000 հեկտար անտառային տարածքների վրա անտառի վնասակար օրգանիզմների դեմ ավիացիոն քիմիական պայքարի միջոցառումների իրականացման համար: 2011 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 25.5%-ով կամ շուրջ 25.5 մլն դրամով, ինչը պայմանավորված է ավիացիոն քիմիական ծառայության միջոցառման իրականացմամբ:

Գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցության ծախսերը կազմել են շուրջ 596.9 մլն դրամ՝ ապահովելով 97.2% կատարողական: Նշված ծրագրի շրջանակներում ՀՀ-ում սերմնարտադրության ծրագրի զարգացման համար ՌԴ-ից ներկրվել է էլիտային աշնանացան ցորեն, իսկ տեղական սերմարտադրողներից գնվել է առաջին վերարտադրության սերմացու: Ուկրաինայի Հանրապետությունից ներկրվել են գարնանացան գարու և եգիպտացորենի սերմեր:

Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 58%-ով կամ կամ 823.2 մլն դրամով՝ պայմանավորված սերմերի ներկրման ծավալների նվազմամբ:

Բուսասանիտարական համակարգի բարելավման և մասնագիտական գիտելիքների բարձրացմանն աջակցության ծախսերը կազմել են շուրջ 5.8 մլն դրամ՝ ապահովելով 99.2% կատարողական: Ծրագրի նպատակն է ուսուցողական դասընթացների կազմակերպումը, որը կնպաստի մասնագիտական պատրաստվածության աստիճանի բարձրացմանը: 2012 թվականին ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են 42 աշխատակից: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի ծախսերն աճել են 2.7%-ով:

Հաշվետու տարվա ընթացքում շուրջ 545.9 մլն դրամ է հատկացվել տոհմային երինջների ձեռքբերմանը՝ ապահովելով 88.6% կատարողական: Ծրագիրն ամբողջությամբ չի կատարվել ՀՀ Գեղարքունիքի մարզում սիբիրախտ հիվանդության հայտնաբերման պատճառով, ինչի արդյունքում ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «ՎԱՄԱԲՍ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը լուծվել է երկկողմանի համաձայնությամբ: Նշված ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել 256 գլուխ «շվից» և 229 գլուխ «հոլշտին» ցեղերի տոհմային երինջներ: Նախորդ տարվա համեմատ տոհմային երինջների ձեռքբերման ծախսերն աճել են 2 անգամ կամ 274.6 մլն դրամով, որը պայմանավորված է ձեռքբերված երինջների քանակով. այն 2012 թվականին 275-ով ավելին էր, քան նախորդ տարի: Նշենք, որ 2011 թվականին տվյալ ծրագիրն իրականացվել էր ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերը կազմել են շուրջ 68 մլն դրամ կամ ծրագրվածի 72.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գնումների անվանացանկով նախատեսված ապրանքների և ծառայությունների մասնակի ձեռքբերմամբ: Ծրագիրը մեկնարկել է 2012 թվականին:

Ներմուծվող սննդամթերքի և/կամ կենդանական ծագման մթերքի լաբորատոր փորձաքննության վճարների ծախսերը կազմել են 25 մլն դրամ կամ ծրագրվածի 71.4%-ը: 2011 թվականին նշված նպատակով պետական բյուջեից միջոցներ չէին հատկացվել:

Հաշվետու տարում շուրջ 762.7 մլն դրամ է տրամադրվել *անտառային տնտեսության* դասին՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերը նվազել են 7.3%-ով կամ 60.1 մլն դրամով՝ պայմանավորված 2011 թվականին Համաշխարհային բանկի կողմից անտառների պետական մոնիթորինգի հզորացման դրամաշնորհային ծրագրի ֆինանսավորմամբ: 2012 թվականին անտառային տնտեսությանը կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երկու ծրագրեր, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն անտառապահպանական ծառայություններին կատարված հատկացումները: Նշված ծառայությունների ձեռքբերման համար

նախատեսվել է 708.7 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Այն տրամադրվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ին՝ որպես դրամաշնորհ, իր կանոնադրական խնդիրներն իրականացնելու համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Անտառային պետական մոնիթորինգի նպատակով նախատեսված շուրջ 54 մլն դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է, որը նախորդ տարվա համեմատ չի փոփոխվել: Հատկացված գումարների հաշվին շուրջ 370 հազար հա անտառտնտեսություններում, ազգային պարկերում, արգելավայրերում իրականացվել են անտառպահպանության և անտառօգտագործման բնագավառում իրականացված աշխատանքների արդյունքների ուսումնասիրում, փայտանյութի սպառման շուկայի, մթերման և արտահանման, ապօրինի հատումների և դրա արդյունքում բնափայտի տեղափոխումների, իրացման վերաբերյալ տվյալների հավաքում, մշակում, վերլուծություն և գնահատում:

Հաշվետու տարում ավելի քան 12 մլրդ դրամ տրամադրվել է *ռոռզման* դասի ծախսերին՝ կազմելով ծրագրվածի 92.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող Ռոռզման համակարգերի վերականգման հրատապ վարկային ծրագրի կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 9 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են երկու վարկային և մեկ դրամաշնորհային ծրագրեր:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ռոռզման համակարգերի վերականգնման հրատապ վարկային ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի ծախսերը կազմել են 6.1 մլրդ դրամ, որից շուրջ 5 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 1.2 մլրդ դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի ծախսերի 86.6%-ով կատարումը պայմանավորված է փաստացի աշխատանքների ծավալներով: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ռոռզման համակարգերի վերականգնման հրատապ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման միջոցով կվերականգնվեն մոտ 50 կմ երկարությամբ մայր և միջտնտեսային (գլխավոր) ջրանցքներ Արագածոտնի, Կոտայքի, Շիրակի, Լոռու, Արարատի և Արմավիրի մարզերում և մոտ 63 կմ երկարությամբ ներտնտեսային ռոռզման ցանցի ջրանցքներ Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի և Արմավիրի մարզերում: Գլխավոր և ներտնտեսային ցանցի ջրանցքների վերականգնման արդյունքում ռոռզման ջրի կորուստները կնվազեն տարեկան 44.2 մլն խմ-ով: Ծրագրի սկիզբն է 2011 թվականի դեկտեմբերի 20-ը, իսկ ավարտը՝ 2013 թվականին: 2012 թվականի ընթացքում թվով 19 համայնքներում կատարվել է 51164 մետր ներտնտեսային ցանցերի ջրանցքի հատվածի վերանորոգում և թվով 28 համայնքներում՝ 46987 մետր ջրանցքների վերանորոգում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ռոռզման համակարգերի վերականգնման հրատապ ծրագրի ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով 42.7

մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է վարկային միջոցներից: Նշված ծրագիրն ավարտվել է 2011 թվականին: 2012 թվականին վճարվել է ծրագրով նախատեսված աշխատանքների՝ 2011 թվականի տարեվերջին վճարման ներկայացված հայտի գումարը:

Արտաբյուջետային դրամաշնորհային միջոցների հաշվին մեքենամեխանիզմների ձեռքբերման ծախսերը կազմել են 96.7 մլն դրամ՝ ապահովելով 91% կատարողական: Շեղումը պայմանավորված է նրանով, որ նախատեսված բելառուսական մեկ էքսկավատոր-ամբարձիչը ձեռք չի բերվել՝ պայմանավորված բարձր շուկայական գներով: Միջոցներն ուղղվել են 4 էքսկավատոր-ամբարձիչների ձեռքբերմանը 4 ջրօգտագործողների ընկերությունների համար: Ծրագիրը մեկնարկել է 2012 թվականին:

Հաշվետու տարում ոռոգման դասում ընդգրկված հետևյալ 3 ծրագրերի գծով նույնպես արձանագրվել է 100% կատարողական:

1. Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին տրամադրվել է 3.9 մլրդ դրամ աջակցություն: 2012 թվականին ծառայություններ են մատուցվել 44 ջրօգտագործողների ընկերությունների: Համակարգի հետագա զարգացման և ջրօգտագործողների ընկերությունների՝ որպես կենսունակ հաստատությունների կայացման հարցում միջնաժամկետ հեռանկարում մեծ դեր է վերագրվում պետական օժանդակությանը, որի անմիջական դրսևորումներից է պետական ֆինանսական աջակցությունը: Ոռոգման համակարգին պետական ֆինանսական աջակցության շրջանակների հստակեցումը և տրամադրման մեխանիզմների բարեփոխումն է՝ ավելի են կարևորվում աղքատության հաղթահարման միջոցառումների համատեքստում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոռոգման ջրի կանոնավոր հասանելիությունը զգալիորեն նվազեցնում է աղքատության ռիսկը գյուղական բնակավայրերում: Զրօգտագործողների ընկերություններին պետական ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնական նպատակներն են ջրօգտագործողներին աջակցությունն ու մասնակցային կառավարման ամրապնդումը, ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացումն ու ինքնաձախսաձեռնման մակարդակի աստիճանական ավելացումը, ոռոգման ջրի կորուստների կրճատումը, ինչպես նաև պետական ծախսերի կանխատեսելիության ու բաշխման արդյունավետության աճը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 5.9%-ով կամ 245.1 մլն դրամով նվազումը պայմանավորված է ըստ տարիների սուբսիդիայի կրճատման սցենարով:

2. Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքների իրականացման համար 2012 թվականի պետական բյուջեից ծախսվել է 94.2 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավման նպատակով միջոցառումների մշակման համար իրականացվել է

1051.83 կմ ընդհանուր երկարությամբ բաց կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

3. Ոռոգում ջրառ իրականացնող կազմակերպություններին տրամադրվել է 583.7 մլն դրամի ֆինանսական աջակցություն: Վերջինիս հիմնական նպատակն է ոռոգում ջրառ իրականացնող կազմակերպությունների վնասների փոխհատուցման արդյունքում կազմակերպությունների տեխնիկական և ֆինանսական կայունության ապահովումը, որը թույլ կտա կազմակերպություններին ապահովել կնքված պայմանագրերով ոռոգման ջրի մատակարարումը և ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեից ոռոգման համակարգերի հիմնանորոգմանն ուղղվել է 911.5 մլն դրամ՝ ապահովելով 97.1% կատարողական: Շեղումը պայմանավորված է նրանով, որ կնքված պայմանագրերով ծառայությունները մատուցվել են ավելի ցածր գնով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 23.7%-ով կամ 282.5 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված շինարարական աշխատանքների ծավալների կրճատմամբ:

Կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և ընթացիկ նորոգման համար տրամադրվել է 205.2 մլն դրամ կամ նախատեսվածի 91.2%-ը: Շեղումը պայմանավորված է ցանցերի մաքրման և ընթացիկ նորոգման համար կնքված պայմանագրերով ծառայությունների ավելի ցածր գնով մատուցմամբ: Ծրագրի իրականացման արդյունքում պահպանվում և շահագործվում են հանրապետությունում առկա կոլեկտորադրենաժային ցանցերը, մաքրվում ու վերանորոգվում է կոլեկտորադրենաժային ցանցերի մի մասը, որոնցով հնարավորություն է տրվում Արարատյան հարթավայրի հողերի գրունտային ջրերի մակարդակները պահպանել թույլատրելի խորությունների վրա: Նշված արդյունքներին հասնելու համար նախատեսվել է իրականացնել կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրում և նորոգում, դրանց մաքրման և նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն, ինչպես նաև տեխնիկական վիճակի պահպանում և շահագործում: 2012 թվականի ընթացքում հանրապետության 4 մարզերի (Արարատի, Արմավիրի, Լոռու և Գեղարքունիքի) 34 համայնքներում կատարվել են 129.6 կմ երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.5%-ով կամ 14.3 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված նախատեսված աշխատանքների ծավալների նվազմամբ:

Ջրատեխնիկական կառույցների ուսումնասիրությունների ծախսերը կազմել են շուրջ 10.9 մլն դրամ կամ ծրագրի 98.7%-ը: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

Վառելիքի և էներգետիկայի բնագավառի ծախսերը 2012 թվականին կազմել են 6.8 մլրդ դրամ՝ 40.5%-ով զիջելով ծրագիրը: Վերջինս հիմնականում պայմանավորված է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության և Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի վերականգնման վարկային ծրագրերի կատարողականով:

Հաշվետու տարում միջուկային վառելիքի դասի ծախսերը կազմել են շուրջ 192.5 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի պահպանմանը՝ ապահովելով 97.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.9%-ով կամ կամ 1.8 մլն դրամով:

Վառելիքի այլ տեսակների դասի ծախսերը կազմել են 2.3 մլրդ դրամ՝ 59.9%-ով զիջելով ծրագիրը, որը հիմնականում պայմանավորված է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության վարկային ծրագրի կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին ֆինանսավորվել են արտաքին աջակցությամբ իրականացվող 2-ական վարկային և դրամաշնորհային ծրագրեր:

Մասնավորապես՝ Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 363 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է վարկային միջոցներից: Ծրագրի ծախսերը 16.4%-ով զիջել են նախատեսված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է խնայողության նկատառումներից ելնելով՝ խորհրդատվական ծառայությունների ճարտարագետների թվի և նրանց տեղամասում գտնվելու ժամանակահատվածի կրճատմամբ, ինչպես նաև փոխարժեքով: Ծրագրի նպատակն է կառուցել նոր համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկ: 2010 թվականի ապրիլի 21-ին շահագործման է հանձնվել Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանը: 2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ծրագրի շրջանակներում կառուցված էներգաբլոկը գտնվում է անխափան շահագործման մեջ: 2012 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում վճարումներ են կատարվել գլխավոր կապալառուին՝ ներկայացրած վերջնական ընդունման հավաստագրի, շահագործման և սպասարկման ձեռնարկների դիմաց, խորհրդատուին՝ գործատուի անձնակազմի վերապատրաստման և կատարված ծառայությունների դիմաց, ինչպես նաև բանկային միջնորդավճարի համար:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող երկրաջերմային էներգիայի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 209 մլն դրամ, որից 173.3 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, 35.7 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի նպատակն է իրականացնել գեոթերմալ տեղանքի

հետազոտական բնույթի հորատման աշխատանքների տեխնիկատնտեսական հիմնավորման գնահատումը տվյալ առավել հեռանկարային գեոթերմալ տեղանքի համար: Տեղանքի հետախուզական աշխատանքների արդյունքում հնարավոր կլինի բացահայտել նշված գեոթերմալ տեղանքներում հորատանցքեր հորատելու անհրաժեշտությունը, որոնք ընտրվել էին շարունակական դաշտային հետախուզական աշխատանքների արդյունքում: Ծրագիրը կատարվել է 71%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատանքների ծավալով, ինչպես նաև փոխարժեքով: Ծրագիրն ավարտվել է 2012 թվականի նոյեմբերի 15-ին:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 1.74 մլրդ դրամ, որից շուրջ 1.73 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 7.6 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 37.1%-ով: Շեղումը պայմանավորված է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի միջև մրցութային փաստաթղթերի շուրջ երկարատև բանակցությունների հետևանքով ծրագրի գլխավոր կապալառուի և խորհրդատուի ընտրության մրցույթների հայտարարման ժամկետների երկարաձգմամբ: Նախատեսվում էր 2012 թվականի ընթացքում ծրագրի գլխավոր կապալառուի և խորհրդատուի ընտրություն, կանխավճարների և գլխավոր կապալառուի պայմանագրի շրջանակներում և որոշակի մատակարարումների դիմաց վճարումների իրականացում: Սակայն, վերը նշված պատճառներով մրցույթները հայտարարվել են նախատեսվածից ավելի ուշ: 2012 թվականին սկսվել է ծրագրի խորհրդատուի ընտրության մրցութային գործընթաց: Ծրագրի շրջանակներում վճարումներ են կատարվել խորհրդատուի կատարած ծառայությունների, ոչ ռեզիդենտի շահութահարկի, «էլեկտրամատակարարման հուսալիության և էներգախնայողության» ծրագրի աուդիտի դիմաց և կանխավճար է հատկացվել գլխավոր կապալառուին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էներգախնայողության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 354.7 մլն դրամի դիմաց ծախսվել է 3.1 մլն դրամ, որից 2.8 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, 252 հազար դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Շեղումը պայմանավորված է նախատեսված աշխատանքներն ուշ սկսելու հանգամանքով: Ծրագրի դրամաշնորհի համաձայնագիրը ՀՀ-ի և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրվել է 2012 թվականի ապրիլի 20-ին: Ծրագիրն ուժի մեջ է մտել 2012 թվականի օգոստոսի 10-ին: 2012 թվականից ՀՀ կառավարությունը Համաշխարհային բանկի օժանդակությամբ ձեռնամուխ է եղել էներգախնայողության ծրագրի իրականացմանը: Ծրագիրն ուղղված է հանրային նշանակության օբյեկտներում (դպրոցներ, այլ ուսումնական հաստատություններ, մանկապարտեզներ, հիվանդանոցներ,

վարչական շենքեր, մշակույթի տներ, բնակավայրերի արտաքին լուսավորություն և այլն) էներգախնայողական միջոցառումներ իրականացնելուն: Ծրագրի զարգացման նպատակն է՝ կրճատել սոցիալական և հանրային նշանակության այլ կառույցների էներգասպառման մակարդակը: Գլոբալ բնապահպանական նպատակն է՝ կրճատել ջերմոցային գազերի արտանետումները պետական ոլորտում էներգախնայողության մեջ ներդրումների համար արգելքների վերացման միջոցով: Ծրագիրն ունի 2 հիմնական բաղադրիչ՝ «էներգախնայողական ներդրումներ հանրային օբյեկտներում» և «Ծրագրի տեխնիկական աջակցություն»: Առաջին բաղադրիչի շրջանակներում էներգախնայողության ներդրումներ են կատարվելու սոցիալական և հանրային նշանակության այլ օբյեկտներում, օրինակ՝ դպրոցներում, մանկապարտեզներում, հիվանդանոցներում, վարչական շենքերում, փողոցային լուսավորությունում: Երկրորդ բաղադրիչի շրջանակներում վերացվելու է էներգախնայողության ներուժի իրացման առկա խոչընդոտները և ստեղծվելու է նպաստավոր միջավայր պետական հատվածում էներգախնայողության համար:

Հաշվետու տարում *էլեկտրաէներգիայի* դասի ծախսերը կազմել են ավելի քան 4.3 մլրդ դրամ՝ ապահովելով 78.4% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի վերականգնման վարկային ծրագրի կատարողականով:

Ավելի քան 433.4 մլն դրամ են կազմել գործադիր իշխանության, պետական կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) համար օգտագործված միջոցները՝ ապահովելով ծրագրի 95.3%-ը, որը հիմնականում պայմանավորված է տնտեսումներով: Միջոցները հատկացվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.7%-ով կամ 7.6 մլն դրամով:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Գյումրի-2» ենթակայանի վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 3.5 մլրդ դրամ, որից 2.4 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 1.1 մլրդ դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Նախատեսված ցուցանիշի 12.9%-ով գերազանցումը պայմանավորված է ծրագրի՝ Տրանշ-2 գումարի վերադարձելիության ապահովագրության գումարի վճարմամբ, որը նախատեսված չէր ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով, ինչպես նաև փոխարժեքի փոփոխությամբ: Ծրագրի նպատակն է «Գյումրի-2» 220 կՎ ենթակայանի վերականգնումը: Ենթակայանն ունի տեղական և տարածաշրջանային ռազմավարական կարևորություն: Նրա վերականգնման արդյունքում ցանցի կարևոր բաղադրիչի ամբողջական աշխատունակության ճանապարհով կվերացվի 220 կՎ էլեկտրահաղորդման համակարգի հիմնական թույլ տեղերից մեկը: Վերականգնման արդյունքում կբարձրանա ենթակայանի, ինչպես

նաև էներգահամակարգի աշխատանքի հուսալիությունը: 2012 թվականի ընթացքում վճարումներ են կատարվել գլխավոր կապալառուի կողմից պայմանագրի համաձայն ՀՀ ներկրված սարքերի և սարքավորումների, իրականացված աշխատանքների դիմաց, ինչպես նաև ներկրված սարքերի և սարքավորումների մաքսազերծման համար:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 366.8 մլն դրամ, որից 339.5 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 27.3 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի ծախսերի 19.3% կատարողականը պայմանավորված է գլխավոր կապալառուի ընտրության մրցույթի հայտարարման ժամկետի հետաձգմամբ: 2012 թվականին սկսվել է ծրագրի գլխավոր կապալառուի ընտրության մրցութային գործընթացը: Ծրագրի նպատակն է վերականգնել Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի Տաթև, Շամբ և Սպանդարյան հիդրոէլեկտրակայանների հիմնական սարքավորումների ու սարքերի նախագծային հզորություններն ու պայմանները: Ծրագրով նախատեսվում է կայանների մաշված, հնացած սարքավորումները փոխարինել նոր, արդիական, միջազգային ստանդարտներին ու նորմերին համապատասխան սարքավորումներով: Փոխարինվող, տեղադրվող սարքերն ու սարքավորումներն իրենց տեխնիկատնտեսական չափորոշիչներով գերազանցում են շահագործման մեջ գտնվող նմանատիպ սարքերի ու սարքավորումների չափորոշիչներին: Վերազինման արդյունքում կբարձրանա համակարգի կայաններում արտադրված էլեկտրական էներգիայի քանակն ու որակը, ինչպես նաև նրանց աշխատանքի հուսալիությունը: 2012 թվականի ընթացքում վճարումներ են կատարվել խորհրդատուին՝ որպես կանխավճար, ինչպես նաև կատարած ծառայությունների և ոչ ռեզիդենտի շահութահարկի դիմաց:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման վարկային ծրագրի գծով նախատեսված 35.7 մլն դրամը չի օգտագործվել: Ծրագրի նպատակն է բարձրացնել էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիությունը, ինչպես նաև ապահովել էլեկտրաէներգիայի անխափան մատակարարում: Ծրագրով նախատեսվում էր «Վանաձոր-1» ենթակայանի վերջնական ընդունման սերտիֆիկատի դիմաց միանվագ վճարել կապալառուին՝ որպես երաշխիքային գումար: Գլխավոր կապալառուի կողմից 2012 թվականի դեկտեմբերի 6-ին ներկայացված թիվ 8 վճարման պահանջագիրը (վերջնավճար) հայկական կողմի հաստատումից հետո 2012 թվականի դեկտեմբերի 20-ին ուղարկվել է KfW բանկ վճարման: KfW բանկի կողմից վճարման պահանջագրերի հաստատման գործընթացը երակարածգվել է, որի պատճառով վճարումները չեն կատարվել:

Հաշվետու տարում լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության ոլորտներին պետական բյուջեից հատկացվել էր 6 մլն դրամ, որը նախատեսված ամբողջ ծավալով

ծախսվել է *հանքային ռեսուրսների արդյունահանման, բացառությամբ բնական վառելիքի* դասում ընդգրկված՝ ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման նպատակով: Ծրագրի շրջանակներում իրականացվում են ՀՀ ընդերքի պահպանման, հաշվառման և գրանցման, դրա վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության տրամադրման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել: Նշենք, որ նախորդ տարվա համեմատ լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության խմբի ծախսերը նվազել են 60.9%-ով կամ 9.4 մլն դրամով՝ պայմանավորված 2011 թվականին ՀՀ պետական բյուջեից երկրաբանահետախուզական աշխատանքների աջակցման ծառայությունների և շինարարության թույլտվության ուղղություններով միջոցների հատկացմամբ՝ համապատասխանաբար 7.8 մլն դրամ և 1.6 մլն դրամ, որոնք ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով չեն նախատեսվել:

2012 թվականին *տրանսպորտի* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 35.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 57.4%-ով: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով:

Ճանապարհային տրանսպորտի դասի ծախսերը կազմել են շուրջ 29.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրվածի 54.3%-ը: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 13 ծրագրեր, որոնցից հինգը՝ վարկային և մեկը՝ դրամաշնորհային ծրագրեր են:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ճանապարհների բարելավման երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 6.5 մլրդ դրամ, որից 5.6 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 928.8 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի 11.7%-ով գերազանցումը պայմանավորված է տրված կանխավճարներով: Ծրագրի շրջանակներում ստորագրված 9 կապալի պայմանագրերով իրականացվել են մոտ 112 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ: Փաստացի շահագործման են հանձնվել 109 կմ ճանապարհներ: Որոշ պայմանագրերով աշխատանքները կշարունակվեն 2013 թվականին, ինչի արդյունքուն կավարտվեն ևս 5.5 կմ ճանապարհահատվածներ: Իրականացվել է նաև շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 7.1 մլրդ դրամ, որից 7 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 74.3 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի 70% կատարողականը պայմանավորված է մրցույթը չկայանալու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում կնքվել են պայմանագրեր 2012 թվականի մայիսին, իսկ աշխատանքները սկսվել են սեպտեմբեր ամսից: Օգտագործված գումարները տրամադրվել են խորհրդատվական ծառայությունների համար:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի (Տրանշ 2) շրջանակներում ծախսվել է 636.5 մլն դրամ, որից 454.8 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 181.7 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի 3.1% կատարողականը պայմանավորված է հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման հետ կապված շինարարական աշխատանքների, ինչպես նաև որոշ պայմանագրերի վճարումների հետաձգմամբ: Ծրագրի շրջանակներում կառավարման խորհրդատուի ընտրության համար հայտարարված մրցույթի արդյունքներով ընտրվել և կնքվել է խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր: 2012 թվականին իրականացվել է խորհրդատվական թիմի հավաքագրում, նախնական հաշվետվության պատրաստում, նախագծերի ուսումնասիրություն, կապալառուի կողմից մի շարք փաստաթղթերի ուսումնասիրում և հաստատում: Աշտարակ-Թալին (Տրանշ 2) ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների մեկնարկը կտրվի ճանապարհահատվածի հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրով նախատեսված հողերի օտարման գործընթացի ավարտից հետո, որը գտնվում է իրականացման փուլում:

Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորության) շրջանակներում ծախսվել է 149.1 մլն դրամ, որից 146.1 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 3.1 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի 5.5% կատարողականը պայմանավորված է խորհրդատվական ընկերությունների ընտրության, նախագծման, հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի կազմման և փոխհատուցումների վճարման ժամկետների հետաձգմամբ: Ծրագրի շրջանակներում կատարվել են նախագծային աշխատանքներ, ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա և վճարվել է աշխատավարձ:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող գյուղական ճանապարհների վերականգնման վարկային ծրագրի ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով շուրջ 5.7 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներից: Նշված ծրագիրն ավարտվել է 2011 թվականի սեպտեմբերին: Օգտագործված գումարը տրամադրվել է իրականացված աուդիտորական աշխատանքների դիմաց:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի ճանապարհային անվտանգության քարտուղարություն հիմնադրելու դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով շուրջ 8.5 մլն դրամ, որն օգտագործվել է դրամաշնորհային միջոցներից: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանում ճանապարհային անվտանգության բարելավման նպատակով Հայաստանի Հանրապետության

ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային խորհրդի քարտուղարության հիմնադրմանը և գործարկմանը:

Հաշվետու տարում տրանսպորտի բնագավառում ընդգրկված «Համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրում» ծրագրի գծով արձանագրվել է 100% կատարողական՝ կազմելով շուրջ 3.3 մլրդ դրամ, որն օգտագործվել է Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճաքալցման աշխատանքների համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

«Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ին պետական աջակցության ծախսերը կազմել են շուրջ 27.1 մլն դրամ՝ ապահովելով 93% կատարողական: Հատկացված միջոցներով հաշվետու տարվա ընթացքում «Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են Հայաստանի Հանրապետության միասնական երթուղային ցանցի մշակման և զարգացման, ուղևորահոսքի մշտական ուսումնասիրության, անվճար երթևեկության վկայականների պատրաստման և տրամադրման, միջպետական բեռնափոխադրումների թույլտվությունների բլանկների պատրաստման, այլ պետությունների հետ փոխանակման և Հայաստանի Հանրապետության փոխադրողներին տրամադրման, Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերում (թվային տախոգրաֆներում) օգտագործվող քարտերի տրամադրման համար հայտերի ընդունման, քարտերի տրամադրման, տրամադրված քարտերի սպասարկման, տեղեկատվական բանկի վարման և կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 16.8%-ով կամ 5.4 մլն դրամով, ինչը պայմանավորված է ՊՈԱԿ-ի աշխատակիցների թվի կրճատմամբ:

2012 թվականին ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծախսերը կազմել են ավելի քան 5.5 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 99.6%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են պետական նշանակության ավտոճանապարհների պահպանման ու շահագործման աշխատանքներ, այդ թվում՝ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ և ձմեռային պահպանություն, միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների նշագծում, մետաղական արգելափակոցների պահպանում և վնասված հատվածների վերականգնում, արհեստական կառույցների պահպանություն և շահագործում: Նախորդ տարվա համեմատ ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծախսերն աճել են 4%-ով կամ 213.4 մլն դրամով՝ պայմանավորված 2012 թվականին ճանապարհների պահպանման և շահագործման ծախսերի աճով:

Հաշվետու տարվա պետական բյուջեից 5.3 մլրդ դրամ է տրամադրվել պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգմանը՝ ապահովելով նախատեսված ծախսերի 98.3%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են միջպետական, հանրապետական և մարզային

նշանակության ավտոճանապարհների վերանորոգման, ինչպես նաև նախագծային աշխատանքներ, հեղինակային հսկողության, թունելների ու կամուրջների հետազոտական աշխատանքներ, դրանց հետ կապված տեխնիկական հսկողության աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 31.2%-ով կամ 1.3 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է 2012 թվականին ավտոճանապարհների՝ հիմնանորոգման ենթակա օբյեկտների թվի ավելացմամբ:

Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման նպատակով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 797 մլն դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 98.4%-ը: Ծրագրի շրջանակներում ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության ուղղություններով աշխատանքներ են կատարվել հանրապետության բոլոր մարզերում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.2%-ով կամ 46.4 մլն դրամով, ինչը պայմանավորված է աշխատանքների ծավալների ավելացմամբ՝ կապված եղանակային պայմանների հետ, և սպասարկվող ճանապարհների երկարության ավելացմամբ:

Հաշվետու տարում տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կատարվել են 99.9%-ով՝ կազմելով շուրջ 110.3 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում վերականգնվել են շուրջ 70 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհներ, անվտանգ երթևակությունն ապահովելու նպատակով կառուցվել են հենապատեր, վերացվել են քարաթափման հետևանքները, իրականացվել են նաև հանրապետության հինգ խոշոր կամուրջների վիճակի հետազննման աշխատանքները, և ներկայացվել են համապատասխան հաշվետվություններ ու առաջարկություններ: Թվով 10 տրանսպորտային օբյեկտների գծով վերանորոգվել են 60.2 կմ երկարությամբ ճանապարհահատվածներ: Նշված 10 օբյեկտներից 9-ի գծով աշխատանքներն արդեն ավարտվել են: Նախորդ տարվա համեմատ տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծախսերը նվազել են 43.4%-ով կամ 84.5 մլն դրամով՝ պայմանավորված հիմնանորոգման ենթակա օբյեկտների քանակի նվազմամբ:

Հաշվետու տարում ՀՀ-ում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆի) համակարգի ստեղծման և ներդրման ծախսերը կազմել են շուրջ 20 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 75.6%-ը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2012 թվականին նախատեսված աշխատանքների դիմաց տրամադրվել է կանխավճար 2011 թվականի ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից: Ծրագրի շրջանակներում իրականացվել են համապատասխան միջոցառումներ ՀՀ-ում ավտոբուսների արտադրության կազմակերպման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում *երկաթուղային տրանսպորտի* դասի ծախսերը կազմել են 190.2 մլն դրամ և ապահովել 89.6% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ տարածքում ՌԴ զորամիավորումների հասցեով երկաթուղային փոխադրումների սպասարկման և

մատուցվող ծառայությունների ծախսերի փոխհատուցման նպատակով նախատեսված միջոցները չօգտագործելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերը նվազել են 8.8%-ով կամ 18.3 մլն դրամով:

Նշված գումարից 155 մլն դրամը տրամադրվել է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին՝ որպես սուբսիդիա ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց, որը կատարվել է նախատեսված ծավալով: ՀՀ և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի միջև կնքված կոնցեսիոն պայմանագրի համաձայն կոնցեդենտը սուբսիդավորում է (մասնակի փոխհատուցում է) համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումների կոնցեսիոների տարեկան վնասը՝ անկախ աուդիտորի կողմից այդ վնասների հաստատված հաշվարկների ներկայացման պարագայում: Երկաթուղու համակարգի թվով 387 անշարժ գույքի միավորներից 378-ը գրանցվել են որպես ՀՀ սեփականություն, և դրանց տիրապետման ու օգտագործման իրավունքները նոտարական վավերացմամբ փոխանցվել են «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին, մնացած՝ թվով 9 անշարժ գույքի գրանցման աշխատանքները 2012 թվականին չեն ավարտվել: Իրականացվել է Արաբկիր-Քանաքեռ վագուրդի 4475 մ երկարությամբ ապամոնտաժված երկաթուղային գծի անշարժ գույքը սահմանված կարգով Երևան քաղաքի համայնքին հանձնելու գործընթացը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.3%-ով կամ 12 մլն դրամով:

Հաշվետու տարում 35.2 մլն դրամի սուբսիդիա է հատկացվել «Երկաթուղու շինարարություն» ՓԲԸ-ին՝ կազմելով ծրագրված հատկացումների 80.9%-ը: Շեղումը պայմանավորված է բանակցությունների արդյունքում աշխատանքների հետաձգմամբ: Արդյունքում տվյալ ծախսերը նվազել են նաև նախորդ տարվա համեմատ՝ 15.2%-ով կամ 6.3 մլն դրամով: Ծրագրի շրջանակներում «Երկաթուղու շինարարություն» ՓԲԸ-ի մասնագետների միջոցով մշակվել են առաջարկություններ Վանաձոր-Ֆիալետովո երկաթուղային գծի շինարարության հետ կապված խնդիրների ուսումնասիրման և լուծման համար, քննարկվել են Վանաձոր-Ֆիալետովո երկաթուղային գծի նախագծման, շինարարական աշխատանքների և ֆինանսական գնահատականների վերաբերյալ հնարավոր տարբերակները: Տնտեսական իրագործելիությունն իրականացրած ընկերությունը նախագիծը համարել է տնտեսապես անարդյունավետ, որի պատճառով նախագծի ֆինասավորման հարցը ներկայումս լուծում չի գտնում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վանաձոր-Ֆիալետովո նոր երկաթգծի շինարարության ծրագիրը ՀՀ համար ունի կարևոր ռազմավարական և տնտեսական նշանակություն, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն համատեղ շարունակել նախագծի իրականացման համար պոտենցիալ ներդրողների ներգրավման աշխատանքները: Այդ նպատակով «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին առաջարկվել է մշակել

Վանաձոր-Ֆիոլետովո նոր երկաթգծի շինարարության իրագործելիության ուսումնասիրության շնորհանդեսի նախագիծ:

2012 թվականին 13.7 մլն դրամ էր նախատեսվել ՀՀ տարածքում ՌԴ զորամիավորումների հասցեով երկաթուղային փոխադրումների սպասարկման և մատուցվող ծառայությունների ծախսերի փոխհատուցման նպատակով, որը, սակայն, չի օգտագործվել:

2012 թվականին *օդային տրանսպորտի* գծով պետական բյուջեի ծախսերում արձանագրվել է 56.3% կատարողական՝ կազմելով շուրջ 432.3 մլն դրամ: Շեղումը հիմնականում առաջացել է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության արտաբյուջետային միջոցներով իրականացվող պետական, տարածքային հանրապետական մարմինների պահպանման ծախսերի գծով, որոնք 58.5%-ով զիջել են ծրագիրը՝ կազմելով 207.2 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված միջոցների հաշվին նախատեսվել էր անհատ անձանց և կազմակերպություններին (հիմնականում մշակույթի բնագավառի ներկայացուցիչներին) բարեգործական նպատակով օգնությունների տրամադրում, որոնք նախատեսվածից քիչ են կազմել: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 12.9%-ով կամ 30.8 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին ընթացիկ դրամաշնորհների տրամադրման ծախսերի, ինչպես նաև ուսումնավարժանքային թոփքների քանակի նվազմամբ: Հիմնականում նշվածով պայմանավորված՝ 2011 թվականի համեմատ օդային տրանսպորտի ծախսերը նվազել են 4.1%-ով կամ 18.7 մլն դրամով:

Ավելի քան 129.7 մլն դրամ է ծախսվել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պահպանման համար՝ ապահովելով ծրագրի 94.4%-ը, որը տնտեսումների արդյունք է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.1%-ով կամ 2.7 մլն դրամով՝ պայմանավորված աշխատավարձի և պարգևատրման ֆոնդի գծով ծախսերի ավելացմամբ:

Մարդասիրական բեռներ փոխադրող օտարերկրյա օդանավերի աերոնավիգացիոն սպասարկման, թոփք-վայրէջքի, օդանավերի կանգառի և վերգետնյա սպասարկումների ու մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են շուրջ 2.8 մլն դրամ՝ ապահովելով 27.5% կատարողական: Շեղումը պայմանավորված է նրանով, որ 2012 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել է երկու չվերթ՝ նախատեսված հինգի փոխարեն: Երեք չվերթ չեն կայացել, քանի որ թոփքը և վերադարձը իրականացվել է Թբիլիսիի օդանավակայանից: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 65.5%-ով կամ 5.2 մլն դրամով՝ պայմանավորված նրանով, որ 2011 թվականի ընթացքում իրականացվել էր երեք չվերթ: 2012 թվականին կատարվել են միայն «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության և Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ»

հասարակական կազմակերպության կողմից համատեղ իրականացվող բարեգործական ծրագրի շրջանակներում (Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների այն երեխաները, որոնց բուժումն անհնար է կազմակերպել տեղում, նշված չվերթների օդանավերով տեղափոխվում և բուժման հնարավորություն են ստանում Գերմանիայում) կատարվող հատուկ չվերթների սպասարկումները:

ՀՀ օդանավակայաններում ՌԴ զորամիավորումների օդանավերի սպասարկման և մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են շուրջ 92.6 մլն դրամ՝ ապահովելով 76.5% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 18.7%-ով կամ 14.6 մլն դրամով:

Հաշվետու տարում *խողովակաշարային և այլ տրանսպորտի* գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 5.2 մլրդ դրամ: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 5 ծրագրեր, որոնցից երկուսը՝ վարկային և մեկը՝ դրամաշնորհային ծրագրեր են: Նշված դասի 84% կատարողականը մասամբ պայմանավորված է Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ վարկային ծրագրի (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն) շրջանակներում նախատեսված շուրջ 277.7 մլն դրամը չօգտագործելու հանգամանքով, ինչպես նաև Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ վարկային ծրագրի և Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման դրամաշնորհային ծրագրի կատարողականով, որոնց շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 7.3 մլն դրամ և 1.4 մլրդ դրամ՝ համապատասխանաբար 2.6 և 85.8 տոկոսով ապահովելով ծրագրի կատարումը:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ վարկային ծրագրի (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն) շրջանակներում ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին ծախսվել է 7.3 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 2.6% կատարում: Նախատեսված շուրջ 277.7 մլն դրամ վարկային միջոցները չեն օգտագործվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ երեք ֆինանսավորող բանկերից միայն մեկի հետ է կնքվել համապատասխան պայմանագիր, իսկ մյուս երկուսի հետ պայմանագրի կնքման աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել խորքային և հորիզոնական պոմպեր, ուղեգծի բարելավման նյութեր, տեխնիկական գործիքներ:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ վարկային ծրագրի (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից

պատվիրակված լիազորություն) շրջանակներում նախատեսված շուրջ 277.7 դրամը չի օգտագործվել՝ պայմանավորված միջազգային պայմանագրերի բացակայությամբ:

Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է 1.42 մլրդ դրամ, որից 1.37 մլրդ դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, 52.6 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի 85.8% կատարողականը պայմանավորված է կատարված աշխատանքների և ձեռքբերված ապրանքների ծավալով: Ծրագրի շրջանակներում կատարվել են մալուխային համակարգերի նորոգման, վագոնների և պոմպակայանների արդիականացման աշխատանքներ:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման վարկային ծրագրի (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն) շրջանակներում ծախսվել է շուրջ 1.5 մլրդ դրամ, որից շուրջ 1.4 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 88.1 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի 88% կատարողականը պայմանավորված է կատարված աշխատանքների և ձեռքբերված ապրանքների ծավալով: Ծրագրի շրջանակներում կատարվել են մալուխային համակարգերի նորոգման, վագոնների և պոմպակայանների արդիականացման աշխատանքներ:

Նշված դասում ընդգրկված երկու ծրագրեր կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով: Մասնավորապես՝ ավելի քան 2 մլրդ դրամ ուղղվել է Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8.8%-ով կամ շուրջ 163 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված «Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ենթակառուցվածքների նորոգման ծախսերի ավելացմամբ:

313.5 մլն դրամի սուբվենցիաներ են տրամադրվել համայնքների բյուջեներին՝ վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայությունների շրջանակներում: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 13.6%-ով կամ 37.5 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

2012 թվականին *կապի* ոլորտում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 372.8 մլն դրամ, որը նախատեսված ամբողջ ծավալով ծախսվել է հեռահաղորդակցության և կապի կանոնակարգման ծառայությունների ձեռքբերման նպատակով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ հաճախականությունների բաշխումների աղյուսակի կազմման, ռադիոէթերի մոնիթորինգի, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախականության սարքավորումների տեղադրման, փորձաքննության և չափումների անցկացման, կապի շինարարական աշխատանքների տեխնիկական նորմերին համապատասխանության ընդունման, եթերի

խանգարման աղբյուրների հայտնաբերման և վերացման գործառույթները: Իրականացվել են հեռահաղորդիչ ցանցի արդիականացման և վերազինման աշխատանքներ, ռադիոեվային կայանների համար ձեռք է բերվել թվով 168 կայանային ուժակուտակիչ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7%-ով կամ 28.1 մլն դրամով՝ պայմանավորված կապիտալ ծախսերի նվազմամբ:

2012 թվականի ընթացքում «Այլ բնագավառներ» խմբի ծախսերը կազմել են ավելի քան 47 մլն դրամ՝ ապահովելով 94.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված խմբի ծախսերը նվազել են 95.4%-ով կամ 966.6 մլն դրամով, որը պայմանավորված է 2011 թվականին ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերով, որոնք հաշվետու տարում չեն նախատեսվել:

2012 թվականին զբոսաշրջության ոլորտի ծախսերը կազմել են ավելի քան 47 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 94.1%-ը: Միջոցներն ուղղվել են զբոսաշրջության աջակցության ծառայություններին: Ծրագրից շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2012 թվականի ընթացքում նախատեսված էր գումար հյուրանոցների որակավորման համար, սակայն որակավորումն ունի կամավոր բնույթ, և տարվա ընթացքում կազմակերպությունների կողմից որակավորման հայտեր չեն ներկայացվել: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Հայաստանի զբոսաշրջային արդյունքը ներկայացնող գովազդատեղեկատվական նյութերի պատրաստում և տարածում, օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջային օպերատորների՝ Հայաստանի ճանաչողական այցերի կազմակերպում, ծրագրային միջոցառումների համար աշխատակազմի վարձատրություն, 6 լեզուներով թարմացվել և վերամշակվել են Հայաստանի և Երևանի քարտեզները, որոնք ներառում են հակիրճ և համապարփակ տեղեկատվություն Հայաստանի աշխարհագրական դիրքի, բնակչության, մուտքի արտոնագրի, Երևանի տեսարժան վայրերի և այլ մանրամասների վերաբերյալ, ընդլայնվել է «Հայաստան՝ Նոյի երկիր» վավերագրական ֆիլմի հեռարձակման աշխարհագրությունը, բազմացվել և պահանջարկի շուկաներում տարածվել է ֆիլմի 2000 օրինակ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15.9%-ով կամ 6.5 մլն դրամով, ինչը պայմանավորված է Երևանում «Համամարդկային արժեքները և մշակութային բազմազանությունը 21-րդ դարում. զբոսաշրջության նշանակությունը» խորագրով միջազգային համաժողովի անցկացմամբ:

2012 թվականի ընթացքում տնտեսական հարաբերությունների գծով հեղազոտական և նախագծային աշխատանքների շրջանակներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 91.9 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ նշված խմբի ծախսերը գրեթե փոփոխության չեն ենթարկվել:

Խմբում ընդգրկված են 2 ծրագրեր: Մասնավորապես՝ տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններին հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 41.9 մլն դրամ: Ծրագիրն իրականացվում է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի գործունեությունն ուղղված է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տեխնաժին վթարների կանխարգելմանը, դրանց հետևանքների վերացմանը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցմանը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 0.6%-ով կամ 256.9 հազար դրամով:

Պետական կարիքների համար ապրանքների, աշխատանքների (ծառայությունների) կողմնորոշիչ գների մեթոդաբանական, վերլուծական և տեղեկատվական ծառայությունների ծախսերը կազմել են 50 մլն դրամ: 2012 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են պետական պատվերի շրջանակներում գործող գներով տնտեսության ոլորտների կարիքների համար ապրանքների գների և աշխատանքների արժեքների մասին ամսական տեղեկագրերի մշակման և հրապարակման, պետական պատվերի շրջանակներում գործող գներով շինարարության բնագավառի միջին ամսական աշխատավարձի, մեքենա-մեխանիզմների շահագործման և աշխատավարձի ինդեքսների հաշվարկման և սահմանված կարգով ներկայացման, միջազգային կազմակերպությունների և դոնոր երկրների հետ համատեղ տնտեսության ոլորտների կարիքների համար ապրանքների գնագոյացման ծրագրերի մշակման և իրականացման, ինչպես նաև պետական կարիքների համար իրականացվող կապիտալ ծախսերի հաշվարկի հիմքում դրվող ապրանքատեսակների կողմնորոշիչ գների և շինարարության ոլորտում գների ինդեքսների հաշվարկման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման միջոցառումները: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ չեն փոփոխվել:

2012 թվականին այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների գծով փաստացի ցուցանիշը կազմել է ավելի քան 4.1 մլրդ դրամ՝ 73.2%-ով ապահովելով նախատեսվածը: Մասնավորապես՝ խմբում ընդգրկված ծրագրերի գծով կատարվել են 6.8 մլրդ դրամի ծախսեր, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվել է 2.7 մլրդ դրամ: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ նախատեսվածից ավել մուտքերի ստացման հանգամանքով, ինչպես նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի երրորդ լրացուցիչ ֆինանսավորման և Բելգիական ՔԵՅ ԲԻ ՍԻ ԷՆ ՎԻ բանկի աջակցությամբ իրականացվող ռադիո-իզոտոպների արտադրության արտադրամասի ստեղծման վարկային

ծրագրերի կատարողականով: Հաշվետու տարում տվյալ խմբում կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 14 ծրագրեր, որոնցից չորսը վարկային ծրագրեր են:

Խմբում ընգրկված երեք վարկային ծրագրերն իրականացվել են Համաշխարհային բանկի աջակցությամբ: Մասնավորապես՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 46.6 մլն դրամ, որից 41 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 5.6 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի 22%-ով գերազանցումը պայմանավորված է շինարարական աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների իրականացմամբ, որոնք բյուջեում չէին նախատեսվել: Ծրագրի շրջանակներում ավարտվել են շինարարական աշխատանքները 1 օբյեկտում, վճարվել են նախկինում ավարտված աշխատանքների երաշխիքային գումարները, նախագծի հեղինակների և տեխնիկական վերահսկիչների կողմից խորհրդատվական ծառայությունների գծով վերահսկվել են շինարարական աշխատանքներ:

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ վարկային ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 993.3 մլն դրամի ծախսեր, որից 914.7 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 78.6 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Նշված ծախսերը 2.5 անգամ կամ 599 մլն դրամով գերազանցել են նախատեսված ծավալը: Ծրագրի կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախատեսվել էր շինարարական աշխատանքներ սկսել 1 ծրագրում և ավարտել 12 ծրագրերում, սակայն աշխատանքները սկսվել են 3 և ավարտվել՝ 22 ծրագրերում: Բացի շինարարական աշխատանքներից, մանկապարտեզների և մեկ մշակութային կենտրոնի համար գնվել են կահույք և այլ սարքավորումներ, ընթացող շինարարական աշխատանքները վերահսկվել են տեխնիկական վերահսկիչների կողմից, կատարվել են միկրոծրագրերի կենսունակության և ենթակառուցվածքների պահպանման և գնահատման հետազոտական աշխատանքներ, ֆինանսավորվել են գրասենյակի գործառնական ծախսերը:

Նշված վարկային ծրագրի երրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում կատարվել են 878.3 մլն դրամի ծախսեր, որից շուրջ 714.3 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 164.1 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Նախատեսված ծախսերը կատարվել են 58.1%-ով: Ծրագրի կատարողականը պայմանավորված է շինարարական աշխատանքները նախատեսվածից ուշ սկսելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում սկսվել են շինարարական աշխատանքները 23 ծրագրերում, ավարտվել՝ 1 ծրագրում, դպրոցների համար գնվել են կահույք, բոլոր ընթացող շինարարական աշխատանքները վերահսկվել են տեխնիկական վերահսկիչների կողմից, ֆինանսավորվել են գրասենյակի գործառնական ծախսերը:

Բելգիական Քեյ Բի Սի Էն Վի բանկի աջակցությամբ իրականացվող ռադիոհեռուստացիաների արտադրության արտադրամասի ստեղծման վարկային ծրագրի ծախսերը նախատեսված 1.3 մլրդ դրամի դիմաց կազմել են շուրջ 751.5 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է վարկային միջոցներից:

Հաշվետու տարում խմբում ընդգրկված հետևյալ երեք ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական:

1. Երևանի համաքաղաքային նշանակության ծրագրերի իրականացման նպատակով պետական աջակցության տրամադրման ծախսերը կազմել են ավելի քան 1.7 մլրդ դրամ: Ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել Երևան քաղաքին համաքաղաքային միջոցառումների իրականացմանը: Ծրագիրը մեկնարկել է 2012 թվականին:

2. «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության» ծրագրի գծով ծախսվել է 266.5 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

3. Պետական ռեզերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանման ծախսերը կազմել են շուրջ 153.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը էականորեն չեն փոփոխվել:

Հաշվետու տարում նյութական ռեսուրսների ՀՀ պետական պահուստի ձևավորման ու պահպանման ծախսերը կազմել են շուրջ 25.7 մլն դրամ կամ նախատեսվածի 98.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են մոտ 7 անգամ կամ 22 մլն դրամով:

Շուրջ 352.4 մլն դրամ են կազմել գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը՝ 98.8%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցները հատկացվել են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.3%-ով կամ 14.5 մլն դրամով՝ պայմանավորված աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ:

Պետական պահուստից նյութական արժեքների թարմացման, փոխարինման, փոխառման և ապամրագրման գործառնությունների գծով 2012 թվականին ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվել են 7 մլն դրամ արտաբյուջետային միջոցներ, որոնցից օգտագործվել է 15.3 մլն դրամը (նախատեսված 31 մլն դրամի դիմաց):

Ծախսերի այս խմբում ներառվել են «ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն կատարված հատկացումները: ՀՀ պետական բյուջեից առանց սահմանափակման իրականացվել են շուրջ 1.6 մլրդ դրամի ծախսեր: Նշված գումարից ավելի քան 1.03 մլրդ դրամը կազմել են պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների

կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնելիս գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման ենթակա ԱԱՀ-ի պարտավորության կատարման գծով ծախսերը, 565 մլն դրամը՝ ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դատարան տրվող հայցադիմումների, դիմումների և գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրված փաստաթղթերի պատճենների տրամադրման ծախսերը, 5 հազար դրամը՝ պետական հիմնարկների՝ ՊՈԱԿ-ի վերակեզմակերպման նպատակով ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրում պետական գրանցման համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումները:

Շրջակա միջավայրի պաշտպանություն

2012 թվականի ընթացքում շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 7 մլրդ դրամ կամ ծրագրով նախատեսվածի 110.5%-ը: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական դրամաշնորհային ծրագրի կատարողականով: Հիմնականում վերջինիս արդյունքում 2011 թվականի համեմատ շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերն աճել են 6.1%-ով կամ 401.7 մլն դրամով:

Հաշվետու տարում *աղբահանության* գծով կատարված ծախսերը կազմել են 28.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 29.3% կատարողական: Շեղումը հիմնականում առաջացել է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Վանաձոր քաղաքի կոշտ կենցաղային թափոնների համակողմանի կառավարման համակարգի մշակման իրագործելիության հետազոտության դրամաշնորհային ծրագրի գծով: Ռադիոակտիվ թափոնների վնասագերծման ծառայությունների գծով նախատեսված 29.2 մլն դրամի դիմաց օգտագործվել է 28.2 մլն դրամ կամ նախատեսվածի 96.7%-ը: Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների նպատակն է միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրումը, ուսումնասիրումը, վնասագերծումը, պահպանումը և թաղումը՝ ըստ առաջացված և հայտնաբերված թափոնների, ինչպես նաև մարդկանց և շրջակա միջավայրի պաշտպանությունը իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը պակասել են 3.3%-ով:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Վանաձոր քաղաքի կոշտ կենցաղային թափոնների համակողմանի կառավարման համակարգի մշակման իրագործելիության հետազոտության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 67.1

մլն դրամը չի իրացվել պայմանավորված այն հանգամանքով, որ կատարված աշխատանքների դիմաց KfW զարգացման բանկի կողմից նախատեսվում է հիմնական վճարումներն իրականացնել 2013 թվականի ընթացքում:

2012 թվականին *օդի աղտոտման դեմ պայքարի* դասի ծրագրերին ուղղվել է շուրջ 124 մլն դրամ՝ 100%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Հատկացված գումարից ավելի քան 11.6 մլն դրամը տրամադրվել է «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ին, որն իրականացրել է թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման աշխատանքներ, թափոնների գոյացման, վերամշակման, օգտագործման օբյեկտների և հեռացման վայրերի ռեեստրների ստեղծման աշխատանքներ, մաքուր տեխնոլոգիաների բաժանմունքի ստեղծում, վտանգավոր քիմիական նյութերի և թափոնների շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա անբարենպաստ ազդեցության ուսումնասիրում: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն ավելացել են 15.1%-ով՝ կապված աշխատանքների շրջանակների ընդլայնման և ծավալի ավելացման հետ:

Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի իրականացմանն ուղղվել է 112.3 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2012 թվականին իրականացվել են մակերևութային ջրերի մոնիթորինգային աշխատանքներ՝

- հանրապետության 39 գետերի, Ախուրյանի, Արփի լճի, Ապարանի, Ազատի, Կեչուտի ջրամբարների, Երևանյան լճի և Սևանա լճի 130 դիտակետերում.

- շարունակվել է Արաքս գետի ջրերի որակի հայ-իրանական համատեղ մոնիթորինգի իրականացումը Արաքս գետի հայկական և իրանական ափերում՝ յուրաքանչյուր կողմում 5-ական դիտակետից.

- «ԵՄ Քուռ III» ծրագրի շրջանակներում և պետպատվերի շրջանակներում՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի հետ համատեղ, իրականացվել է Արփա, Դեբեդ և Հրազդան գետերի ավազանների ջրակենսաբանական և ջրամորֆոլոգիական որակի մոնիթորինգ.

- սկսվել են ջրերի որակի կենսաբանական 2 բնութագրիչների՝ ֆիտոպլանկտոնի և մակրոանողնաշարավորների համոյթների մոնիթորինգի իրականացման աշխատանքները.

- ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվի շրջանակներում ընթացիկ տարում առաջին անգամ կատարվել է առաջնային օրգանական 24 աղտոտիչների մոնիթորինգ:

Իրականացվում են նաև օդի անդրսահմանային աղտոտման մոնիթորինգի աշխատանքներ՝ «Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ (EMEP) ծրագրի» շրջանակներում: 2011 թվականի համեմատ նշված ծրագրի գծով ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Նախորդ տարվա համեմատ օդի աղտոտման դեմ պայքարի դասի ծախսերն ավելացել են 1.9%-ով:

Կենսաբազմազանության և բնության պաշտպանության դասի ծրագրերին ուղղվել է 5.5 մլրդ դրամ՝ 124.8%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է ՎՋԵԲ աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական դրամաշնորհային ծրագրի և Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման վարկային ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ կենսաբազմազանության և բնության պաշտպանության խմբի ծախսերում արձանագրվել է ծախսերի 5.7%-ով աճ՝ հիմնականում պայմանավորված ՎՋԵԲ աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի 192.7% աճով:

2012 թվականին ձկան պաշարների համալրման ծառայությունների ծախսերը կատարվել են 99.2%-ով՝ կազմելով 59.5 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Ծրագրի շրջանակներում 2012 թվականին Սևանա լիճ է բաց թողնվել 366.7 հազ. հատ մանրածուկ:

Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծախսերը կազմել են 7.5 մլն դրամ՝ արձանագրելով 99% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2012 թվականին Սևանա լճում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Սևանա լճի ջրահավաք ավազանի գետերում ձկնատեսակների և խեցգետնի վերաբերյալ առկա գիտական տեղեկատվության հավաք, վերլուծություն, ամփոփում,
- գետերում ձկնատեսակների և խեցգետնի հաշվառման, գույքագրման, ձկնապաշարների որոշման միջազգային փորձի ուսումնասիրում, մեթոդոլոգիաների գնահատում, ընտրած մեթոդոլոգիաների հիմնավորում,
- բնական ձվադրավայրերի վերականգնման միջազգային փորձի ուսումնասիրում, մեթոդոլոգիաների գնահատում, ընտրած մեթոդոլոգիաների հիմնավորում:

Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

2012 թվականին «Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացման համար նախատեսված 179 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Սևան» ազգային պարկի պահպանությանը և տարածքների արդյունավետ օգտագործմանը նպատակաուղղված միջոցառումներ և ծրագրեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

«Դիլիջան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացման համար պետական բյուջեով նախատեսված 76.6 մլն դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Դիլիջան» ազգային պարկի պահպանությանը և տարածքների արդյունավետ օգտագործմանը

նպատակաուղղված, ինչպես նաև գիտական ուսումնասիրությունների գծով համապատասխան միջոցառումներ և ծրագրեր: Ազգային պարկում կատարվել են 6 հա անտառի տնկում, 5 հա անտառի ցանքս, 3 հա անտառի լրացում, 56 հա անտառի խնամք, 550 կգ անտառային սերմերի մթերում և այլ ծրագրային աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող ԲՀՊ (բնության հատուկ պահպանվող) տարածքների պահպանության, տարածքներում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայությունների գծով հատկացվել է 75.4 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2012 թվականին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինման ներքո գտնվող ԲՀՊ տարածքներում կատարվել են ծրագրային աշխատանքներ, այդ թվում՝ «Էրեբունի» պետական արգելոցի և «Որդան կարմիր» պետական արգելավայրի, «Ջրվեժ» անտառպարկի և 4 դենդրոպարկերի տարածքներում պահպանության, անտառտնտեսական և գիտահետազոտական աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

«Շիկահող» պետական արգելոցի, «Սոսիների պուրակ» ու «Զանգեզուր» պետական արգելավայրերի պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայությունների համար նախատեսված 50.1 մլն դրամի ծախսերն ամբողջությամբ կատարվել են: Ծրագրի շրջանակներում «Շիկահող» պետական արգելոցում և «Զանգեզուր» պետական արգելավայրում 2012 թվականին իրականացվել են պահպանության աշխատանքներ, հրդեհավտանգ տեղամասերում և հատվածներում իրականացվել են հակահրդեհային ճանապարհների շինարարության և ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, 25 հա վրա կատարվել են մաքրման և սանիտարական խնամքի աշխատանքներ, տնկանյութի աճեցման նպատակով տնկարանի 500 քառ. մ մակերեսի վրա իրականացվել է ցանքս: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանության, գիտական ուսումնասիրությունների կատարման ծառայությունների իրականացման նպատակով հատկացվել է 77.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Հաշվետու տարում «Խոսրովի անտառ» պետական արգելոցում կառուցվել (վերանորոգվել) են հակահրդեհային նշանակության 18 կմ ճանապարհներ, պետական արգելոցում և պետական արգելավայրերում էկոտուրիզմի զարգացման նպատակով մշակվել և իրականացվել են համապատասխան ծրագրեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերը փոփոխություն չեն կրել:

Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման վարկային ծրագրի շրջանակներում իրականացվել են ավելի քան 2 մլրդ դրամի

ծախսեր, որից 584.8 մլն դրամը հատկացվել է վարկային միջոցներից, 1.4 մլրդ դրամը՝ ՀՀ կառավարության կողմից, ապահովելով ծրագրի 102.2% կատարողական: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2011 թվականի տարեվերջին ներկայացված մասհանման հայտի հիման վրա ֆինանսավորումը ստացվել է 2012 թվականի տարեսկզբին:

ՀՀ-ի և Աբու Դաբիի զարգացման հիմնադրամի միջև Արփա-Սևան թունելի վերականգնման ծրագրի ֆինանսավորման վարկային համաձայնագիրը կնքվել է 2007 թվականի դեկտեմբերի 12-ին: Ծրագրի իրականացման ժամկետ է սահմանված մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը: Ծրագրի նպատակն է գետերից ջրի մակարդակի բարձրացման և բնապահպանական կայունության պահպանման նպատակով Սևանա լիճ ջուր տեղափոխող 48 կմ երկարությամբ Արփա-Սևան հիդրոհամակարգային որոշ հատվածների վերականգնումը, վերանորոգումը և շինարարությունը: 2012 թվականի ընթացքում հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել ՈՒՀ300+98–ՈՒՀ312+27 ուղեհատվածներում:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական դրամաշնորհային ծրագրի գծով իրականացվել են 2.3 մլրդ դրամի ծախսեր, որից 2.1 մլրդ դրամը հատկացվել է դրամաշնորհային միջոցներից, 205.6 մլն դրամը՝ ՀՀ կառավարության կողմից: Ծրագրի 187.1% կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն ավարտվել է 2012 թվականին:

ՀՀ-ի և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև կնքված վարկային և դրամաշնորհային համաձայնագրերի հիման վրա շարունակվել է Գավառ, Վարդենիս, Մարտունի, Ջերմուկ և Սևան քաղաքների կոյուղու ցանցերի վերանորոգման, ինչպես նաև Գավառ, Վարդենիս, Մարտունի քաղաքներում կոյուղու մաքրման կայանի կառուցման աշխատանքները: Ծրագրի սկզբից իրականացվել է Գավառ, Մարտունի, Վարդենիս և Սևան քաղաքների կոյուղու ցանցերի վերանորոգում 26 կմ երկարությամբ և Ջերմուկ քաղաքի կոյուղու ցանցերի վերանորոգում: Ավարտվել է Գավառի, Մարտունու և Վարդենիսի կոյուղու մաքրման կայանների կառուցումը:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական վարկային ծրագրի գծով կատարվել են 415.1 մլն դրամի ծախսեր (վարկային միջոցներ): Նշված ծախսերը կատարվել են 100%-ով՝ ՀՀ-ի և ՎԶԵԲ-ի միջև կնքված վարկային համաձայնագրի հիման վրա շարունակվել են Գավառ, Վարդենիս, Մարտունի, Ջերմուկ և Սևան քաղաքների կոյուղու ցանցերի վերանորոգման, ինչպես նաև Գավառ, Վարդենիս, Մարտունի քաղաքներում կոյուղու մաքրման կայանի կառուցման աշխատանքները, որոնք կրում էին շարունակական բնույթ: Ծրագրի սկզբից իրականացվել են Գավառի, Մարտունու, Վարդենիսի, Սևանի, Ջերմուկի կոյուղու ցանցերի 26 կմ երկարությամբ վերանորոգման աշխատանքներ: Ավարտվել են Գավառի, Մարտունու, Վարդենիսի կոյուղու մաքրման կայանների կառուցման

աշխատանքները: 2011 թվականի համեմատ Սևանա լճի բնապահպանական վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի 40.5%-ով անկումը կապված է կատարված շինարարական աշխատանքների փաստացի ծավալների, ինչպես նաև ծրագրի ավարտի հետ:

«Արևիկ» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններին հատկացվել է 22.4 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, այդ տարածքներում գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների գծով 2012 թվականի պետական պատվերով ծրագրավորված միջոցառումները: 20 հա տարածքի վրա իրականացվել են անտառվերականգնման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերը փոփոխություն չեն կրել:

«Արփի լիճ» ազգային պարկի պահպանության ծառայություններին հատկացվել է շուրջ 10 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, այդ տարածքներում գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների գծով 2012 թվականին ծրագրված միջոցառումները: ՀՀ Շիրակի մարզի Բերդաշեն համայնքում գտնվող ՊՈԱԿ-ի կենտրոնական գրասենյակի տարածքում իրականացվել են մաքրման, բարեկարգման աշխատանքներ, ինչպես նաև ծառատունկ: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերը փոփոխություն չեն կրել:

«Զիկատար» պետական արգելավայրի պահպանության, գիտական ուսումնասիրությունների կատարման ծառայությունների նպատակով նախատեսված 15 մլն դրամի ծախսերն ամբողջությամբ կատարվել են: «Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2012թ. իրականացվել են ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի տարածքներում գտնվող բնության հուշարձանների հաստատված ցանկի համալրման, պահպանական գոտիների տարածքների ճշգրտման, հողամասերի սահմանազատման և քարտեզագրման աշխատանքներ: Ճշտվել և քարտեզագրվել են ընդհանուր թվով բնության 24 հուշարձանների պահպանական գոտիները, պատրաստվել են հուշարձանների անձնագրերը: Ծրագիրը գործում է 2012 թվականից:

Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան մասնաճյուղի գրասենյակի վարձակալության ծառայությունների նպատակով նախատեսված 6.8 մլն դրամի ծախսերն ամբողջությամբ կատարվել են: ՀՀ բնապահպանության նախարարության և «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն» հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի միջև կնքված պայմանագրի համաձայն իրականացվել են մասնաճյուղի գրասենյակի վարձակալության և կոմունալ ծառայությունների վճարման ծախսերը: Ծրագիրը գործում է 2012 թվականից:

ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի տարածքներում գտնվող բնության հուշարձանների հաստատված ցանկի համալրման, պահպանական գոտիների տարածքների ճշգրտման, հողամասերի սահմանազատման և քարտեզագրման աշխատանքների գծով հատկացվել է շուրջ 10 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի տարածքներում գտնվող բնության հուշարձանների հաստատված ցանկի համալրման, պահպանական գոտիների տարածքների ճշգրտման, հողամասերի սահմանազատման և քարտեզագրման աշխատանքները: Ճշտվել և քարտեզագրվել են ընդհանուր թվով 24 բնության հուշարձանների պահպանական գոտիները, պատրաստվել են հուշարձանների անձնագրերը: Ծրագիրը սկսել է իրականացվել 2012 թվականից:

ՄԱԶԾ-ի աջակցությամբ իրականացվող Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների դրամաշնորհային ծրագրի գծով իրականացվել են 142.3 մլն դրամի ծախսեր, որից 16.9 մլն դրամը հատկացվել է դրամաշնորհային միջոցներից, 125.4 մլն դրամը՝ ՀՀ կառավարության կողմից: Ծրագրի կատարողականը կազմել է 94.6%:

Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով 175 հա ջրածածկման ենթակա տարածքներում վնասակար ազդեցության կանխարգելման միջոցառումների իրականացման համար համաձայն գնումների ընթացակարգի 2011թ. դեկտեմբերին հայտարարվել է մրցույթ, որը չի կայացել՝ մասնակից չլինելու պատճառով: ՄԱԶԾ-ի գնման գործընթացների կազմակերպման արդյունքում պայմանագիրը կնքվել է 2012թ. նոյեմբեր ամսին: 125.4 մլն դրամը փոխանցվել է որպես կանխավճար ՄԱԶԾ-ին, իսկ աշխատանքների կատարման ավարտը նախատեսված է 2013 թվականին:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Ինժեներիա, նախագծում և պայմանագրերի վերահսկողություն» դրամաշնորհային ծրագրի գծով իրականացվել են 58.4 մլն դրամի ծախսեր (դրամաշնորհային միջոցներ)՝ ծրագրային ցուցանիշը կատարելով 100%-ով: Ծրագրի շրջանակներում 14.03.2008թ. կնքված խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն «Ֆիխտներ» խորհրդատվական ընկերության կողմից մատուցվել է տեխնիկական աջակցություն՝ խորհրդատվական ծառայության տեսքով և համաձայն մասհանման հայտերի վճարվել է 58.4 մլն դրամ:

Այլ դասերին չպատկանող շրջակա միջավայրի պաշտպանության դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 1.4 մլրդ դրամ կամ ծրագրվածի 78.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանական դրամաշնորհային ծրագրի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 10.1%-ով:

Տվյալ դասում ընդգրկված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը կազմել են 823.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 98.5%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ բնապահպանության նախարարության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին տրամադրվել է 271.6 մլն դրամի սուբվենցիա կամ ծրագրվածի 98%-ը: ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի կատարման շրջանակներում բնապահպանական ծրագրերի իրականացման համար սուբվենցիաներ են հատկացվել 13 համայնքների: Հատկացումների աճը 2011 թվականի համեմատ կազմել է 79.6% կամ 120.4 մլն դրամ, որը պայմանավորված է բնապահպանական ծրագրերի քանակի և դրանց ֆինանսավորման ծավալների աճով:

Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայությունների իրականացման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 17 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ապահովվել է ՀՀ բնապահպանության նախարարության տեղային համակարգչային ցանցի և առկա համակարգչային տեխնիկայի ծրագրային ու տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը: Նախորդ տարվա համեմատ բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայությունների ծախսերը չեն փոփոխվել:

Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգի ծառայություններին 2012 թվականին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 18.1 մլն դրամ՝ ամբողջությամբ կատարելով ծրագրային ցուցանիշը: Հաշվետու տարում իրականացվել են մշտադիտարկումներ ստորերկրյա ջրերի ծախսի, ջերմաստիճանի և մակարդակի (ճնշման) վրա: Աշխատանքների և նրանցից ստացված արդյունքների հիման վրա կատարվել են համապատասխան վերլուծություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերը չեն փոփոխվել:

Հաշվետու տարում 29.3 մլն դրամ է տրամադրվել ՀՀ բնապահպանության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման ծրագրի շրջանակներում, որը կատարվել է 93.5%-ով՝ հիմնականում պայմանավորված թափուր հաստիքների առկայությամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է 2012 թվականից:

«Բնապահպանական նպատակային ֆոնդ» ծրագրի շրջանակներում ՀՀ բնապահպանության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին կատարվել են 73.8 մլն դրամի ծախսեր՝

կազմելով նախատեսվածի 100%-ը: Ծրագրի ընդլայնման հետ կապված՝ նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 5.9 անգամ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանական դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են 123.7 մլն դրամ կամ նախատեսվածի 26.5%-ը, որից 112.3 մլն դրամը կազմել են դրամաշնորհային միջոցները, 11.4 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորումը: Ծրագրի կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի կատարումը երկարաձգվել է մինչև 2013 թվականը: Ծրագրի շրջանակներում շարունակվել է Հայաստանի Զավախքի (Աշոցքի) տարածաշրջանում պահպանվող տարածքների ստեղծման ծրագրի իրականացումը:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ

2012 թվականին *բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների* բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 14.3 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 73.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ջրամատակարարման ոլորտում արտաքին աջակցությամբ իրականացվող որոշ ծրագրերի կատարողականով: Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բաժնի ծախսերը 67.4%-ով կամ 29.5 մլրդ դրամով զիջում են նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված բնակարանային շինարարության, ինչպես նաև արտաքին աջակցությամբ իրականացվող որոշ ծրագրերով:

Հաշվետու ժամանակահատվածում տվյալ բաժնի ծախսերի 1.4%-ը կամ 200 մլն դրամ տրամադրվել է *բնակարանային շինարարության* ոլորտին՝ անավարտ շինարարության բնակշինարարական կոոպերատիվների փայտտերերի ներդրած միջոցների դիմաց պետական օգնության նպատակով, որը կատարվել է 100%-ով: Նախորդ տարվա համեմատ բնակարանային շինարարության խմբի ծախսերը նվազել են 99.2%-ով կամ 25.6 մլրդ դրամով, քանի որ, ի տարբերություն նախորդ տարվա, 2012 թվականի պետական բյուջեով բնակարանային շինարարության նպատակով գումարներ չեն նախատեսվել:

Բաժնի ծախսերի 83.4%-ն ուղղվել է *ջրամատակարարման* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են ավելի քան 11.9 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրի 70.2%-ը՝ հիմնականում պայմանավորված արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի կատարողականով:

Հաշվետու տարում 127.2 մլն դրամ է տրամադրվել ջրային տնտեսության ոլորտում «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման» ծրագրի շրջանակներում, որը հատկացվել է ՀՀ տարածքային

կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի պահպանմանը: Նշված ծախսերի ծրագիրը կատարվել է 96.9%-ով՝ կապված նյութական արժեքների ձեռքբերման ծախսերի տնտեսման հետ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 759.8 մլն դրամ (վարկային միջոցներից՝ 731.8 մլն դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 28 մլն դրամ), որը 38.5%-ով գերազանցել է նախատեսված ցուցանիշը: Ծրագիրը բաղկացած է երկու հիմնական բաղադրիչներից՝

- համայնքային ենթակառուցվածքների վերականգնում և բարելավում,
- կառավարման բարելավում և կարողությունների հզորացում:

2012 թվականին ծրագրի շրջանակներում շարունակվել են շենքերի և շինությունների վերանորոգման, Հայաստանի գյուղերում և քաղաքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքները: Ծրագրով նախատեսված աշխատանքները կրում են շարունակական բնույթ: 2012 թվականի ընթացքում թվով 16 համայնքներում իրականացվել են 59.5 կմ խմելու ջրագծի, 0.5 կմ կոյուղագծի կառուցման, 1520 անհատական տների ջրաչափական հորերի տեղադրման, 1 ջրի մաքրման կայանի վերանորոգման, 4 հատ օրվա կարգավորման ջրամբարների վերանորոգման, 4 պոմպակայանների վերանորոգման աշխատանքներ:

Հաշվետու տարում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի խմելու ջրի մատակարարման ծառայությունների արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի սուբսիդավորման նպատակով նախատեսված 1.1 մլրդ դրամն ամբողջությամբ տրամադրվել է: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 32.6%-ով կամ 264.6 մլն դրամով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2012 թվականից «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն մարում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացված Սևանա լճի բնապահպանական վարկային ծրագրի շրջանակներում տրամադրված վարկի մայր գումարը, որը 2012 թվականին կազմել է 264.6 մլն դրամ:

ՀԲ աջակցությամբ իրականացվող՝ Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են 71.1 մլն դրամի ծախսեր (վարկային միջոցներից՝ 63.3 մլն դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 7.8 մլն դրամ)՝ 75.5%-ով կատարելով ծրագրված հատկացումները: Շեղումը պայմանավորված է նրանով, որ շինարարական կազմակերպությունների կողմից պայմանագրով նախատեսված աշխատանքները չեն ավարտվել ծրագրով նախատեսված ժամկետում՝ 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ և 2012 թվականի ընթացքում կատարված աշխատանքների դիմաց վճարումներն իրականացվել են «Երևան ջուր» ընկերության միջոցների հաշվին:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրի գծով օգտագործվել է շուրջ 1.2 մլրդ դրամ (դրամաշնորհային միջոցներից՝ 1 մլրդ դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 170.2 մլն դրամ)՝ կազմելով նախատեսվածի 86.8%-ը: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ անհրաժեշտություն էր առաջացել իրականացնելու լրացուցիչ հետազոտություններ և նախագծային լուծումներ, որի արդյունքում որոշակի աշխատանքների կատարումը շուրջ 300.0 հազար եվրո գումարի չափով տեղափոխվել է 2013 թվական: Ծրագրի միջոցներն ուղղված են ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնմանը: 2012 թվականին վարկային ծրագրի 2-րդ փուլի շրջանակներում Շիրակի մարզի մի շարք համայնքներում իրականացվել են թվով 7 ջրամբարների կառուցման, 167756 գծ.մ բաշխիչ ցանցի վերանորոգման և տնային միացումների աշխատանքներ: ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրով կնքված պայմանագրերի հիման վրա իրականացվող աշխատանքները համարվում են վարկային միջոցների 1-ին և 2-րդ փուլերի շարունակական մաս:

2012 թվականին խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 233.3 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրված ցուցանիշը: ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի ֆինանսավորումն ուղղվել է «Նոր Ակունք» ՓԲԸ-ի՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի կողմից տրամադրված վարկի մայր գումարի մարմանը: 2011 թվականի նկատմամբ ծախսերի 16.6%-ով նվազումը պայմանավորված է «Նոր Ակունք» ՓԲԸ-ի ընթացիկ գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի մարմանն ուղղված սուբսիդիայի կրճատմամբ՝ սուբսիդիայի նախատեսված սցենարին համապատասխան:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ Շիրակի, ՀՀ Լոռու և ՀՀ Արմավիրի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի մասնավոր կառավարման հայեցակարգերի ներդրման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 639.2 մլն դրամ կամ նախատեսվածի 89.8%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ 2012 թվականի տարեվերջին ներկայացված մասհանման հայտի գումարի վճարումը կատարվել է 2013 թվականին: 2012 թվականի ընթացքում մատուցված ծառայությունների դիմաց KFW բանկի կողմից համաձայն մասհանման հայտերի վճարվել է 454.7 մլն դրամ, իսկ ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներից՝ ԱԱՀ-ի և շահութահարկի առաջացած պարտավորությունների դիմաց՝ 184.5 մլն դրամ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 1.3 մլրդ դրամի ծախսեր (վարկային միջոցներից՝ շուրջ 1.1 մլրդ դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորման

հաշվին՝ 216.5 մլն դրամ)՝ 83.6%-ով կատարելով նախատեսված ցուցանիշը: Ծրագիրը սկսել է գործել 23.06.2012թ.-ից, որի հիման վրա կատարվել են որոշակի նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես՝ «Հայքրմուղկոյուղի» ՓԲԸ-ի մասնավոր կառավարչի ամսական վճարումները, նախագծային փաթեթի ձեռքբերումը: Աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի (Գյումրու) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում կատարվել են շուրջ 3.2 մլրդ դրամի ծախսեր (վարկային միջոցներից՝ 2.4 մլրդ դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 749.5 մլն դրամ)՝ 89.9%-ով կատարելով նախատեսված ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ շինարարական կազմակերպության ընտրության միջազգային մրցույթի գործընթացի ձգձգումների հետևանքով պայմանագիրը կնքվել է մայիսի 30-ին, իսկ աշխատանքները մեկնարկել են հունիսի վերջին, այսինքն՝ նախատեսված գրաֆիկից 3 ամիս ուշացումով: Ծրագրի երկրորդ փուլի աշխատանքներն սկսվել են 2010 թվականի սեպտեմբեր ամսից, որը համարվում է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագրի շարունակությունը: 2012 թվականին իրականացվել են Գյումրի քաղաքի 205845 գծ մ բաշխիչ ցանցի տնային միացումների և ջրի մաքրման կառույցների կառուցման աշխատանքները:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ Լոռու (Վանաձորի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում կատարվել են ավելի քան 2.1 մլրդ դրամի ծախսեր (վարկային միջոցներից՝ շուրջ 1.5 մլրդ դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 658.5 մլն դրամ)՝ 110.7%-ով կատարելով նախատեսված ցուցանիշը: Գերազանցումը պայմանավորված է նրանով, որ 2012 թվականին շինարարությանը զուգահեռ կատարվել են նաև ավարտված և շահագործման հանձնված օբյեկտների վերջնահաշվարկի վճարումներ (շինարարության ընթացքում յուրաքանչյուր վճարման պահանջագրից 10% գումար պահվում էր որպես վերջնահաշվարկի գումար): Ծրագրի երկրորդ փուլն ուժի մեջ է մտել 2010 թվականի սեպտեմբեր ամսից և համարվում է Գերմանիայի զարգացման վարկային բանկի աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրի շարունակությունը: 2012 թվականին իրականացվել են Վանաձորի խմելու ջրի ջրագծերի ու կոյուղատարերի վերակառուցման, վերանորոգման և 25.5 կմ տնային միացումների աշխատանքներ:

Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող՝ Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության

վարկային ծրագրի գծով 2012 թվականին կատարվել են 121.5 մլն դրամի ծախսեր (ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ 4.3%-ով կատարելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրի կատարողականը պայմանավորված է Ֆրանսիայի Հանրապետության կառավարության և ՀՀ կառավարության միջև պայմանագրային փոփոխությունների շուրջ բանակցությունների ընթացքով և պայմանագրի կնքման ուշացմամբ: Ծրագրի շրջանակներում կանխավճար է տրամադրվել խորհրդատվական ծառայությունների համար և վճարվել են համապատասխան հարկեր:

Եվրամիության աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարվել են 42.5 մլն դրամի ծախսեր (դրամաշնորհային միջոցներ)՝ 6.8%-ով կատարելով նախատեսված ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ աշխատանքների իրականացումը նախատեսվում է նախագծային փաստաթղթերի փաթեթի կազմումից հետո: Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի դրամաշնորհային ծրագրի իրականացման նպատակով ՎԶԵԲ-ի և Ֆիխտներ խորհրդատվական կազմակերպության միջև կնքվել է համապատասխան ծառայության մատուցման պայմանագիր, որի նպատակն է նախապատրաստել նախագծային փաստաթղթերի փաթեթի կազմում, որի դիմաց 2012 թվականին փոխանցվել է կանխավճար 42.5 մլն դրամ գումարի չափով: Ծրագիրը գործում է 2012 թվականից:

Եվրամիության աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային (դոնորային ֆինանսավորման) դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարվել են 68.5 մլն դրամի ծախսեր (դրամաշնորհային միջոցներից 42.5 մլրդ դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 26 մլն դրամ)՝ 44%-ով կատարելով նախատեսված ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ աշխատանքները պետք է իրականացվեին նախագծային փաստաթղթերի փաթեթի կազմումից հետո: Հայաստանի փոքր համայնքների ջրային (դոնորային ֆինանսավորման) դրամաշնորհային ծրագրի իրականացման նպատակով ՎԶԵԲ-ի և Ֆիխտներ խորհրդատվական կազմակերպության միջև կնքվել է համապատասխան ծառայության պայմանագիր, որի նպատակն է նախապատրաստել նախագծային փաստաթղթերի փաթեթի կազմումը, որի դիմաց 2012 թվականին փոխանցվել է կանխավճար 42.5 մլն դրամ գումարի չափով: Ծրագիրը գործում է 2012 թվականից:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում ծախսվել է շուրջ 467.5 մլն դրամ (վարկային միջոցներից՝ 413.6 մլն դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 53.9 մլն դրամ), որը 82.2%-ով ապահովել է նախատեսված ցուցանիշը: Վարկային համաձայնագիրն ուժի մեջ է մտել 22.09.2012թ.: 2012 թվականի ընթացքում հայտարարվել են մրցույթներ՝ նախագծային

փաստաթղթերի փաթեթի կազմման և մեքենասարքավորումների ձեռք բերման նպատակով: Շեղումը պայմանավորված է նրանով, որ մեքենաների և սարքավորումների ձեռքբերման և նախագծային փաթեթի փաստաթղթերի կազմման աշխատանքները սկսվել են 2012 թվականի չորրորդ եռամսյակից: Շինարարական աշխատանքները կիրականացվեն 2013 թվականից:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 34.7 մլն դրամ (վարկային միջոցներ), որը կազմել է նախատեսված գումարի 6.1%-ը: Տվյալ ծրագրի կատարողականը նույնպես կապված է նախագծային փաստաթղթերի կազմումը չիրականացնելու հետ, ինչի արդյունքում հիմնական աշխատանքների կատարումը հետաձգվել է: Նշված 34.7 մլն դրամը ծրագրի շրջանակներում կնքված ենթավարկային համաձայնագրի հիման վրա ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվել է որպես միջնորդավճար:

Հայաստանի փոքր համայնքների ջրային վարկային ծրագրի շրջանակներում աշխատանքները չիրականացնելու արդյունքում չի իրացվել նաև Եվրոպական ներդրումային բանկի 565.9 մլն դրամ աջակցությունը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 16.8 մլն դրամի ծախսեր (վարկային միջոցներ)՝ 100%-ով կատարելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը ավարտվել է 2011 թվականին, սակայն համաձայնագրով նախատեսված արտոնյալ ժամկետի սահմաններում 2011 թվականի տարեվերջին վճարման հայտով ներկայացված 16.8 մլն դրամը փոխանցվել է 2012 թվականին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 520.1 մլն դրամի ծախսեր (վարկային միջոցներ)՝ 100%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումն ավարտվել է 2011 թվականին, սակայն համաձայնագրով նախատեսված արտոնյալ ժամկետի սահմաններում 2011 թվականի տարեվերջին վճարման հայտով ներկայացված 371.9 մլն դրամ գումարը փոխանցվել է 2012 թվականին, ինչպես նաև ավարտական վճարումներ են կատարվել տարեսկզբի ազատ մնացորդների հաշվին:

2012 թվականին պետական բյուջեի ծախսերի՝ *փողոցների լուսավորման* խմբում համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրման համար նախատեսված 1.7 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների իրականացմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Այլ դասերին չպատկանող բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 475 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 98.4%-ը:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծրագրի շրջանակներում կատարվել են 404.1 մլն դրամի ծախսեր՝ 98.4%-ով ապահովվելով տարեկան ծրագրային հատկացումների ծավալը: Միջոցները հատկացվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հաշվետու տարում 70.8 մլն դրամ է տրամադրվել ՀՀ քաղաքաշինության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման ծրագրի շրջանակներում: Նշված ծրագիրը կատարվել է 97.9%-ով: Ծրագիրը գործում է 2012 թվականից:

Առողջապահություն

2012 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով *առողջապահության* ոլորտում կատարվել են շուրջ 64.5 մլրդ դրամի ծախսեր՝ ապահովվելով ծրագրի 96.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի, այդ թվում՝ ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցներով իրականացվող ծրագրերի կատարողականով:

Բաժնի ծախսերի 42.1%-ն ուղղվել է հիվանդանոցային ծառայությունների, 35.9%-ը՝ արտահիվանդանոցային ծառայությունների, 11.4%-ը՝ այլ դասերին չպատկանող առողջապահական ծրագրերի, 5.9%-ը՝ բժշկական ապրանքների, սարքերի և սարքավորումների ձեռքբերման և 4.8%-ը՝ հանրային առողջապահական ծառայությունների ֆինանսավորմանը: 2011 թվականի համեմատ առողջապահության ոլորտի ծախսերն աճել են 1.9%-ով:

Հաշվետու տարում դեղագործական ապրանքների ձեռքբերման ծախսերը կազմել են շուրջ 3.8 մլրդ դրամ՝ ապահովվելով ծրագրի 98.7% կատարողական:

Ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրման նպատակով ծախսվել է ավելի քան 3.6 մլրդ դրամ՝ 98.9%-ով ապահովվելով ծրագիրը: Միջոցներն օգտագործվել են սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված ազգաբնակչությանը դեղորայքով ապահովելու նպատակով: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 3.9%-ով:

Պետական պահպանության ծառայությանը դեղորայքի տրամադրման նպատակով հատկացվել է 856.4 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 76.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 23.1%-ով:

Իմունականխարգելման ազգային ծրագրի ծառայություններին աջակցության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցներից ծախսվել է շուրջ 29.0 մլն դրամ՝ նախատեսված 38.3 մլն դրամի դիմաց: Ծրագրի կատարողականը կապված է գնումների գործընթացի հետ՝ հայտարարված մի քանի մրցույթներում հաղթող չի ճանաչվել:

2012 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում կատարվել են ներքոհիշյալ աշխատանքները.

- «Պատվաստանյութերի պահպանման պատասխանատուների և պատվաստում իրականացնողների համար դասընթացներ» և «Իմունականխարգելման ոլորտում գործող փաստաթղթերի վերանայում, կրթական և հանրային իրազեկման նյութերի մշակում» միջոցառումների շրջանակներում ծառայություններ մատուցած մասնագետների վճարում,

- մարզերում «Պատվաստանյութերի պահպանման պատասխանատուների և պատվաստում իրականացնողների համար դասընթացներ» մասնակիցների ներքին գործուղման ծախսերի իրականացում,

- համակցված սառնարանների ձեռքբերում:

«Տուբերկուլյոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացում» արտաբյուջետային ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 103 մլն դրամի ծախսեր՝ ամբողջությամբ ապահովելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ներքոհիշյալ աշխատանքները.

- 2011 թվականի ընթացքում իրականացված ծախսերի և Գլոբալ հիմնադրամին ներկայացված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ,

- առողջության առաջնային պահպանման օղակի 200 բուժաշխատողների վերապատրաստում,

- խորհրդատվական ծառայությունների մատուցում,

- ռենտգենախտորոշիչ և այլ բժշկական սարքավորումների ձեռքբերում,

- ՀՀ առողջապահության նախարարության ծրագրերը համակարգող խմբին հատկացված նոր գրասենյակային տարածքի վերանորոգման լրացուցիչ աշխատանքների իրականացում,

- ծրագրի շրջանակներում ձեռքբերված ռենտգենախտորոշիչ սարքավորումների պահպանում և հիմնանորոգում,

- բազմաֆունկցիոնալ պատճենահանող սարքի ձեռքբերում:

2012 թվականի պետական բյուջեից արտահիվանդանոցային ծառայությունների ձեռքբերմանը տրամադրվել է ավելի քան 23.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.3%-ով կատարում: Արտահիվանդանոցային ծառայությունների ծախսերի 36.1%-ը կամ 8.3 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի, 24.9%-ը կամ շուրջ 5.8 մլրդ դրամը՝ մասնագիտացված բժշկական, 3.5%-ը կամ 815.4 մլն դրամը՝ ստոմատոլոգիական և 35.5%-ը կամ 8.2 մլրդ դրամը՝ պարաբժշկական ծառայությունների ծախսերը:

Արտահիվանդանոցային ծառայությունների խմբում ընդգրկված *ընդհանուր բնույթի բժշկական ծառայությունների* դասի ծախսերը կատարվել են գրեթե ամբողջությամբ՝ 99.6%-ով, և կազմել 8.3 մլրդ դրամ: Միջոցներն ուղղվել են բնակչության առողջության առաջնային պահպանմանը: Ծրագրի շրջանակներում տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի, բուժման կաբարձական կետերի քույրերի, դպրոցների աշակերտներին սպասարկող քույրերի կողմից բժշկական օգնություն և սպասարկում է իրականացվել հանրապետության ամբողջ ազգաբնակչությանը, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատված բնակչության խմբերին անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվել է 1.2 մլրդ դրամ ընդհանուր արժեքով դեղորայք: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.4%-ով կամ 116.9 մլն դրամով:

Շուրջ 5.8 մլրդ դրամ է օգտագործվել *մասնագիտացված բժշկական ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ 3.0%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Բարձր ռիսկի խմբերում ընդգրկված բնակչության մոտ հիվանդությունների հայտնաբերման, առողջության գնահատման և բուժման ծառայությունների համար օգտագործվել է 173 մլն դրամ, որը կատարվել է նախատեսված ամբողջ ծավալով: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է մատուցվել շուրջ 1500 հաշմանդամ երեխաների: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը փոփոխություն չեն կրել:

Հեմոդիալիզի անցկացման ծառայությունների ծախսերը 2012 թվականին կազմել են շուրջ 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.9% կատարողական: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2012 թվականին իրականացվել է 84.6 հազար սեանս՝ 2011 թվականի 75.0 հազար սեանսի դիմաց: Ծախսերի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 11.9% կամ 162.1 մլն դրամ:

Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններին 2012 թվականի պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.2 մլրդ դրամ՝ 99.7%-ով կատարելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում նախածննդյան և հետծննդյան հսկողություն է իրականացվել հանրապետության շուրջ 49.7 հազար հղիների նկատմամբ՝ նախորդ տարվա 50 հազարի փոխարեն,

ինչպես նաև բուժօգնություն են ստացել գինեկոլոգիական հիվանդություններով կանայք: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 0.5%-ով կամ 5.6 մլն դրամով:

Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ծառայություններին տրամադրվել է 71.4 մլն դրամ պետական աջակցություն՝ ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը, որն ուղղվել է «Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը փոփոխություն չեն կրել:

Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանը հատկացվել է 2.6 մլրդ դրամ՝ 99.6%-ով կատարելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է մատուցվել հանրապետության ամբողջ բնակչությանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.8%-ով կամ 21.6 մլն դրամ:

Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններին տրամադրվել է շուրջ 141.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.9% կատարողական: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2011 թվականի 8.6 հազար հիվանդի դիմաց 2012 թվականին բուժօգնություն է ստացել 8.8 հազար հիվանդ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.5%-ով: Դեպքերի ավելի մեծ քանակի փոխհատուցումն ապահովվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին:

Օրթոդոնտոլոգիական բժշկական օգնության ծառայությունների գծով նախատեսված ծախսերը կատարվել են 98.0%-ով՝ կազմելով ավելի քան 7.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2012 թվականին բուժօգնություն է տրամադրվել 1.5 հազար հիվանդների՝ 2011 թվականի 0.9 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.6%-ով: Գերակատարված դեպքերի փոխհատուցումն ապահովվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին:

Ստոմատոլոգիական ծառայությունների դասում ընդգրկված են 2 ծրագրեր՝ «Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» և «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ», որոնց շրջանակներում օգտագործվել է 815.4 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 97.4%-ը: Մասնավորապես՝ 735.1 մլն դրամ տրամադրվել է ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը՝ ապահովելով ծրագրի 98.8%-ը և 0.6%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում բուժօգնության դեպքերի քանակը կազմել է 283.5 հազար՝ նախորդ տարվա 225.4 հազարի դիմաց: Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 80.4 մլն դրամ՝ ապահովելով 85.8% կատարողական, որը պայմանավորված է բուժօգնության դեպքերի քանակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.6%-ով: Ծրագրի շրջանակներում հետազոտվել են թվով 67.0 հազար երեխաներ՝ 2011 թվականի 70.9

հազարի դիմաց: Նախորդ տարվա համեմատ ստոմատոլոգիական ծառայությունների դասի ծախսերն ընդհանուր առմամբ չեն փոփոխվել:

Պարաբժշկական ծառայությունների շրջանակներում օգտագործվել է 8.2 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.8%-ը: Մասնավորապես՝ ավելի քան 2.9 մլրդ դրամ տրամադրվել է շտապ բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 99.9%-ը: Ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2012 թվականին սպասարկվել է 428.4 հազար կանչ՝ 2011 թվականի 397.1 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.4%-ով:

Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծախսերը կազմել են 2.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.2%-ը: Ծրագրի շրջանակներում, ինչպես 2011 թվականին, այնպես էլ 2012 թվականին իրականացվել է 3.9 մլն հետազոտություն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 0.9%-ով:

Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայությունների գծով 2012 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 2.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.3%-ը: Ծրագրի շրջանակներում բժիշկ-մասնագետների կողմից մատուցվել են 15-17 տարեկան պատանիների առողջության առաջնային պահպանման և շարունակական հսկողության ծառայություններ, ապահովվել է զինկոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված բժիշկ-փորձագետների և բուժքույրերի աշխատավարձերի վճարումը, ինչպես նաև նշված տարիքի անձանց փորձաքննության նպատակով հիվանդանոցային բուժհաստատություններ ուղեգրման ճանապարհածախսի փոխհատուցումը: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 13.9%-ով կամ շուրջ 310.7 մլն դրամով:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեի *հիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերման ծախսերը կազմել են 27.1 մլրդ դրամ՝ 99.7%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Հիվանդանոցային ծառայությունների ծախսերի 49.5%-ը կամ 13.4 մլրդ դրամը կազմել են մոր և մանկան բժշկական ծառայությունների, 26.6%-ը կամ 7.2 մլրդ դրամը՝ մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների, 24.0%-ը կամ 6.5 մլրդ դրամը՝ ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների ծախսերը:

Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների դասում ընդգրկված՝ անհետաձգելի բժշկական օգնության ծախսերը կազմել են շուրջ 2.2 մլրդ դրամ՝ 99.6%-ով կատարելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2011 թվականի 22.3 հազար հիվանդի դիմաց 2012 թվականին բուժօգնություն է ստացել 23.7 հազար հիվանդ: 2011 թվականի համեմատ նշված

ծախսերը նվազել են 0.3%-ով: 2012 թվականին ավելի մեծ թվով հիվանդների սպասարկումն ապահովվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին:

Հաշվետու տարում պետական բյուջեից ավելի քան 4.3 մլրդ դրամ է տրամադրվել բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին տրամադրվող բժշկական օգնության ֆինանսավորմանը՝ 99.8%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության շրջանակներում 2012 թվականին բուժօգնություն է ստացել 45.9 հազար հիվանդ՝ 2011 թվականի 39.8 հազարի դիմաց: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 8.4%-ով կամ 338.5 մլն դրամով:

Հաշվետու տարում 7.2 մլրդ դրամ է օգտագործվել *մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ ապահովելով նախատեսվածի 99.8%-ը: Տվյալ դասի շրջանակներում ֆինանսավորվել է 7 ծրագիր:

Տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 1.3 մլրդ դրամ՝ ամբողջովին ապահովելով ծրագրի կատարումը: Եթե 2011 թվականին ծրագրի շրջանակներում բուժօգնություն էր ստացել 5.8 հազար հիվանդ, ապա 2012 թվականին հիվանդների թիվը կազմել է 6.2 հազար: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի գծով ծախսերը նվազել են 2.3%-ով: 2012 թվականին ավելի մեծ թվով հիվանդների սպասարկումն ապահովվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին:

Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման նպատակով 2012 թվականի բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.1 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.6%-ը: Ծրագրի շրջանակներում 2012 թվականին բուժօգնություն է ստացել 11.5 հազար հիվանդ՝ 2011 թվականի 10.4 հազարի դիմաց: 2011 թվականի համեմատ տվյալ ծախսերը նվազել են 3.1%-ով: 2012 թվականին ավելի մեծ թվով հիվանդների սպասարկումն ապահովվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին:

Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների գծով պետական բյուջեից տրամադրվել է 169.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.4%-ը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 1.3 հազար հիվանդ՝ 2011 թվականի 1.2 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի գծով ծախսերը նվազել են 0.6%-ով: 2012 թվականին ավելի մեծ թվով հիվանդների սպասարկումն ապահովվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին:

Հոգեկան և նարկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններին ՀՀ պետական բյուջեից հատկացվել էր շուրջ 1.9 մլրդ դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է:

Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 6.2 հազար հիվանդ՝ 2011 թվականի 5.6 հազարի փոխարեն: 2011 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 1.6%-ով:

Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով ծախսվել է շուրջ 1.2 մլրդ դրամ՝ 99.3%-ով ապահովվելով ծրագրի կատարումը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 64.7 հազար հիվանդ՝ 2011 թվականի 51.5 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 3.9%-ով:

Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կատարվել են 100%-ով՝ կազմելով 1 մլրդ դրամ: Նշված ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նախորդ տարվա 10.9 հազար հիվանդի փոխարեն 2012 թվականին բուժօգնություն են ստացել 12 հազար հիվանդ: 2011 թվականի համեմատ տվյալ ծախսերը նվազել են 1.2%-ով: 2012 թվականին ավելի մեծ թվով հիվանդների սպասարկումն ապահովվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին:

Վերականգնողական բժշկական օգնության ծառայություններին ուղղվել է ավելի քան 561.4 մլն դրամ՝ ամբողջովին ապահովվելով նախատեսված ծավալը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 4.0 հազար հիվանդ՝ 2011 թվականի 3.9 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Մոր և մանկան բժշկական ծառայությունների դասի շրջանակներում իրականացվել են 3 ծրագրեր, որոնց ծախսերը կատարվել են 99.7%-ով՝ կազմելով 13.4 մլրդ դրամ: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 0.6%-ով:

Հաշվետու տարում ավելի քան 6.4 մլրդ դրամ է տրամադրվել մանկաբարձական բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանը՝ 99.6%-ով ապահովվելով նախատեսվածը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2011 թվականի 58.9 հազար դեպքի դիմաց 2012 թվականին արձանագրվել է 60.6 հազար դեպք: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.2%-ով: 2012 թվականին ավելի մեծ թվով հիվանդների սպասարկումն ապահովվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին:

Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններին ուղղվել է շուրջ 364.5 մլն դրամ կամ նախատեսվածի 98.9%-ը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2011 թվականի 4.6 հազար դեպքի դիմաց 2012 թվականին արձանագրվել է 5.0 հազար դեպք:

Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.6%-ով՝ պայմանավորված ծառայության միջին գնի բարձրացմամբ:

Երեխաներին բժշկական օգնության ծրագրի ծախսերը կազմել են ավելի քան 6.6 մլրդ դրամ՝ 99.8%-ով ապահովելով նախատեսվածը: Պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2012 թվականին բուժօգնություն են ստացել 52.2 հազար հիվանդ՝ 2011 թվականի 47.5 հազարի փոխարեն: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 0.9%-ով:

2012 թվականին պետական բյուջեից շուրջ 3.1 մլրդ դրամ է օգտագործվել *հանրային առողջապահական ծառայությունների ձեռքբերման նպատակով*՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Տվյալ խմբի շրջանակներում կատարվել են 8 ծրագրեր:

Նշված խմբի ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեն հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայությունների գծով տրամադրված միջոցները, որոնք կազմել են 1.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Ծրագրի նպատակն էր 2012 թվականին ապահովել.

- Հայաստանի Հանրապետության տարածքում հիգիենիկ և հակահամաճարակային պետական հսկողության միջոցառումների իրականացումը,
- ինֆեկցիոն հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով հիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը,
- բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ ուսումնասիրությունների կազմակերպումը,
- բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման կազմակերպական-մեթոդական կանոնակարգումը,
- հիգիենիկ-համաճարակաբանական նորմերի և կանոնների պատշաճ համակարգի ստեղծումը,
- բնակչության հիգիենիկ և բժշկական գիտելիքների մակարդակի բարձրացումը:

Ծրագրի շրջանակներում հակահամաճարակային միջոցառումների իրականացման նպատակով կատարվել են 2991.1 հազար փորձագիտական լաբորատոր ախտորոշիչ հետազոտություններ՝ 2011 թվականի 2279.3 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.4%-ով:

Հաշվետու տարում հիգիենիկ հակահամաճարակային ծառայությունների ձեռքբերմանը տրամադրվել է շուրջ 217.7 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ինֆեկցիոն հիվանդությունների հաշվառման և դրանց նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով կատարվել են 1285.7 հազար լաբորատոր ախտորոշիչ

հետազոտություններ՝ 1555.7 հազարի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.8%-ով:

2012 թվականին ավելի քան 228.8 մլն դրամ է տրամադրվել հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման ծառայությունների ֆինանսավորմանը, որը կատարվել է 100%-ով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հանրապետության տարածքում ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի և այլ հատուկ վտանգավոր վարակների հայտնաբերման և կանխարգելման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը փոփոխություն չեն կրել:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայությունների շրջանակներում օգտագործվել է ավելի քան 112.9 մլն դրամ՝ ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, ախտորոշման, բուժման, հիվանդների դիսպանսերային հսկողության և քարոզչության աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Ամբողջությամբ օգտագործվել են վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման ծառայությունների համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 60.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման աշխատանքներ՝ մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության բացառման և նվազեցման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Արյան հավաքագրման ծառայությունների ծախսերը կազմել են 211.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ապահովվել է արյան փոխներարկման կայանների պահպանումը, որոնց ֆունկցիոնալ խնդիրն է արյան հավաքագրումը, բաց թողումը և բուժկանխարգելիչ հիմնարկներին արյունով ու դրա բաղադրիչներով ապահովումը Հայաստանի տասը մարզերում: Երևան քաղաքը սպասարկում է «Ռ.Յոլյանի անվ. արյունաբանության կենտրոն» ՓԲԸ-ն: Կենտրոնի առաջնային խնդիրներից են դիսպանսեր հսկողության տակ գտնվող արյան չարորակ հիվանդություններով տառապող հիվանդների ամբուլատոր հետազոտումը և բուժումը, արյան փոխներարկման կայանների կողմից կատարվող աշխատանքների արտագնա ստուգումը և մեթոդական օգնությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Իմունականխարգելման ազգային ծրագրին տրամադրվել է 338.4 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով նախատեսված ծավալը: Ծրագրի շրջանակներում ազգաբնակչության համար ձեռք են բերվել պատվաստանյութեր և ներարկիչներ կարմրուկի, խոզուկի և այլ վարակիչ հիվանդությունների կանխարգելման համար: 2012 թվականին նախորդ տարվա համեմատ նվազել է դոնոր կազմակերպությունների աջակցությունը, և ավելացել ՀՀ պետական բյուջեի միջոցներով

պատվաստանյութերի ձեռքբերման ծավալը: Դրանով է բացատրվում նախորդ տարվա համեմատ ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի 47.1%-ով աճը:

Ծխելու դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 100.0 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով նախատեսված ծավալը: Ծրագրերի իրականացումը կատարել է «Զարգացում և ինտեգրացիա» հասարակական կազմակերպության միջոցով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Այլ դասերին չպատկանող առողջապահական ծախսերի խմբի շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են շուրջ 7.4 մլրդ դրամի ծախսեր, որոնց կատարողականը կազմել է 76.8%: Ծրագրից շեղումը հիմնականում առաջացել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ փուլային ծրագրի և վերջինիս լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի, ինչպես նաև արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի գծով:

2012 թվականին պետական բյուջեից 39.8 մլն դրամ է տրամադրվել հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհածախսի փոխհատուցման նպատակով՝ ապահովելով ծրագրի 98.6% կատարողական: Ծրագրի շրջանակներում այն հիվանդները, որոնց ախտորոշումը հնարավոր չէ կատարել հանրապետությունում, ուղեկցողով գործուղվում են Մոսկվա կամ ԱՊՀ երկրներ ախտորոշման և հետագա բուժում նշանակելու համար: Մեկ հիվանդի ճանապարհածախսը ուղեկցողով գնալու և վերադառնալու համար կազմում է մոտ 400 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 5.3%-ով, որը պայմանավորված է հանրապետությունից դուրս մեկնող հիվանդների մեկնած վայրից կախված՝ գների տարբերությամբ: 2012 թվականին մեկնածների թիվը կազմել է 188՝ նախորդ տարվա 235-ի դիմաց:

Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների շրջանակներում ծախսվել է 450.7 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով նախատեսված ծավալը: Այն ուղղվել է սոցիալապես անապահով խավի հիվանդների՝ յուրահատուկ, բացառիկ բուժսարքավորումներով և տեխնոլոգիաներով անվճար ախտորոշիչ 29078 հետազոտությունների իրականացմանը՝ 2011 թվականի 28998 փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 0.7%-ով:

Ամբողջությամբ ֆինանսավորվել են դեղաքաղաքականությունից բխող փորձագիտական և մեթոդաբանական ծառայությունները, որոնց տրամադրվել է 20 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են մարդասիրական կարգով ներմուծվող դեղերի և «որբ դեղերի» ցանկում ընդգրկված դեղերի պետական գրանցման նպատակով փորձաքնություններ, հոգեմետ և հսկվող

դեղերի պահանջարկի հաշվարկ և այլ ծառայություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

ՀԲ աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 819.3 մլն դրամ, որը կատարվել է 75.3%-ով: Ծրագրին կառավարությունը մասնակցություն է ցուցաբերել 205.1 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցները կազմել են 614.2 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Գյումրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կառուցման պայմանագրի շրջանակներում 2012 թվականի ընթացքում փաստացի կատարված աշխատանքների դիմաց կանխավճար էր վճարվել 2010 թվականին:

ՀԲ աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 2.4 մլրդ դրամ, որը կատարվել է 66%-ով: Ծրագրին կառավարությունը մասնակցություն է ցուցաբերել 321.5 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցները կազմել են 2.0 մլրդ դրամ: Շեղումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնի կառուցման համար հայտարարված շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառու կազմակերպության ընտրության միջազգային մրցույթ հաղթող չի ճանաչվել՝ գնառաջարկների բարձր լինելու պատճառով (մասնակիցների կողմից առաջարկված նվազագույն գինը 66%-ով գերազանցում է վարկային ծրագրի գնումների պլանով նախատեսված արժեքը): Ներկայում, ՀԲ ընթացակարգերին համապատասխան, կատարվում է փաստաթղթերի վերամշակում:

- Կապանի բժշկական կենտրոնի (ԲԿ) նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներն ավարտվել են 2012թ. օգոստոս ամսին, որից հետո մշակվել է շինարարական աշխատանքների և կենտրոնի շահագործման բնապահպանական կառավարման պլանը: Այդ պատճառով մրցույթի հայտարարման ժամկետները տեղափոխվել են 2012թ. չորրորդ եռամսյակ:

- Աբովյանի ԲԿ-ի վերանորոգման շինարարական աշխատանքները, կապված նախագծանախահաշվային փաստաթղթերի վերանայման հետ, տեղափոխվել են 2013 թվական:

2012 թվականի ընթացքում Առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ և վերջինիս լրացուցիչ ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1. Ընտանեկան բժշկության զարգացում:

«Առողջապահական համակարգի արդիականացում» վարկային ծրագրի շրջանակներում թվով 38 ընտանեկան բժիշկների մասնագիտացումն ավարտվել է 2012թ. մարտին: ՀՀ մարզերի 13 համայնքներում «Հայաստանի առողջապահական համակարգի արդիականացում» ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում 2012թ. վերանորոգման աշխատանքներ են

իրականացվել Տավուշի մարզի Հաղարծինի, Այգեձորի, Արագածոտնի մարզի Մաստարայի և Արմավիրի մարզի Բամբակաշատի ամբուլատորիաներում: 2012թ. սեպտեմբերին սկսվել են Երևանի Էրեբունի բժշկական քոլեջի ընտանեկան բուժքույրության ամբիոնի վերակառուցման աշխատանքները, որոնք նախատեսված է ավարտել 2013թ.: 2012թ. Էրեբունի բժշկական քոլեջի ընտանեկան բուժքույրության ամբիոնին տրամադրվել են ուսումնական մույլածներ և կահույք:

2. Հիվանդանոցային համակարգի օպտիմալացում և արդիականացում:

2012թ. սեպտեմբերի 4-ին շահագործման է հանձնվել ՀՀ Շիրակի մարզի Գյումրու նոր բժշկական կենտրոնը: Նորակառույց բժշկական կենտրոնը համապատասխանում է արդի միջազգային բոլոր չափանիշներին, ունի լայն ախտորոշիչ և բուժական միջամտություններ իրականացնելու հնարավորություններ: Ավարտվել են նաև Գավառի բժշկական կենտրոնի ինֆեկցիոն մասնաշենքի վերանորոգման և դիարանի կառուցման շինարարական աշխատանքները: 2012թ. սեպտեմբեր ամսին սկսվել են ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի բժշկական կենտրոնի դիարանի նոր շենքի կառուցման շինարարական աշխատանքները: Հաշվետու ժամանակահատվածում մատուցվել են նաև մի շարք խորհրդատվական ծառայություններ: Հայտարարվել են շինարարական կազմակերպությունների ընտրության մրցույթներ՝ Մեղրու տարածաշրջանային ԲԿ կառուցման, Կապանի, Բերդի, Աբովյանի բժշկական կենտրոնների վերանորոգման շինարարական աշխատանքների իրականացման նպատակով:

Կառավարության կարողությունների հզորացում՝ առողջապահության ոլորտի արդյունավետ քաղաքականության մշակման և մոնիթորինգի նպատակով: ԱՄՆ ՄԶԳ-ի «Հայաստանի առողջապահության համակարգի հզորացում» (HS-STAR) ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել և իրականացվել է Հայաստանի Առողջապահական համակարգի գործունեության գնահատման զեկույց (ԱՀԳԳ) 2011 հաշվետվության մշակման համար անհրաժեշտ զանգվածային հետազոտությունը, իսկ զեկույցի մշակումը և հրատարակումը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներով:

Հանրային ծախսերի կառավարման բարելավման շրջանակներում աշխատանքներ են իրականացվել «Առողջապահության Ազգային Հաշիվներ» (ԱԱՀ) զեկույցի մշակման ուղղությամբ: Ինչպես ԱՀԳԳ զեկույցի մշակման դեպքում, ԱՄՆ ՄԶԳ-ն «Հայաստանի առողջապահության համակարգի հզորացում» (HS-STAR) ծրագրի շրջանակներում ֆինանսավորել է տնային տնտեսությունների հետազոտության իրականացումը և հետազոտության տվյալների ներկայացումը ԱԱՀ աշխատանքային խմբին՝ ԱԱՀ 2011 զեկույցի մշակման համար: ԱԱՀ զեկույցի մշակումը և հրատարակումը նույնպես իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներով:

Բժշկական կրթության համակարգի բարելավման ուղղությամբ Առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի

շրջանակներում նախատեսվում էր իրականացնել «ԱԱԻ-ի դասախոսական անձնակազմի կրթում միջազգային փորձագետի կողմից», «Հիվանդանոցներում բուժանձնակազմի կրթում ԱԱԻ-ի կողմից» և «Միջազգային խորհրդատուների կողմից տեխնիկական աջակցություն կրթական ծրագրերի մշակման համար» հանձնարարականները: Այս հանձնարարականները նպատակ ունեին միջոցառումներ ձեռնարկել՝ ուղղված վարկային ծրագրի շրջանակում արդիականացման ենթակա մարզային հիվանդանոցային հաստատություններում աշխատող բժիշկների և բուժքույրերի տեսական և գործնական հմտությունների մակարդակի բարձրացմանը: Հաշվի առնելով այն փաստը, որ խորհրդատվական ծառայությունների գնումը վարկային միջոցներով ՀՀ կառավարության կողմից աննպատակահարմար էր ճանաչվել, որոշում ընդունվեց օգտագործել ֆինանսավորման այլ աղբյուրներ, մասնավորապես՝ «Ծրագրում ընդգրկված մարզային հիվանդանոցների բժշկական անձնակազմի (բժիշկների և բուժքույրերի) մասնագիտությունների գծով տեսական և գործնական հմտությունների բարելավում» ծրագիրն իրականացնել ՀՀ պետական բյուջեի միջոցներով:

Դատաբժշկական և գենետիկ ծառայությունների ձեռքբերման համար 2012 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 340.9 մլն դրամ՝ ամբողջությամբ կատարելով ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3%-ով:

«Պաթանատոմիական ծառայություններ» ծրագրի գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը ևս նախատեսված ծավալով կատարվել են՝ կազմելով շուրջ 38.3 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Հաշմանդամ և կարիքավոր երեխաների օրթեզների և կորսետների ապահովման ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 87.4 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.7%-ով: Ծրագրի շրջանակներում 2012 թվականին պատրաստվել է 1700 օրթեզ և կորսետ՝ 2011 թվականի 1820-ի փոխարեն:

Շուրջ 76.1 մլն դրամ է տրամադրվել առողջապահության համակարգի գործունեության հանրային իրազեկման ծառայություններին՝ ապահովելով 97.3% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել է բժշկական վիճակագրության և բժշկասանիտարական տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն: ՀՀ առողջապահության նախարարությունում և ամբողջ համակարգում շարունակվել են ներդրվել համակարգչային տեխնոլոգիաներ և ցանցեր: Ներդրվել են նաև առողջապահական տեղեկատվական համակարգեր և ինտերնետային կապ: Առողջապահության համակարգի գործունեության զանգվածային տեղեկատվության, բնակչության լայն շրջանակներում հավաստի բժշկական գիտելիքների տարածման համար տպագրվում է

հանրամատչելի զրույցների հավելված: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 3.2%-ով:

Մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության ծառայություններին տրամադրվել է 128.4 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Միջոցներն ուղղվել են սիրտ-անոթային, սպինալ և պրոֆեսիոնալ հիվանդություններով, շաքարային դիաբետով, ասթմայով տառապող հիվանդներին, ինչպես նաև ուռուլոգներին և նեֆրոլոգներին ուռուցքաբանական, նարկոլոգիական, մաշկավեներական, հոգեբուժական և հակատուբերկուլյոզային ծառայությունների գծով կազմակերպամեթոդական օգնությանը: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են շուրջ 2.7 անգամ՝ պայմանավորված կազմամեթոդական օգնության ծավալի ավելացմամբ:

Խմբում ընդգրկված այլ բուժօգնության և սպասարկման ծառայությունները և մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման աշխատանքները ֆինանսավորվել են ամբողջությամբ՝ համապատասխանաբար 15 մլն և 40 մլն դրամով, և նախորդ տարվա համեմատ չեն փոփոխվել:

Ամբողջությամբ ֆինանսավորվել են նաև տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի համակարգման ծառայությունները, որոնց տրամադրվել է 92 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում մատուցվել են տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի պահպանման աջակցության ծառայություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

ՀՀ մարզային առողջապահական կազմակերպությունների բժիշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման ծախսերի փոխհատուցման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 25.5 մլն դրամ՝ ապահովելով 97.1% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2012 թվականին ՀՀ մարզեր են ուղեգրվել 23 բժիշկ-մասնագետ՝ 72 ամիս տևողությամբ՝ նախորդ տարվա 63 ամսվա փոխարեն: Արդյունքում նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 15.1%-ով:

ԱՄՆ Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կենտրոնի աջակցությամբ իրականացվող «Սեզոնային գրիպի համաճարակաբանական ցանցի հիմնում և արձագանքում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 6.7 մլն դրամ, որը կատարվել է 31.7%-ով: Դրամաշնորհային ծրագրի շրանակներում 2012թ. չորրորդ եռամսյակով նախատեսված խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման աշխատանքները տեղափոխվել են 2013թ., քանի որ ծրագրի գնումների նախահաշվում, ինչպես նաև խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման հանձնարարականներում, կատարվել են որոշակի փոփոխություններ, որի հետևանքով գնումների նախահաշվում և գնման մեթոդաբանությունում կատարվել են փոփոխություններ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պահպանումը, որի ծախսերը կազմել են 1.0 մլրդ դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 3%-ով՝ պայմանավորված աշխատավարձի, սոցիալական ապահովագրության վճարների և կապի ծառայությունների ծախսերի ավելացմամբ:

ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ «Հանուն պատվաստումների և իմունիզացիայի» միջազգային դաշինքի աջակցությամբ իրականացվող առողջապահության համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 17.5 մլն դրամ՝ նախատեսված 50.1 մլն դրամի դիմաց, որը պայմանավորված է գնումների գործընթացով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Ռոտավիրուսային պատվաստումների վերաբերյալ ԱԱՊ իմունիզացիայի պատասխանատուների համար դասընթաց», «Բժշկական բուհերի, հասարակական և մասնագիտական միավորումների համար ռոտավիրուսային վարակների վերաբերյալ խորհրդակցություններ», «ԱԱՊ կազմակերպությունների և հիվանդանոցային բուժանձնակազմի համար ռոտավիրուսային վարակների վերաբերյալ խորհրդակցություններ» միջոցառումների դասախոս-մասնագետներին, ինչպես նաև ծրագրի մեթոդական և ֆինանսական ղեկավարման ու օժանդակող ծառայություն մատուցող մասնագետներին վճարում:

ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնման ծրագրին տրամադրվել է 30.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 46.2%-ը, որը պայմանավորված է շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման, արտասահմանյան գործուղումների ու հիմնական միջոցների ձեռքբերման ծախսերի տնտեսմամբ:

ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ «Առողջապահության համակարգի հզորացում» ծրագրի շրջանակներում ծախսվել է 224.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 63.4%-ը, որը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի երկրորդ փուլի համաձայնագիրը ապրիլ ամսվա փոխարեն կնքվել է դեկտեմբեր ամսին: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- պալիատիվ խնամքի ենթածրագրի շրջանակներում մշակվել են ցավային համախտանիշի կառավարման և պալիատիվ խնամքի ուղեցույցներ,
- շարունակվել են պալիատիվ խնամքի փորձարարական ծրագրերը չորս պիլոտային տեղամասերում,

- իրականացվել են արյան անվտանգության ազգային ռազմավարությունն ապահովող միջոցառումներ, մշակվել և տպագրվել են արյան անհատույց դոնորությունը քարոզող կրթական նյութեր, նկարահանվել և եթեր են հեռարձակվել 2 տեսահոլովակ,

- հակաբիոտիկների ռացիոնալ կիրառումը քարոզելու նպատակով ՀՀ բոլոր մարզերում կազմակերպվել են հանդիպումներ բուժաշխատողների հետ,

- իրականացվել են հիվանդությունների միջազգային դասակարգչի մշակման աշխատանքներ,

- իրականացվել է առողջապահության աշխատուժի քարտեզավորում և մշակվել է աշխատուժի զարգացման ռազմավարության նախագիծ: 2012թ. վերջին մեկնարկել են առողջապահական համակարգի զարգացման հնգամյա ռազմավարության և ենթառազմավարական ծրագրերի մշակման աշխատանքները ՀՀ ԱՆ ԱԱԻ կողմից,

- արյան անվտանգության ծառայությունների վերազինման նպատակով ձեռք են բերվել բժշկական սարքավորումներ՝ լաբորատոր և պլազմայի պահպանման սառցարաններ, արյան պլաստիկ պարկերի գոդիչներ «Պրոֆ. Ռ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ին, Շիրակի, Լոռու, Սյունիքի, Կոտայքի և Արմավիրի արյան փոխներարկման կայաններին տրամադրելու նպատակով,

- ձեռք են բերվել համակարգչային սարքավորումներ Շիրակի, Լոռու, Սյունիքի, Կոտայքի և Արմավիրի արյան փոխներարկման կայանների, ՀՀ ԱՆ ԱԱԻ և ՊԱԳ-ի համար:

Արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցության շրջանակներում ծախսվել է շուրջ 770.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.2%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է տնտեսումներով և թվով երեք պայմանագրերի կատարողականով: Ծրագրի շրջանակներում գնվել են հակառետրովիրուսային, օպորտունիստական վարակների դեղամիջոցներ և մեթադոն, ՄԻԱՎ-ի ախտորոշման թեսթ համակարգեր, լաբորատոր ծախսանյութեր և սարքավորումներ ՁԻԱՀ հանրապետական կենտրոնի համար, մեթադոնային փոխարինող բուժման ծրագիրն ընդլայնվել է Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում, սկսվել են ՁԻԱՀ հանրապետական կենտրոնի 3-4-րդ հարկերի (բուժական և ախտորոշիչ բաժիններ) վերանորոգման աշխատանքները: Ծրագրի շրջանակներում 2012 թվականին ավելի քան 43500 հղիների շրջանում իրականացվել է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն, 449 հիվանդ ստացել է հակառետրովիրուսային բուժում, 215 ներարկային թմրամիջոցներ գործածողներ ստացել են մեթադոնային փոխարինող բուժում, 1737 դատապարտյալ ստացել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին վերաբերող խորհրդատվություն: Իրականացվել է 186 բուժաշխատողների, 32 լաբորատոր մասնագետների և 87 պետական ոլորտի աշխատողների վերապատրաստում:

Արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացման և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնման ծրագրին տրամադրվել է ավելի քան 764.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 60.9%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է առողջապահական և լաբորատոր նյութերի ձեռքբերման ծախսերի գծով: Ծրագրի շրջանակներում ներմուծվել է անհրաժեշտ քանակով դեղորայք, «Հայկական կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպության և «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի հետ կնքվել են դրամաշնորհային պայմանագրեր և իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- տուբերկուլյոզով հիվանդներին տրամադրվել է սոցիալական աջակցություն՝ սննդային և հիգիենիկ փաթեթների տեսքով,
- ծայրահեղ կարիքավոր տուբերկուլյոզով հիվանդներին ծմռան 3.5 ամիսների համար տրամադրվել է ջեռուցման ծախսերի փոխհատուցում,
- Հանրապետական տուբերկուլյոզային դիսպանսերում բուժվող հիվանդներին տրամադրվել են թարմ սննդի փաթեթներ,
- ուղղակիորեն վերահսկվող բուժման ռազմավարության շրջանակներում դեղորայքի ընդունումը բուժաշխատողի ներկայությամբ կազմակերպելու նպատակով հիվանդներին կամ բուժաշխատողներին տրամադրվել է տրանսպորտային ծախսերի փոխհատուցում,
- տուբերկուլյոզի ազգային գրասենյակի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով տրամադրվել է լրացուցիչ ֆինանսական աջակցություն, գրասենյակի աշխատակիցների կողմից իրականացվել են ստուգայցեր տուբերկուլյոզային հաստատություններ, ներդրվել է տուբերկուլյոզային ծառայությունների կառավարման էլեկտրոնային ծրագիրը, իրականացվել են մասնագետների վերապատրաստման դասընթացներ տուբերկուլյոզի ոլորտում,
- գնվել են լաբորատոր և վարակի վերահսկման պարագաներ,
- ձեռք են բերվել իրական ժամանակում տուբերկուլյոզի ախտորոշման ժամանակակից 3 սարքավորում, ինչպես նաև լրացուցիչ MGIT Bactec 960 սարքավորումը:
- պերիֆերիկ լաբորատորիաներից իրականացվել է խորխի նմուշների տեղափոխում ազգային ռեֆերենս լաբորատորիա, ինչպես նաև վերազգային ռեֆերենս լաբորատորիա, որը գտնվում է Գերմանիայի Բորստել քաղաքում:

ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ աջակցություն շտապ բուժօգնության ծառայություններին ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրին տրամադրվել է շուրջ 8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 26.3%-ը: Շեղումը կապված է նախահաշիվը ուշ հաստատվելու հետ: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել գրասենյակային կահույք և համակարգչային տեխնիկա:

Հանգիստ, մշակույթ և կրոն

2012 թվականին ՀՀ պետական բյուջեից *հանգստի, մշակույթի և կրոնի* ոլորտի ծրագրերի իրականացմանը տրամադրվել է 22.8 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 101%-ը: Ծրագրի գերազանցումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 29.8%-ով աճը հիմնականում պայմանավորված է արվեստի բնագավառի ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում *հանգստի և սպորտի* ծառայություններին տրամադրվել է 1.4 մլրդ դրամ՝ 99.7%-ով ապահովելով տարեկան ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերն աճել են 5.7%-ով, հիմնականում պայմանավորված 2012 թվականի Լոնդոնի 30-րդ Օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցությամբ:

2012 թվականին ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծրագրով նախատեսված միջոցները նպատակաուղղվել են միջոցառումների քանակի ավելացմանը և որակի բարձրացմանը, մարզիկների բժշկական հետազոտման աշխատանքների բարելավմանը, մարզաձևերի ՀՀ ազգային հավաքական թիմերը երիտասարդ հեռանկարային մարզիկներով համալրմանը և օլիմպիական վարկանիշային միջազգային մրցումներին նախապատրաստմանը: Այս ծրագրի գծով 2012 թվականին տրամադրվել է 884.5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում անցկացվել են Հայաստանի Հանրապետության 92 առաջնություններ, որոնց մասնակցել է 9600 մարզիկ: Աշխարհի, Եվրոպայի առաջնություններին, գավաթի խաղարկություններին և միջազգային մրցաշարերին նախապատրաստվելու նպատակով ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված մարզիկների համար կազմակերպվել են 130 ուսումնամարզական հավաքներ, որոնց մասնակցել է 2500 մարդ: ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված 1850 մարզիկ մասնակցել են աշխարհի, Եվրոպայի առաջնությունների 135 մրցաշարերի: Նախորդ տարվա համեմատ ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծախսերը նվազել են 1.6%-ով:

2012 թվականին շախմատիստների պատրաստման նպատակով 55.5 մլն դրամ է տրամադրվել «Հայաստանի շախմատային ակադեմիա» հիմնադրամին: Միջոցներն օգտագործվել են նախատեսված ողջ ծավալով և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել: Հիմնադրամի նպատակներն ու խնդիրներն են Հայաստանի ամբողջ տարածքում տաղանդաշատ երեխաների բացահայտումը, նրանց անվճար կրթումը, միջազգային մրցաշարերի և միջոցառումների կազմակերպման շնորհիվ շախմատի մասսայականացումը:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են նաև հետևյալ 10 ծրագրերը.

1. Միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնման նպատակով պետական աջակցությունը կազմել է 50 մլն դրամ և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել;

2. Ուսանողական մարզական միջոցառումներին տրամադրվել է 4.4 մլն դրամ: ՀՀ ԲՈԻՀ-երի 13-րդ հանրապետական ուսանողական մարզական խաղերի եզրափակիչ մրցումներին թվով 8 մարզաձևերից մասնակցել են հանրապետության 13 պետական, 5 լիցենզավորված ԲՈԻՀ-երի և Արցախի համալսարանի թվով 1217 մարզիկներ: Նշված ծրագիրը անցկացվում է 2 տարին մեկ անգամ;

3. Մանկապատանեկան սպորտի մասսայականացման միջոցառումների իրականացման նպատակով հատկացվել է 8 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են 3 փուլով դասընթացներ՝ մարզիչների և ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների համար: Ծրագրին մասնակցել են 209 մարզիկներ և հանրակրթական դպրոցների ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներ՝ ՀՀ տարբեր մարզերից: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել;

4. Նավամոդելային սպորտի զարգացման նպատակով տրամադրվել է 5.5 մլն դրամ: 2012 թվականին Բուլղարիայում կայացած նավամոդելային սպորտի Եվրոպայի առաջնությանը մասնակցած ՀՀ ազգային հավաքականի ներկայացուցիչները նվաճել են Եվրոպայի չեմպիոնի կոչումները՝ շահելով 2 ոսկե, 1 արծաթե և 1 բրոնզե մեդալներ, և սահմանել աշխարհի ռեկորդ: Տվյալ ծախսերը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել;

5. Հավաքական թիմերի ավագ մարզիչների վարձատրության և աշխարհի չեմպիոններին թոշակի հատկացման նպատակով «ՀՀ հավաքական թիմերի կենտրոն» ՓԲԸ-ին տրամադրվել է 25.8 մլն դրամ պետական աջակցություն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 25.8%-ով, ինչը պայմանավորված է թոշակ ստացող աշխարհի չեմպիոնների թվի աճով;

6. Հակադոպինգային համաշխարհային գործակալությանն անդամակցելու նպատակով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 2.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.9%-ով՝ պայմանավորված արտարժույթի փոխարժեքի աճով;

7. Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ նախագահի անվանական թոշակ հատկացնելու նպատակով տրամադրվել է 150 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 20.9%-ով՝ պայմանավորված անվանական թոշակ ստացողների թվի ավելացմամբ;

8. ՀՀ հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովման նպատակով տրամադրվել է 38 մլն դրամ:

9. 2012 թվականի Ինսբրուկի առաջին ձմեռային պատանեկան օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովման նպատակով տրամադրվել է շուրջ 33 մլն դրամ:

10. 2012 թվականի Լոնդոնի 30-րդ Օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովման նպատակով օգտագործվել է 90 մլն դրամ: Հուլիսի 27-ից օգոստոսի 11-ը Լոնդոնում կայացած 30-րդ ամառային օլիմպիական խաղերին 10 մարզաձևերից՝ աթլետիկա, ազատ, հունահռոմեական ըմբշամարտ, բռնցքամարտ թանքվոնդո, ծանրամարտ, սպորտային մարմնամարզություն, ձյուդո, հրաձգություն և լող, մասնակցել են 24 մարզիկ-մարզուհի՝ շահելով 1 արծաթե և 2 բրոնզե մեդալներ:

Նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացման նպատակով տրամադրվել է շուրջ 7 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.5%-ը: Խաղերն անցկացվել են 4 փուլով, մասնակցել են հանրակրթական դպրոցների աշակերտներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացման նպատակով օգտագործվել է 6.9 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել: Փառատոնն անցկացվել է ՀՀ 48 քաղաքային համայնքներում և ԼՂՀ-ի Ստեփանակերտ քաղաքում, որին մասնակցել է 20050 մարդ:

ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացման նպատակով տրամադրվել է 66 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 95.6%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններին պետական աջակցությունը կազմել է 8.2 մլն դրամ կամ նախատեսվածի 91.1%-ը: Շեղումը տնտեսումների արդյունք է, ինչի հետ կապված՝ նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են 8.9%-ով: Ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել 4 հասարակական կազմակերպությունների, իրականացված միջոցառումներին մասնակցել են 398 հաշմանդամ մարզիկներ:

Եվրախորհրդի սպորտի մասին համաձայնագրին անդամակցության նպատակով տրամադրվել է 3.4 մլն դրամ (96.9%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից 15.2 մլրդ դրամ տրամադրվել է *մշակութային ծառայությունների* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 101.8%-ը: 2011 թվականի համեմատ մշակութային ծառայությունների ծախսերն աճել են 43.3%-ով՝ հիմնականում պայմանավորված արվեստի, մասնավորապես՝ Ավստրիական «Վագներ Բիրո Ստեյջ Սիստեմ» ընկերության կողմից Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի և Ա.Խաչատրյանի անվան համերգասրահի դահլիճների տեխնիկական վերազինման և «Հայկական

տպագրության 500-ամյակ» և «Երևանը՝ 2012 թվականին գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառումների իրականացման ծախսերով:

Հաշվետու տարում շուրջ 1.2 մլրդ դրամ ուղղվել է գրադարանների դասի ֆինանսավորմանը, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով: Նախորդ տարվա համեմատ գրադարաններին պետական բյուջեից տրամադրված միջոցները կրճատվել են 19%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2011 թվականին տվյալ դասում ընդգրկված մշակութային օբյեկտների հիմնանորոգման համար տրամադրվել էր 275.8 մլն դրամ, իսկ հաշվետու տարում այդ նպատակով միջոցներ չեն հատկացվել:

1.1 մլրդ դրամ ուղղվել է 16 գրադարաններին պետական աջակցության տրամադրմանը: Հաշվետու տարում գրադարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել նրանց գործունեության պայմանների բարելավումն ու մշակութային ժառանգության պահպանության ապահովումը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործընթացների իրականացումը, գրադարանային հավաքածուների պետական հաշվառման աշխատանքները: Տեղեկատվության և ծառայությունների մատչելիության ապահովման ուղղությամբ նորացվել են գրադարաններից օգտվողներին տրամադրվող էլեկտրոնային-տեղեկատվական աղբյուրները: Հաշվետու տարում մշակութային ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով «Բիբլիոթեոս» շրջիկ գրադարան-ավտոմեքենան շրջել է ՀՀ Արմավիրի, Կոտայքի, Արագածոտնի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում՝ բնակչության գրադարանային տեղեկատվական սպասարկման ծառայություն իրականացնելու և գրադարանային հավաքածուները համալրելու նպատակով: «Արև» տեղեկատվական հաղորդակցման ծրագրի շրջանակներում կույր և թույլ տեսնող անձանց հնարավորություն տրվեց համակարգչի միջոցով տառերն ու թվերը «կարդալ» լսողական խորհրդանշանների միջոցով: Տեղեկատվական հաղորդակցման այս ծրագիրը 2012 թվականին ներդրվել է Տավուշի մարզային գրադարանում: «Հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացված ցանց» ծրագրի շրջանակներում մասնակից 12 գրադարանների կողմից համահավաք քարտարանների տվյալների շտեմարանում շարունակվել են մուտքագրվել մատենագիտական գրառումներ: Նախորդ տարվա համեմատ գրադարաններին պետական աջակցությունն ավելացել է 1.1%-ով կամ 12.5 մլն դրամով:

2012 թվականին հրատարակությունների գրանցման, հաշվառման և մատենագիտական ծառայությունների մատուցման համար պետական բյուջեից Հայաստանի ազգային գրապալատին տրամադրվել է 58.5 մլն դրամ: Ծրագրով նախատեսված հատկացումներն ուղղվել են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության մաս հանդիսացող՝ ՀՀ-ում ու արտերկրում լույս տեսած և լույս տեսնող հրատարակությունների անձեռնմխելի ֆոնդերի պահպանման, մատենագիտական տեղեկույթով ապահովման, գիտության զարգացման և հանրության կրթական

մակարդակի բարձրացման խնդիրների իրագործմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

2012 թվականին *թանգարանների և ցուցասրահների* դասի ծրագրերին պետական բյուջեից տրամադրվել է 1.7 մլրդ դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 12.6%-ով՝ պայմանավորված 2011 թվականին տվյալ դասում ընդգրկված մշակութային օբյեկտների հիմնանորոգման նպատակով ՀՀ պետական բյուջեից միջոցների տրամադրմամբ, որոնք 2012 թվականին չեն հատկացվել:

Թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների ծրագրի իրականացմանը պետական բյուջեից տրամադրվել է 1.5 մլրդ դրամ: Թանգարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների պահպանությունը, հանրահոգակումը, բացառիկ ցուցանմուշների կրկնատիպերի պատրաստումը, թանգարանային առարկաների կոնսերվացումը և վերականգնումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.2%-ով կամ 32.3 մլն դրամով:

Թանգարաններին և ցուցասրահներին աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին տրամադրվել են 193.7 մլն դրամ սուբվենցիաներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեից 676.8 մլն դրամ է տրամադրվել *մշակույթի տների, ակումբների և կենտրոնների* ֆինանսավորմանը, որն իրականացվել է 99.9%-ով: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 14.4%-ով՝ հիմնականում պայմանավորված տվյալ դասում ընդգրկված մշակութային օբյեկտների շինարարության ծախսերի աճով:

Մասնավորապես՝ 401.6 մլն դրամ (99.8%) են կազմել մշակութային օբյեկտների հիմնանորոգման, 240.8 մլն դրամ (100%)՝ շինարարության ծախսերը: Նշված ծրագրերի շրջանակներում հանրապետության մարզերում հիմնանորոգվել և կառուցվել է 2-ական մշակութային օբյեկտ:

Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպման ծախսերը կազմել են 34.5 մլն դրամ, որոնք իրականացվել են նախատեսված ողջ ծավալով և ապահովել նախորդ տարվա մակարդակը: Ծրագիրն իրականացվել է Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոնի, Կոտայքի մարզային մշակութային կենտրոնի, Կապանի մշակույթի կենտրոնի և Եղեգնաձորի մշակույթի տան գործունեության խթանման, մշակութային միջոցառումների և ժամանցի կազմակերպման, մշակույթի զարգացման, հասարակության հոգևոր պահանջների բավարարման, համայնքի բնակչությանը մշակութային կյանքին հաղորդակից դարձնելու նպատակով:

Այլ մշակութային կազմակերպությունների դասին ՀՀ 2012 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 637 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 100%-ը: 2011 թվականի համեմատ նշված

ծախսերը նվազել են 8.9%-ով՝ պայմանավորված տվյալ դասում ընդգրկված 3 ծրագրերի կրճատմամբ:

377.8 մլն դրամ տրամադրվել է Հայաստանի Ազգային արխիվի սուբսիդավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

«Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին 2012 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 32.7 մլն դրամ աջակցություն: Ծրագրի նպատակը մշակութային արժեքների փորձագիտական ուսումնասիրության, մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների մշակութաբանական ու արվեստաբանական փորձաքննության իրականացումն է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

2012 թվականին տվյալ դասում ՀՀ համայնքային բյուջեներին սուբսիդիաների տրամադրման շրջանակներում ՀՀ պետական բյուջեով նախատեսված 194.6 մլն դրամն ամբողջությամբ ուղղվել է Երևանի կենդանաբանական այգու սուբսիդավորմանը, որը նախորդ տարվա համեմատ չի փոփոխվել:

Հայրենիք-սփյուռք գործակցության ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 31.8 մլն դրամ: Այս ծախսերի գծով ևս պահպանվել է նախորդ տարվա մակարդակը:

Արվեստի բնագավառի ծրագրերի ֆինանսավորմանը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 10 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 102.7% կատարողական: 2011 թվականի համեմատ արվեստի բնագավառում պետական բյուջեի ծախսերն արձանագրել են կրկնակի աճ, ինչը հիմնականում պայմանավորված է 2012 թվականին Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի և Ա.Խաչատրյանի անվան համերգասրահի դահլիճների տեխնիկական վերազինման նպատակով Ավստրիական «Վագներ Բիրո Ստեյջ Սիստեմ» ընկերության կողմից միջոցների հատկացմամբ, Հայկական տպագրության 500-ամյակի շրջանակներում գրադարանների տեխնիկական վերազինմանն ու արդիականացմանը կատարված հատկացումներով. ինչպես նաև «Հայկական տպագրության 500-ամյակ» և «Երևանը՝ 2012 թվականին գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառումների իրականացմանը տրամադրված գումարի ավելացմամբ:

Հաշվետու տարում Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնին տրամադրվել է 681.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական և 1.2%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Ամբողջությամբ տրամադրվել է նաև Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնին նախատեսված սուբսիդիան՝ կազմելով 261.6 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 3%-ով:

Մշակութային միջոցառումների իրականացմանը տրամադրվել է 1.2 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 98.9%-ը: Ժամանակակից արվեստի զարգացման գործում 2012 թվականին առաջնահերթություն է համարվել երիտասարդ ստեղծագործական ներուժի ներգրավումը, նոր մրցունակ մշակութային արտադրանքի ստեղծումը, հայ ժամանակակից ստեղծագործություններով խաղացանկերի և երկացանկերի համալրումը, սփյուռքահայ արվեստագետների ներգրավումը Հայաստանի մշակութային դաշտ: Առանձնակի կարևորվել է դեբյուտային գործընթացներին պետական աջակցության ապահովումը՝ արվեստի տարբեր ոլորտներում երիտասարդ ստեղծագործական ներուժի հայտնաբերման, խթանման, մշակութային կյանքում նրանց ներգրավման և ժամանակակից մտածողության խրախուսման, ինչպես նաև սերնդափոխության շարունակականության ապահովման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.4%-ով՝ հիմնականում պայմանավորված «Իմ Հայաստան» փառատոնի անցակմամբ, որը տեղի է ունենում 2 տարին մեկ անգամ:

Օտարերկրյա պետություններում հայալեզու թատերական ներկայացումներին աջակցության շրջանակներում Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան թատրոնին հատկացվել է 20 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է և պահպանվել է նախորդ տարվա մակարդակին:

«Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարների համար օգտագործվել է 38 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 84.3%-ը: Տնտեսումը պայմանավորված է պատվովճար ստացողների փաստացի թվաքանակով (արվեստագետների մի խումբ դեռևս չի իրացրել պատվովճար ստանալու իր իրավունքը), ինչպես նաև պատվովճարը մի քանի ամիսը մեկ անգամ ստանալու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 2.8%-ով՝ պայմանավորված նոր նշանակումներով: Պատվովճարի վճարման ծառայությունների համար հատկացված միջոցները նույնպես տնտեսվել են՝ նախատեսված 451.2 հազար դրամի փոխարեն օգտագործվել է 252.4 հազար դրամ:

Ավստրիական «Վագներ Բիրո Ստեյջ Սիստեմս» ընկերության կողմից Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի և Ա.Խաչատրյանի անվան համերգասրահի դահլիճների տեխնիկական վերազինման նպատակով հատկացվել է 4.1 մլրդ դրամ կազմելով ծրագրվածի 107.7%-ը: Ծրագրի շրջանակներում սկսվել են Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի դահլիճի լուսաձայնային սարքավորումների ու բեմական մեխանիզմների վերազինման աշխատանքները:

Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման ծրագրի շրջանակներում 236 մլն դրամ է հատկացվել թատերական ներկայացումների սուբսիդավորմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Թատերական ներկայացումների ծախսերը կազմել են 1 մլրդ դրամ, որոնք օգտագործվել են նախատեսված ողջ ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Ծրագիրն ուղղվել է թատերարվեստի զարգացմանն ու տարածմանը, թատերարվեստին հաղորդակցմանը, թատերարվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը:

2012 թվականին երաժշտարվեստի և պարարվեստի համերգների ծրագրի շրջանակներում նախատեսված 988.2 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրն ուղղվել է երաժշտարվեստի և պարարվեստի պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը, երաժշտադրամատիկական, երաժշտական կատարողական, երգի-պարի արվեստին հաղորդակցմանը, երաժշտարվեստի ու պարարվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1%-ով:

Հայ մշակույթի միջազգային կենտրոններին նախատեսված 26 մլն դրամ աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.8%-ով՝ պայմանավորված արտարժույթի փոխարժեքի աճով:

Տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացմանը տրամադրվել է 18 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 97%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Ծրագրի նպատակն է տարածքային համագործակցության և մշակութային միջոցառումների իրականացումը, որոնց արդյունքում լուծվում են մի շարք հայապահպանական խնդիրներ: Մասնավորապես՝ իրականացվում են համայնքների հետ համագործակցության ծրագրեր և միջոցառումներ:

«Հայկական տպագրության 500-ամյակ» և «Երևանը՝ 2012 թվականին գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառումների իրականացման նպատակով հատկացվել է 1 մլրդ դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները:

- Հայ գրավոր ժառանգությունը հայկական գրատպության կենտրոններում, աշխարհի թանգարաններում և գրադարաններում ներկայացվել է 11 ցուցահանդեսով (Իտալիա, Հոլանդիա, Գերմանիա (Հալլե, Մայնց, Բեռլին), Դանիա, ԱՄՆ, ՌԴ, Բուլղարիա, Ռումինիա, Մեծ Բրիտանիա),

- «Երևանը՝ 2012թ. գրքի համաշխարհային մայրաքաղաք» ծրագրի բացման միջոցառումների շրջանակներում կազմակերպվել են «Գրի հավերժություն», «ArmBookExpo» և «Վերնատուն» ցուցահանդեսները, գրքի համաշխարհային մայրաքաղաքի տիտղոսի փոխանցումը Բուենոս Այրեսից Երևանին, գրքերի շնորհանդեսներ, տոնահանդեսներ մայրաքաղաքում,

- Գրքի միջազգային տոնավաճառներում և գրական փառատոններում ապահովվել է Հայաստանի մասնակցությունը գրքի 9 միջազգային տոնավաճառներին (Մինսկ, Փարիզ, Բոլոնիա, Սանկտ Պետերբուրգ, Թեհրան, Վարշավա, Սալոնիկ, Մոսկվա, Աշխաբադ),

- Մի շարք ծրագրեր և միջոցառումներ Հայաստանում:

Հայկական տպագրության 500-ամյակի շրջանակներում գրադարանների տեխնիկական վերազինման և արդիականացման ծրագրի ծախսերը կազմել են 411.2 մլն դրամ կամ նախատեսվածի 99.5%-ը: Հատկացումների հաշվին իրականացվել են «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի հնաոճ կահույքի վերականգնման աշխատանքները, գրադարանների կահույքի ձեռքբերումը, համակարգչային տեխնիկայի, պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի, էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի, կենցաղային սարքավորումների ձեռքբերումը:

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեից *կինեմատոգրաֆիայի* բնագավառին տրամադրվել է 643.4 մլն դրամ, որը կազմել է նախատեսված ծախսերի 100%-ը և 2.2%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

Կինոնկարների արտադրությանը տրամադրվել է 452 մլն դրամ: Կինոարվեստի բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության ռազմավարությունը պայմանավորված է կինոարվեստի՝ որպես տեսալսողական հաղորդակցության տեսակի պահպանման, տարածման և զարգացման, կինոարտադրությունն ապահովող տեխնոլոգիայի մշտական կատարելագործման, միջազգային կինոփառատոններին և կինոշուկաներին Հայաստանի Հանրապետության մասնակցության ապահովմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Ազգային կինոծրագրերի իրականացման համար հատկացումներն ուղղվել են Հայաստանի ազգային կինոկենտրոնի գործունեության ապահովմանը: 2012 թվականին այդ ուղղությամբ բյուջետային ծախսերը կազմել են 134.7 մլն դրամ՝ 2.3%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Հաշվետու տարում 7.2 մլն դրամ է տրամադրվել կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման ծառայություններին: Ծրագրի շրջանակներում 2012 թվականին վերականգնվել է 2 ֆիլմ, իրականացվել է 5 ֆիլմի թվայնացում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

49.5 մլն դրամի չափով ֆինանսավորվել են փաստավավերագրական կինոծրագրերը: Հատկացված միջոցների հաշվին ապահովվել է «Փաստավավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիա» ՊՈԱԿ-ի գործունեությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 35.4%-ով՝ պայմանավորված «Հայկ» կինոստուդիայում ջեռուցման համակարգի ներդրմամբ:

Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման ու պահպանման դասին ՀՀ 2012 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 353.8 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 2.9%-ով:

Մասնավորապես՝ 4 մլն դրամ պետական աջակցություն է տրամադրվել Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանման նպատակով՝ կազմելով նախատեսված հատկացումների 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրվել է 67.9 մլն դրամ, որը կազմում է նախատեսված ծախսերի 100%-ը: Ծրագրի նպատակներն են պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրումը, վավերագրումը, պահպանական փաստաթղթերի փաթեթի ստեղծումը և դրանց շնորհիվ հուշարձանների պահպանության ապահովումն ու հետագա սերունդներին փոխանցումը: Հաշվետու տարվա ընթացքում կանխատեսվել և իրականացվել են 400 հուշարձանների պահպանական գոտիների նախագծում և թողարկում: Կանխատեսվել և իրականացվել են 2000 հուշարձանների հաշվառում և ցուցակագրում: Կանխատեսվել և իրականացվել են 250 հուշարձանի հաշվառում և վկայագրում: Կանխատեսվել և իրականացվել է հայկական պատմամշակութային ժառանգության գիտատեղեկատու շտեմարանի 390 վավերագրերի կազմում և թվայնացում: Պատմամշակութային ժառանգության վերաբերյալ հանրությանն իրազեկելու նպատակով հրատարակության է պատրաստվել «Հուշարձան» տարեգրքի 9-րդ հատորը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Հուշարձանների վերանորոգման և վերականգնման աշխատանքների իրականացմանը տրամադրվել է 213.5 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.7%-ը: Հուշարձանների պահպանության բնագավառում իրականացվող գործընթացները նպատակաուղղված են եղել պատմամշակութային հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, վերականգնման և օգտագործման գործում առկա հիմնախնդիրների բացահայտմանն ու դրանց լուծմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5%-ով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 16 հուշարձանի վերականգնման, 5 հուշարձանի պեղման և 6 հուշարձանի վերականգնման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ:

Հուշարձանների տեխնիկական վիճակի մոնիթորինգի նպատակով տրամադրվել է 8.3 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը փոփոխության չեն ենթարկվել: Հաշվետու տարում իրականացվել է 25 հուշարձանի տեխնիկական վիճակի մոնիթորինգ:

Հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը տրամադրվել է 60 մլն դրամ աջակցություն՝ կազմելով նախատեսվածի 100%-ը և պահպանվելով նախորդ տարվա

մակարդակին: ՀՀ մշակույթի նախարարության պատվերով ծրագիրն իրականացվել է «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» ՀԿ-ի կողմից, որը հաշվետու տարվա ընթացքում իրականացրել է 480 պատմամշակութային հուշարձանի վավերագրում:

2012 թվականին *ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրապարակչական ծառայությունների* ծախսերը կազմել են շուրջ 5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ խմբի ծախսերն ավելացել են 4%-ով կամ 190.9 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված հանրային իրազեկման ապահովման հատկացումների աճով:

Հաշվետու տարում *հեռուստառադիոհաղորդումների* դասի գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 3.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Հատկացումների գերակշիռ մասը՝ շուրջ 2.3 մլրդ դրամ (100%), հեռուստատեսային ծառայությունների ծրագրի շրջանակներում հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով տրամադրվել է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին՝ որպես դրամաշնորհ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.6%-ով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայությունների ծախսերն առանձնացվել են տվյալ ծրագրից և նախատեսվել առանձին ծրագրով: Այդ նպատակով 2012 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 150 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը:

Այս ոլորտի պետական կառավարման մարմինների՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի պահպանմանը տրամադրվել է 307 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 97.5%-ը և 5%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Հաշվետու տարում ռադիոծառայությունների շրջանակներում 632.7 մլն դրամ (100%) դրամաշնորհներ են տրամադրվել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին՝ ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով, որը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել:

Ռադիոհեռուստատեսային հաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով 24.6 մլն դրամ է տրամադրվել «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ին, որը կազմել է նախատեսվածի 100%-ը և մնացել նախորդ տարվա մակարդակին:

ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակման ծրագիրը նախատեսված է հեռուստառադիոհաղորդումների միջոցով ԱՊՀ երկրներում տեղեկույթ տարածելու և ստանալու համար: Այս ծրագիրը հնարավորություն է տալիս ԱՊՀ երկրներում ծանոթանալ Հայաստանի մշակութային, քաղաքական և տնտեսական կյանքին: Նշված ծրագրի գծով հաշվետու տարվա

պետական բյուջեի ծախսերը կազմել են 99.1 մլն դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է և նախորդ տարվա համեմատ աճել է 10%-ով:

Հասարակական կարծիքի ուսումնասիրման նպատակով «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ին հատկացվել է 8 մլն դրամի պետական աջակցություն (100%), որը պահպանվել է նախորդ տարվա մակարդակին:

2012 թվականի պետական բյուջեից 81.5 մլն դրամ պետական աջակցություն է հատկացվել «Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ին, որը կատարվել է 100%-ով և նախորդ տարվա համեմատ աճել է 10%-ով՝ պայմանավորված աշխատանքների ծավալի աճով:

Հաշվետու տարվա պետական բյուջեից 40.2 մլն դրամ տրամադրվել է գնումների հրապարակայնության ապահովմանը, որը կազմել է նախատեսվածի 97.2%-ը և 48.7%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրով նախատեսված միջոցների հաշվին իրականացվել է գնումների թեժ գիծ-աջակցման ծառայություն և պետության կարիքների համար կազմակերպված մրցույթների հայտարարությունների վերաբերյալ գովազդային հայտարարությունների պատրաստման և հեռուստատեսությամբ ու ռադիոյով հեռարձակման աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ ծախսերի նվազումը պայմանավորված է 2012թ. ընթացքում գնումների հայտարարությունները հեռուստատեսությամբ և ռադիոյով գովազդելու ծառայությունների գնման մոտեցումների փոփոխմամբ, մասնավորապես՝ ռադիոյով և հեռուստատեսությամբ հայտարարությունները հեռարձակվում են ոչ թե ըստ առանձին գնումների ընթացակարգերի, այլ տրվում է գնումներին առնչվող ընդհանուր տեղեկատվություն: Նշված մոտեցման արդյունքում առաջացել է 44.5 մլն դրամի տնտեսում, որն ուղղվել է էլեկտրոնային գնումների համակարգի սպասարկման աշխատանքներ ձեռք բերելու նպատակով «ՀՀ գանձապետական համակարգի վճարահաշվարկային սպասարկման ծախսեր» ծրագրին:

Հայաստան-Սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստման, հեռարձակման, ձեռքբերման և բազմացման նպատակով հաշվետու տարվա պետական բյուջեից տրամադրվել է 34.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը, որը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել: Ծրագրի շրջանակներում պատրաստվել են հայապահպանություն քարոզող ֆիլմաշարեր և տեսահոլովակներ սփյուռքի համայնքներին տրամադրելու և հեռարձակելու նպատակով: 2012 թվականին պատրաստվել է 84 հաղորդում և տեսահոլովակ՝ նախորդ տարվա 54-ի փոխարեն:

2012 թվականին 927.6 մլն դրամ են կազմել *հրապարակչությունների և խմբագրությունների* դասի ծախսերը՝ 99.8%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ հրատարակչությունների և խմբագրությունների ծախսերը նվազել են 4.2%-ով՝ հիմնականում

պայմանավորված հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայությունների ծախսերի կրճատմամբ:

Պետական մամուլի հրատարակմանը տրամադրվել է 68.9 մլն դրամ (100%), որը հատկացվել է «Հանրապետություն» ՓԲԸ-ին՝ «Հայաստանի Հանրապետություն» թերթի հրատարակման համար և «Հայաստանի Հանրապետություն-Ռեսպուբլիկա Արմենիա» ՓԲԸ-ին՝ «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթի հրատարակման համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Գրականության հրատարակմանը տրամադրվել է 92.4 մլն դրամ (100%): Ծրագրի շրջանակներում 2012 թվականին հրատարակվել է 56 անուն գիրք՝ նախորդ տարվա 59-ի դիմաց: Տվյալ ծախսերը 7.9%-ով զիջել են նախորդ տարվա ցուցանիշը:

Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակմանը տրամադրվել է 61.6 մլն դրամ (100%), որը պահպանվել է նախորդ տարվա մակարդակին:

Տնտեսագիտական հրապարակումների շրջանակներում «Էկոնոմիկա» հանդես ՓԲԸ-ին տրամադրվել է 38.6 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Ոչ պետական մամուլի հրատարակմանը տրամադրվել է 47.8 մլն դրամ (100%): Ծրագրի շրջանակներում պետական հոգածություն է ցուցաբերվում ոչ պետական մամուլին, ինչի միջոցով բնակչությանը հնարավորություն է ընձեռվում տեղեկույթ ստանալու տեղերից: Պետական աջակցություն է ցուցաբերվում նաև ազգային փոքրամասնությունների լեզվով լույս տեսնող գրական և մշակութային մամուլին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3%-ով: 2012 թվականին հրատարակվել է 69 անուն թերթ և ամսագիր՝ նախորդ տարվա 66-ի համեմատ:

Մանկական, մանկապատանեկան թերթերի և ամսագրերի հրատարակմանը տրամադրվել է 39.7 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական և պահպանվելով նախորդ տարվա մակարդակին:

Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 339 մլն դրամ կամ ծրագրվածի 99.8%-ը: Միջոցները տրամադրվել են ՀՀ արդարադատության և արտաքին գործերի նախարարություններին: Ծրագրի շրջանակներում իրականացվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր», «Երևանի իրավական ակտերի տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» (ռուսերեն) և «Քաղաքային ու գյուղական համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածու» պարբերականների հրատարակման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման, «Առլիս» տեղեկատվական համակարգի

պահպանման և շահագործման աշխատանքները, ինչպես նաև ՀՀ մուտքի վիզայի բլանկների ու միջազգային պայմանագրերի տպագրությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 14.3%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ մուտքի վիզայի բլանկի 260000 հատ խմբաքանակի տպագրության համար գումարը հատկացվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից:

Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին աջակցության շրջանակներում 10 մլն դրամ է հատկացվել «Վրաստան» թերթի հրատարակմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Թարգմանչական ծառայությունների համար նախատեսված 120 մլն դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է և նախորդ տարվա համեմատ չի փոփոխվել: 2012 թվականին թարգմանվել է 10058 էջ:

Մասնավորեցվող պետական գույքի վերաբերյալ տեղեկությունների հրապարակմանը տրամադրվել է 716.4 հազ. դրամ: Տվյալ ծախսերը կատարվել են 71.6%-ով և 41.8%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ գույքի օտարման դեպքում մրցույթի անցկացման մասին ծանուցման հրապարակումն իրականացվել է ՀՀ կառավարությանն առնթեր պետական գույքի կառավարման վարչության կայքում:

Գրականության հրատարակմանը տրամադրվել է 39.4 մլն դրամ աջակցություն (98.6%): Հատկացումների հաշվին հրատարակվել է 56 անուն գիրք՝ նախորդ տարվա 44-ի փոխարեն, և իրականացվել են 8 լազերային սկավառակի պատրաստման աշխատանքներ՝ նախորդ տարվա 9-ի փոխարեն: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 22.8%-ով:

Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայությունների ծախսերը կազմել են 30 մլն դրամ (98.9%): Միջոցները հատկացվել են «Հայերն այսօր» էլեկտրոնային բազմալեզու օրաթերթի հրատարակման, էլեկտրոնային գրադարանի ստեղծման ու արևելահայերենից արևմտահայերեն և հակառակը փոխարկիչը համալրելու և սպասարկելու աշխատանքներին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Ուսումնական և հանրամատչելի գրականության հավաքագրման և սփյուռքի համայնքներին առաքման նպատակով հատկացվել է 8 մլն դրամ (100%):

«Հայկական սփյուռք» տարեգրքի հրատարակման նպատակով օգտագործվել է 6.8 մլն դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Գրական ժառանգության պահպանման և տարածման համար նախատեսված 24.7 մլն դրամի միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են: Նշված 2 ծրագրերը 2012 թվականին իրականացվել են առաջին անգամ:

Հաշվետու տարում *տեղեկատվության ձեռքբերման* գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 364.6 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: Նախորդ տարվա

համեմատ տվյալ ծախսերն աճել են 2.4 անգամ, պայմանավորված հանրային իրազեկման ապահովման ծախսերի աճով:

Տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայությունները մատուցվել «Արմենպրես» ՓԲԸ-ի կողմից, որը տեղեկույթ է տրամադրել հանրապետության ԶԼՄ-ներին և արտերկրում գտնվող ՀՀ դեսպանատներին: Այս նպատակով հատկացվել է 73.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Հանրային իրազեկման ապահովմանը տրամադրվել է 290.7 մլն դրամ, որոնք 2011 թվականի համեմատ աճել են 3.8 անգամ կամ 215 մլն դրամով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ «Քաղաքական հետազոտություններ» ծրագիրը, որը նախկինում ներառված էր «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» դասում, 2012 թվականին ընդգրկվել է սույն ծրագրում:

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեից 720.4 մլն դրամ է տրամադրվել *կրոնական և հասարակական այլ ծառայությունների* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը, որոնք կատարվել են 96.7%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 79.2%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է 2012 թվականի պետական բյուջեից «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորման համար 188.4 մլն դրամի չափով միջոցների հատկացմամբ, ինչպես նաև երիտասարդական ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

540.8 մլն դրամ է տրամադրվել *երիտասարդական ծրագրերի* դասին, որոնք կատարվել են 95.7%-ով:

Տվյալ դասի ծախսերից՝ 255.1 մլն դրամ, կազմել են «Երիտասարդական ծրագրեր»-ի ծախսերը, որոնք կատարվել են 99.7%-ով և կրկնակի գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ 2011 թվականին ծրագրերի մեծ մասը չի իրականացվել՝ կապված երիտասարդական ծրագրերն իրականացնող նոր ԾԻԳ-ի ուշ ստեղծման հետ:

Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներին տրամադրվել է 8 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 5.7%-ով:

«Արի տուն» ծրագրի շրջանակներում Սփյուռքի երիտասարդության՝ Հայաստան այցելությունների կազմակերպման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 77.3 մլն դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական: Ծրագիրն իրենից ներկայացնում է 13-20 տարեկան սփյուռքահայ երիտասարդների 14-օրյա ճանաչողական շրջայցեր հայրենիքում: Երիտասարդները 10 օր բնակվում են հայ ընտանիքներում, 4 օր՝ ճամբարում: Նախորդ տարվա համեմատ նշված

ծախսերն աճել են 3.1%-ով՝ պայմանավորված Սիրիայում ռազմական գործողությունների հետևանքով 112 լրացուցիչ մասնակցի հյուրընկալմամբ: 2011 թվականի 800 մասնակցի դիմաց 2012 թվականին ծրագրին մասնակցել են 912 երիտասարդ:

Հայաստանում ինտելեկտուալ խաղերի զարգացմանը տրամադրվել է 12 մլն դրամ աջակցություն՝ ապահովելով 100% կատարողական: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

«Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ» դասի ծախսերը 2012 թվականին կազմել են 179.5 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Այլ դասերին չպատկանող հանգստի, մշակույթի և կրոնի դասի շրջանակներում տրամադրվել է 514.7 մլն դրամ աջակցություն՝ ապահովելով 98% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15.5%-ով՝ պայմանավորված ՀՀ մշակույթի և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների համակարգում «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկների ստեղծմամբ: Վերջիններիս պահպանման նպատակով տրամադրվել է 77 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 95.2%-ը:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) նպատակով տրամադրվել է 437.7 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 98.5%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ մշակույթի ու ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների աշխատակազմերի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը էական փոփոխության չեն ենթարկվել:

Կրթություն

2012 թվականի *կրթության* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 102.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 98.7% կատարողական: Ծրագրից շեղումը հիմնականում առաջացել է կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերում: 2011 թվականի համեմատ կրթության բնագավառի ծախսերը նվազել են 3.1%-ով կամ 3.3 մլրդ դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների և տարրական ընդհանուր կրթության ծախսերի նվազմամբ:

Հաշվետու տարում կրթության ծախսերից շուրջ 22.2 մլրդ դրամն ուղղվել է նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթության, 49.0 մլրդ դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծրագրերին՝ գրեթե ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը: Նշված ծախսերի

տեսակարար կշիռը կրթության ընդհանուր ծախսերում կազմել է համապատասխանաբար 21.6% և 47.7%:

2012 թվականի պետական բյուջեից նախադպրոցական կրթությանը հատկացվել է 151.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 99.1% կատարում և 71.5%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագիրը մեկնարկել է 2011 թվականից՝ ՀՀ Լոռու, Արարատի և Արագածոտնի մարզերում, և ուղղված է մանկապարտեզ չունեցող համայնքների ավագ տարիքի երեխաների կրթության կազմակերպմանը: 2012 թվականին այն կիրառվել է նաև Արմավիրի, Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի և Վայոծ Ձորի մարզերում:

Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում հանրակրթական ուսուցման ծախսերը կատարվել են 100%-ով՝ կազմելով շուրջ 65.2 մլրդ դրամ, որից 20.4 մլրդ դրամը կազմել են տարրական, 27.8 մլրդ դրամը՝ հիմնական ընդհանուր կրթության, 17.0 մլրդ դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերը: Նախորդ տարվա համեմատ հանրակրթական ուսուցման ծախսերն աճել են 1.1%-ով: Հանրակրթության համակարգում 2012 թվականին գործել է 1366 դպրոց 362.4 հազար աշակերտով (2011թ.՝ 1368 դպրոց և 365.5 հազար աշակերտ):

Երաժշտական դպրոցներում ուսուցմանը տրամադրվել է 269.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.3%-ով կամ 15.9 մլն դրամով, որն ուղղվել է 12-ամյա կրթության համակարգի ներդրման հետ կապված՝ մանկավարժների լրացուցիչ աշխատավարձի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների ապահովմանը: Շուրջ 7.9 մլն դրամ (100%) է կազմել երաժշտական դպրոցներում սովորողների կրթաթոշակը: Հատկացումների հաշվին ապահովվել է Երևանի Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական դպրոցի գործունեությունը: Նշված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

2012 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում հատուկ կրթության ծախսերը կատարվել են 99.6%-ով՝ կազմելով 2.7 մլրդ դրամ, որից 909.6 մլն դրամը՝ տարրական, 1.3 մլրդ դրամը՝ հիմնական, 447.8 մլն դրամը՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության գծով: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 4.2%-ով կամ 110.1 մլն դրամով: Հաշվետու տարում հատկացված միջոցներով գործել է 23 դպրոց 2479.3 աշակերտով՝ նախորդ տարվա 2504.7-ի դիմաց:

Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում մասնագիտացված հանրակրթական ուսուցման կազմակերպման համար ծախսվել է ավելի քան 1.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99%-ը: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 5.4%-ով, ինչը պայմանավորված է աշակերտների թվի ավելացմամբ: 2012

թվականին 13.4 մլն դրամ է տրամադրվել մասնագիտացված հանրակրթական հաստատությունների սաների կրթաթոշակների վճարմանը, որը նախատեսված ծավալով կատարվել է և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել:

2012 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում ներառական կրթության ծախսերը կատարվել են 99.4%-ով՝ կազմելով շուրջ 995.3 մլն դրամ, որից 486.3 մլն դրամը՝ տարրական, 455.7 մլն դրամը՝ հիմնական ընդհանուր կրթության և 53.3 մլն դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերն են: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 33.6%-ով՝ հիմնականում պայմանավորված աշակերտների թվաքանակի աճով:

Հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում ընդգրկված՝ երեկոյան ուսուցման ծրագրերի շրջանակներում ֆինանսավորվել են ՀՀ Շիրակի մարզի և Երևան քաղաքի երեկոյան դպրոցները, որոնց տրամադրվել է 43.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ նվազելով 1.8%-ով:

2012 թվականին նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության դասի ծախսերը կազմել են շուրջ 5.4 մլրդ դրամ կամ նախատեսված հատկացումների 99%-ը, որից 2.0 մլրդ դրամը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական), 3.3 մլրդ դրամը՝ միջին մասնագիտական կրթության ծախսերն են: Նշված դասերի գծով ծրագրված ցուցանիշները կատարվել են համապատասխանաբար 98.9%-ով և 99.1%-ով:

Հաշվետու տարում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 1.7 մլրդ դրամ ծախսեր՝ ապահովելով 99.3% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 23.6%-ով, ինչը պայմանավորված է աշակերտների թվաքանակի ավելացմամբ: Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական հաստատություններում սովորող ուսանողներին տրամադրվել է 335.9 մլն դրամ կրթաթոշակ՝ 96.9%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 28.8%-ով՝ պայմանավորված կրթաթոշակ ստացող սովորողների թվի աճով:

2012 թվականին միջին մասնագիտական կրթության ոլորտում 3.0 մլրդ դրամ է տրամադրվել միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների, ավելի քան 317.8 մլն դրամ՝ միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակների վճարմանը: Նշված ծրագրերը կատարվել են համապատասխանաբար 99.2%-ով և 98.6%-ով: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են համապատասխանաբար 4.8%-ով և 10.9%-ով՝ հիմնականում պայմանավորված աշակերտների թվաքանակի աճով:

2012 թվականին ՀՀ պետական բյուջեից ավելի քան 7.6 մլրդ դրամ տրամադրվել է բարձրագույն կրթության բնագավառին, որից 7 մլրդ դրամը բարձրագույն մասնագիտական կրթության ծախսերն են, 652 մլն դրամը՝ հետբուհական մասնագիտական կրթության ծախսերը: Բարձրագույն կրթության ծախսերի տարեկան ծրագիրն ապահովվել է 98.8%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.4%-ով կամ 169.1 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ուսանողների միջին տարեկան թվի նվազմամբ:

Բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երեք ծրագրեր, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման համար կատարված հատկացումները: Նշված ծախսերը ֆինանսավորվել են 100%-ով՝ կազմելով ավելի քան 4.8 մլրդ դրամ: Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակներին տրամադրվել է 1.0 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 96.5%-ը: 1.1 մլրդ դրամ են կազմել բարձրագույն կրթության ծրագրի ծախսերը, որոնք կատարվել են 95.9%-ով:

Հաշվետու տարում հետբուհական մասնագիտական կրթության բնագավառի ծախսերը կատարվել են 87.5%-ով՝ կազմելով շուրջ 652 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ հետբուհական մասնագիտական կրթության ծախսերն աճել են 9.8%-ով, ինչը պայմանավորված է հետբուհական մասնագիտական կրթության գծով տրամադրված նպաստների և կրթաթոշակների ծախսերի աճով: Հետբուհական մասնագիտական կրթության ոլորտին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 5 ծրագրեր:

Մասնավորապես՝ 17.5 մլն դրամ տրամադրվել է գիտական կադրերի պատրաստման գծով նպաստներին, որը կատարվել է 60.4%-ով՝ միևնույն ժամանակ 19.9%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է ասպիրանտների թվաքանակի նվազմամբ՝ կապված օտար լեզվի ընդունելության քննությունը չհաղթահարելու հետ:

Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակների համար 2012 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 37.7 մլն դրամ, որը կատարվել է 75.5%-ով: Շեղումը պայմանավորված է ասպիրանտների և դոկտորանտների թվաքանակի նվազմամբ, որի հետ կապված նշված ծախսերը նվազել են նաև նախորդ տարվա համեմատ՝ 16.6%-ով:

Սկիզբադրժանության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով տրամադրվել են 3.6 մլն դրամ նպաստներ, որոնք ֆինանսավորվել են նախատեսված ծավալով: Ծրագրի շրջանակներում 12 ուսանողների հատկացվել են ուսման վճարներ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը փոփոխություն չեն կրել:

Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման և հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակի ծախսերը

համապատասխանաբար կազմել են 393.6 մլն և 199.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 85.7%-ով և 98.2%-ով: Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման ծրագրի կատարողականը պայմանավորված է վերապատրաստվող բժիշկների և բուժքույրերի հանրակացարանային ծախսերի համար նախատեսված միջոցների տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են համապատասխանաբար 18.3%-ով և 4.8%-ով՝ պայմանավորված ասպիրանտների և դոկտորանտների թվաքանակի ավելացմամբ:

Հաշվետու տարում ըստ մակարդակների չդասակարգվող կրթության խմբի ծախսերը կազմել են ավելի քան 3.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը, որից 2.5 մլրդ դրամը արտադպրոցական դաստիարակության, 1.0 մլրդ դրամը՝ լրացուցիչ կրթության ծախսերն են: 2011 թվականի համեմատ ըստ մակարդակների չդասակարգվող կրթության ծախսերը նվազել են 1.1%-ով կամ 38.4 մլն դրամով՝ պայմանավորված լրացուցիչ կրթության ծախսերի նվազմամբ: Ընդ որում՝ 0.9%-ով կամ 22.1 մլն դրամով ավելացել են արտադպրոցական դաստիարակության ծախսերը՝ հիմնականում պայմանավորված արտադպրոցական դաստիարակության համար հասարակական կազմակերպություններին տրամադրված միջոցների աճով, ինչպես նաև իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացմանն աջակցության հատկացմամբ, որը 2012 թվականին նախատեսվել է առաջին անգամ:

Արտադպրոցական դաստիարակությանը 2012 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 10 մլն դրամ աջակցություն՝ ամբողջությամբ ապահովելով նախատեսված ծավալը: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել թվով 800 օրինակ ուսուցողական ֆիլմաշար: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 13.3%-ով՝ պայմանավորված 2011 թվականին նախատեսված «Հուսո մեկնարկներ» սպորտլանդիայի հանրապետական փուլը 2012 թվական տեղափոխման հետ:

Շուրջ 1.5 մլրդ դրամ է հատկացվել արտադպրոցական դաստիարակության ծրագրի ֆինանսավորմանը՝ ապահովելով 100% կատարողական: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Շախմատի մրցույթների պատրաստման ծառայություններին 2012 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 11.3 մլն դրամ՝ ապահովելով 99.3% կատարողական: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

«Արտադպրոցական դաստիարակություն հասարակական կազմակերպությունների կողմից» ծրագրի համար նախատեսված շուրջ 462.6 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում պետական աջակցություն ստացող մարզական հասարակական կազմակերպությունների 23 մարզադպրոցում 553 խմբերի 5666 պարապոլների հետ աշխատում է 257 մարզիչ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 2.2%-ով՝ պայմանավորված սպորտային միջոցառումների քանակի ավելացմամբ:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման նպատակով 2012 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 240.2 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 99.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

«ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում» ծրագրի ֆինանսավորման համար նախատեսվել է շուրջ 123.0 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 0.7%-ով՝ պայմանավորված աշխատավարձի ավելացմամբ:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքներին տրամադրվել է շուրջ 51.4 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում Մշակութային կրթության աջակցության հիմնադրամը հանրապետության երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների սաներին ու ուսուցիչներին ցուցաբերել է ուսումնամեթոդական և գործնական աջակցություն: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը փոփոխություն չեն կրել:

2012 թվականի պետական բյուջեով երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակման և հրատարակման համար նախատեսված 17.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում 2012 թվականին տպագրվել են գեղարվեստական կրթության 26 անուն ուսումնական նոր ծրագրեր, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ: Հրատարակված գրականության մի մասն անվճար տրամադրվել է հանրապետության մշակութային կրթօջախներին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Արտադպրոցական դաստիարակության բնագավառում նախատեսված՝ «Վինդսերֆինգ մարզաձևին առնչվող ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվել է շուրջ 44.8 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

«ՀՀ մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովում» ծրագրի գծով տրամադրվել է ավելի քան 49.2 մլն դրամ՝ ապահովելով 98.5% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.4%-ով՝ պայմանավորված գների աճով:

Մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման կազմակերպման նպատակով հատկացվել է շուրջ 4.4 մլն դրամ կամ նախատեսվածի 62.7%-ը, որը տնտեսման արդյունք է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 22.3%-ով՝ պայմանավորված վերապատրաստվողների թվի նվազմամբ:

«Հակոբ Կոջոյան» կրթահամալիր» ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպման նպատակով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորման համար նախատեսված շուրջ 6.5 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

«Աջակցություն իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացմանը» ծրագրին տրամադրվել է 10.1 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով նախատեսված ծավալը: Ծրագրով նախատեսված ուսուցումը կազմակերպվել է «Իրավախախտում կատարած անչափահասների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ծրագիրը սկսվել է 2012 թվականին:

2012 թվականին պետական բյուջեից 1.0 մլրդ դրամ է տրամադրվել *լրացուցիչ կրթությանը*՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ լրացուցիչ կրթության ծախսերը նվազել են 5.6%-ով՝ հիմնականում պայմանավորված 2011 թվականին բուժանձնակազմի մասնագիտացման, շարունակական ուսուցման և վերապատրաստման համար միջոցների հատկացմամբ, որը նախորդ տարի նախատեսված չէր:

ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գծով պետական պատվերի շրջանակներում 2012 թվականին օգտագործվել է ավելի քան 26.5 մլն դրամ՝ ապահովելով 98.9% կատարողական: 2012 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի հաշվին վերապատրաստվել է 2045 քաղաքացիական ծառայող՝ նախորդ տարվա 1851-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 10.6%-ով:

Լրացուցիչ կրթության «Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծառայություններ» և «Կադրերի պատրաստման և վերապատրաստման ծառայություններ» ծրագրերը ֆինանսավորվել են ամբողջությամբ, որոնց տրամադրվել է համապատասխանաբար 85 մլն և 66.6 մլն դրամ: Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծառայությունների ծախսերը նախորդ տարվա համեմատ չեն փոփոխվել, իսկ կադրերի պատրաստման և վերապատրաստման ծառայությունների ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են 7.5%-ով՝ պայմանավորված նրանով, որ բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման ծախսերը նախորդ տարի ընդգրկված էին տվյալ ծրագրում:

«Լրացուցիչ կրթության ուսուցման գծով պետական պատվեր» ծրագրի շրջանակներում օգտագործվել է 17.7 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Միջոցներն ուղղվել են դատախազների տարեկան լրացուցիչ վերապատրաստմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման նպատակով ծախսվել է ավելի քան 289.7 մլն դրամ՝ ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.5%-ով: 2012 թվականին վերապատրաստվողների և հատուկ ուսուցում անցնողների թվաքանակը կազմել է 2570 մարդ՝ 2011 թվականի 2557-ի դիմաց:

Հաշվետու տարում ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպման ծախսերը կազմել են 53.7 մլն դրամ կամ նախատեսվածի 99.5%-ը և 3.3%-ով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը:

Օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցման ծախսերը կազմել են շուրջ 14.1 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծախսերը ներառում են ՌԴ ԱԻՆ քաղաքացիական պաշտպանության ակադեմիա գործուղված փրկարարական ծառայողների ճանապարհածախսը, կրթաթոշակը և բնակվարձը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 41.1%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ փրկարարական ծառայողները արձակուրդների ժամանակ օգտվել են ՀՀ վերադառնալու իրենց իրավունքից:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստման նպատակով տրամադրվել է 624 հազար դրամ՝ ապահովելով 68.9% կատարողական: Շեղումը պայմանավորված է փաստացի վերապատրաստվածների՝ նախատեսվածից քիչ քանակով: Ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են 39 աշխատակից: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.8 անգամ:

Հաշվետու տարում դատավորների, դատական ծառայողների, դատական կարգադրիչների վերապատրաստման ծառայություններին տրամադրվել է շուրջ 158.1 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Շուրջ 212.6 մլն դրամ է տրամադրվել «Վերապատրաստման ծառայություններ» ծրագրին՝ 99.7%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Միջոցներն ուղղվել են ՀՀ դատախազության, ՀՀ տարածքային կառավարման նախարարության, Ազգային անվտանգության խորհրդի և ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակիցների վերապատրաստմանը: Վերապատրաստման ծառայությունների ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են 2.9%-ով:

Լրացուցիչ կրթության հետևյալ ծրագրերի շրջանակներում՝ «Հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման ծառայություններ» և «Ներդրումներ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ուսումնական կենտրոն ՊՈԱԿ-ում», տրամադրվել է համապատասխանաբար 46.7 մլն և 43.2 մլն դրամ՝ ապահովելով 99.5% և 98.6% կատարողական: Նշված ծրագրերը մեկնարկել են 2012 թվականից:

2012 թվականի պետական բյուջեի կրթության ոլորտի ծախսերի 14.2%-ն ուղղվել է *կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների* ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են շուրջ 14.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 93.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող կրթության որակի և համապատասխանության երկրորդ ծրագրի, կրթական օբյեկտների հիմնանորոգման և ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչների հավելավճարների տրամադրման ծախսերի կատարողականով: 2011 թվականի համեմատ կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերը նվազել են 24.1%-ով՝ հիմնականում պայմանավորված հիմնանորոգման ու շինարարության ծախսերի նվազմամբ:

2012 թվականին սփյուռքի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծախսերը կազմել են շուրջ 36.1 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2012 թվականին վերապատրաստվել են 127 սփյուռքահայ ուսուցիչներ՝ 2011 թվականի 154-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 23.7%-ով՝ պայմանավորված վերապատրաստման դասաժամերի ավելացման և վերապատրաստվող ուսուցիչների համար նախատեսված մշակութային միջոցառումների ընդլայնմամբ:

Տվյալ խմբում ընդգրկված՝ կրթական օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կազմել են ավելի քան 4.1 մլրդ դրամ՝ 93.1%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են 98 կրթական օբյեկտներ (Երևանում՝ 27, մարզերում՝ 71)՝ նախորդ տարվա 110-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն նվազել են 24.7%-ով՝ պայմանավորված հիմնանորոգման աշխատանքների ծավալների կրճատմամբ:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման ծախսերին տրամադրվել է շուրջ 25.9 մլն դրամ՝ ապահովելով 86.4% կատարողական: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են 2 միջին մասնագիտական կրթական օբյեկտներ՝ 2011 թվականի 15 օբյեկտի դիմաց: Արդյունքում նախորդ տարվա համեմատ այս նպատակով կատարված բյուջետային ծախսերը նվազել են 97.8%-ով:

Ուսանողներին զեղչային գներով հանրակացարանային պայմանների տրամադրման ծախսերը կատարվել են 91.1%-ով և կազմել ավելի քան 27.5 մլն դրամ: Ծրագրից օգտվել է 247 ուսանող՝ նախորդ տարվա 273-ի դիմաց: Արդյունքում նախորդ տարվա համեմատ այս նպատակով կատարված բյուջետային ծախսերը նվազել են 8.9%-ով:

Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների խմբում ընդգրկված՝ կրթական օբյեկտների շինարարությանը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 1.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 96.9%-ը: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում կատարվել են

շինարարական աշխատանքներ 16 դպրոցներում՝ նախորդ տարվա 18 դպրոցի դիմաց: Նախորդ տարվա համեմատ ծրագրի գծով բյուջետային ծախսերը նվազել են 22.1%-ով:

2012 թվականին շուրջ 167.9 մլն դրամ է տրամադրվել մարզական օբյեկտների շինարարությանը՝ ապահովելով 93.3% կատարողական: Ծրագրի շրջանակներում կառուցվել են 3 մարզադպրոց՝ 2011 թվականի 4-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 11.3%-ով:

Ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգման ծախսերը կատարվել են 97%-ով և կազմել ավելի քան 365.3 մլրդ դրամ: Ծրագրի շրջանակներում կատարվել են 10 ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքներ՝ նախորդ տարվա 20-ի դիմաց: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 80.9%-ով:

Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպմանն ուղղվել է 236.7 մլն դրամ, որը ֆինանսավորվել է ամբողջությամբ: 2012 թվականին ծրագրի շրջանակներում, ինչպես և 2011 թվականին, կազմակերպվել է 3000 երեխայի ամառային հանգիստը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Ավարտական փաստաթղթերի՝ գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռքբերման նպատակով ծախսվել է 325.4 մլն դրամ՝ ապահովելով 99.5% կատարողական: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 20.2%-ով՝ պայմանավորված 2012 թվականին ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների քիչ քանակությամբ ձեռքբերման հանգամանքով:

Տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովման և ավագ դպրոցների դասագրքերի հրատարակման ծրագրի շրջանակներում ՀՀ 2012 թվականի պետական բյուջեից կատարվել են ավելի քան 764.6 մլն դրամի ծախսեր՝ 100%-ով կատարելով ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը մնացել են անփոփոխ:

ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին փոխհատուցման նպատակով օգտագործվել է շուրջ 45.9 մլն դրամ՝ 74.6%-ով կատարելով ծրագիրը: Ծրագրի շրջանակներում գործուղված մանկավարժների թիվը կազմել է 272՝ նախատեսված 310-ի և նախորդ տարվա 307-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 9.1%-ով:

Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցման նպատակով տրամադրվել է շուրջ 54.4 մլն դրամ՝ ապահովելով 98.5% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Երևան քաղաքի և 7

մարզերի գյուղական բնակավայրերից մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տեղափոխումը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 3.2%-ով:

Ռազմագիտության կաբինետների վերականգնման համար 2012 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 15.3 մլն դրամ, որը կատարվել է նախատեսված ծավալով: Ձեռք է բերվել ՀՀ ազգային հինգ հերոսների և ՀՀ ռազմական ավիացիայի մասին պատմող 9029 օրինակ DVD տեսասկավառակ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը մնացել են անփոփոխ:

Դպրոցականների հանրապետական սպարտակիադայի անցկացման համար տրամադրվել է 35 մլն դրամ (100%): Անց են կացվել ՀՀ անկախության 21-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 21-րդ խաղերը 6 մարզաձևերից: Խաղերին մասնակցել են շուրջ 2746 մասնակիցներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը ևս չեն փոփոխվել:

Համակարգչային և ինտերնետային կապի ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 700.9 մլն դրամ, որոնք նույնպես ամբողջությամբ կատարվել են: Ծրագիրն իրականացվել է 1401 դպրոցում (457 դպրոցների սպասարկումն իրականացվել է 2012 թվականի չորրորդ եռամսյակից)՝ նախորդ տարվա 944-ի դիմաց: Սպասարկվող դպրոցների քանակի աճով պայմանավորված՝ նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերն աճել են 3.4%-ով:

Հանրակրթությունում փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացմանը տրամադրվել է 94.9 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրում ընդգրկված աշակերտների թիվը 2012 թվականին կազմել է 7275, մեծահասակների թիվը՝ 5000, վերապատրաստվել են նաև թվով 189 ուսուցիչ, դասվար, դասավանդողներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Ավելի քան 446.1 մլն դրամ տրամադրվել է գնահատման և թեստավորման ծառայություններին, որոնք մատուցվում են «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են և 31.1%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում մշակվել է «ՀՀ պետական բուհերի ընդունելության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին նախագիծը, լրամշակվել են միասնական քննությունների մասնակիցների աշխատակարգերը և այլ փաստաթղթեր, կազմվել և տպագրվել են «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաների միասնական և ավարտական քննությունների թեստերի առաջադրանքների շտեմարանները, կազմակերպվել և անցկացվել են հիմնական և լրացուցիչ փուլի պետական ավարտական և միասնական քննություններ:

Դպրոցականների օլիմպիադաների անցկացման ծախսերը կազմել են շուրջ 41.6 մլն դրամ՝ 83.9%-ով կատարելով ծրագիրը: Անց է կացվել հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլերը հանրակրթական 16 առարկաներից: Մասնակցել են

շուրջ 1267 աշակերտներ: Հանրապետական փուլի հաղթող դպրոցականներից լավագույնները մասնակցել են նաև միջազգային օլիմպիադաներին՝ 6 առարկաներից: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Սփյուռքի հայկական կրթական հաստատությունների համար ուսումնական գրականության և օժանդակ նյութերի տրամադրման համար 2012 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 79.2 մլն դրամ՝ ապահովելով նախատեսվածի 99%-ը: Հատկացված միջոցների հաշվին ձեռք են բերվել 48984 հատ 127 անվանում դասագիրք և 23 անվանում օժանդակ նյութեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.1%-ով՝ պայմանավորված 2012 թվականին կատարված ձեռքբերումների քանակի կրճատմամբ:

Ավելի քան 15.7 մլն դրամ է տրամադրվել Զավախքի դպրոցների համար գույքի ձեռքբերման նպատակով, որը կատարվել է 100%-ով: 2011 թվականի համեմատ տվյալ ծախսերն աճել են 18.7%-ով՝ պայմանավորված տրամադրված գույքի ծավալի աճով:

2012 թվականի պետական բյուջեից հատուկ դպրոցների համար նախատեսված ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակման և հրատարակման համար կատարվել են շուրջ 16 մլն դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 99.8%-ը: Ծրագրի շրջանակներում մշակվել և տպագրվել են թվով 4660 օրինակ 10 անուն ուսումնական այլ նյութեր, ձեռք են բերվել 2000 օրինակ բրայլյան տետրեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.9%-ով:

2012 թվականին, ինչպես և 2011 թվականին, ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայությունների ծրագրին պետական բյուջեից նախատեսվել և տրամադրվել է շուրջ 41.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում մշակվել է 960 անուն փաստաթուղթ՝ նախորդ տարվա 990-ի դիմաց:

Բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումների շրջանակներում հաշվետու տարում ծախսվել է 90 մլն դրամ (100%): Նշված ծրագրի շրջանակներում 2013-2015թթ. Հայաստանում Բոլոնիայի քարտուղարության աշխատանքների, ինչպես նաև 2015թ. Նախարարական գազաթափողովի անցկացման լուսաբանման նպատակով կազմակերպվել է սեմինար հանդիպում բարձրագույն կրթության շուրջ 350 շահառուների հետ, Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի Եվրոպական ուսանողական ասոցիացիային անդամակցելու նպատակով կազմակերպվել են երկու դիտորդական այցեր՝ Եվրոպական ուսանողական ասոցիացիայի անդամների մասնակցությամբ, մշակվել է Որակավորումների ազգային շրջանակի ներդրումն ու գործարկումն ապահովող միջոցառումների կատարմանն ուղղված ծրագիրը, իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության վերաբերյալ անգլիալեզու կայքի սպասարկումը և այլն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Հաշվետու տարում պետական բյուջեից 491.5 մլն դրամ տրամադրվել է կրթության բովանդակային և մեթոդական սպասարկման ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծրագրին, որն ամբողջությամբ օգտագործվել է: Վերապատրաստման դասընթացներին մասնակցած ունկնդիրների թիվը կազմել է 15454, մշակված և փորձագիտական եզրակացություն ստացած էջերի թիվը՝ 56524: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Երեխաների ֆիզիկական, մտավոր և (կամ) հոգեկան զարգացման առանձնահատկությունների բացահայտում և գնահատում» ծրագրի գծով ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 146.4 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 53.8%-ով, որը կապված է 2012 թվականից հատուկ կրթության ուսուցման կազմակերպման մասով ԲԺշկահոգեբանամանկավարժական կենտրոնի ֆինանսավորումը «Հատուկ կրթություն» ծրագրի շրջանակներում իրականացնելու հանգամանքով:

2012 թվականի պետական բյուջեից նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումների ուղղությամբ կատարվել են ավելի քան 165.2 մլն դրամի ծախսեր, որը կազմում է նախատեսվածի 100%-ը: Ծրագրի շրջանակներում մշակվել են մի շարք մասնագիտությունների չափորոշիչներ, ուսումնական պլաններ և մոդուլային ծրագրեր, ուսումնական ձեռնարկներ, վերապատրաստվել են հաստատությունների տնօրեններ, փոխտնօրեններ, մանկավարժներ, փորձագետներ, կատարվել են հետազոտական, բարեփոխումների արդյունքների գնահատման աշխատանքներ և այլն: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

2012 թվականին, ինչպես և 2011 թվականին, 65.7 մլն դրամ է տրամադրվել մասնագիտական կրթության որակի ապահովման ծառայություններին, որոնք ամբողջությամբ օգտագործվել են:

Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցման ծախսերին տրամադրվել է 120 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Ծրագրի շրջանակներում հանրապետության թվով 1364 դպրոցներին հատկացվել են միջոցներ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

2012 թվականին, ինչպես և 2011 թվականին, դասական երաժշտական բարձրագույն կրթության զարգացմանը տրամադրվել է շուրջ 46.7 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը:

Մարզական օբյեկտների հիմնանորոգման համար հատկացվել է 65.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 88.4%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ կառույցի ուժեղացման և վերակառուցման նախագծի կազմման աշխատանքները չեն իրականացվել՝ ժամկետների սղության պատճառով: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Երևան քաղաքի «Տորք Անգեղ» մարզական

միության շենքի հիմնանորոգումը: 2011 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 8.5%-ով՝ պայմանավորված կատարված շինարարական աշխատանքների ծավալով:

2012 թվականին ՀԲ աջակցությամբ իրականացվող «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 2.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 88.4%-ը: Շեղումը պայմանավորված է հետևյալով.

- Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակներում բուհերին դրամաշնորհների տրամադրման աշխատանքները հետաձգվել են, քանի որ դրանք հնարավոր էր իրականացնել «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրի կառուցվածքային փոփոխության հաստատումից հետո, որը տեղի է ունեցել 2013 թվականի մարտին.

- Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ՄԿԿՏՀ) ստեղծման և համակարգչային սարքավորումներով ավագ դպրոցների ռեսուրս կենտրոնների համալրման նպատակով մրցույթների կազմակերպման աշխատանքները սկսվել են դեռևս 2012թ. առաջին եռամսյակում, սակայն մրցութային աշխատանքների իրականացման տարբեր փուլերում առաջացել է լրացուցիչ պարզաբանումների կարիք: Պայմանագրերը կնքվել են 2012թ., սակայն այս երկու ուղղություններով հիմնական աշխատանքները տեղափոխվել են 2013թ.:

Ծրագիրը բաղկացած է երկու բաղադրիչներից՝ «Հանրակրթության որակի բարելավում» և «Բոլոնիայի գործընթացի համատեքստում աջակցություն բարձրագույն կրթության բարեփոխումներին»:

«Հանրակրթության որակի բարելավում» ենթածրագիրը ներառում է հետևյալ չորս բաղադրիչները.

- Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում,

- Կրթության որակի հետագա բարելավում՝ ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցով,

- Ուսումնական գործընթացում ՏՀՏ-ի (տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաների) ներդրում,

- Աջակցություն ավագ դպրոցի բարեփոխումներին:

«Բոլոնիայի գործընթացի համատեքստում աջակցություն բարձրագույն կրթության բարեփոխումներին» երկրորդ ենթածրագիրը ներառում է հետևյալ չորս բաղադրիչները.

- Որակի ապահովման մեխանիզմների ստեղծում և ամրապնդում,

- Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծում,

- Աջակցություն բարձրագույն կրթության ֆինանսավորման կայուն համակարգի ներդրմանը,

- Աջակցություն մանկավարժական կրթության բարեփոխումներին:

Ուսուցիչների ատեստավորման գծով ծախսերը կազմել են 570.6 հազար դրամ, որը կատարվել է 4.3%-ով և պայմանավորված է այն հանգամանքով, որ ուսուցիչների ատեստավորումն անցկացնող ատեստավորման տարածքային հանձնաժողովներում ընդգրկված ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակիցների թիվը նվազել է, և գործուղման ծախսերի մասով առաջացել է տնտեսում:

Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների դասում նախատեսված հետևյալ 4 ծրագրերի ֆինանսավորումը, որոնք 2011 թվականին չեն նախատեսվել, իրականացվել է ամբողջ ծավալով:

- Համահայկական կրթական խորհրդաժողովի անցկացմանը, որն իրականացվում է 2 տարին մեկ անգամ, հատկացվել է 13 մլն դրամ:

• «Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովում» ծրագրին տրամադրվել է 72.1 մլն դրամ: ՄԱԿ-ի պարենի ծրագրի շրջանակներում կազմակերպվել են դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովելու համար տրանսպորտային փոխադրումները, որի արդյունքում շուրջ 50000 երեխա ապահովվել է սննդով:

• Կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման ծրագրին տրամադրվել է 10 մլն դրամ: Ծրագիրը նպատակաուղղված է մշակելու և Հայաստանի դպրոցներում ներդնելու ուսուցման գործընթացի կազմակերպման այնպիսի մոդել, որը հնարավորություն կտա միևնույն ուսումնական խմբում ընդգրկելու տարբեր ուսումնական ծրագրեր ուսումնասիրող աշակերտների և ապահովել որակյալ ուսուցում բոլորի համար:

• Կրթական օբյեկտների շինարարությանը Ռուսաստանի Դաշնության կողմից ՀՀ տրամադրված վարկային միջոցների հաշվին հատկացվել է շուրջ 1.1 մլրդ դրամ: 2012 թվականին ՀՀ Շիրակի մարզում ՌԴ վարկային միջոցների հաշվին իրականացվել է Գյումրու Մուշ-2 թաղամասի նոր դպրոցի կառուցումը:

2012 թվականին, ինչպես և 2011 թվականին, «Մենամարտ» վարժասարքերի ձեռքբերմանը տրամադրվել է 111 մլն դրամ (100%): Թվով 15 հանրակրթական դպրոցներում տեղադրվել է մեկական վարժասարք:

«Ուսում-2» համակարգի ներդրման ծրագրի ծախսերը կազմել են 51 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Թվով 592 հանրակրթական դպրոցներում մատուցվել են համակարգչային գրագիտության ուսուցման և թեստավորման ծառայություններ: 2011 թվականի համեմատ այս ծրագրի ծախսերը նվազել են 24.4%-ով, որը պայմանավորված է 2012 թվականին ծառայություններ ստացած դպրոցների թվաքանակի նվազմամբ:

2012 թվականին, ինչպես և 2011 թվականին, «Հայ ասպետ» հեռուստամրցաշարի անցկացմանը պետական բյուջեից հատկացվել է 67.3 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: ՀՀ հանրային հեռուստաալիքով հեռարձակվող հեռուստամրցաշարին մասնակցել են թվով 81 դպրոցների 634 աշակերտներ:

Հալեպի համալսարանում հայոց լեզվի դասավանդման կազմակերպման համար տրամադրվել է 4.5 մլն դրամ (100%): Ծրագրի շրջանակներում Երևանի պետական համալսարանի մեկ դասախոս իրականացրել է հայոց լեզվի դասավանդում Հալեպի համալսարանում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.9%-ով՝ պայմանավորված փոխարժեքի աճով:

Արտասահմանում սովորող ուսանողներին հաշվետու տարում հատկացվել է 100 մլն դրամ աջակցություն, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել: Ծրագիրն իրականացվում է «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի կողմից, որի առաքելությունն է՝

- ստեղծել ու համախմբել առաջադեմ և ստեղծագործ մտածելակերպ ունեցող ուսանողների սերունդ՝ բազմապատկելով աշխարհի լավագույն համալսարաններ հաճախող հայ ուսանողների թիվը՝ նրանց տրամադրելով նյութական, մենթորական և այլ աջակցություն:

- ստեղծել ենթակառուցվածք, որն ի մի կբերի «Լույսի»-ի ուսանողների գիտելիքները, փորձառությունն ու կապերը, և կառաջարկի ծրագրեր, որոնք կօգնեն ուսումնական ձեռքբերումներից անցում կատարել իրական աշխարհի նվաճումներին՝ ի բարօրության Հայաստանի:

Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչների հավելավճարների տրամադրմանն ուղղվել է շուրջ 2 մլն դրամ՝ նախատեսված 269.3 մլն դրամի դիմաց: Միջոցները չեն օգտագործվել տարակարգերի շնորհման համար իրականացված ատեստավորման արդյունքների հետ կապված՝ 2050-ի փոխարեն տարակարգ է շնորհվել ընդամենը 19 ուսուցչի. այդ կապակցությամբ ներկայումս վերանայվում են տարակարգերի շնորհման չափանիշները: Ծրագիրը ֆինանսավորվում է 2012 թվականից:

Բուխարեստի համալսարանում հայոց լեզվի դասավանդման կազմակերպմանը տրամադրվել է շուրջ 3.8 մլն դրամ՝ ապահովելով 50.7% կատարողական: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս իրականացրել է հայոց լեզվի դասավանդում Բուխարեստի համալսարանում: Դասախոսի վարձատրությունը, համաձայն պայմանագրի, կատարվել է փաստացի աշխատած ժամանակահատվածի համար: Ծրագիրը սկսվել է 2012 թվականից:

2012 թվականին պետական բյուջեից շուրջ 528 մլն դրամ տրամադրվել է *այլ դասերին չպատկանող կրթության* բնագավառում գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների՝ ՀՀ կրթության և գիտության

նախարարության աշխատակազմի (448.6 մլն դրամ կամ ծրագրի 98.6%-ը) և ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (79.4 մլն դրամ կամ ծրագրի 95.6%-ը) պահպանմանը: Տվյալ ծախսերի տարեկան ծրագիրը կատարվել է 98.2%-ով, իսկ 2011 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 1.6%-ով:

Սոցիալական պաշտպանություն

2012 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի 29%-ն ուղղվել է *սոցիալական պաշտպանության* ոլորտին: Կատարված հատկացումները կազմել են 291.7 մլրդ դրամ՝ ապահովելով 97.5% կատարողական: 2011 թվականի համեմատ սոցիալական պաշտպանության ծախսերն ավելացել են 13.9%-ով կամ 35.6 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովման, կենսաթոշակների, նպաստների, միանվագ դրամական օգնությունների ծախսերի աճով, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկային միջոցների հաշվին երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով միջոցների հատկացմամբ:

Հաշվետու տարում ավելի քան 1.2 մլրդ դրամ տրամադրվել է *վարատողության և անաշխատունակության* խմբին՝ ապահովելով 99.2% կատարողական: Նշված ծախսերը 2011 թվականի համեմատ գրեթե չեն փոփոխվել:

Վարատողության դասին տրամադրվել է 174.9 մլն դրամ, որի կատարողականը կազմել է 96.9%: Նախորդ տարվա համեմատ նվազել են 3.3%-ով:

Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման ծախսերը կազմել են 72.5 մլն դրամ կամ նախատեսվածի 92.8%-ը: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերի 7.5%-ով նվազումը պայմանավորված է նպաստառուների թվաքանակի կրճատմամբ:

Բժշկա-սոցիալական վերականգնման ծառայությունների շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 102.4 մլն դրամ (100%): Այս ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվում է նախապրոթեզավորման և հետպրոթեզավորման, աշխատունակության վերականգնման կարիք ունեցող հաշմանդամ քաղաքացիների բուժումը: Ծրագրի շրջանակներում 2012 թվականին իրականացվել է 9 հիվանդությունների գծով 643 քաղաքացու բուժում: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը չեն փոփոխվել:

Անաշխատունակության դասին հատկացվել է շուրջ 1.1 մլրդ դրամ՝ ապահովվելով 99.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ անաշխատունակության դասի ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Դպրոցն ավարտած, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայությունների ձեռքբերման համար տրամադրվել է 10.5 մլն դրամ (99.9%): 2011 թվականի համեմատ այս ծախսերը փոփոխություն չեն կրել:

Հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման համար ծախսվել է 857.6 մլն դրամ՝ ապահովվելով 99.9% կատարողական: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել են անվճար բժշկական օգնության և սպասարկման իրավունք ունեցող հաշմանդամ քաղաքացիների համար գերմանական և հայրենական տեխնոլոգիաներով արտադրվող պրոթեզաօրթոպեդիկ պարագաների և վերականգնման տեխնիկական միջոցների պատրաստումը, վերանորոգումը, ինչպես նաև ձայնաստեղծ սարքերի և աչքի պրոթեզների տրամադրման ծառայությունների ձեռքբերումը: Նշված ծախսերը 2011 թվականի համեմատ գրեթե փոփոխություն չեն կրել:

Հոգեկան առողջության վերականգնման ծառայություններին հատկացվել է 64.3 մլն դրամ՝ ապահովվելով 99.2% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նույնպես էապես չեն փոխվել:

Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց «Արև» համակարգով ուսուցման ծախսերը կազմել են 3.8 մլն դրամ կամ նախատեսվածի 98.3%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը փոփոխություն չեն կրել:

Նախատեսված ծավալով օգտագործվել են մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդներին սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու համար նախատեսված միջոցները՝ 16.5 մլն դրամի չափով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 110.2 մլն դրամ (99.5%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.4%-ով, որը շահառուների թվաքանակի ավելացման արդյունք է:

Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց համակարգչային տեխնիկայով և այլ օժանդակ սարքերով ապահովելու համար տրամադրվել է 2.7 մլն դրամ կամ նախատեսվածի 63.1%-ը, որը պայմանավորված է մրցույթի արդյունքում նշված ապրանքների գները նախատեսվածից պակաս լինելու հանգամանքով: Հատկացումների հաշվին համակարգչային

տեխնիկայով և պահեստամասերով ապահովվել է տեսողությունից հաշմանդամություն ունեցող 10 քաղաքացի: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.6%-ով:

Ծերության դասի ծրագրերին հատկացվել է շուրջ 199 մլրդ դրամ՝ ապահովելով 99.5% կատարողական: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 5.6%-ով կամ 10.6 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված կենսաթոշակների ծախսերի աճով:

Տվյալ դասում ամենամեծ կշիռն ունեն աշխատանքային կենսաթոշակների ծախսերը՝ 167.2 մլրդ դրամ, որոնք կատարվել են 99.6%-ով: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 5.2%-ով կամ 8.2 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է հիմնական կենսաթոշակի չափի բարձրացմամբ. ՀՀ կառավարության 25.03.2010թ. թիվ 275-Ն որոշմամբ հիմնական կենսաթոշակի չափը 2011 թվականի նոյեմբերի 1-ից սահմանվել է 13000 դրամ՝ նախկին 10500 դրամի փոխարեն:

Սպայական անձնակազմի ու նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների ծախսերը կազմել են 18.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.6%-ը: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 4.5%-ով կամ 790.2 մլն դրամով, որը պայմանավորված է օրենսդրական փոփոխությունների արդյունքում կենսաթոշակների, դրամական օգնությունների գծով իրականացված վերահաշվարկի հանգամանքով, ինչպես նաև նոր նշանակումներով:

Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովման ծախսերը կազմել են 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով 92.8% կատարողական: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 19.4%-ով կամ 299.2 մլն դրամով, որը բացատրվում է Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամ և մասնակից կենսաթոշակառուների թվաքանակի կրճատման (մահացության), շարքային զինծառայողների կենսաթոշակների վերահաշվարկի (կապված զինծառայողների դրամական օգնությունների միասնական համակարգի ներդրման հետ), ինչպես նաև թաղման ծախսերը մեկ ծրագրում միավորելու (որը 2012թ. ընդգրկվել է «Հարազատին կորցրած անձին» խմբում) հանգամանքներով:

Սոցիալական կենսաթոշակների ծախսերը կատարվել են 98.8%-ով և կազմել ավելի քան 9.9 մլրդ դրամ: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 23.2%-ով կամ 1.9 մլրդ դրամով, որը բացատրվում է ոչ միայն հիմնական կենսաթոշակի բարձրացմամբ, այլ նաև տարվա ընթացքում նոր նշանակումներով:

ՀՀ օրենքներով և կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակների ծախսերը կազմել են 338.4 մլն դրամ՝ ապահովելով 98.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Տարեցների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված տարեցների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցությունը կազմել է շուրջ 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով

97.4% կատարողական: Ծախսերը նախորդ տարվա նկատմամբ ավելացել են 2.3%-ով, որը պայմանավորված է շահառուների թվաքանակի ավելացմամբ:

Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկման նպատակով նախատեսված հատկացումներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 91.4 մլն դրամ: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

2012 թվականին հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի նպատակով տրամադրվել է 13.9 մլն դրամ պետական աջակցություն, որը կատարվել է 88.5%-ով՝ պայմանավորված ընտանիքներում սպասարկվող անձանց փաստացի թվաքանակով: Դրանով պայմանավորված՝ տվյալ ծախսերը նվազել են նաև 2011 թվականի համեմատ՝ 1.6%-ով:

ՀՀ մարզերում միայնակ տարեցներին և հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկման նպատակով «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը տրամադրվել է 157.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 95.6%-ը, որը պայմանավորված է շահառուների թվաքանակը նախատեսվածից պակաս լինելու հանգամանքով: Ծրագիրը նախատեսված է տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում միայնակ տարեցների և հաշմանդամների սպասարկման, ինչպես նաև անապահով անձանց շաբաթվա աշխատանքային օրերին ճաշարաններում մեկ անգամ սննդի տրամադրման համար: Ծախսերը 2011 թվականի նկատմամբ նվազել են 3%-ով՝ պայմանավորված միայնակ տարեցների և հաշմանդամների փաստացի թվով:

Նախատեսված ողջ ծավալով օգտագործվել են Վանաձորի տարեցների տանը խնամվողների շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման ծրագրին հատկացված միջոցները, որոնք կազմել են 14.4 մլն դրամ: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

2012 թվականին ՀՀ պետական բյուջեից «Հարազատին կորցրած անձինք» խմբի ծրագրերի հատկացումները կազմել են 4.8 մլրդ դրամ՝ ապահովելով 99.1% կատարողական, նախորդ տարվա 140 մլն դրամի համեմատ: 2012 թվականից կենսաթոշակառուների մահվան դեպքում տրվող թաղման նպաստները (աշխատանքային, սոցիալական, շարքային զինվորական ծառայության և սպայական) միավորվել են մեկ ծրագրում, որին հատկացվել է 4.7 մլրդ դրամ՝ ապահովելով 99.6% կատարողական:

131.1 մլն դրամ են կազմել Հայաստանի զոհված ազգային հերոսի կամ Մարտական խաչ ջքանշանով հետմահու պարգևատրված անձանց ընտանիքներին նպաստի վճարման ծախսերը, որոնք իրականացվել են 84.7%-ով՝ պայմանավորված շահառուների փաստացի թվաքանակով: Ծախսերը նախորդ տարվա նկատմամբ ավելացել են 3.4%-ով՝ կապված նախորդ տարվա համեմատ շահառուների թվաքանակի ավելացման հետ:

«Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով՝ գործազուրկների հուղարկավորման ծախսերի փոխհատուցման նպատակով նախատեսված նպաստի վճարումը կազմել է 5.3 մլն դրամ կամ նախատեսվածի 78.6%-ը: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերը նվազել են 3.9%-ով:

«Ընտանիքի անդամներ և զավակներ» խմբի ծախսերը կազմել են 47.1 մլրդ դրամ՝ ապահովելով 98.3% կատարողական: Նշված գումարի զգալի մասը՝ 33.1 մլրդ դրամ, տրամադրվել է ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության ֆինանսավորմանը, որը կազմել է նախատեսվածի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 14.2%-ով, որը պայմանավորված է 2012 թվականին նպաստառու ընտանիքների միջին թվաքանակի աճով և նվազագույն նպաստի չափի ավելացմամբ: 2012 թվականին նպաստառու ընտանիքների միջին տարեկան թիվը կազմել է 96309՝ 2011 թվականի 91575-ի դիմաց, իսկ նպաստի նվազագույն չափը 13500 դրամից բարձրացվել է մինչև 16000 դրամ:

ՀՀ պաշտպանության և փրկարարական ծառայության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ու փրկարար ծառայողների ընտանիքներին հաշվետու տարում տրամադրվել են 109.3 մլն դրամ միանվագ սոցիալական ապահովագրության վճարներ, որոնք օգտագործվել են 18.1%-ով, իսկ նախորդ տարվա ցուցանիշը՝ գերազանցել 23.2%-ով:

2011 թվականին մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների գծով ծախսերը կազմել են շուրջ 3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.1%-ը: 2011 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 1.9%-ով, որը պայմանավորված է նպաստառուների քանակի աճով:

ՀՀ մանկատների շրջանավարտներին 2012 թվականին պետական բյուջեից տրամադրվել է 28.3 մլն դրամի աջակցություն և խորհրդատվություն, որը կատարվել է 79.4%-ով՝ պայմանավորված նախատեսված 53 շահառուների փոխարեն փաստացի 15 շահառուի մասնագիտական ուսուցման և 55 շահառուների փոխարեն 23 շահառուների բուժզննման կազմակերպման ծառայությունների ձեռք բերման հանգամանքներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.7%-ով:

Հղիության և ծննդաբերության նպաստի գծով ծախսերը կազմել են 3.1 մլրդ դրամ, որոնք կատարվել են նախատեսված ծավալով: 2011 թվականի համեմատ այս ծախսերը նվազել են 21.2%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ 2012 թվականին փոխհատուցվել են 2011 թվականին սոցվճարների հաշվին ապահովագիրների մոտ տեղերում կատարված 3 ամսվա ծախսերը, մինչդեռ 2011 թվականին նշված ծախսերը փոխհատուցվել էին 5 ամսվա համար:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարումը կազմել է 4.6 մլրդ դրամ, որը կատարվել է 99.9%-ով: 2011 թվականի նկատմամբ նշված ծախսերն աճել են 6.6%-ով՝ պայմանավորված դիմողների քանակի աճով:

2012 թվականին 90.5%-ով կատարվել է վարժական հավաքների և զինծառայության ու փրկարարական ծառայության ընթացքում մահացած (զոհված) զինծառայողների ու փրկարար ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցումը, որը կազմել է 334.9 մլն դրամ և 4.5%-ով զիջել նախորդ տարվա ծախսերը:

Երեխաների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով երեխաների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցության ծախսերը հաշվետու տարում կազմել են 1.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.1%-ը: Ծախսերը նախորդ տարվա նկատմամբ նվազել են 2.9%-ով, որը պայմանավորված է մանկատներում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափման) հանգամանքով: 2012 թվականին փաստացի խնամվել է 754 երեխա՝ 2011 թվականի 772 երեխայի փոխարեն:

ՀՀ երեխաներին շուրջօրյա խնամքի և պաշտպանության հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափման) ծառայությունների ձեռքբերման ծախսերը կատարվել են 98.4%-ով՝ կազմելով 11.6 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Ռիսկի գոտում հայտնված երեխաներին սոցիալական հոգածության ծառայությունների ծախսերը կազմել են 178.6 մլն դրամ կամ նախատեսվածի 96.6%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 30%-ով, որը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ «Զատիկ մանկատուն» ՊՈԱԿ-ը սոցիալական սպասարկման կենտրոնի վերափոխելու կապակցությամբ ծրագրի գումարն ավելացվել է 40.9 մլն դրամով:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 05-1680 գործով 15.07.2005թ. վճռի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցման ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 1.1 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայություններին տրամադրվել է 903.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 90.4%-ով կատարում, որը պայմանավորված է 8 գիշերօթիկ հաստատությունների կողմից 800 շահառուի փոխարեն փաստացի տարեկան միջինը 582 շահառու խնամելու հանգամանքով: Ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են 2.1%-ով:

Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից դժվար իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական հոգածության ծառայությունների շրջանակներում տրամադրվել է 50.2 մլն

դրամ՝ ապահովելով ծրագրի 97.8%-ով կատարում: Սույն ծրագիրն իրականացվում է համաֆինանսավորման սկզբունքով, և ծրագիրն իրականացնող ՀԿ-ին ՀՀ պետական բյուջեից հատկացվում են միայն աշխատավարձերն ու սոցիալական ապահովության վճարները: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման ծառայությունների ծախսերը կազմել են 24.4 մլն դրամ՝ ապահովելով 86.7% կատարողական և 4.8%-ով նվազելով 2011 թվականի նկատմամբ՝ պայմանավորված խնամատար ընտանիք տեղափոխվող փաստացի երեխաների թվաքանակը նախատեսվածից 2 շահառուով պակաս լինելու հանգամանքով. 25 շահառուի փոխարեն ծրագրից օգտվել է 23 շահառու:

ՀՀ մանկատներում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին հաշվետու տարում տրամադրվել է 5.7 մլն դրամ աջակցություն կամ նախատեսվածի 74.6%-ը: Ծրագրի շրջանակներում միջոցներ են հատկացվում դպրոցական տարիքի երեխաների գրպանի ծախսերի համար: Շեղումը պայմանավորված է 4 մանկատներում 264 երեխաների փոխարեն տարեկան միջին փաստացի 198 դպրոցահասակ երեխաների դրամական աջակցություն տրամադրելու հանգամանքով, որով էլ պայմանավորված՝ 2011 թվականի նկատմամբ նշված ծախսերը նվազել են 8.1%-ով:

ՀՀ մանկատների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրման ծախսերը կազմել են 1.2 մլն դրամ կամ նախատեսվածի 32.6%-ը՝ պայմանավորված կրթաթոշակ ստացող շահառուների փաստացի քանակով: 2012 թվականին կրթաթոշակ ստացող շահառուների թիվը նախատեսված 15-ի փոխարեն կազմել է 9, իսկ միանվագ դրամական օգնություն ստացողների թիվը նախատեսված 40-ի փոխարեն կազմել է 14: Դրանով պայմանավորված՝ 2011 թվականի նկատմամբ ՀՀ մանկատների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրման ծախսերը նվազել են 37.1%-ով:

Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին դրամական օժանդակության փաթեթի տրամադրման ծախսերը կազմել են 9.7 մլն դրամ, որն իրականացվել է նախատեսված ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 07-3832 գործով 2007 թվականի նոյեմբերի 3-ի վճռի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցումը կազմել է 1.9 մլն դրամ (100%): 2011 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի գործով վճիռների համաձայն կրած վնասների փոխհատուցումը կազմել է 4.4 մլն դրամ (100%): Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերն աճել են 7.3%-ով:

Անօթևան երեխաների համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայությունների ծախսերը կազմել են 21.4 մլն դրամ կամ տարեկան ծրագրի 82.3%-ը՝ 2011 թվականի նկատմամբ նվազելով 9.8%-ով: Նշված ցուցանիշները պայմանավորված են նախատեսված 20 անօթևան երեխաների փոխարեն փաստացի 10 անօթևան երեխաների սպասարկելու հանգամանքով:

2012 թվականին պետական բյուջեից 2.8 մլրդ դրամ տրամադրվել է գործազրկության խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 85.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գործազրկության նպաստի ծախսերի կատարողականով:

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չգրառված հաշմանդամներին տրամադրվել է 927 հազար դրամ ֆինանսական աջակցություն՝ կազմելով նախատեսվածի 38.5%-ը: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ 2012 թվականին նախատեսվել էր ֆինանսական աջակցություն տրամադրել ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով ՍՊԸ բացելու համար 50 գործազուրկի՝ մեկ գործազուրկի համար 32.0 հազար դրամ, և ԱԶ-ի վկայական ստանալու նպատակով 90 գործազուրկի՝ մեկ գործազուրկի համար 9.0 հազար դրամ: Փաստացի ՍՊԸ բացելու համար դիմել են 15 գործազուրկներ, որոնք միջին հաշվով ստացել են 23.9 հազար դրամ աջակցություն, իսկ ԱԶ-ի վկայական ստանալու նպատակով՝ 132 գործազուրկ, որոնց տրամադրվել է միջինը 4.3 հազար դրամ աջակցություն: 2011 թվականի նկատմամբ նշված ծախսերը նվազել են 3.4%-ով:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծախսերը կազմել են 85.3 մլն դրամ կամ նախատեսվածի 99.5%-ը: Ծախսերը նախորդ տարվա նկատմամբ ավելացել են 19%-ով, որը պայմանավորված է աշխատաշուկայում անմրցունակ անձանց թվի ավելացման հանգամանքով:

Ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող աշխատանք փնտրող չգրառված հաշմանդամների մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերականգնման կազմակերպման նպատակով տրամադրվել է 10.9 մլն դրամ կամ նախատեսվածի 83.2%-ը: 2011 թվականի համեմատ տվյալ ծախսերը նվազել են 25.3%-ով: Նշված ցուցանիշները պայմանավորված են ուսուցման ծառայությունների ձեռքբերման փաստացի ցածր գնով:

Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 19.7 մլն դրամ՝ ապահովելով 82.1% կատարողական: Սույն ծրագրի շրջանակներում 2012 թվականին նախատեսվել էր փորձնական ծրագիր իրականացնել նաև Վայոց Ձորի մարզում, ծրագրի իրականացման համար նախատեսվել էին 3 հաստիքային միավորի և գրասենյակի պահպանման ծախսեր, սակայն ծրագրի կատարման նոր ռազմավարություն մշակելու

արդյունքում ծրագրի իրականացումը հետաձգվել է 2013 թվական: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Գործազրկության նպաստի ծախսերի վճարմանն ուղղվել է 2.4 մլրդ դրամ, որը կատարվել է 86.1%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 32.4%-ով կամ 1.2 մլրդ դրամով: Ծախսերի անկումը պայմանավորված է նպաստառուների թվաքանակը նախատեսվածից պակաս լինելու հանգամանքով:

Գործազուրկների, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի և երկարամյա ծառայության ու արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չգրառված անձանց մասնագիտական ուսուցմանը տրամադրվել է 168.5 մլն դրամ: Ծախսերը կատարվել են 73.6%-ով և 16.9%-ով զիջել 2011 թվականի ցուցանիշը՝ պայմանավորված ծառայությունների գնման մրցակցային բանակցությունների արդյունքում կնքված պայմանագրերում ծառայությունների միավորի գները նախատեսվածից ցածր լինելու հանգամանքով:

Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկների նյութական ծախսերի հատուցումը կազմել է 17.2 մլն դրամ կամ նախատեսվածի 90.2%-ը: Նախատեսվել էր գործազուրկներին գործուղել Երևան քաղաքից ՀՀ մարզեր, սակայն հիմնականում գործուղումները կատարվել են ՀՀ մարզերի ներսում, որի հետևանքով գումարները տնտեսվել են: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 49.4%-ով, որը պայմանավորված է ծրագրում ընդգրկված անձանց թվաքանակի աճով:

Երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չգրառված անձանց վերամասնագիտացման ծրագրին տրամադրվել է 841.2 հազար դրամ կամ նախատեսվածի 37.4%-ը: Նախատեսված էր ծրագրում ընդգրկել 15 անձ՝ յուրաքանչյուրի հաշվով 150 հազ. դրամ, սակայն փաստացի ծրագրում ընդգրկվել է ընդամենը 7 անձ՝ միջին հաշվով 120.1 հազ. դրամ ծախսով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծրագրի ծախսերն աճել են 10.2%-ով:

Աշխատաշուկայի հետազոտման և կանխատեսման աշխատանքների կազմակերպմանը պետական բյուջեից տրամադրվել է 5 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 99.1%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Թափուր աշխատատեղերի տոնավաճառի կազմակերպման ծառայությունների գծով տրամադրվել է 4.9 մլն դրամ, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 16.7%-ով՝ պայմանավորված սիրիահայերի համար տոնավաճառի կազմակերպման հանգամանքով:

Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 15.7 մլն դրամ կամ նախատեսվածի 99.6%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Մասնագիտություն ունեցող, սակայն մասնագիտական աշխատանքային ստաժ չունեցող գործազուրկների աշխատանքային պրակտիկայի կազմակերպման համար տրամադրվել է 61.3 մլն դրամ՝ ապահովելով 91% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 80.3%-ով՝ պայմանավորված շահառուների թվաքանակի աճով:

2012 թվականին կազմակերպություններում հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցման նպատակով տրամադրվել է 5.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 47.9%-ը: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի շրջանակներում նախատեսված 55 հաշմանդամի փոխարեն ծրագրից օգտվել է 32 հաշմանդամ: Միաժամանակ, ծրագրով յուրաքանչյուր հաշմանդամի համար ՀՀ պետական բյուջեով նախատեսված 200.0 հազ. դրամի փոխարեն փաստացի միջին ծախսը կազմել է 164.6 հազ. դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.4 անգամ՝ պայմանավորված հաշմանդամների թվաքանակի աճով:

«Բնակարանային ապահովում» խմբի ծրագրերին ՀՀ 2012 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 4.8 մլրդ դրամ՝ ապահովելով 99.3% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.4 անգամ՝ պայմանավորված Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկային միջոցների հաշվին երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով միջոցների հատկացմամբ:

Զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքների բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավման համար տրամադրվել է 499.9 մլն դրամ (100%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն իրականացնելու համար տրամադրվել է 291.6 մլն դրամ (100%): Ծրագրի շրջանակներում ավարտվել է ՀՀ Շիրակի մարզի ք. Մարալիկի թվով 9 կիսակառույց բնակելի շենքերի կառուցումը և իրականացվել են ք. Մարալիկի 2 բնակելի շենքերի գազաֆիկացման, ջեռուցման և տաք ջրամատակարարման համակարգերի կառուցման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 18%-ով՝ պայմանավորված կատարված շինարարական աշխատանքների ծավալների աճով:

Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկային միջոցների հաշվին 2012 թվականին տրամադրվել է շուրջ 4 մլրդ դրամ՝ ապահովելով 99.2% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Ծաղկահովիտ համայնքի թիվ 5 բազմաբնակարան շենքի վերականգնումը, ավարտվել է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2

թաղամասի Մարմարաշենի 7-րդ, Մուշի 7-րդ փողոցներով պարփակված, Մուշի 5-րդ փողոցին հարակից տարածքների 1200 բնակարանների, այդ թվում՝ ավարտման ենթակա կիսակառույց շենքերի կառուցումը, իրականացվել են Անի թաղամասի Տրդատ ճարտարապետի փողոցին հարող տարածքների 400 բնակարանների կառուցապատման, Ախուրյան գյուղում 182 բնակարանների և Լոռու մարզի Սպիտակ քաղաքում 354 բնակարանների շինարարության աշխատանքները:

Այլ դասերին չպատկանող սոցիալական հատուկ արտոնությունների խմբում 2012 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 10.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 98.6% կատարողական: Նախորդ տարվա նկատմամբ խմբի ծախսերն աճել են 14.5%-ով, որը հիմնականում պայմանավորված է ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածով սահմանված դրամական օգնության ծախսերի աճով:

2012 թվականի պետական բյուջեից վետերանների պատվովճարներին է տրամադրվել 656.1 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 87.7%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 7.4%-ով՝ պայմանավորված պատվովճար ստացողների թվաքանակի նվազման (մահացության) հանգամանքով:

Փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներ իրականացնելու նպատակով տրամադրվել է 18.2 մլն դրամ, որը կատարվել է 99.9%-ով: Ծրագրի շրջանակներում հատկացվող գումարը նախատեսվում է փախստականներին պահելու հետևանքով կացարանների կրած վնասի փոխհատուցման համար: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 6.4%-ով, որը պայմանավորված է շահառուների թվաքանակի ավելացմամբ (71 մարդով):

Փախստականների կեցության խնդիրների լուծման նպատակով 2012 թվականին տրամադրվել է 14.8 մլն դրամ (100%), որի միջոցով իրականացվել է 30 ժամանակավոր ապաստան հայցող փախստականների սպասարկումը՝ կացարանի, սննդի և այլ ծառայությունների տրամադրման միջոցով: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 24.8%-ով՝ պայմանավորված դիմած փախստականների թվաքանակի աճով:

Բռնադատված քաղաքացիներին պատճառված վնասի դիմաց 2012 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 48 հազ. դրամի միանվագ դրամական փոխհատուցում, որը կատարվել է 40%-ով և 81%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված դիմողների փաստացի թվաքանակի կրճատմամբ:

ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածով սահմանված տրամադրվող դրամական օգնությունը կազմել է 8.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 20.8%-ով, որը

պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով, որոնց համաձայն ներդրվել է դրամական օգնության միասնական համակարգ, ինչպես նաև դրամական օգնության գումարների աճով՝ վետերաններին և զինծառայողներին, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամներին տրվող դրամական օգնությունների չափերը ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով (05.05.2011 թվականի թիվ 668-Ն, 20.09.2012 թվականի թիվ 1238-Ն) որոշակիորեն աճել են:

58.9 մլն դրամի պետական աջակցություն է ցուցաբերվել «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին՝ անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման նպատակով, որը կատարվել է 100%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

ՎՏԲ-Հայաստան ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների՝ նախկին ԽՍՀՄ խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են 1.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.6%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էականորեն չեն փոփոխվել:

Այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության խմբի ծրագրերի գծով 2012 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 21.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 80.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման համար նախատեսված միջոցների պակաս օգտագործմամբ, ինչպես նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի կատարողականով: 2011 թվականի համեմատ խմբի ծախսերն ավելացել են 144.7%-ով կամ 12.6 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման ծրագրի ներդրմամբ:

Հաշվետու տարում 1.5 մլրդ դրամ են կազմել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության պահպանման ծախսերը, որոնք կատարվել են 95.2%-ով և 1.9%-ով աճել նախորդ տարվա համեմատ, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերը կատարվել են 98.4%-ով և կազմել շուրջ 1.6 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 2.8%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման վարկային ծրագրին տրամադրվել է 6.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 75.7%-ը: Ծրագրի նպատակներն ուղղակիորեն կապված են մարդկային զարգացման խթանման և

սոցիալական ապահովության համակարգերի ու հանրային հատվածի հիմնական գործառույթների բարելավման հետ: Ծրագրով նախատեսված հիմնական աշխատանքներն իրականացվել են մինչև 2010 թվականի դեկտեմբերի 30-ը: 2012 թվականին ծրագրի շրջանակներում ընդհանուր աջակցություն է ցուցաբերվել սոցիալական պաշտպանության ոլորտին՝ աշխատանքի և զբաղվածության, կենսաթոշակների և այլ համակարգերի գծով: 2012 թվականին իրականացվել է նաև 2011 թվականի գործունեության աուդիտը: Ծախսերի կատարողականը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ կառավարության կողմից ծրագրի համաֆինանսավորման համար նախատեսված գումարը չի օգտագործվել՝ աշխատանքները կատարվել են նախորդ տարիներին վճարված կանխավճարների հաշվին:

Հաշվետու տարում 270.1 մլն դրամ տրամադրվել է սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման նպատակով, որն իրականացվել է 98.1%-ով: 2011 թվականի նկատմամբ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում կատարվել են 518.1 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրվածի 34.7%-ը (վարկի միջոցներից՝ 444.9 մլն դրամ, իսկ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 73.2 մլն դրամ): Ծրագրի նպատակներն ուղղակիորեն կապված են մարդկային զարգացման խթանման և սոցիալական ապահովության համակարգերի ու հանրային հատվածի հիմնական գործառույթների բարելավման հետ: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝

- Ընդհանուր աջակցություն սոցիալական պաշտպանության ոլորտին,
- Աշխատանք և զբաղվածություն,
- Կենսաթոշակների վարչարարություն,
- Սոցիալական աջակցության վարչարարության բարելավում:

2012 թվականին ծրագրի շահառուների, Համաշխարհային Բանկի և ՀՀ ՖՆ ԱՖԾԿԿ-ի մասնագետների կողմից մշակված գնումների ժամանակացուցի և այլ փասթաթղթերի հիման վրա իրականացվել են գնումների բնականոն ընթացքի համար անհրաժեշտ աշխատանքներ: Ծրագրի կատարողականը պայմանավորված է հետևյալ պատճառներով: «Ընդհանուր աջակցություն սոցիալական պաշտպանության ոլորտին» բաղադրիչով 2012 թվականին նախատեսվում էր իրականացնել սոցիալական պաշտպանության ոլորտի տարածքային (ինտեգրացված) ծառայությունների գրասենյակների վերանորոգման աշխատանքները, սակայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը նշված տարածքների հատկացման գործընթացի ուշացման պատճառով աշխատանքները նախատեսված ժամկետներում չեն իրականացվել:

Բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել համակարգչային սարքավորումներ և գրասենյակային կահույք նշված տարածքային գրասենյակների համար, որը հնարավոր կլինի իրականացնել միայն նշված տարածքների վերանորոգումից հետո: Բաղադրիչի շրջանակներում իրականացվում են նաև Սոցիալական ծառայությունների միասնական փաթեթի և սոցիալական ծառայությունների համալիր տրամադրման միասնական համակարգի կառուցվածքագործառնության մոդելի մշակման և շինվերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության և ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի Հայաստանյան գրասենյակի միջև կնքված ենթահամաձայնագրերի շրջանակներում հատկացվող ֆինանսական աջակցությունը կազմել է 15.3 մլն դրամ՝ ապահովելով 86.8% կատարողական, որը տնտեսումների արդյունք է:

Այլ դասերին չպատկանող՝ սոցիալական պաշտպանությանը տրամադրող օժանդակ ծառայությունների դասի ծախսերը կազմել են 17.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 81.3%-ը, որը հիմնականում պայմանավորված է պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման համար նախատեսված միջոցների պակաս օգտագործմամբ: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն ավելացել են 3.3 անգամ՝ հիմնականում պայմանավորված պետական հիմնարկներում և կազմակերպություններում սոցիալական փաթեթի ներդրմամբ: 2012 թվականին պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման ծրագրին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 12.1 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 77.6%-ը, որը տնտեսման արդյունք է:

Սոցիալական աջակցության ծառայությունների ծրագրի շրջանակներում 537 մլն դրամ տրամադրվել է սոցիալական ապահովության առանձին ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների ձեռքբերմանը՝ ապահովելով 89% կատարողական: Սույն ծրագրի շրջանակներում իրականացվում են բոլոր նպաստների և ավանդների վճարումների հետ կապված ծառայությունները: Շեղումը տնտեսումների արդյունք է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.6%-ով:

Փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվության կուտակման նպատակով տրամադրված 44 մլն դրամն օգտագործվել է «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ից փախստականների վերաբերյալ արխիվային տեղեկատվության ձեռքբերման նպատակով՝ ապահովելով 100% կատարողական: 2011 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Բժշկասոցիալական փորձաքննության (ԲՄՓ) ձևաթղթի տպագրության ծառայությունների ձեռքբերման և սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների (ՍԾՏԳ) ձևաթղթերի

տպագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով տրամադրվել է համապատասխանաբար 3.4 մլն դրամ և 6 մլն դրամ: Նշված ծախսերը կատարվել են համապատասխանաբար 41.4%-ով և 35.6%-ով՝ պայմանավորված գնման գործընթացի արդյունքում կնքված պայմանագրերի գինը նախատեսվածի նկատմամբ զգալիորեն պակաս սահմանելու հանգամանքով: 2011 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են համապատասխանաբար 20.8%-ով և 42.3%-ով՝ հիմնականում կապված թղթի թանկացման հետ:

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեից հաշմանդամների տվյալների տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ծրագրի շրջանակներում նախատեսված 21 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Գործազուրկների տվյալների տեղեկատվական համակարգի («Գործ» համակարգ) վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ծախսերը կազմել են 24.9 մլն դրամ, որոնք կատարվել են նախատեսված ողջ ծավալով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը չեն փոփոխվել:

Սոցիալական ապահովության քարտերի համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 147.1 մլն դրամ՝ ապահովելով 99.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների «Մանուկ» տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ծախսերը նույնպես կատարվել են նախորդ տարվա չափով՝ կազմելով 15.3 մլն դրամ և ապահովելով 100% կատարողական:

Ընտանեկան նպաստի տվյալների տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին հատկացումները կազմել են 39.9 մլն դրամ՝ ապահովելով 89% կատարողական և 32.5%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված 2012 թվականի սեպտեմբեր ամսից ընտանիքի անապահովության գնահատման արդիականացված տեղեկատվական համակարգի լրամշակման հանգամանքով:

Մեթոդաբանական ձեռնարկների մշակման, հետազոտությունների անցկացման և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 84.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Երեխայի ծննդյան և խնամքի համար տրամադրվող նպաստների համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին հատկացումներն

ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 9.5 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Կենսաթոշակային ապահովության դրամական օգնությունների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների իրականացմանը տրամադրվել է 1.5 մլրդ դրամ, որը կատարվել է 79.6%-ով: Հաշվետու տարում սույն ծրագրում միավորվել են կենսաթոշակային ապահովության, վետերանների պատվովճարի և դրամական օգնությունների, ինչպես նաև աշխատանքային խեղման վնասի փոխհատուցման ծրագրի գծով կատարված վճարների վարձավճարները: Ծախսերի կատարողականը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ դրանց 4.6%-ով անկումը պայմանավորված է սոցիալական ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները ոչ ամբողջությամբ օգտագործելու հանգամանքով, ինչպես նաև սոցիալական ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների ընդհանուր ծախսերում գործառնական և բանկային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռների աճով (աճում է անկանխիկ համակարգով սպասարկող շահառուների թվաքանակը, որտեղ սպասարկման համար գանձվող վճարները ցածր են):

Հանրային իրազեկման միջոցառումների իրականացմանը տրամադրվել է 20.4 մլն դրամ, որը կատարվել է 78.5%-ով՝ պայմանավորված մրցույթի արդյունքում գնման ենթակա ապրանքների գների նվազմամբ, ինչպես նաև որոշակի տպագրական աշխատանքների գծով գնման պահանջ չլինելու հանգամանքով: Արդյունքում նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 8.2%-ով:

Հաշվետու տարում պետական բյուջեից ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարը կազմել է 2.6 մլրդ դրամ (100%): Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն ավելացել են 2%-ով:

Ընտանեկան նպաստի և դրամական օգնության տրամադրման հետ կապված վարչարարական ծառայություններին տրամադրվել է 17 մլն դրամ, որը կատարվել է 89.7%-ով՝ հիմնականում պայմանավորված էլեկտրաէներգիայի և կապի ծախսերի տնտեսմամբ: Արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 9.4%-ով:

Կենսաթոշակների նշանակման ու վճարման «Արաքս» համակարգչային համակարգի ծրագրային սպասարկման ապահովման ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 18 մլն դրամ (100%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Անհատական (անձնավորված) հաշվառման «Պառնաս» համակարգչային համակարգի ծրագրային սպասարկման ապահովման ծառայությունների համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 36 մլն դրամ: Այս ծախսերը ևս նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների տպագրության ծախսերը կազմել են 20.6 մլն դրամ, որը կատարվել է 95.1%-ով: Տնտեսումը պայմանավորված է ձևաթղթերի փաստացի պահանջով:

Կենսաթոշակի նշանակման և վճարման համար անհրաժեշտ ձևաթղթերի տպագրությանը տրամադրվել է 1.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 91.2%-ը և 10.9%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Տնտեսումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ ծախսերի աճը, պայմանավորված է ձևաթղթերի փաստացի պահանջով:

Բարեգործական ծրագրերի հաշվառման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ծախսերը կազմել են 5.3 մլն դրամ, որը կատարվել է ամբողջությամբ և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել:

ՀՀ աշխատանքի պետական տեսչության տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ծախսերը կազմել են 4 մլն դրամ (58.3%): Շեղումը պայմանավորված է ՀՀ աշխատանքի պետական տեսչության տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման բազայի սպասարկման անհրաժեշտությունը օգոստոս ամսից դադարելու հանգամանքով, ինչով էլ պայմանավորված նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 29.8%-ով:

Նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին տրամադրվել է 14.8 մլն դրամ, որը կատարվել է 100%-ով և նախորդ տարվա համեմատ փոփոխության չի ենթարկվել:

Թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների մատուցման նպատակով նախատեսված միջոցները ևս օգտագործվել են 100%-ով՝ կազմելով 6.6 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը չեն փոփոխվել:

Սոցիալական ապահովության քարտերի համակարգի հետ կապված վարչարարական ծառայություններին տրամադրվել է 1.7 մլն դրամ, որը կազմում է նախատեսվածի 25.4%-ը՝ պայմանավորված «Հանրային ծառայությունների համարանիշի մասին» ՀՀ օրենքով 2012 թվականի հունիս ամսից «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրած ճանաչվելու և սոցիալական ապահովության քարտերի տրամադրման գործընթացը դադարեցնելու հանգամանքով: 2011 թվականի համեմատ տվյալ ծախսերը նվազել են 74.5%-ով:

11.9 մլն դրամ է տրամադրվել զինվորական կենսաթոշակառուների տեղեկատվական համակարգի ներդրման, վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին, որը կատարվել է նախատեսված ողջ ծավալով:

ՀՀ-ում ապաստան հայցողների կողմից ներկայացվող փաստաթղթերի և նրանց հետ անցկացվող հարցազրույցների, թարգմանչական աշխատանքների և տպագրական ծախսերի ծեռքերմանը տրամադրվել է 663.9 հազ. դրամ, որը կատարվել է 33.2%-ով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանքների մի մասի վճարումները կատարվել են ՄԱԿ-ի կողմից:

Ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց տրամադրվող ծառայությունների բարելավման ծրագրի ծախսերը կազմել են 16.7 մլն դրամ կամ նախատեսվածի 99.2%-ը:

Կենսաթոշակային իրազեկման և ֆինանսական գրագիտության բարձրացման գործընթացին աջակցության համար նախատեսված 60.8 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Վերջին երեք ծրագրերը ՀՀ պետական բյուջեում 2012 թվականին ներառվել են առաջին անգամ:

Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից օգտագործվել է 41.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 86.3%-ը: Տրամադրված միջոցներից 20.6 մլրդ դրամն ուղղվել է ընթացիկ ծախսերին՝ կազմելով նախատեսվածի 95.5%-ը, 21.3 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին՝ ապահովելով 78.9% կատարողական: Նշենք, որ 2011 թվականին պահուստային ֆոնդից օգտագործվել էր 36.8 մլրդ դրամ:

Հույժ գաղտնի:

ՀՀ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեն կատարվել է 59.9 մլրդ դրամ պակասուրդով՝ կազմելով ճշտված ծրագրով նախատեսված 132.2 մլրդ դրամի 45.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ծախսերի կատարողականով, որի արդյունքում պետական բյուջեի ներքին աղբյուրներում ելքերի ֆինանսավորմանն ուղղվող 2012 թվականի տարեսկզբի ազատ միջոցներից նախատեսված 4.1 մլրդ դրամ օգտագործելու փոխարեն այն ավելացել է 28.9 մլրդ դրամով, ինչպես նաև արտաքին աղբյուրներից ստացվել են 116.5 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ նախատեսված շուրջ 157 մլրդ դրամի փոխարեն: Նշենք, որ 2011 թվականին ՀՀ պետական բյուջեն կատարվել էր 105.7 մլրդ դրամ պակասուրդով, այսինքն՝ 2011 թվականի համեմատ պակասուրդի մեծությունը նվազել է 43.3%-ով: Պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը 2012 թվականին կազմել է 1.5%՝ կանխատեսված 3.1%-ի¹⁶ և 2011 թվականի 2.8%-ի դիմաց:

Հաշվետու տարվա ընթացքում պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են շուրջ 5.9 մլրդ դրամ՝ նախատեսված 38.7 մլրդ դրամի դիմաց: Նշենք, որ նախորդ տարի նշված ցուցանիշը կազմել էր 65.9 մլրդ դրամ:

Ներքին աղբյուրներում 30.5 մլրդ դրամ են կազմել փոխառու զուտ միջոցները, -24.7 մլրդ դրամ՝ ֆինանսական զուտ ակտիվները: Մասնավորապես՝ 32.3 մլրդ դրամ են կազմել գանձապետական պարտատոմսերից զուտ մուտքերը՝ 123 մլրդ դրամ ծավալով պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված 113.3 մլրդ դրամ հասույթի և 80.9 մլրդ դրամ մարման փաստացի ցուցանիշների պարագայում: 2012 թվականին շարունակվել են պետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկումները: Այս պարտատոմսերից տեղաբաշխվել են 644,065.0 հազ. դրամի պարտատոմսեր, որից մուտքը կազմել է 645,519.4 հազ. դրամ: Փաստորեն, 2012 թվականին պետական պարտատոմսերի թողարկման ծրագրի իրագործման արդյունքում ներքին պետական պարտքը բնութագրող հիմնական ցուցանիշները հետևյալն են. շրջանառության մեջ եղած պետական պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով կազմել է 249,833,165.0 հազ. դրամ: Բոլոր պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 1713 օր (2011թ.՝ 1698 օր), միջին կշռված եկամտաբերությունը՝ 13.58% (2011թ.՝ 12.96%): Ներքին պետական պարտքը բաղկացած է 15.0% ՊԿՊ-ից, 51.6% ՄԺՊ-ից, 33.1% ԵՊ-ից և 0.3% ԽՊ-ից:

2012 թվականին շարունակվել է նաև ՀՀ ներքին շահող փոխառության պարտատոմսերի հետգնման գործընթացը. հետգնումը կազմել է 930.6 հազար դրամ:

Ներքին պետական պարտքն անվանական արժեքով կազմել է 254,676.1 մլն դրամ:

¹⁶ ՀՀ 2012 թվականի բյուջետային ուղերձում կանխատեսված ցուցանիշ:

Մուրհակների մարման նպատակով կատարվել են շուրջ 308 մլն դրամի վճարումներ՝ ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը: Ամբողջությամբ մարվել է նաև «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ից ստացված վարկի ծրագրված գումարը՝ կազմելով 1.5 մլրդ դրամ:

Հաշվետու տարվա պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներքին ֆինանսական ակտիվները կազմել են -24.7 մլրդ դրամ՝ տարեկան ճշտված ծրագրով նախատեսված 10.3 մլրդ դրամի դիմաց: Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերմանն ուղղվել է 496 մլն դրամ, որը կատարվել է տարեկան նախատեսված ծավալով:

2012 թվականին ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 24.1 մլրդ դրամի վարկեր՝ կազմելով նախատեսվածի 93.3%-ը: Նշված գումարից 10.4 մլրդ դրամը տրամադրվել է Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը 2009 թվականին տրամադրված պետական վարկի միջոցներից, որոնք բաշխվել են հետևյալ կերպ. 8.3 մլրդ դրամի վարկ է տրամադրվել «Զանգեզուր Մայնինգ» ՍՊԸ-ին, 1.8 մլրդ դրամ՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից հիմնադրված վարկային կազմակերպությանը, 331.9 մլն դրամ՝ «Ռադիոհիդրոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ին: 39.5 մլն դրամ արտոնյալ պայմաններով տրամադրվել է բռնադատված քաղաքացիներին՝ անհատական բնակարանային շինարարության վարկավորման նպատակով, որն օգտագործվել է 79%-ով: Շուրջ 61.6 մլն դրամ տրամադրվել է ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեին: 600 մլն դրամ հատկացվել է «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» ՍՊԸ-ին, 300 մլն դրամը՝ «Աջակցություն Շիրակ մարզի համայնքներին» բարեգործական հիմնադրամին: 249.3 մլն դրամը հատկացվել է վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամին:

2.6 մլրդ դրամի վարկային միջոցներ են տրամադրվել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի շրջանակներում, որից 2 մլրդ դրամը՝ Հայաստանի գյուղատնտեսական ոլորտի աջակցության ծրագրի շրջանակներում, 568 մլն դրամը՝ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրի շրջանակներում:

Ավելի քան 25.6 մլրդ դրամ է ստացվել տրամադրված ներքին վարկերի վերադարձից՝ կազմելով նախատեսվածի 105.6%-ը: Նշված գումարից 10.9 մլրդ դրամը մուտքագրվել է Ռուսաստանի Դաշնության հատկացրած վարկային միջոցների հաշվին տրամադրված վարկերի վերադարձից:

Հաշվետու տարում կայունացման դեպոզիտային հաշվից զուտ օգտագործումը կատարվել է 68.9%-ով և կազմել 5.7 մլրդ դրամ: Տարվա ընթացքում նշված հաշիվը համալրվել է 10.9 մլրդ դրամով, իսկ հաշվից օգտագործումը կազմել է շուրջ 16.7 մլրդ դրամ:

Շուրջ 2.6 մլրդ դրամով ավելացել է արտաբյուջետային միջոցների մնացորդը:

2012 թվականին պետական բյուջեի պակասուրդն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել է 54.1 մլրդ դրամով՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 57.8%-ը:

Արտաքին փոխառու միջոցներից բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը կազմել է 89.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 69%-ը, որը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող նպատակային ծրագրերի համար ստացված վարկերի ծավալով: Տարվա ընթացքում արտաքին աղբյուրներից ստացվել են 116.5 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ ծրագրված 157 մլրդ դրամի դիմաց: Նշված գումարից 49.3 մլրդ դրամը ստացվել է նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում՝ նախատեսված 90.5 մլրդ դրամի դիմաց: Զարգացման քաղաքականության երրորդ վարկային ծրագրի շրջանակներում ՀԲ կողմից տրամադրվել են 30.3 մլրդ դրամի վարկային միջոցներ (100%): 16.6 մլրդ դրամ (104.6%) է տրամադրվել ԱՄՀ կողմից, 20.2 մլրդ դրամ (100%)՝ Եվրամիության կողմից Մակրոֆինանսական աջակցության ծրագրի շրջանակներում:

Արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է շուրջ 27.3 մլրդ դրամ, որից 7.3 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը: Բացի այդ, 1.2 մլրդ դրամ է տրամադրվել Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգի ծրագրի գծով Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը, շուրջ 16 մլրդ դրամ՝ Արժույթի միջազգային հիմնադրամի, 520.6 մլն դրամ՝ ԳԶՄՀ, 278.2 մլն դրամ՝ ՎԶԵԲ, 379 մլն դրամ՝ ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի նկատմամբ ունեցած պարտքի մարմանը, 654.7 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, 61.4 մլն դրամ՝ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման համակարգի ծրագրի գծով Ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը, 126.3 մլն դրամը՝ Աբու-Դաբիի Զարգացման Հիմնադրամի նկատմամբ ունեցած պարտքի մարմանը, և 693.4 մլն դրամ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության նկատմամբ պարտավորությունների մարմանը:

Արտաքին ֆինանսական ակտիվների գծով պակասուրդի ֆինանսավորման ծրագիրը կատարվել է 98%-ով՝ կազմելով 35.2 մլրդ դրամ: Մասնավորապես՝ ամբողջությամբ տրամադրվել է ԼՂՀ-ի միջպետական վարկը, որը կազմել է 35.9 մլրդ դրամ: Վրաստանի կողմից Հայաստանի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների գծով կատարվել է 298.7 մլն դրամի վճարում՝ ապահովելով նախատեսված ծավալը:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարմանն ուղղվել է շուրջ 906.3 մլն դրամ կամ նախատեսվածի 99.1%-ը: Հաշվետու տարում 1.3 մլրդ դրամ է օգտագործվել արտաքին աղբյուրներից ստացված վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդից:

2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 1,508.7 մլրդ դրամ (3,738.3 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 37.9%-ը՝ 2011 թվականի 1,376.5 մլրդ դրամի (3,568.2 մլն ԱՄՆ դոլարի) և 36.4%-ի դիմաց: Պարտքի հիմնական մասը՝ 3,143.7 մլն ԱՄՆ դոլարը, ՀՀ կառավարության անմիջական վարկային պարտավորություններն են, 594.6 մլն ԱՄՆ դոլարը՝ Կենտրոնական բանկի վարկային պարտավորությունները:

Հաշվետու տարում ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը կազմել է 239.4 մլն ԱՄՆ դոլար, որից 114.8 մլն ԱՄՆ դոլարը՝ կառավարության և 124.6 մլն դոլարը՝ ԿԲ պարտավորությունների գծով: Արտահանման նկատմամբ արտաքին պետական պարտքի սպասարկման հարաբերակցությունը կազմել է 9.6%՝ նախորդ տարվա 4.2%-ի դիմաց: 2012 թվականի վերջի դրությամբ արտաքին պետական պարտքի զուտ ներկա արժեքի ցուցանիշն (ԶՆԱ) աճել է՝ 2011 թվականի 3022.8 մլն ԱՄՆ դոլարի դիմաց կազմելով 3407.3 մլն ԱՄՆ դոլար, աճել է նաև ԶՆԱ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 2011 թվականի 29.8%-ի դիմաց կազմելով 34.4%, ինչպես նաև ԶՆԱ/արտահանում ցուցանիշը՝ 2011 թվականի 125.6%-ից հասնելով 136.8%-ի: